Տեսիլքներ եվ Մարգարեություններ հայոց մասին

«ԳԹՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ, 2009

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Տ 342

Հրատարակությունն իրականացվել է
գործարար ՎԱՀԱԳԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
հովանավորությամբ

Տ 342 Տեսիլքներ եւ մարգարեություններ Հայոց մասին.- Եր.:, 2009թ., 196 էջ:

Ժողովածուն նախաձեռնելու եվ ավարտին հասցնելու գործում իր բազմակողմանի աջակցությունն է ցուցաբերել «Մխիթարիչ» բարեգործական միության նախագահ Խաչիկ Ստամբոլցյանը:

ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-53-377-3

© Հունանյան Ա.Ռ., 2009թ.

Արթուն կացէք, զի ոչ գիտէք զօրն եւ ոչ զժամն, յորում գայցէ Որդի Մարդոյ:

□□□□. *25, 13*

Սիրելի ընթերցող, 21-րդ դարն իր մարտահրավերներով, ապագայի հանդեպ անորոշությամբ շատ-շատերին հոռետեսության գիրկն է նետում, եւ կարծես կատարվում է մեր Տիրոջ խոսքերը՝ Իր գալստի ժամանակ հավատ գտնելու մասին (Ղուկ. 18, 8): Մենք՝ մեր պատմության ընթացքում, գտել ենք ապագայի անորոշությունից դուրս գալու ուղին՝ այն նավը, որն ապահով պիտի հասցնի մեր նպատակներին: Մեր հայրերն իրենց գրություններում զգաստության կոչ ու ավետարանական լույսով նորոգվելու հորդորներն են ուղղել՝ վերահաստատավորելու մեր կյանքը, ապրելու ու զորանալու քրիստոնեական լույսով: Ա՛յդ է ճանապարհը:

Այդ առումով գովելի է սույն գրքի լույս աշխարհ գալը, որը մի անգամ եւս առիթ կընծայի ընթերցողին խորհելու, մտածելու եւ իր հավատը զորացնելու՝ ապագայի մասին ավետարանական ընկալումներով լուսավորվելով:

Սույն ժողովածուն կազմելիս նպատակ չի դրվել կատարելու հավաքած նյութերի խորը եւ բազմակողմանի գիտական կամ մեկ այլ բնույթի ուսումնասիրություն եւ քննական վերլուծություն: Վերջին մի քանի հարյուր տարիների ընթացքում դրանք բազմիցս հրատարակվել են աշխարհի տարբեր երկրներում՝ գրաբար, թե աշխարհաբար, ինչպես նաեւ թարգմանվել են բազմաթիվ օտար լեզուներով:

Այստեղ ուղղակի փորձ է արվել մի սեղմ գրքում զետեղել ծով գրականության միջից ընտրված այս փոքրածավալ հատվածը, որը կարող է օգնել քրիստոնյա հայ ընթերցողին առա-

վել ամրապնդվել իր հավատի մեջ եւ ներկայիս համատարած գորշության, անհուսության ու դառնության շղարշի միջով տեսնել եւ առավել շոշափելի զգալ մեր Տիրոջ խոսքերի հավիտենականությունը՝ այսինքն դրանց ճշմարիտ լինելը բոլոր ժամանակներում՝ անցյալում, ներկայում, ապագայում: Կարծում ենք, որ այն օգտակար կլինի նաեւ նրանց համար, ովքեր դեռ պրպտումների ճանապարհին են:

Աստծո հանդեպ սիրով ու հավատով զորացած մտնենք Փրկության նավը՝ որն Քրիստոսի եկեղեցին է, մեր լավատեսությամբ ու նվիրված գործունեությամբ եւ ջերմեռանդ աղոթքներով պատրաստվենք մեր Տիրոջ հրաշափառ Գալստյանը: Այս մեղավոր աշխարհում, բազում մեղքերից ալեկոծված մեր սրտերում թող թագավորի Քրիստոսի սերը, ինչպես գրում է շարականագիրը.

«Ով մեղաց իմոց զիս ալեկոծէ. որ ես Նաւապետ բարի, շնորհեա՛ ինձ նաւահանգիստ: Նաւապետ բարեգութ, առ Քեզ ապաւինիմ, տուր ինձ ձեռն, որպէս երբեմն Պետրոսին ի վերայ ալեացն, որ ծփիմս ալեկոծեալ յանցանօք մեղաց»:

Ժողովածուի առաջին մասում ընդգրկված են այն նյութերը, որոնք վերաբերում են մեր երկրի ու ժողովրդի անցյալին, ներկային ու ապագային:

Երկրորդ մասում հավաքված են զանազան այլ տեսիլքների, հայտնությունների նկարագրություններ:

Հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը բոլոր նրանց, ովքեր իրենց մեծ կամ փոքր ավանդն են ներդրել ժողովածուն ստեղծելու գործում:

ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

Վերջին տարիների ընթացքում՝ խորհրդային ժամանակաշրջանից հետո ռուս ուղղափառ եկեղեցու նախաձեռնությամբ եւ աջակցությամբ ծավալուն աշխատանքներ են կատարվել ուղղափառ եկեղեցու հայրերի կողմից ստեղծված աշխատությունների հրապարակումների ուղղությամբ:

Դրանց մի զգալի հատվածն էլ վերաբերվում է սուրբ հայրերի այն մարգարեություններին, հայտնություններին, տեսիլքներին, որոնք առընչվում են ռուս ժողովրդի ու Ռուսաստանի ապագային:

Մտադրություն առաջացավ կազմել նմանատիպ մի ժողովածու հայ ընթերցողի համար, որում ընդգրկված կլինեին քրիստոնեության ակունքներից առ այսօր մեր նվիրյալ, սուրբ նախնիներից մինչեւ մերօրյա գործիչները եղած ամենանշանակալից վկայությունները: Աշխատել ենք ոչինչ չփոխել հրատարակիչների ու թարգմանիչների աշխատանքներում, նպատակ ունենալով միայն ծանոթացնելու հայ ընթերցողների լայն շրջանակներին՝ մեր պատմության հազարամյակների ընթացքում տեղի ունեցած բազում հոգեւոր հրաշքների գոնե մի փոքր մասին:

Ցանկալի է, որ հետաքրքրության դեպքում ընթերցողն առավելն իմանալու համար ինքը կվերցնի նշված եվ չնշված գրական աղբյուրներն ու կծանոթանա դրանց:

Հուսով եմ, որ հոգեշահ գրքերի շարքում այս ժողովածուն էլ իր բարի պտուղները կտա եւ կնպաստի մեր ժողովրդի բազմադարյա հավատի ամրապնդմանը:

Ա. ՀՈՒՆԱՆՅԱՆ

Նախաբանի փոխարեն

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՐՈԶԸ ՏԵՍԻԼՔՆԵՐԻ ԵՎ ԵՐԱԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Ովսեի խոսքերով, որ ասում է. «Ես տեսիլքներում կայցելեմ, եւ երազների միջոցով կխոսեմ ձեզ հետ»: Աստված բնությամբ բարի է, եւ իր բարերարությամբ խնամում է արարածներին, եւ կամենում է, որ բոլոր մարդիկ գան դեպի ճշմարիտ գիտությանը: Որի համար իբրեւ ճրագ մեզ տվեց օրենքներն ու պատվիրանները, որպեսզի դրանց լույսով ընթանանք դեպի Աստծո ճշմարիտ գիտությանը: Եվ եթե երբեւէ սխալվենք արդարության ճանապարհից, Աստված իր բարերար կամքով խրատում եւ արդարության ճանապարհի վրա է դնում: Եվ սա ձեռքի հինգ մատների գործողությամբ է խնամում:

Նախ, որ մեզ տվեց բանական միտք, որով կարողանում ենք բարին չարից տարբերել, հեռու ենք մնում չարից եւ ընթանում ենք բարու հետեւից, ինչպես մարգարեն է ասում. «Հեռացիր չարից եւ բարիք գործիր, փնտրիր խաղաղությունը եւ գնա նրա հետեւից», որով շատերն են խորհում, տեսնում եւ խորհելով գուշակում են ապագան իրերի փորձից, եւ հեռանում չարից:

Եվ եթե սրանից մոլորվում ենք, այնժամ երկրորդով տեսիլքների եւ երազների միջոցով, խնամում եւ հետ է պահում չարից:

Երրորդ՝ մարմնի շարժումների միջոցով էլ է ցույց տալիս ապագան, ինչպես, երբ անդամներից մեկը շարժվում է, օրինակ՝ աչքը, մեջքը կամ էլ այլ անդամներից մեկը, փորձից ելնելով գուշակում են, թե ինչ է լինելու:

Չորրորդ՝ նաեւ կենդանիների միջոցով, ինչպես ագռավները, անգեղները կամ այլ կենդանիներ, որոնք ծառայում են մարդկանց եւ կոչ են անում զգուշանալ առաջիկա վտանգներից:

Հինգերորդ՝ նշան է լինում երկնքի տարերքներից եւ լուսատուներից, ինչպես նրանց խավարումը, գիսավոր աստղի երեւալը, ամպերի շարժումները, որոտումները եւ այլ բաներ, ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Նշանների եւ ժամանակի մեջ դրեց նրանց», որպեսզի նրանցով բոլոր տեղերը տեսնելով՝ պատրաստվենք հանդերձյալի համար: Եվ ինչին որ սովոր է յուրաքանչյուր ոք, նրանով ներգործում եւ նախապատրաստում է նրան: Զորօրինակ եգիպտացիները, որոնք երազահաններ եւ հմայողներ էին, Աստված կամեցավ նրանց երազների միջոցով ուղղության բերել: Ինչպես գրված է Սուրբ Գրքում. «Փարավոնը երազ տեսավ, որ գետից ելնում էին յոթ գեր եւ յոթ նիհար երինջներ, նույնպես եւ յոթ ատոք հասկեր եւ յոթ ազազուն հասկեր: Նիհար երինջները կլանում էին գերերին եւ վտիտ հասկերը՝ պարարտ հասկերին»: Փարավոնը կանչում է բոլոր եգիպտացիների իմաստուններին, նրանք չէին կարողանում մեկնել երազը: Եվ երբ եկավ Հովսեփը, մեկնեց երազը: Ասում է յոթ երինջները եւ յոթ հասկերը այն են նշանակում, որ յոթ բերքառատ տարիներ են լինելու, իսկ այդ յոթ տարիներից հետո յոթ սով տարիներ են լինելու, որ նշանակում էին յոթ նիհար եւ վտիտ երինջները:

Արդ, նախ հայտնի է, թե քանիսն են երազների եղանակները: Վարդապետներն ասում են, թե չորս տեսակի են երազները.

Առաջին՝ բնական.

Երկրորդ՝ փոփոխական.

Երրորդ՝ դիվական.

Չորրորդ՝ ուսուցանող տեսիլքներ:

Բնականն այն է, որ անկարգ ցանկություններ են առաջանում, քանզի երբ մարդը ննջում է, զգայականը խափանվում է եւ իմա-

*[3] էջ 45-48

ցականը անգործ է մնում, այն ժամանակ տնկականն է առաջ գալիս եւ վերականգնվում հիշողության մեջ՝ կամ անցած գործերն է հիշում, կամ այն որ պետք է գործվեն, որոնք ստվերի մեջ են երեւում նրանց: Սա բնականն է:

Իսկ փոփոխականն այն է, որ տարերքներից է լինում՝ արտաքին եւ ներքին կերակուրներից կամ էլ հիվանդություններից: Եթե հուրն է ավելանում՝ նույնն է տեսնում, եթե ջուրը, եթե օդը եւ եթե հողը, ապա անուրջներում է երեւակայում:

Իսկ դիվականն այն է, որ դեւերն իրենց սրամտությամբ մարդկանց ցույց են տալիս ապագան՝ չար կամ բարի, եւ այդպես խաբում են մարդկանց: Իսկ չորրորդը, որ է տեսիլք եւ Աստվածային հայտնություն՝ կամենում է մեզ չարից հեռացնել դեպի բարին, որն էլ մարդ տեսնում է տեսիլքի միջոցով, ինչպես ասում են. «Ես տեսիլքներում կհաճախեմ եւ երազներում կխոսեմ ձեզ հետ»:

Մեկ այլ խնդիր էլ կա, թե ինչո՞ւ են անարժանները աստվածային տեսիլքներ տեսնում, ինչպես փարավոնը, Նաբուգոդոնոսորը եւ ուրիշներ: Ասենք, որ անարժանները արժանավորների համար տեսիլք տեսան, ինչպես փարավոնը արժանավոր Հովսեփի համար, որպեսզի նա հայտնի լինի եւ մեծարվի: Նույնպես էլ Նաբուգոդոնոսորը՝ Դանիելի համար, որը մեկնելով երազը՝ հայտնի եղավ, որ «Աստծո Հոգի կա նրա մեջ»: Նույնպես եւ Բաղաամ մոգը տեսավ հրեշտակին, եւ էշը, որ խոսեց Իսրայելի մասին, օրհնեց եւ չէր համարձակվում անիծել Աստծո ժողովրդին: Այսպես էլ Կայիափան մարգարեացավ Քրիստոսի մասին, որ մարդկային ցեղի Փրկիչն էր՝ ասելով. «Լավ է Նրան մեռնել, քան թե ամբողջ ազգը կորչի»:

Երրորդ խնդիրն էլ այն է, թե օգուտն ինչ է երազով կամ մարգարեությամբ նախագետ լինել եւ ապագան գուշակել: Ասում ենք, որ այստեղ երեք գլխավոր օգտակար բաներ կան: Նախ, երբ բարին է գուշակում, դառնում ենք առաջիկա բարուն, որպեսզի չզրկվենք նրանից: Երկրորդ, երբ չարն է գուշակում, զգուշանում ենք, որպեսզի չընկնենք չարի մեջ: Եվ երրորդ, եթե ներկայում չարի մեջ ենք գտնվում, դառնանք եւ ապաշխարենք մեր մեղքերը: Որի համար էլ մարգարեության եւ երազների միջոցով գուշակում են ապագան: Իսկ փարավոնի երազը, որ մեկնեց Հովսեփը, ասում է. «Յոթ տարի լիություն եւ յոթ տարի սով է լինելու: Աստված քեզ ցույց տվեց այդ երազը, որպեսզի լիության յոթ տարիների ընթացքում հավաքես ցորեն, որ երկիրը չմեռնի»: Եվ փարավոնը Հովսեփին ամբողջ երկրի վրա իշխան կարգեց, իր մատանին տվեց նրա ձեռքը, բեհեզյա պատմուճան տվեց նրան, իսկ պարանոցից էլ ոսկի մանյակ գցեց ու կառքերի վրա բարձրացրեց: Եվ նա՝ Հովսեփը, երկրի հինգերորդ մաս ցորենը հավաքեց այնքան, որ ամբարներին թիվ չկար: Արդ՝ մատանին ցույց է տալիս անմահ թագավորի պատկերը, որ անարատ էր նրա մեջ: Բեհեզը հոգու անմեղության պատմուճանն էր, մանյակը՝ ամբողջ եւ անապական հավատքը: Իսկ կառքը՝ ինչպես Եղիան, որ հրեղեն կառքերով սլանում էր առ Աստված: Սա նշանակում է, թե ովքեր Հովսեփի նման լինեն սուրբ եւ անարատ մեղքերից, նրանք նույնպես երկնավոր թագավորի սիրելիները կլինեն, երկրի վրա՝ իշխան եւ հրամայող, եւ նրանք կազատվեն Աստծո վերահաս պատուհասից եւ շատերի համար փրկության պատճառ կդառնան:

Արդ՝ յոթը թիվը սուրբ է եւ ճշմարիտ Աստծո տոնը, քանզի Աստված սրբեց յոթերորդ օրը եւ յոթերորդ օրը Աստծո տոնն է, ինչպես շաբաթվա մեջ կիրակին: Նաեւ Սուրբ Հոգո զորությունները յոթն են, որով Աստված խնամում է եւ բարին գործում մարդկանց մեջ: Իսկ եթե մարդիկ արժանի չլինեն Աստծո բարությանը, այնժամ նույն թվով յոթնյակ զորությամբ, պատուհասում է նրանց որի համար ասում է, թե յոթ լիության եւ յոթ սովի տարիներ են լինելու: Դա սովորություն է, երբ Աստված պատժում է մեղքերի համար, նախ՝ երկար ժամանակ խաղաղության միջոց է տալիս, ինչպես Նոյի օրերում հարյուր տարի, եւ ապա՝ պատուհասում է ինչպես ջրհեղեղը, եւ ինչպես Եգիպտոսում էր յոթ տարիներ լիություն եղավ եւ ապա յոթ տարիներ՝ սով: Կամ որպեսզի այդ երկար ժամանակամիջոցին զղջան եւ ետ դառնան մեղքերից, որպեսզի հանկարծակիի գալով պատուհասից չկորչեն, կամ էլ գիտակցեն, որ խաղաղությունից հե-

տո խռովություն է լինելու, իսկ լիությունից հետո՝ սով, որպեսզի իրենք իրենց պատրաստեն, որպեսզի չկորչեն:

Ի՞նչ է սովը. սովը բազմաեղանակ է:

Նախ՝ սովը կերակուրի պակասություն է, երբ մեղքի պատճառով երկինքը լինում է պղնձե, իսկ երկիրը՝ երկաթե, ինչպես մարգարեի բերանով ասում է Աստված. «Որ երկինքը անձրեւ չցողի եւ երկիրը պտուղ չտա», նույնպես դալարները չորանան, ամբողջ հունդերը եւ արմատները, որոնք հացի տեղ են լցնում, կչորանան, ձկները կնվազեն եւ անասունները կմեռնեն, որպեսզի չկթեն, ինչպես ասում է. «Քանանում մեծ նեղություն էր»: Եվ սա լինում է այն պատճառով որ կերակուրի եւ ըմպելիքի առատությունը մեղքերի պատճառ են լինում, ինչպես ասում է. «Այս է անօրենությունը քո քույրերի Սոդոմ՝ կերակուրի հղփությունը եւ գինու լիությունը», որով այնպիսի գործեր էին գործում, որի համար Աստված կտրում է մեղքի պատճառը եւ սով տալիս: Դարձյալ մտքի սով է, երբ մարդկանց մտքից վերանում է Աստծո իմաստությունը, ինչպես ասում է մարգարեն. «Չեզ կտա ոչ թե հացի կամ ջրի սով, այլ Աստծո խոսքը լսելու»: Ինչպես որ կերակուրով է ապրում մարմինը, այնպես էլ Աստծո խոսքը կենդանություն է տալիս հոգուն, ըստ այնմ. «Ոչ միայն հացով կապրի մարդ, այլեւ Աստծո ամեն մի խոսքով»: Այս սովը այն ժամանակ է պատճառում Աստված, երբ մարդիկ անարժան են լինում Աստծո խոսքը լսելու, ինչպես ասում է. «Հրաման կտամ իմ ամպերին, որպեսզի անձրեւ չտեղան իմ այգում»:

Ամպը մարգարեն է, վարդապետը, խրատողը: Երբ մարդիկ մեղքի մեջ են գտնվում եւ պատուհասի արժանի, արգելված կլինեն խրատատուներից, «որպեսզի ականջներով չլսեն,- ասում է,- սրտով հասկանան, դառնան առ Աստված եւ զղջան, այնժամ նրանց կբժշկեմ: Դարձյալ սով է գործերի, երբ մարդկանցից նվազում է գործն ու սրբությունը, այն ժամանակ մեղքն ու անօրենությունն են պատում մեզ, եւ կլինենք սովյալ ու բարի գործերի կարոտ:

Ինչպես առակում է խրատում անառակին՝ ասելով. «Սաստիկ սով եղավ այն աշխարհում եւ չքավորություն բարի գործերի, եւ մի

մարդ վեր կացավ ու արածում էր մեղքի ցանկությունը խոզերի հետ եւ չէր հագենում նրանց կերակուրից»: Քանզի այս սովի համար է աղոթում Դավիթ մարգարեն. «Փրկիր ինձ, որովհետեւ նվազեց սրբությունը, եւ պակասեցին ճշմարտությունները մարդկանց որդիներից», երբ նվազում է ճշմարտությունն ու սրբությունը, որը խոսքերի եւ գործերի նվազելն է, այնժամ ստությամբ եւ աղտեղի գործերով կորչում է մարդը: Ստախոս մարդը երկակի վտանգ ունի, մեկը, որ սատանայի որդի է դառնում, քանզի ստախոսը սատանան է, իսկ մյուսը, ինչ որ խոսում է, չեն հավատում:

Ինչպես առակում է ասում, թե ինչ է ստախոսի շահը, երբ նրա ճիշտ խոսքերին չեն հավատում:

Նույնպես եւ նրա հակառակը, որ Աստծո նման է ճշմարտախոսը, առաջին, որ Աստված ճշմարիտ է եւ ճշմարտախոսը Աստծո նման է լինում, եւ երկրորդ, երբ լսողները հավատում են ճշմարտախոսի խոսքերին, նրա բոլոր ասածներն ու խոսածները ընդունելի են լինում, որի համար Տերը հրամայում է. «Ձեր այոն լինի այո եւ ոչը՝ ոչ, քանզի դրանից ավելին չարից է»:

Դարձյալ հավատի սով է լինում, երբ մարդիկ հեռանում են ճշմարիտ հավատից եւ դառնում են ուրացող, հերձվածող կամ հայհոյող, երբ յուրաքանչյուր ոք ընթանում է իր կամքով եւ ընտրությամբ եւ հետեւում է թյուր առաջնորդների, որոնք ըստ իրենց կամքի են քարոզում, ինչպես առաքյալն է ասում. «Յուրաքանչյուրն ըստ իր ցանկությունների ուսուցանողներ պիտի հավաքի իր շուրջը՝ իր ականջներին հաճելի բաներ լսելու մարմաջով, եւ նրանք ականջները պիտի դարձնեն ճշմարտությունից ու պիտի մոլորվեն գնան առասպելների ետեւից»:

Եվ ճշմարիտ վարդապետներից շրջում են իրենց երեսները, քանզի իմաստունների խրատները ամբարիշտները արհամարհում եւ անարգում են, իսկ հնարովի առասպելների մեջ՝ քաղցրանում. «որոնք քաղցր խոսքերով եւ օրհնությամբ խաբում են մարդկանց»:

Եվ Տերը զգուշացնում է. «Կգան ձեզ մոտ ոչխարների զգեստներով», քանզի նրանք ունեն երկտակ հանդերձ, այսինքն՝ գա-

ռան՝ վրայից, եւ գայլի՝ ներսից: Քանզի հերրձվածողը երեք զգեստներով է խաբում մարդուն եւ գայլի պես պատառոտում. նախ՝ քահանայական զգեստներով, որ կրում է իբրեւ հոգեւորական, երկրորդ՝ խոսքի քարոզությամբ, որ հանապազ ուսուցանում է, եւ երրորդ՝ հայտնապես ուսուցանում է օրենքներն ու հավատը, սակայն ծածուկ՝ անօրենություն ու թերություն է խառնում, ինչը չեն կարող տեսնել պարզամիտները եւ մոլորվում են: Իսկ ի՞նչ է ասում Տերը. «Իրենց պտուղներից կճանաչեք նրանց», այսինքն՝ իրենց գործերից կճանաչեք նրանց. եւ մի խաբվեք նրանց խոսքերից, ինչպես որ Տերն է ասում. «Ծանր ու դժվարակիր բեռներ են կապում ու դնում մարդկանց ուսերի վրա, բայց իրենց մատով անգամ չեն կամենում շարժել դրանք. դուք մի՛ հետեւեք նրանց, քանի որ ասում են, բայց չեն անում»:

Երբ մարդկանց մեջ պակասի հավատը, նշանակում է՝ աշխարհի վերջն է, ինչպես Տերն է ասում. «Երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի՞»: Նաեւ սերը պիտի նվազի՝ ըստ Տիրոջ խոսքի. «Անօրենության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի», ինչպես որ հիմա ենք տեսնում՝ բոլոր մարդկանց մեջ պակասել է հավատը, նվազել է հույսն առ Աստված, եւ ցամաքել է սերը՝ Աստծո եւ ընկերոջ հանդեպ: Սա կոչվում է սով՝ հավատի, հույսի եւ սիրո: Դարձյալ. իմանալի սով է հետմահու նաեւ հանդերձյալ կյանքը, իսկ ա՛յս կյանքը՝ լիություն եւ ամեն ինչի առատություն. իսկ այն՝ սով եւ գործերի դատարկություն, քանզի չեն կարող ո՛չ սերմանել, ո՛չ հնձել, ո՛չ ժողովել, ինչպես սովի ժամանակ: Եվ ինչպես սովը լիությունն է ոչնչացնում, բայց չի երեւում, նույնպես եւ այն կյանքը այս կյանքին է վերջ դնում, բայց չի երեւում՝ ո՛չ գույք, ո՛չ շինություններ, ո՛չ գեղեցկություն եւ ո՛չ էլ մի այլ բան, որ կա այս կյանքում, քանզի ամեն ինչ խափանվում է: Զգայարանները, գործել անկարող են այլեւս. ո՛չ աչքն է տեսնում, ո՛չ ականջն է լսում, ո՛չ բերանն է խոսում, ո՛չ ձեռքն է գործում, ո՛չ ոտքն է գնում, քանզի կյանքն այն իբրեւ գիշեր է, իսկ այս՝ ցերեկ. քանզի մարդը ցերեկն է գործում, իսկ գիշերը՝ անգործ մնում: Այդ

է ուսուցանում Տերը՝ ասելով. «Գործեցեք, քանի դեռ ցերեկ է, կգա գիշերը, երբ ոչ ոք չի կարող գործել»:

Դարձյալ. որպես ամառ եւ ձմեռ են այս եւ հանդերձյալ կյանքը. այս կյանքն ամառն է՝ սերմանում են, հնձում, ժողովում, իսկ ա՛յն կյանքը՝ ձմեռը, քանզի խափանվում են գործերը, եւ մարդիկ վայելում են միայն՝ ինչ-որ ձեռք են բերել, իսկ ովքեր չունեն, սովից կորչում են: Ինչ որ մարդս սերմանում է, նույնը եւ կհնձի՝ լինի ցորեն, թե գարի եւ թե փուշ. նույնպես եւ, ով ցորեն է սերմանում հոգու մեջ, այսինքն՝ բարի գործեր, որ հաճելի են Աստծուն, հոգուց անապական կյանք կհնձի, քանզի հոգին անմահ է, եւ նրա սերմերն են անմահ: Եվ ով մարմնի մեջ սերմանում է գարի, որ անասունի կեր է, այսինքն՝ մեղքեր, որոնցով հեշտանում է անասնական մարմինը, եւ որոնք փշի պես խոցոտում են հոգին, նա մարմնից կհնձի ապականություն ու տանջանքներ, քանզի մարմինն ապականացու է, ապականացու են եւ նրա բույսերը (փայտը, եղեգը, խոտը հավիտենական հրի վառելանյութերն են):

Եվ ինչպես որ հագեցման լիությունը կարճ՝ մեկ ժամ է տեւում, երբ մարդ ուտում է, իսկ սովն ու քաղցը՝ երկար ժամեր՝ մինչեւ մյուս ուտելը, նույնպես եւ կարճատեւ ու անցողիկ է այս լիառատ կյանքը, իսկ հանդերձյալը, որ սովն է, երկարաձիգ է եւ հավիտենական, անեզր եւ անվախճան, ինչպես առաքյալն է ասում. «Տեսանելիները ժամանակավոր են, իսկ անտեսանելիները՝ հավիտենական»:

Ուրեմն ի՞նչ է մեզ մնում անել. այն, ինչ իմաստուն Հովսեփն արեց. նա հավաքեց Եգիպտացիների երկրի առատության յոթը տարիների ողջ բերքն ու ցորենը ու ամբարեց Փարավոնի տան մեջ: Նույնպես եւ մենք պետք է իմաստությամբ մարմնի չորս տարրերին բաժին տանք, իսկ հինգերորդ մասը, որ հոգեւորն է, հոգո՛ւն բաժին տանք, եւ գանձեր դիզենք երկնքի Արքայի տան մեջ, «ուր ո՛չ ցեցն է ուտում, եւ ո՛չ էլ գողն է գողանում»:

Բայց ինչպե՞ս. թե՛ հոգեւոր շնորհներդ, այսինքն՝ ցորենը, թե՛ մարմնավոր ունեցվածքդ, որ արծաթն ու ոսկին է, թե՛ անասուններդ, այսինքն՝ հինգ զգայարաններդ անասնական, եւ թե՛ հողն ու հայրե-

նիքը մարմնիդ, եւ թե՛ ինքդ քեզ՝ հոգիդ, ծառա տուր Աստծուն եւ քո բոլոր բարիքներն ամբարիր Երկնավոր Արքայի գանձարանում, որ երկնքում է: Իսկ ո՞րն է երկինքը. հոգիդ է երկինքը եւ երկնայինը երկրի, այսինքն՝ մարմնիդ վրա. հոգո՛ւդ մեջ ամբարիր ամենը:

Եվ դարձյալ. Սուրբ եկեղեցո՛ւմ ամբարիր գանձերդ. ա՛յս է երկինքը երկրի վրա, ուր աղքատներն ու կատարյալներն են. բավարարի նրանց կարիքները: Եթե հոգեւորի կարիք ունեն, այսինքն՝ խոսքի ու խրատի, ուսուցանի՛ր նրանց, իսկ եթե մարմնավորի՝ հագուստի, կերակրի կամ հանգստի, տո՛ւր նրանց անհրաժեշտը եւ հագեցրո՛ւ նրանց քաղցն ու ծարավը, քանզի նրանք Քրիստոսի անդամներն են. եւ ինչ որ անդամներին անես, Գլխին արած կլինես: Եվ եթե մեկին միայն մի բաժակ ջուր տաս, վարձդ չպիտի կորչի. որքա՜ն առավել վարձ եւ մեծամեծ պարգեւներ պիտի ստանաս, եթե առատորեն բաշխես: Սողոմոնն ասում է. «Հացդ ջրին տուր՝ թող տանի, շատ օրեր անց պիտի նորից գտնես այն»: Եվ եթե հացը ջրի մեջ չի կորչում, քանզի ձկներն են այն որսում, որ Աստծո արարածներն են, եւ Տերը հատուցում է դրա համար, որչա՜փ առավել կհատուցի, եթե աղքատներին տաս, քանզի աղքատը Քրիստոսի պատկերն է, եւ Քրիստոս աղքատի՛ տեսքով է գալիս քո դուռը, եւ աղքատի ձեռքով Ինքը՝ Քրիստոսն է քո ձեռքից ողորմություն առնում ու Ինքն էլ փոխարենը հատուցում. «Աղքատին ողորմություն տվողը փոխ է տալիս Աստծուն, եւ ըստ նրա տվածի էլ Աստված պիտի հատուցի նրան»: Եվ Ինքը Տերն ասում է. «Քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ինձ համար արեցիք: Եկեք, Իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը»:

Եվ ամենայն սրբոց բարեխոսությամբ՝ թող Քրիստոսը ընդունի ձեր հոգիների ողորմությունն ու նվերները՝ ըստ Իր հաճության, եւ մեկի փոխարեն հազարապատիկը ձեզ հատուցի այստեղ, իսկ այնտեղ՝ հավիտենական կյանքին արժանացնի՝ Իր Հոր եւ Սուրբ Հոգու փառքի համար հավիտյանս հավիտենից. ամեն:

Մաս I

ՏԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄԸ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻՆ*

Գիշերը լույս իջավ Սուրբ Վկաների մարմինների վրա: Ս. Սանդուխտը իր անձնվեր պաշտոնյաներից մի քանիսին գաղտնաբար ուղարկելով պալատ բերել տվեց ընտիր կտավ, համբուրեց եւ խանդաղատանքով պատեց իր երանելի ընկերների մարմինները, զգուշությամբ ամփոփել տվեց եւ վերադարձավ բանտ:

Այնտեղ էր Ս. Թադեոս առաքյալը՝ լույսերի մեջ պայծառացած, աղոթքի վիճակում, Սանդուխտ կույսը ընկավ նրա առջեւ, լալագին համբուրեց նրա ոտքերը եւ հառաչելով ասաց.

- Տե՛ր իմ, հա՛յր իմ, դու ինձ մոլորությունից ազատեցիր եւ իմ երկնավոր Փրկչին ինձ ճանաչեցրիր, օրհնի՛ր ինձ եւ հայցի՛ր երկնքից, որ ես շուտով հասնեմ իմ նահատակ ընկերներին եւ քեզ հետ արժանանամ տեսնելու Քրիստոսին:

Ս. Առաքյալը տեսնելով նրա լացը եւ անձնվիրությունը Քրիստոսին, ասաց.

- Երանի՛ քեզ, ո՛վ դուստր Երկնավոր Թագավորի, համբերի՛ր եւ շատ չանցած դու պիտի տեսնես ընկերներիդ լույսը: Եվ դուք՝,- խոսքը մյուս հավատացյալներին ուղղելով,- հաստատ մնացեք ձեր հավատքի վրա, դո՛ւք եւս պիտի արժանանաք լուսեղեն պսակին:

Երբ ավարտեց իր խոսքը՝ հաց բերեցին:

Ս. Առաքյալը օրհնեց եւ բաշխեց Ս. Սանդուխտին եւ ընկերնե-

*[20] էջ 34-36

րին, մի քիչ էլ ինքը կերավ, ապա գոհություն հայտնելով խաչակնքեցին եւ քնեցին:

Սակայն Ս. Թադեոսն արթուն էր եւ առանձին աղոթք էր անում.

- Տե՛ր իմ եւ Աստված, ով Հայր՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի, որքան կարող եմ գոհանալ Քո այն առատ ողորմության համար, որով ինձ՝ անարժանիս առաքելական կոչումի արժանացրիր, մաքրեցիր ինձ եւ Սուրբ Հոգուդ տաճար արեցիր: Դու տվեցիր ինձ այս աշխարհը՝ իբրեւ վիճակ քարոզության Ս. Ավետարանիդ եւ Դու կընդունես Քո սուրբ անվանդ հավատացողներին եւ Աստվածային լույսովդ, հրեշտակ-երամ բանակներիդ կմիացնես նրանց:

Ընդունի՛ր նաեւ մեզ իբրեւ անուշահոտ պատարագ եւ պահի՛ր անմեղ Սանդուխտ կույսին, տալով նրան քաջարի մարտիրոսության համբերություն եւ իր արքունի տան անցավոր պսակի փոխարեն՝ շնորհի՛ր իրեն երկնավոր լույսի անթառամ պսակը:

Հազիվ էր ավարտել նա իր աղոթքը եւ ահա վերստին երեւաց Փրկիչը եւ ողջունելով Ս. Թադեոսին ասաց.

- Խաղաղություն ձեզ, Իմ սիրելիներ:

Ս. Առաքյալը տեսնելով Տիրոջը՝ ընկավ ու երկրպագություն արեց:

- Լսեցի՛ աղոթքդ,- ասաց Փրկիչը,- պիտի կատարվի խնդրանքդ, դու պիտի մարտիրոսանաս Սանդուխտի եւ աշակերտներիդ հետ, եւ Ես պիտի լուսավորեմ ձեր ոսկորները եւ պիտի կատարեմ խնդրանքները բոլոր այն ուխտավորների, որոնք ջերմեռանդությամբ պիտի տոնեն ձեր հիշատակը, եւ սա՝ մասնավորապես քո շնորհի համար:

Ս. Թադեոսը աղերսեց.

- Տե՛ր իմ եւ Աստված իմ, գիտեմ, որ սիրեցիր ինձ եւ չթողեցիր ինձ մինչեւ այսօր, բայց մի թողիր նաեւ նրանց, ովքեր ինձնով հավատքի եկան, պահպանի՛ր նրանց իմ մահից հետո եւ անտես մի թողնիր այս աշխարհը, որի քարոզչության շնորհքը ինձ վիճակեցիր: Քո տիրական ահավոր լույսովդ փարատի՛ր կռապաշտության խավարը այս բարբարոս ազգի միջից: Մի՛ հատուցիր նրանց

ըստ իրենց անօրենության, այլ ամոթահար հալածի՛ր չար սատանային, որ պատճառն է իրենց մոլորության: Եվ այս աշխարհի բնակչությանը մշտնջենապես Քեզ սեփական ժողովուրդ արա, որ նրանք արժանի լինեն հանդիսանալու առաքինի Երկնաքաղաքացիներ, փառավորելու Աստվածությունդ:

- Ընդունեցի նաեւ այդ աղաչանքդ,- պատասխանեց Տերը,- քո քարոզչությանը վիճակված հավատացյալներին չպիտի թողեմ մինչեւ աշխարհի վերջը եւ շուտով պիտի կատարեմ փափագդ, պիտի այցելեմ նրանց եւ նրանցից պիտի ընտրեմ Ինձ ժողովուրդ՝ սեփական, որը կարողանա հասկանալ Իմ Ավետարանը, պիտի նայեմ նրանց եւ պիտի ողորմեմ: Եվ դու մնա՛ ուրախությամբ:

Այսպես խրախուսեց Փրկիչը եւ օրհնելով վերացավ: Ս. Առաքյալը արթնացրեց բոլոր հավատացյալներին, պատմեց իր տեսիլքը եւ Տիրոջ խոստումը, ուրախացրեց նրանց, ապա հրավիրեց աղոթքի սաղմոսելով.

- Պիտի օրհնեմ Տերը, ամեն ժամ:

Բոլորը չափազանց ուրախ կձայնակցեին իրեն եւ արտասվագին սաղմոս երգելով կփառավորեին Աստծուն:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏԵՍԻԼՔԸ*

Երբ սկսեցին նրա առջեւ թավալվել, ընկնել եւ բժշկություն խնդրել, քանզի թագավորը արտաքինով մարդկային տեսքից հեռացած էր եւ խայտառակ կերպարանք ուներ՝ պահպանելով միայն բանիմաստ խոսքի եւ լսելու ունակությունը, ապա նա աղաչանքներից հետո պատասխան տվեց՝ ասելով, թե «ես էլ ձեզ հետ, որպես ձեզանից մեկը, ձեր օգուտը կխնդրեմ եւ դուք սրտանց խնդրեցեք ձեր բժշկությունը, քանզի մարդասերն Աստված կողորմի ձեզ: Բայց փութացեք, շինեցեք վկայարանները, որ Աստծու նահատակներին հանգստություն տաք, որպեսզի նրանք էլ ձեզ փրկեն պատուհասների տանջանքներից եւ ազատվեք պատրաստված սարսափելի ու դառն հանդերձյալ խոստացյալ դատաստանից եւ արժանի լինեք Քրիստոսի արքայությանը: Նրանք խնդրեցին, որ իսկույն հրամայի անել՝ ինչպես եւ ինչ կկամենա: Իսկ նա պատմեց նրանց իր տեսիլքը ասելով.

«Արդ՝ եկեք պատմեմ ձեզ, եղբայրներ, Արարչի ձեր նկատմամբ ունեցած սիրո ապացույցը, որն ինձ երեւաց ահավոր տեսիլքով: Տեսայ Աստծու իջնելը Իր սուրբ նահատակների մոտ եւ սրանց անհամեմատ բարձրանալը, անապատում վերացումը երկնքի արքայության անզուգականության մեջ: Նա հայտնեց ինձ գալիք կենսաբեր պարգեւը, որը շնորհվելու է ձեզ, եւ ինձ աստվածակերպ սքանչելի անպատում տեսիլք երեւաց, որը փոքր ի շատե հանգամանալից կպատմեմ.

Այս գիշերվա կեսին, երբ դուք աշխատության ծանրությունից ու տքնությունից խոնջացած քուն էիք մտել, ես դեռ արթուն էի մնացել ու մտախոհ էի աստվածային ողորմության անքնին հրաշքների հանկարծակի կատարվելու, Նրա այցի եւ ձեզ աստվածագետ վարդապետության իմաստուն խրատների բովի մեջ ներգրավելու մասին: Մտածում էի նաեւ նահատակների իրենց սիրեցյալ Արարչի հանդեպ ունեցած սիրո մասին եւ նրանց համար փոխարենը պատրաստված անպատում հատուցումը եւ թե ինչպիսին է դա լինելու:

Հանկարծակի սաստիկ ձայն եղավ, որոտման բոմբյուն՝ ահավոր թնդյուն, ծովի խռովյալ ալիքների սաստիկ ձայնի նման: Բացվեց երկնքի հաստատության խորանաշեն ծածկը, եւ իջավ մի այր լույսի կերպարանքով, կանչեց իմ անունը ու ասաց. «Գրիգոր»: Նայեցի, տեսա նրա կերպարանքը եւ զարհուրած դողալով գետին ընկա: Ասաց ինձ. «Դու վեր նայիր եւ տես հրաշքները, որ քեզ ցույց եմ տալու»:

Եվ ես նայելով տեսա երկնքի հաստատությունը բացված ու նրա վրայի ջրերը նույն ձեւով ճեղքված ձորերի ու լեռների կատարների նման այս ու այն կողմ բաժանված դիզված էին աչքի տեսողության համար անբավ ու անկշռելի: Իսկ լույսը հոսելով վերեւից ներքեւ, մինչեւ երկիր էր հասնում եւ լույսի մեջ տեսա մարդկային կերպարանքով, լուսեղեն, երկթեւ անչափ զորք՝ թեւերը կրակի նման: Մանր փոշու հյուլեի նմանությամբ, որ արեգակնակեզ գարնան ժամանակ պատուհանների կամ երդիկների լուսանցույցի վրա շողերի մեջ խաղում է, նույնպես եւ լուսեղեն զորքը լցրեց ամբողջ երկիրը, իսկ իջնող լույսը առաջը ցցվեց զորքի հետ մեկտեղ:

Տեսա մարդկային մի ահավոր կերպարանք, բարձր ու ահեղ, որն առջեւից էր ընթանում եւ վերեւից մինչեւ ներքեւ վայրէջքի առաջապահն էր, ձեռքին ուներ ոսկե մի մեծ կռան եւ բոլորը Նրա ետեւից էին գալիս: Ինքը գալիս էր սլանալով, խոյանալով արագաթռիչք արծվի նման ու իջավ-հասավ մինչեւ երկրի հատակը, քաղաքի մեջտեղը խփեց լայնատարած գետնին եւ մեծ ու անչափ թնդյուններ հնչեցին անդունդների սանդարամետից: Ամբողջ երեւացող երկիրը, աչքին տեսանելի լինելու չափ, հարթ հավասար դաշտաձեւ տափակացավ:

***[1] էջ 106-114**

Եվ տեսա քաղաքի մեջ, արքունի ապարանքի մոտ, ճախարակաձեւ ոսկե խարիսխ, խոշոր բլրի մեծությամբ եւ նրա վրա հույժ բարձր հրեղեն սյուն, իսկ վրան ամպե խոյակ՝ լուսեղեն խաչով:

Նայեցի ու տեսա երեք այլ խարիսխներ. մեկը այն տեղում, ուր նահատակվեց սուրբ Գայանեն երկու ընկերների հետ, մեկը այն տեղում, ուր սուրբ Հռիփսիմեն նահատակվեց երեսուներկու ընկերների հետ եւ մեկը՝ հնձանի տեղում: Այդ խարիսխները կարմիր էին արյան գույնով, սյուներն ամպեղեն էին եւ խոյակները՝ հրեղեն: Երեք սյուների վրա կային լուսեղեն խաչեր, տերունական խաչի նմանությամբ եւ այս սյուների խաչերը նման էին այն լուսեղեն սյունի խոյակին, որը նրանցից բարձր էր: Չորս սյուների խաչերի վրա զարմանատես կամարներ միմյանց կապվեցին եւ դրա վրա գմբեթաձեւ խորանարդ ու աստվածակերտ, զարմանալի ամպեղեն շինվածք տեսա: Հորանից ներքեւ կամարների վրա տեսա այս երեսունյոթ սուրբ վկաներին սպիտակ հանդերձների լուսավոր կերպարանքով, որն անկարող եմ պատմել:

Շինվածքի կատարին տեսա զարմանալի, աստվածակերտ, սքանչելի, հրեղեն աթոռ եւ նրա վրա կար տերունական խաչը: Համատարած լույսը նրան պարուրելով խառնվեց խաչի ճառագայթներին եւ կպչելով միաձուլվեց: Շողացող լույսը սյուն դառնալով ցայտեց խարիսխների ներքին սյուների մեջ:

Եվ հորդաբուխ աղբյուր բխեց, հոսեց, ծավալվեց բոլոր դաշտերում ու ամեն ինչ լցրեց, որչափ աչքը տեսնում էր: Եղավ լի ու կապտագույն ծով, եւ դաշտերն առհասարակ երկնագույն երեւացին: Տեսա հրեղեն սեղաններ, անչափ բազմությամբ եւ ամեն մի սեղանի վրա, մեկական սյուն՝ վրան մեկական խաչով, որոնք իբրեւ աստղերի բազմություն երեւացին եւ անչափ փայլեցին:

Տեսա սեւ գույնի այծերի անթիվ հոտեր, որոնք ջուրն անցնելով ոչխարներ դարձան, իրենց գույնը սպիտակության փոխվեց եւ ոչխարի լուսեղեն բուրդը առհասարակ փայլում էր, ու նրա ճառագայթները փայլատակում էին: Մինչդեռ նորից նայում էի, հոտերը հանկարծակի ծնվեցին ու բազմացան, ծնունդներն ամեն կողմ լցրին, եւ ծնված գառները ամենքը լուսագեղմ էին: Հանկարծ այլ ծնունդներ շատացան, բազմացան, եւ կեսն ընկնելով գետի մեջ ջրի այն կողմը ելան: Գառները դարձան թուխ գայլեր եւ գնացին հարձակվեցին հոտերի վրա, սկսեցին կոտորել, եւ արյան ճապաղիք եղավ: Մինչդեռ, նայում էի, տեսա, որ հոտերին թեւեր բուսան եւ դարձան թեւավորներ ու վերացան խառնվեցին լուսեղեն զորքերին: Հրեղեն հեղեղ բարձրացավ ու վերցրեց տարավ գայլերին:

Իսկ ես նայելով զարմանում էի: Եվ այն այրը, որն առաջ իմ անունն էր կանչել, ցույց տվեց ինձ եւ ասաց, թե՝ «ով մարդ, ինչո՞ւ ես զարմացած եւ չես ըմբռնում Աստծու մեծամեծ գործերը»: Ասացի. «Ինչպե՞ս, Տեր»: Ասաց ինձ. «Այս տեսիլքը քեզ ցույց տրվեց, որպեսզի ըմբռնես: Եթե ահավասիկ բացված է երկինքը, գիտեցիր, որ բացված են Քրիստոսի մարդասիրության դռները Իր արարածների համար: Իմացիր, որոտման հնչող ձայնը այն է, որ Աստծու գթության ու ողորմության անձրեւն է իջնում: Բացված են ահա երկնքի դռները, բացված են եւ նրա վրա եղած ջրերը, որպեսզի արգելքներ չլինեն այս աշխարհի մարդկանց վեր ելնելու: Այս սուրբ նահատակները, որ այստեղ նահատակվեցին, հյուսիսային կողմերին ճանապարհ բացին, քանի որ իրենք ելան եւ այլոց շավիղներն ուղղեցին:

Ահա լույսը, որ այս վայրերը լցրեց՝ Ավետարանի քարոզությունն է. այն լցնելու է նաեւ հյուսիսի կողմը: Եվ լուսեղեն զորքերը շատ փափագեցին իջնել նահատակների վարդագույն արյան անուշ, ծաղկանման բուրմունքի համար. մանավանդ այսուհետեւ հրեշտակների բազմությունները խառնվելու են մարդկանց հետ բնակվելու համար:

Իսկ ահավոր ու շքեղ Այրը, որ գնում էր լույսի առջեւից՝ ոսկի կռանը Իր ձեռքին, հարվածեց սանդարամետին, ապա դա Աստծու Նախախնամությունն է, «Որը նայում է երկիր եւ դողացնում, մերձենում է լեռներին, եւ նրանք ծխում են»: Աստվածային այդ ահը հարթեց, կործանեց եւ տապալեց մոլորությունը երկրից: Իսկ այն, որ երկրի վրա հնչեց, ապա դա ծառայության հնազանդության ձայնն էր, որ խոսեց:

Իսկ սյունը, որի խարիսխը ոսկի է եւ ինքը՝ հրեղեն, խոյակը ամպեղեն եւ վրան լուսեղեն խաչ, ապա այդ ոսկի խարիսխը հաստատության անշարժ վեմն է, հրեղեն սյունը կաթողիկե եկեղեցին է, որն իր թեւերի տակ հավաքում է բոլոր ժողովուրդներին հավատքի մի միության մեջ: Ամպե խոյակը ընդունելու է արդարներին, երբ Տիրոջ գալստյան ժամանակ թռչեն Նրան ընդառաջ՝ բարձրանալու:

Նրա վրայի լուսավոր խաչը ինքը մեծ քահանայապետությունն է, ժողովուրդների մեջ, օրինակն է Քրիստոսի մարմնացյալ պատկերի, Աստվածորդու քահանայապետության օծության: Այդ տեղում թող Աստծու տաճարը լինի, բոլոր հավատացյալների աղոթքի ու խնդրանքների տունը եւ քահանայապետության աթոռը:

Իսկ երեք խարիսխները, որոնք արնագույն կարմիր էին, նահատակների նեղությունների, չարչարանքների ու մահվան համբերության համար են, քանզի իրենց մահը հավատքի ճշմարտության խարիսխ դարձրին՝ իրենց արյունը թափելով: Ամպեղեն սյուներն այն բանի համար երեւացին, որ ամպը հարության երկինք վերանալու թեթեւ արագությունն ունի: Եվ հրեղեն խոյակը նշանակում է, որ նրանց բնակությունը աստվածային լույսի հրի մեջ է լինելու:

Խաչերը խորհրդանշում են նահատակների չարչարանքը, որը նման է Տիրոջ չարչարանքներին, եւ նրանք մեռան նրա փոխարեն, քանի որ Աստծով ապրեցին ու Քրիստոսի հետ խաչվեցին, եւ Քրիստոսը կենդանի է մնում նրանց ոսկորների մեջ, որ բոլորին ցույց տա նրանց կենդանությունը՝ հայտնի դարձնելով նրանցից ստացված Իր գիտության անուշ բուրմունքը եւ հռչակելով նրանց առաքինությունը ամբողջ աշխարհում: Քանզի նրանք սպանեցին երկրավոր մարմինները եւ կախեցին Տերունական Խաչից. չարչարակից եղան իրենց Տիրոջը, նույնպես հաղորդակից են լինելու Նրա փառքին ու զորությանը:

Եվ առաջին խաչը, որ քեզ ցույց տրվեց, քահանայական

պատվի պարծանքն է՝ Քրիստոսի խաչի փառավորությամբ: Իսկ մյուս երեք խաչերը տեղադրված էին սրբերի գերեզմանների մատուռների տեղում, որպեսզի նրանց արյան թափված տեղում շինվեն իրենց ոսկորների հանգստյան մատուռները: Իսկ որ առաջին սյունը բարձր է, նրանից է, որ կաթողիկե եկեղեցու պատիվը ավելի մեծ ու բարձր է, քան սրբերի ամեն բարձրությունները: Կամարները, որոնք սյուներն իրար էին կապում, կաթողիկե եկեղեցու հավասար միաբանության նշանն են: Իսկ վրայի խորանը վերին քաղաքի եւ երկնքի արքայության միաբան ժողովարանի օրինակն է:

Եվ քանի որ նահատակները քեզ երեւացին, իմացիր, որ, ասում է՝ այս մահը ժամանակավոր է, իսկ նրանց կենդանությունը՝ հավիտենական, փառավորված ի փառս Աստվածորդու, որի համար էլ խաչի օրինակը իրենց անձի վրա են տպավորել:

Շինվածքի գագաթին, որը տեսնում ես, նույն ինքը բարձր ինքնագո Աստծու ամենազոր էության աթոռն է, քանզի նա ինքը սուրբ եկեղեցու գլուխն է եւ ամեն բարությունների կատարիչը: Նրան պատշաճում է ամեն շինվածք, եւ աճում է նա աստվածային աճով, ու նրանով են բոլոր մարմինները հոդերով, խաղերով, անդամներով հաստատված ու կազմված:

Խաչին փարած լույսը հենց նույն աստվածային Հոգին է, որը փառավորում է Որդուն: Եվ խառնվեց նրա ճառագայթներին, քանզի Ինքը Որդուց է վերցնում եւ պատմում Իրեն սիրողներին: Իրար միացան, քանզի մեկ է աստվածային էությունը: Եվ լույսը ծագեցրեց չորս սյուների մեջ ու հորդաբուխ աղբյուր բխեցրեց, որովհետեւ կաթողիկե եկեղեցուց են շնորհները, իսկ նահատակների ու քահանայության մեջ բխելու է մկրտության աղբյուր՝ լվանալու հոգու աղտը մարմնականով հանդերձ: Եվ այն, որ հորդեց, լցրեց շատ վայրեր, բազմաթիվ ժողովուրդների մկրտությամբ փրկություն է լինելու: Իսկ եթե երկնագույն երեւացին բոլոր դաշտերը, նշանակում է, որ երկիրը երկնքի նման է լինելու, որպես հրեշտակների ու մարդկանց խառնուրդ:

Հրեղեն սեղանների բազմությունը, որ քեզ երեւում է, արդարեւ իսկ լինելու են Աստծու սեղաններ, որոնք քավություն կբաշխեն ամենքին: Եվ այն բանի համար հրեղեն երեւացին, որպեսզի Հոգու պաշտամունքը փառքով լինի: Սեղանների վրա մեկական սյուները քահանայության աղոթքի ժամերգությունն են, իսկ նրանց վրայի խաչերը Քրիստոսի սուրբ անունը ամեն տեղ փառավոր դարձնելու համար են: Նրանց՝ աստղերի նման շատ լինելը այն բանի համար է, որ սրբության պաշտամունքը աստղերի չափ բազմանա:

Սեւ այծերի բազմության հոտերը, որոնք ջուրն իջնելիս սպիտակ ոչխարներ դարձան, նշան են այն բանի, որ ահա աստվածային շնորհների աջը հասնելու է քահանայապետության միջոցով, որի ձեռքը մկրտության աղբյուր է բխեցնելու բազմաթիվ մեղավորների թողության, քավության համար: Իսկ նրանց լուսեղեն բուրդը, որ փայլած, պայծառացած էր, նշանակում է, որ մկրտվածները լույսով են զգեստավորվելու եւ խոստացված արքայությանը արժանի են լինելու: Եվ եթե հոտերը ծնեցին, բազմացան եւ բոլոր վայրերը լցրին, ապա նշանակում է երկար ժամանակ աճեցնելու է քարոզությունը, եւ լինելու են նոր ծնունդներ, բազմացնելու է մկրտությունը:

Եվ այն, որ հոտերի կեսը ջուրն էր ընկել եւ ելել այն կողմը, որտեղից անցել էին, նշանակում է, որ հետագայում մարդիկ անօրեն են դառնալու՝ հեռանալով ճշմարտությունից, աստվածային սրբության ուխտի դրոշմը մի կողմ են գցելու, եւ շատերը լքելու են սուրբ ուխտը: Գառներից գայլեր են դառնալու, որոնք կոտորելու են սուրբ գառները, նշանակում է, որ նրանք, հեռանալով ճշմարտությունից ու քահանայության ուխտից՝ գայլեր կդառնան, եւ կլինի գառների, այսինքն ուխտի ու քահանայության արյունահեղություն եւ ժողովուրդների խռովություն: Իսկ նրանք, որ հավատարմությամբ կհամբերեն, լինեն գառներից, ժողովրդից կամ քահանաներից, թեւեր են առնելու եւ վերանալու Քրիստոսի արքայությունը: Իսկ որոնք գայլերի մտադրություն կունենան,

կամ նրանց հափշտակության գործերը կկրկնեն, անշեջ հրի են մատնվելու:

Եվ դու, ասաց ինձ այրը, պինդ կաց, քաջ եւ զգույշ եղիր, քանզի գործը եկել հասել է քեզ, հեշտությամբ բարություն է արվելու, եւ ճշմարիտ մշակների հետ առնելու ես Քրիստոսի անպատում պարգեւները: Արդ՝ զգույշ եղիր ավանդիդ, որը քեզ վստահվեց Տեր Հիսուս Քրիստոսից: Շինիր Աստծու անվան տաճար քեզ ցույց տրված տեղում, ուր հրեղեն սյունը ոսկի խարիսխ ուներ, եւ սրբերին վկայարաններ՝ այն տեղում, ուր զոհվեցին նրանք աստվածության հույսի, կենդանության համար, որպեսզի բժշկվեք հարված կրողներդ, քարոզությունը՝ օրըստօրե, հարատեւորեն հաջողություն ու առաջադիմություն ունենա եւ Քրիստոսի հավատքի մեջ ամենքը չափահաս դառնան»:

Երբ այս ասաց, ցնցում եղավ, եւ լուսաբացին տեսիլքը ծածկվեց:

Արդ Ամենարարը, Ամենաստեղծը, Ամենիմաստը, Ամենատերը, Ամենակալը, Ամենագյուտն ու Ամենաբժիշկը խրատեց ձեզ, որպեսզի Իր աստվածությանը մերձավոր դարձնի: Դրա համար էլ մեր միջոցով ձեզ ցույց տվեց կենաց ճանապարհը եւ փրկության հանգամանքները՝ միաժամանակ թողությունը բերելու ձեզ հասցնելու համար: Ահա թե ինչու գալիք բաների տեսիլքը ցույց տվեց ինձ, որպեսզի ձեզ պատմեմ, Նրա կամքը ժամանակին ձեզ վրա կատարելով: Արդ՝ դուք էլ ասածներս, ըստ հրամանների, փութացեք կատարել: Եկեք շինենք վկայարանները, նահատակներին գերեզմանները տեղափոխենք, որպեսզի նրանք ձեզ տանեն նորոգության:

Այս ասելով՝ հրամայեց շինվածքի նյութը շուտափույթ պատրաստել: Մարդկանց ամբողջ բազմությունը այս լսելով, յուրաքանչյուրը գնաց նյութերը պատրաստելու: Հրամայված տեղերում կուտակում էին մեկը վեմ, մեկը քար, մեկն աղյուս, մեկը մայրի փայտ, պատրաստում էին խնդալից փութով եւ մեծ երկյուղով:

Իսկ ինքը՝ սուրբ Գրիգորը, շինողների ճարտարության լարը ձեռքն առնելով երանելիների վկայարան հանգըստարանների

հիմքերն էր պատրաստում: Բազմության մեջ ամեն մեկն իր օժանդակությունը բերելով՝ ձգտում էր շինվածքի կառուցումն ավարտել գեղեցկադիր ու հարմար հիմքերի վրա: Ամեն ոք մի գործ էր ձեռնարկում, եւ անգամ կանայք օգնելով, ըստ իրենց կանացի տկար ուժի, այսպես առհասարակ գործ էին կատարում հավատքով ու մեծ երկյուղով, որպեսզի ոչ ոք ամենեւին անմասն չմնա շնորհների փրկությունից եւ չզրկվի բժշկությունից:

ՍՈՒՐԲ ՀՈՒՍԻԿԻ ՏԵՍԻԼՔԸ*

Թագավորական տունը նրա հետ թշնամացել էր, եւ մինչ աներները այս բանի համար նրան անարգում էին, կինը մեռավ, եւ Հուսիկը վեճ ու աղմուկից ազատվեց: Եվ մինչ նա հոգս էր տանում իր ծնած, մորից որբ մնացած զավակների մասին եւ այսպիսի մտահոգությամբ աղոթում էր Աստծուն, Տիրոջ հրեշտակը երազում երեւաց ու ասաց նրան. «Հուսի՛կ, Գրիգորի որդի, մի՛ վախենա, որովհետեւ Տերը քո աղոթքները լսեց, եւ ահա քո այդ զավակներից կծնվեն ուրիշ զավակներ, որոնք Հայաստան աշխարհիս լուսավորիչներ եւ հոգեւոր իմաստության աղբյուրներ կլինեն: Նրանցից կբխեն Աստծու պատվիրանների շնորհներ, լիուլի խաղաղություն եւ շենություն, շատ եկեղեցիների հաստատություն կտրվի նրանց Տիրոջից, մեծ հաղթությամբ ու զորությամբ, շատ մոլորվածներ կդառնան դեպի ճշմարտության ճանապարհը, ուստի եւ նրանց շնորհիվ Քրիստոսը կփառաբանվի շատ լեզուներով: Նրանք կլինեն եկեղեցիների սյուներ, կյանքի խոսքի մատակարարներ, հավատքի հիմք, Քրիստոսի սպասավորներ եւ Սուրբ Հոգու ծառաներ, որովհետեւ որտեղից որ շինվածքի հիմքն է, այնտեղից էլ կատարն է: Նրանց մշակող ձեռքերով շատ պտղաբեր, շահավետ եւ օգտավետ տունկեր կտնկվեն հոգեւոր պարտեզում եւ Աստծուց կօրհնվեն: Իսկ որոնք որ չեն կամենա նրանց միջոցով տնկել եւ գիտության նույն հոգեւոր ցողից ոռոգվել, նրանք կանիծվեն ու կմերժվեն, եւ նրանց վերջը կլինի դժոխքի կրակը: Նրանք շատ անգամ Տիրոջ համար անարժանների կողմից կենթարկվեն թշնամանքի ու նախանձի, բայց վեմի նման հաստատ կմնան իրենց հավատում եւ մեծ համբերությամբ նրանց կհաղթեն: Նրանցից հետո կթագավորի ստությունը՝ անզուսպ, անձնասեր, արծաթասեր, խաբեբա, անվստահելի, անպիտան, ստախոս, բանսարկու մարդկանց ձեռքով, այնպես որ շատ քչերը կմնան, որ կարողանան հաստատ պահել հավատի ուխտը»:

Մանուկ Հուսիկը հրեշտակից այս ամենը լսելով՝ մեծ մխիթարությամբ գոհանում էր Տեր Աստծուց, որ իրեն արժանացրեց այսպիսի բան հայտնող պատասխանի, եւ իր կյանքի օրերում միշտ ու հանապազ գոհանում էր:

*[21] էջ 72-73

ՍՈՒՐԲ ԴԱՆԻԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ*

Մեծամեծ նախարարները մի տեղ հավաքվելով՝ ժողով կազմեցին, խորհուրդ արին եւ թագավորին համոզեցին, որ ծերունի Դանիելին բերեն իրենց կողմը, որպեսզի նրան իրենց գլուխ եւ առաջնորդ նշանակեն, եւ նա նստի հայրապետական աթոռը: Նրա մոտ ուղարկեցին Սահառունյաց տոհմի Զոմն իշխանին, Վանանդի Արտավան իշխանին, Ամատունյաց տոհմի Կարեն իշխանին եւ Դիմաքսյան տոհմի Վարազ իշխանին: Այս նախարարներն եկան, նրան գտան Եկեղյաց գավառում, Թիլ գյուղի եկեղեցում, որտեղ նա զբաղված էր Աստծու սպասավորության գործով: Նրան առան բերին Աղձնյաց գավառի Բառաեջ ավանը, Տիրան թագավորի մոտ: Եվ երբ մեծ Դանիել քորեպիսկոպոսը Տիրանին ներկայացավ, իսկույն սկսեց մեղադրել ու հանդիմանել:

Նա առաջ եկավ, սկսեց խոսել, ասելով. «Ինչու դուք մոռացաք ձեր արարիչ Աստծուն, Նրա՝ ձեզ ցույց տված գութը, հրաշքները եւ խրատները, որ կատարեց ձեր հայրերի ու ձեր հանդեպ, իսկ դուք էլ դարձաք ձեր նախնիների մոլար կռապաշտության՝ ատելության, ագահության, զրկողության, աղքատներին հարստահարելու, պոռնկության, նենգության, միմյանց զրկելու, սպանություններին: Դուք լքվեցիք ու ընկաք, ետ կանգնեցիք արդարության ճանապարհից, դուք թողիք ձեր բարերար Աստծուն, որ ձեզ ոչնչից ստեղծեց ու հաստատեց, եւ մոլորվելով նրանից օտարացաք: Մինչ դուք ձեր անձերը կորուստի էիք մատնել, Նա Ինքը եկավ ձեզ փնտրելու եւ գտնելու, թեպետ Նա Ինքը Աստծու Միածին Որդին էր, բայց եկավ, իջավ՝ Իր արարածներին Իր Հորը ճանաչեցնելու: Նրան թեպետ չլսեցին, այլ դեռ մինչեւ մահ չարչարեցին, բայց Նա համբերեց, Իր զորությունը ոչ ոքից չթաքցրեց, որպեսզի ամենքի

*[21] էջ 96-99

կյանքի պատճառ դառնա: Ում որ Նա արժանավոր գտավ եւ Իր հարությանը պատրաստված, նրանց ընտրեց, սովորեցրեց եւ արձակեց իբրեւ քարոզիչներ, կոչնակներ եւ հրավիրակներ՝ ձեզ դեպի փրկության լույսը հրավիրելու:

Սակայն դուք այն բանում էլ Նրա երախտիքների փոխարեն ապերախտություն ցույց տվիք. դուք նախ եւ առաջ սպանեցիք այն նպատակով ձեզ մոտ եկած քարոզչին, առաքյալին, հրավիրակին, որ եկել էր ձեզ հրավիրելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի արքայությունը, դեպի փրկության շնորհը: Դուք ձեր անմտությամբ տիրասպան հրեական ազգի խորհրդին հաղորդակից եղաք. որովհետեւ նրանք իրենց կարծիքով Տիրոջն սպանեցին, իսկ ձեր հայրերը Նրա առաքյալներին սպանեցին, եւ հետո նրանց նմաններին չարչարեցին նույնպիսի բանի համար: Այս անցքերից հետո եկան Աստծու բազմաթիվ սուրբ վկաներ, նույն առաքյալների ճգնակիցներ. նրանք չարչարանքների վտանգին ենթարկվեցին, մինչեւ մահ տոկացին մնացին, որպեսզի ցույց տան ձեզ ճշմարտությունը, գուցե նրանց միջոցով խելոքանաք եւ Աստծու Որդուն ճանաչեք: Բայց դուք նրանց վերաբերությամբ էլ կատարեցիք ձեր չար կամքը, ձեր սովորական սպանությունը, բայց եւ այնպես Նա նրանց արյունով, որ ասացի, եւ զանազան հրաշքներով ձեզ խրատեց եւ ձեզ մահվան չենթարկեց Իր մեծ ողորմությամբ, ձեզ Իրեն մերձավորներ դարձրեց, ձեզ հաղորդակից արեց Իր բուն, կենդանի վարդապետությանը, ուղիղ օրենքներին, Իր սիրելուն, Որդու մեծությանը»:

Սրանից հետո ձեզ ներեց ձեր բոլոր հանցանքները եւ Իր սիրելիներին ձեզ համար ուսուցիչներ դարձրեց: Բայց դուք ոչ մեկը չհիշեցիք, մտքում ու սրտում չպահեցիք, այլ հրեական ազգին նմանվելով, ետ կանգնեցիք, նրանց գործերի նման սկսեցիք եւ դուք գործել: Մինչդեռ դուք պետք է հիշեիք ձեր Տիրոջ՝ Քրիստոսի երախտիքը, որ չհիշեց ձեր հայրերի մեղքերը եւ ձեր անօրեն գործերը: Դուք պարտավոր էիք չմոռանալ ձեր սուրբ հայրերի՝ ձեր խրատիչների եւ ուսուցիչների ճիգ ու ջանքը, որոնք շա-

ռունակ տքնում էին ձեր հոգիների փրկության համար, դուք պետք է սեր ունենայիք նրանց նկատմամբ, որոնք Աստծու խոսքը ուսուցանելով ձեզ հոգեպես երկնեցին եւ նորից ձեզ ծնեցին ու նորից ձեր անհավատ դառնալու համաձայն, դարձյալ իրենց ընկերների, չարագործությունները ապաշխարելու համար իրենք իրենց խնդրանքներով վերստին երկնեցին ձեզ՝ մինչեւ որ Քրիստոսին տպավորեն ձեր մեջ, որպեսզի արժանանաք երկնքի արքայությունը մտնելու: Պատշաճ էր, որ դուք էլ խնամեիք նրանց որդիներին ու աշակերտներին, որոնք ըստ հոգեւոր խոսքի, նրանց որդիներն էին աստվածային ծնունդով, ձեր առաջնորդներն ու վերակացուները, Տիրոջ կողմից, մանավանդ որ մարմնով էլ նրանց ծնունդներն էին եւ հոգեւոր գործերով իրենց հայրերից պակաս չէին:

Բայց դուք թողիք Աստծուն եւ կրկնեցիք ձեր նախկին չարիքներն ու ձեր հայրերի մեղքերը գերազանցեցիք: Ինչպես որ ձեր հայրերը չարչարելով սպանեցին սուրբ հայրերին՝ չկամենալով օգտակար խրատը լսել նրանցից, այսպես էլ դուք նրանց որդիներին ու ժառանգներին, նրանց գործակիցներին եւ նմանվողներին սպանեցիք, որոնք ձեր հանցավոր գործերին համաձայն չէին, սուրբ մանուկ Հուսիկին՝ ձեր հայրապետին, Թադեոս առաքյալի եւ նրան նմանվող Գրիգորի վիճակի վիճակակալին ու աթոռակալին: Դուք հրեական վարմունքին ու օրինակին հետեւեցիք, նրանց սպանություններին, զրկողություններին. ինչպես որ նրանք, անխրատ լինելով, իրենց առաքյալներին ու մարգարեներին կոտորեցին, նրանց պես արեցիք եւ դուք:

Արդ՝ ձեր այսքան ստությունների ու պղծությունների պատճառով Տերը ձեր թագավորությունը, քահանայապետությունը ձեզանից կվերացնի: Դուք կցրվեք ու կբաժանվեք, ձեր սահմաններն էլ Իսրայելի նման ցրիվ կգան, դուք կմնաք անտեր, անխնամ, ոչ ոք ձեզ չի խնայի, դուք խաշներ կդառնաք, որոնք հովիվ չունեն: Ինչպես հոտ՝ կմատնվեք գազանների ձեռքը, ձեր փառքերից կզրկվեք, օտար թշնամիների ձեռքը կմատնվեք իբրեւ գերի, նրանց ծառայության լծի տակ կընկնեք, եւ այս ծառայության լուծը երբեք ձեզանից չի վերանա, չի պակասի, ձեր պարանոցից երբեք չի պակասի ծառայության՝ չարաչար ստրկության լուծը, ձեր ցանկությունների մեջ հալումաշ կլինեք: Ինչպես որ Իսրայելը պատառվեց եւ այլեւս չկարկատվեց, այնպես էլ դուք կցրվեք ու կկործանվեք. ձեր վաստակները ուրիշները կվայելեն, ձեր բարիքները ուրիշները կուտեն, եւ չի լինի մեկը, որ ձեզ փրկի, Տերը չի քաղցրանա, ձեզ չի նայի, ձեզ այլեւս չի փրկի:

Բայց դուք ինչո՞ւ ինձ կանչեցիք, որ ելնեմ գամ ձեզ մոտ. Ա՜յս էիք դուք կամենում ինձանից լսել: Բայց ես թեկուզ այս ամենը ձեզ չպատմեի, այնուամենայնիվ, այս բոլորը պետք է ձեզ պատահեր, որովհետեւ դուք սպանեցիք այն արդար մանուկ Մեծ Հուսիկին՝ ձեր առաքինի առաջնորդին, որ Գրիգորի զավակի տնից էր: Այո՛, այս բոլորը ձեզ պիտի պատահի, որովհետեւ Տերը այսպես ինձ ցույց տվեց: Այլ որ դուք մարդ ուղարկեցիք ինձ մոտ, ինձ կանչեցիք, թե ե՛կ, մեզ ղեկավար եւ առաջնորդ եղիր. ես ինչպե՞ս առաջնորդ լինեմ նրանց, որոնք Տիրոջը չեն հետեւում, կամ ինչպե՞ս ղեկավար լինեմ մի ազգի, որին Տերը լքեց: Ինչպե՞ս կարող եմ ես ձեռքերս բարձրացնել առ Աստված աղոթելու այն մարդկանց համար, որոնց ձեռքերը շաղախված են Տիրոջ սրբերի արյունով, կամ ինչպե՞ս աղոթք ու պաղատանք մատուցեմ նրանց համար, որոնք թիկունքները դարձրին դեպի Տերը եւ ոչ երեսները. կամ ինչպե՞ս բարեխոս լինեմ նրանց համար, որոնք ըմբոստացան. կամ ինչպե՞ս Աստծուն հաշտեցնելու խոսք ասեմ նրանց համար, որոնք նրանից փախել են եւ չեն ուզում ետ դառնալ, որոնց համար Տերն Ինքը պատրաստել է այս բոլոր չարիքները այն պատճառով, որ ասացիք, թե Տերը չի տեսնում»:

Այս բոլորը եւ սրանց նման ուրիշ բաներ ասաց ծերունի Դանիել քորեպիսկոպոսը՝ Տիրան թագավորի, իշխանների, պետերի եւ բոլոր զորքերի առաջ: Եվ մինչ նա ասում էր այս ամենը, թագավորը ապշած, զարմացած լուռ լսում էր: Եվ երբ այս բոլորը լսեց,

զայրացավ. բռնակալական չար ու դառն ցասումով բորբոքվեց, հրամայեց անմիջապես նրան խեղդամահ անել: Սպասավորները հրամանը լսելով՝ իսկույն կատարեցին: Թեպետ մեծամեծ ավագ նախարարները շատ հորդորեցին թագավորին, որ չար կամքը չկատարի, բայց նա այնքան դառնացած էր սրտով, այնքան զայրացած էր, որ նրանց չլսեց: Պարանը վիզը գցելով խեղդամահ արին: Այսպես վախճանվեց սուրբ Դանիելը:

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԵՐԱՋԸ ԵՎ ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՇԱԿ 2-ՐԴ ԹԱԳԱՎՈՐԻՆ*

Այդ՝ երբ Ներսես հայրապետը Հայաստան վերադարձավ, վերահասու եղավ իր տեղապահի՝ սուրբ Խադի գործերին եւ տեսավ, որ նա ճշմարտությամբ եւ ուղղությամբ էր գործել, գնացել էր տեր Աստծու ճանապարհով, ո՛չ աջ էր շեղվել եւ ոչ ձախ, ուստի մեծ գոհություն էր մատուցում Աստծուն, որ իր հոգեւոր որդուն՝ Խադին, տեսավ այնպես, ինչպես ինքն էր կամենում: Նրան ընդունեց սիրով ու կարոտով: Բայց երբ Խադից լսում էր թագավորի բոլոր անօրինությունները, չար գործերը, ծուռ ընթացքը, տրտմում, լացուկոծ էր անում, ողբում էր ծանր հեծեծանքով, մանավանդ Արշակավան քաղաքի պատճառով, որ շինվեց շատ մեղքերով, անօրինությամբ, չարությամբ եւ հափշտակությամբ:

Ապա սուրբ Ներսես հայրապետը մտավ թագավորի մոտ, խոսեց նրա հետ եւ ասաց. «Ինչո՞ւ դու մոռացար Տիրոջը... ինչո՞ւ թողեցիր Նրա պատվիրանները, Արարչին, որ ամեն ինչ ոչնչից ստեղծեց, որ որբերի հայրն է, այրիների դատավորը, որ մեզ համար աղքատություն կրեց. Նա, որ աղքատներին անտես չի անում, այլ իր մարդասիրությամբ նրանց խնամում է: Աստված արդար դատավոր է, հզոր եւ երկայնամիտ: Նա բոլոր տառապյալներին լսում է եւ ոչ ոքի արհամարհանքը Իր վրա չի վերցնում»: Դու ինչպե՞ս եւ ինչի՞ց դրդված արհամարհեցիր Նրա պատվիրանները. չէ՞ որ քո հայրն էլ այսպիսի ամբարշտության պատճառով կորավ: Իսկ դու դեռ չհիշեցիր Նրան, որ քո հոր մեղքերը չհիշեց եւ քեզ տվեց նրա տեղը, այսինքն քո հոր թագն ու աթոռը: Դու քո Տեր

*[21] էջ 162-163

Աստծու առաջ սկսեցիր անօրինություններ գործել, ամբարշտություն, անիրավություններ բոլորովին սոդոմացիների նման, եւ այս բաները դու հայտնապես պարծենալով պատմում ես: Ամբողջ երկիրը լալիս է, վա՜յ է կանչում այն զրկանքների եւ հափշտակությունների պատճառով, որոնցով դու կամեցար մեծանալ. դու չհագեցար քո ընդարձակ թագավորության հարստություններով, որ քեզ պարգեւեց բոլորիս Տեր Քրիստոսը:

Արդ՝ լսի՛ր, ինչ որ քեզ ասում եմ, եւ կատարի՛ր, որպեսզի կարողանաս քեզ փրկել Աստծու բարկությունից, եւ թշվառ Հայոց աշխարհն էլ քո պատճառով չկորչի. որովհետեւ ես երազ տեսա, որ Հայոց կորստական աշխարհի համար կորուստ եւ կործանում է պատրաստվում գալ: Դու հրաման տուր, որ այն տեղը քանդեն, քո ժողոված մարդկանց ցրիր, որ գնան, տարածվեն, սփռվեն իրենց տեղերը, գնան եւ ամենքին վերադարձնեն ինչ որ պարտք են, որպեսզի բարկության ու չարիքների խորքերը չընկնես ու չկորչես: Իսկ քո գործած մեղքերի համար ամբողջ երկրին հրաման կտանք, որ քո փոխարեն պաս պահեն, աղոթք անեն, եւ մենք էլ քեզ հետ միասին ապաշխարության մեջ մտնենք, գուցե Տերը ների քո գործած անչափ մեղքերը: Եթե դու այն տեղին շատ ես փափագում, ես ինքս կշինեմ արդարությամբ եւ շեն կպահեմ քեզ համար»:

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ*

Մուշեղ Մամիկոնյանը, Հայր մարդպետը, Վրաց Բակուր իշխանը, Բագրատ իշխանը, Հայկն Հայկազունի, Մերուժան Արծրունի իշխանը, Համամ Մեչետենի իշխանը եւ այլ մեծամեծ իշխաններ, նախարարներ, տանուտերեր, Հայոց աշխարհի գավառապետեր եւ եպիսկոպոսներ ստիպում էին սուրբ Ներսեսին, որ ընդուներ դեղաթափն, այսինքն՝ հակաթույնը, բայց սուրբ քահանայապետը հրաժարվում էր՝ ասելով.

-Ե՛ս էլ Աստծո օգնությամբ կարող եմ մարմնիցս վանել ցավը, բայց թողնում եմ, որպեսզի չխափանվի ճանապարհս առ Աստված, քանզի կանչում է ինձ Նահատակադիրն՝ հատուցելու տառապանքներիս վարձը: Բայց քանի որ Արշակունիների տոհմը Հայոց աշխարհից վերացրեց բազում լուսավոր այրերի՝ մարելով իր իսկ լույսը, Տերը կամենում է ավերել նրանց, ինչպես որ Իսրայելն ավերեց: Արդ՝ ինչ որ իմ դեմ գործեցին՝ կներվի նրանց, քանզի ցանկությունս ի կատար ածվեց: Բայց հիսուն տարին լրանալուց հետո քահանայությունը կվերցվի իմ սուրբ նախահոր՝ Գրիգորի տոհմից, դրա հետ նաեւ թագավորությունը՝ Արշակունիների տոհմից՝ մինչեւ անապատի օձի մերձենալը: Այնուհետեւ՝ հարյուրհիսուն տարին լրանալուց հետո, պարսիկները կգրավեն սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, եւ կգերեվարեն Սուրբ Խաչը, բայց երբ այն գերեդարձվի Պարսկաստանից, այլեւս չի վերադառնա Երուսաղեմ. իսկ Երուսաղեմը այլեւս չի մնա հույների տիրապետության տակ, այլ արաբները կտիրեն այն եւ հարկատվության տակ կդնեն հույներին՝ մինչեւ արիական ազգի մերձենալու ժամանակը: Ապա Երուսաղեմը կգրավեն հռոմեացիները, որ ֆռանկ-

*[12] էջ 88-104

ներ են կոչվում, եւ կվերացնեն հույների հարկատվությունը:

Արդ, Հայոց աշխարհի ավերման սկիզբը նենգությունից եւ միմյանց հանդեպ անհնազանդությունից կլինի, քանզի իշխանները չեն հնազանդվի, այլ կբաժանեն յուրաքանչյուր գավառը. եւ միմյանց թիկունք չեն կանգնի, այլ թշնամիների կողմը կանցնեն: Նրանցից յուրաքանչյուրը կելնի հայրենի երկրից եւ կմտնի հույների իշխանության տակ՝ նրանց ստրկանալու եւ ծառայելու համար, եւ այդպիսով կպակասի նրանց իշխանությունը:

Հույն թագավորները երկարակյաց չեն լինի եւ չեն մտածի պատերազմների մասին, այլ՝ միայն հարկերի, եւ կփոխեն հավատի կարգը, որ առաքելական երեք, ժողովները հաստատեցին, եւ շատերին կշեղեն քրիստոնեական ճշմարիտ հավատից. ա՛յդ կլինի նրանց ջանքն ու վաստակը: Հույն՝ պատերազմող այրերի զորությունը կվերանա, նրանց կնեղի աղեղնավորների (թաթար-մոնողոլների) ազգը եւ հարկերով կծանրաբեռնի նրանց. բազում գավառներ կխոպանանան, երկիրը անելանելի կացության մեջ կընկնի, կլինեն հրաձգություններ, ջրհեղեղներ եւ երկրաշարժեր, տեղտեղ ավերածություններ, երկնքում՝ նշաններ եւ սքանչելիքներ:

Հայոց երկրում բազում տարիներ կլռի եւ քահանայությունը. հիմնահատակ կտապալվի Հայքը, նրա անմատույց պարիսպները կգրավի աղեղնավորների ազգը. եւ նրանք կուտեն մինչեւ իսկ իրենց բազուկները, այսինքն՝ մերձավորներին՝ ըստ Եսայու կանխասացության, թե. «Մարդ իր եղբորը չի խղճալու, քաղցից նա պիտի շրջվի դեպի աջ, պիտի շրջվի դեպի ձախ, բայց չհագենա, մինչեւ իսկ իր բազուկների միսն ուտելով»: Եվ ըստ Հովհաննեսի, որ ասում է՝ բազում նեռեր են եկել աշխարհ, եւ այս ամենը սկիզբն է երկանց: Հայոց հայրապետության սուրբ վայրը օթեւան կդառնա հեթանոսների համար, բազմագնա ճանապարհները կդատարկվեն մարդկանցից. եւ օգնություն չի գա ո՛չ մի կողմից: Այնժամ մարդիկ պիտի ասեն լեռներին, թե՝ ընկեք մեր վրա, եւ բլուրներին, թե՝ ծածկեցեք մեզ՝ ըստ Երեմիայի մարգարեության: Շատերի սերը կցամաքի, անգթությունը կամրանա, եւ մարդիկ անժուժկալ

կլինեն, որը երկիրը խուճապի կմատնի, եւ իմաստունները կփախչեն արեւելք:

Դրանից հետո ամբողջ քրիստոնեական աշխարհին փրկություն պիտի գա արիական զորքերից՝ հռոմեացիներից, ապա կխաղաղվի երկիրը բազում տարիներ, եւ կգան բարի ժամանակներ. երկիրը իբրեւ բարեբեր դրախտ կդառնա: Կմերժվեն անօրենները եւ կհեծեն հռոմեացիների լծի տակ. եւ մարդիկ, ավաղ, կկարդան նրանց, որ չտեսան այդ բարիքները: Այնուհետեւ կհայտնվի կորստյան որդին՝ Նեռը:

Արդ, քանի դեռ մարմնի մեջ եմ, ուզում եմ ձեզ հայտնել, որ նրա գալուստը սատանայի ներգործությամբ է. նա ո՛չ տաջիկների, ո՛չ պարսիկների եւ ո՛չ էլ մեկ այլ ազգի թագավոր է, այլ՝ խաչի պաշտոնյաներից, քանզի ինքը՝ կորստյան որդին, նրա՛ փառքից է կործանվելու. եւ պիղծն այդ հրեաներին իբրեւ հանդիմանություն է լինելու, քանզի նրանք են սպասում մոլորեցնողին: Արդ, դուք պատվիրեք ձեր որդիներին, նրանց որդիներն էլ՝ իրենց որդիներին, որ մարգարեության այս խոսքերը գրի առնեն եւ կնքած պահեն մինչեւ Նեռի ի հայտ գալը, որպեսզի պատրաստ լինեն եւ չընկղմվեն նրա որոգայթների մեջ: Արդ, ես ծնեցի ձեզ լուսավոր ավազանից, եւ մինչեւ վերջին շունչս բորբոքված է գութս ձեր նկատմամբ եւ վախենում եմ, թե գուցե մեկը արատավորի ձեր սնունդը՝ այս աշխարհից ելնելուցս հետո: Իմ փոխարեն Բանն Աստված Ինքը կհովվի Իր ժողովրդին, որ Իր արյամբ գնեց:

Արդ, նեռի հայտնության նշանն այս է. երկիրը խռովությամբ կլցվի՝ բարի ժամանակներից հետո, եւ կվերանա հռոմեացիների իշխանությունը, ինչպես որ Դանիելին հայտնվեց՝ չորս գազաններին մասին տեսիլքում. առաջին գազանն՝ մատակ առյուծը՝ Մարաց թագավորությունն է, արջը՝ Բաբելացիների, ինձը՝ Պարսիկների, իսկ չորրորդը, որ ահեղ, զարմանալի եւ առավել հզոր էր, որ երկաթյա ատամներով ուտում ու մանրում էր երկիրը՝ Հռոմեացիների թագավորությունն է: Եվ ինչպես որ Քրիստոսի գալստյամբ Իսրայելի իշխանությունը վերացավ, նույնպես եւ Նեռի հայտնվելով՝

հռոմեացիների իշխանությունը պիտի վերանա: Այն երեք թագավորությունները կվերանան մեջտեղից, իսկ չորրորդը՝ Հռոմեացիների թագավորությունը, որ հաստատուն էր մնում, կվերանա նեռի գալստյամբ:

Բայց նախ պետք է ծաղկի անգթությունը, ցամաքի սերը, պիտի լինեն սով, համաճարակ եւ տեղ-տեղ՝ երկրաշարժեր, եղբայրն իր եղբորը մահվան պիտի մատնի, եւ հայրը՝ որդուն. Տերն է այս ասել, որ դուք էլ գիտեք: Երկիրը կսառչի. ինչ որ սերմանեն, չեն ժողովելու, եւ ինչ որ տնկեն՝ չեն ուտելու. եւ բազում գուշակություններ պիտի լինեն Նեռի գալստյան մասին: Արդ, մի՛ կարծեք, թե նա սատանա է կամ էլ դեւերի զորագնդից մեկը. ո՛չ, այլ մարդ է՝ ապականված մտքով՝ Դանի տոհմից, եւ ծնվելու է Իսրայելի Քորազին գյուղում, նրա հոր անունը լինելու է Հռովմելա, իսկ մոր անունը՝ Ներղիմինե, եւ նրա անունը՝ Հռասիմ: Ծնվելու է կույսից, գալու է Բյուզանդիա եւ հզորանա հունական իշխանությամբ: Ապա հույների թագավորությունը կիսելու է տասը գավառների՝ իշխանությունների, եւ թագավորներից մեկը ինքն է լինելու, թագավորներից երեքին սպանելու է եւ մյուսներին հարվածելու է զորությամբ եւ ինքն է տիրելու բոլորին: Կթագավորի երեքուկես տարի եւ բարկությամբ կավերի երկիրը: Սատանայի ողջ զորությունն իր մեջ է կրելու նա, որի գալուստն իսկ սատանայի ներգործությամբ է. 1260 օր նշաններ ու հրաշքներ է գործելու: Բայց երանի՜ նրանց, որ կհամբերեն եւ կհասնեն մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի օրվան: Այնժամ եթե երկու կին միասին աղալիս լինեն, մեկը պիտի վերցվի, իսկ մյուսը՝ թողնվի. եւ պիտի ցցվի թզենու տերեւը, որ Նեռն է. ցցված ոստերը նրա պաշտոնյաներն են, երկանքը՝ կենցաղը. եւ ընտրելը՝ բարին չարից:

Արդ, կորստյան որդին կնստի Աստծո եկեղեցում եւ կսկսի հայհոյել Աստծուն, կպահանջի, որ իրեն երկրպագություն մատուցեն իբրեւ աստծո: Ինքն իրեն ցույց կտա, թե Աստված է եւ կգոռոզանա այն ամենի վրա, որ կոչվում է Աստված, եւ միայն իրեն պաշտել կտա Աստծո փոխարեն եւ երկիրը կլցնի չարությամբ ու պղծությամբ: Այնժամ Աստված կուղարկի Իր երկու մարգարեներին՝ Ենովքին ու Եղիային, որ զգուշացնեն հավատացյալներին եւ հայրերի սրտերը դարձնեն դեպի իրենց որդիները, ինչպես որ Տերը պատմեց, թե՝ Եղիան կգա եւ կհարթի Իր ճանապարհը: Արդ, ինչպես որ առաջին գալստյանն Հովհաննեսը եղավ Քրիստոսի կարապետը, նույնպես եւ երկրորդ գալստյանն Եղիան պիտի լինի՝ Ենոքի հետ միասին: Նրանք երկուսն էլ պիտի գան ու ասեն. «Մի՛ հավատացեք պղծին, որ նստել է սուրբ վայրում, քանզի նա է վիշապը եւ կամակոր օձը. նա խաբում է ձեզ պատրանքներով եւ հնարամիտ ստերով: Մի՛ մոտեցեք նրան, այլ փախեք լեռները եւ միառժամանակ համբերեցեք. սո՛ւտ Քրիստոսն է դա եւ սուտ մարգարեներով ուզում է խաբել խաչի պաշտոնյաներին: Բազում մոլորությունների ազդեցություն է դա, բայց դուք աղոթեցեք օր ու գիշեր, քանզի սակավ է նեղությունը, բայց անսպառ են բարիքները: Իսկ Քրիստոս գալու է ոչ թե երկրից, այլ՝ երկնքից՝ անճառ փառքով, եւ մատնելու է նրան արտաքին խավարին եւ անողորմ տանջանքներին. ե՛ւ Քրիստոս ոչ թե Պիղատոսի դատաստանի առջեւ է կանգնելու, այլ Ինքն է դատելու երկիրը»: Այս եւ այսպիսի բաներ են քարոզելու մարդկանց Ենովքն ու Եղիան: Այնժամ երկիրը կնեխի եւ կգարշի մեռելների հոտից եւ կապականվի բոլոր կողմերից, մարդկանց դեմքերը կզազրանան քաղցից ու ծարավից, ոսկին, թանկարժեք քարերը եւ փառավոր զգեստները ընկած կլինեն եւ ոչ ոք դրանք չի ցանկանա վտանգի ժամանակ, որ լինելու է այն չար օրերին: Այնժամ մարդիկ կհիշեն իրենց աղտեղի գործերը, որ մոլորության պիղծ նշանն առան իրենց ճակատին եւ կասեն Նեռին. «Օգնիր մեզ մեր նեղության մեջ, քանզի սպասավորում ենք քեզ հավասարապես»: Եվ նա չի օգնի նրանց, այլ սնոտի խոսքերով կխաբի նրանց: Այնժամ նրա ձեռքը կընկնեն Եղիան ու Ենովքը եւ պիղծն այն կչարչարի նրանց անհնարին հարվածներով եւ կհայհոյի Աստծուն բազում խոսքերով: Իսկ երբ չեն հնազանդվի սուրբ մարգարեները նրա պատրանքներին եւ սուտ նշաններին, կսպանի նրանց բազմության առաջ. եւ կխնդան սուտ

մարգարեները՝ տեսնելով ճշմարիտ մարգարեների մահը:

Այնժամ մեծ վիշապը՝ կորստյան որդին, կշռնչա ահեղ գոչմամբ՝ ի լուր ամենքի, եւ կասի. «Տեսե՛ք իմ մեծ զորությունը, քանզի բազո՞ւմ տարիներ դրանք անմահ են եղել, բայց չկարողացան պրծնել իմ ձեռքից, եւ ոչ ոք չկարողացավ հաղթել իմ զորությանը»:

Եվ պիտի է՛լ ավելի բորբոքի իր չարությունը աշխարհում, մինչեւ որ Տեր Հիսուսը կործանի նրան Իր բերանի շնչով: Եվ կհորդորի հայհոյել Բարձրյալին՝ ի լուր բազմաց: Եվ մինչ նա կխոսի այդ, հանկարծակի երկնքում ահեղ որոտման դղրդյուն կլինի. այդ պահին պիղծ Նեռի պաշտոնյաները վախից կմաշվեն: Այնժամ կերեւա արքունական նշանը՝ լուսափայլ՝ զորացնելու Իրեն ապավինողներին եւ որպես պարծանք՝ արդարներին, քանզի Նրա սիրուն կապեցին իրենց անձերը: Կփայլատակեն ամենահաղթ նշանի մասունքները եւ սուրբ եկեղեցու զորությունները եւ կբարձրանան Տերունական Խաչի հետ, եւ Նրա լույսից կխամրեն լուսատուները: Լաց ու կոծ կանեն ազգերը, քանզի Տերը պիտի գա դատելու նրանց, որ չառան խաչի դրոշմը, որ չճանաչեցին Տերունական նշանը:

Այնժամ կգա երկնքից փառքի Թագավորը՝ անճառ փառքով. կգալարվի երկինքը եւ մոմի պես կհալվի հրի առաջ, հրեղեն եւ մթագույն գետեր կհոսեն վերից վար՝ մաքրելով երկիրը անօրենություններից եւ պիղծ գործերից: Կլսվեն լուսեղեն զորքերի ձայները, երկնքում կշարժվեն զորությունները, եւ սաստիկ փողը կհնչի գերեզմանների վրա. ընդառաջ ելեք Փեսային, մեռելնե՛ր, քանզի եկել հասել է Հայրենի փառքով, եկե՛ք, արդարնե՛ր եւ մեղավորնե՛ր, ընդունեցեք հատուցումը:

Այնժամ անմխիթար սգով լաց ու կոծ կանեն անպատրաստ հոգիները եւ փութապես կհագնեն անանց մարմինները. ապա մեղավորներ կերեւան ստվերագույն մարմնով, քանզի ներկված կլինեն իրենց չար գործերով: Առաջուց ընտրյալները պիտի հարություն առնեն՝ պայծառացյալ մարմնով, եւ պիտի երկրից բարձրանան, լուսեղեն ամպերի վրայով ընդառաջ գնան՝ դեմառդեմ հանդիպելու Քրիստոսին: Եվ վերին զորքերը, նրանցով հիացած, պիտի

հարցնեն. «Ի՞նչ են գործել սրանք երկրի վրա, որ երամով գալիս են Տիրոջ մոտ՝ այսպե՛ս ցնծալով»: Տերը նրանց պատասխան պիտի տա ու ասի. «Սրանք Իմ բարի զինվորներն են, որ ուրացան իրենց անձերը, հեռացան աշխարհից եւ խաչը հանեցին իրենց անձերը՝ կարիքներով եւ ցանկություններով հանդերձ՝ հանուն Իմ սիրո. եւ արդ, ես կտամ սրանց Իմ անսպառ ուրախությունները»: Եվ երբ լսեն այս հրեշտակները, պիտի ասեն. «Դո՛ւք եք Տիրոջից օրհնվածները, արդ՝ ուրա՛խ եղեք ձեր ուրախության մեջ»:

Այնժամ փառքի Թագավորը կնստի Իր աթոռին, եւ հրեշտակները ահ ու երկյուղով կսպասավորեն Նրան. եւ առաջինը սատանային կկապի՝ առանց հարցաքննման, եւ կուղարկի տարտարոսի խորքը, ապա՝ նրա ձախակողմյան զորքին չարալլուկ, որ մարդկանց սովորեցրին չարը գործել: Նրանք արժանի չեն դատաստանի մեջ մտնելու, քանզի պատասխան չունեն Նրա բեմի առաջ: Երբ նրանք կհեռացվեն Տիրոջ առջեւից, եւ Նրա աջ կողմում կկանգնեն արդարները՝ բարիքների հույսով, ապա կգան մեղավորները՝ մեծ ամոթով, եւ Տերը պատասխան կպահանջի նրանցից իրենց յուրաքանչյուր գործի համար: Հետո կկապեն նրանց, ինչպես որոմն են կապում խուրձերով, եւ կգցեն անշեջ հրի մեջ. իսկ ոմանց առջեւ կփակվեն հարսանեկան դռները, որպեսզի նրանց անհնար լինի տեսնել երկնավոր Փեսայի դեմքը, որովհետեւ չվառեցին ողորմության լապտերը: «Ձեզ չե՛մ ճանաչում, հեռո՛ւ գնացեք Ինձնից»,- կասի Տերը նրանց:

Բայց մինչ այդ Թագավորը երկնային պսակը պիտի ընծայի արժանավորներին՝ ասելով. «Եկե՛ք, Իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը»:

Կնորանա երկինքը, կնորոգվի երկիրը՝ կանաչազարդ վայելչությամբ. եւ կլինի արքայությունն երեսնավոր, դրախտը՝ վաթսունավոր, եւ երկինքը՝ հարյուրավոր: Երկրի վրա չի լինի չարչարանք ու քրտինք, ո՛չ օձ խաբող եւ ո՛չ էլ կին գայթակղող, այլ ծառեր կլինեն՝ անթառամ պտուղներով, կվերանան ցավ ու տրտմություն, եւ կլինի միայն ուրախություն ու հեշտություն: Երկրի վրա

ոմանց արքայություն կտան, իսկ մարտիրոսները փայլելու են կարմիր պատմուճանով, փառքով ու պսակով, նրանց հետ նաեւ կույսերը, որոնք չշաղախվեցին այս աշխարհի հետ, սուրբ Կույս Մարիամի հետ են ընդունելու փառաց պսակի պայծառությունը՝ փայլելով ինչպես արեգակը աստղերի մեջ. այդպե՛ս առավել է լինելու կույսերի փառքը ամուսնացածների մեջ:

Եվ դուք, որդյակնե՛ր իմ, ձեր մտքում պահեցե՛ք այս ամենը, որպեսզի փրկվեք որսողի որոգայթից եւ ազատվեք՝ ինչպես այծյամը՝ թակարդից, եւ իմ պարծանքը լինեք Քրիստոսի գալստյան օրը՝ Նրա աջակողմում դասվելով, ինչպես որ Տերն ինձ ցույց տվեց: Այս ամենը մարգարեական աչքով տեսավ սուրբ Ներսեսը եւ պատմեց, իսկ ժողովուրդն ու Հայոց մեծամեծ նախարարներն ունկնդրում էին նրան:



ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ՏԵՍԻԼՔԸ*

Բայց չեմ կարող քահանա լինել տիրանենգ, տիրասպան ու մատնիչ բնակչության վրա, քանզի Սուրբ Հոգին, որ մեզ վերստին ծնեց սուրբ ավազանով՝ Քրիստոսին ժառանգակից լինելու, նույնն ասաց երկնաքաղաքացի Պողոսի բերանով, թե «Մի՛ դատեք, որ չդատապարտվեք», եւ թե «Կարողություն ունեցողներդ տկարների տկարությունը վերացրեք», եւ դարձյալ ասում է, թե «Իմն են վրեժխնդրությունները, եւ ես կհատուցեմ,- ասում է տերը»: Ուրեմն. դո՛ւք ձեր մասին մտածեցեք: Ձեր թագավորի գործերին վրեժխնդիր եղաք եւ նրա վրա զայրացած՝ մեր եկեղեցու սուրբ հավատը մատնեցիք, ծաղր ու ծանակի տվիք անօրենների: Աշխատում եք ինչո՞վ ինձ մխիթարել կամ ինձ թախանձում եք՝ ո՞ւմ վրա լինել քահանա, երբ Քրիստոսի հոտի վիրավոր ոչխարին տեսնում եմ ո՛չ թե փաթաթած, վերքերը ձեթով ու գինով օծված, գրաստի վրա դրված եւ պանդոկը տարված, այլ անխնա հոշոտված. նետած գիշատիչ գազանների դեմ, որպեսզի պատառոտեն: Հեռացե՛ք ինձնից եւ թողեք, որ ողբամ ընդհանուր կորուստն աշխարհիս Հայոց, որ Աստծո զորության ազդեցությամբ մտքիս աչքերով եմ տեսնում: Մի՛ ստիպեք, որ ես մխիթարվեմ իմ Ժողովրդի կործանման վրա, որովհետեւ այս աղետի անցքերը. դեռեւս եպիսկոպոսության կոչվելուց առաջ, ինձ ցույց էր տվել Վերին կանխագիտությունը, անրջային այն գիտությունը, որ, մարգարեական տեսիլքի օրինակով, երեւաց սուրբ նահատակ Գրիգորին՝ հասկացնելով այն իրողությունները, որ ապագայում էին լինելու: Եվ ես ստիպված եմ սրտի ցավով պատմել այսօր ու անզգամ երեւալ, ինչպես Աստծո սուրբ առաքյալը՝ Պողոսը, որ սուտ առաքյալների եւ անօրեն մշակների պատճառով պարծենալով

*[9] էջ 65-83

կորնթացիներին, գրեց իր ճգնության չարչարանքները: Արդ, ունկնդիր եղեք ինձ հոժարակամ, ժողովրդյան ամբողջ բազմություն, եւ ես ձեզ կպատմեմ:

«Շատ տարիներ առաջ անմխիթարական մտորումները տանջում էին ինձ՝ անդադար հիշեցնելով եւ Բարձրյալին աղաչելով՝ արու զավակ շնորհել ինձ, ինչպես իմ նախնիներին, որոնք ինձնից առաջ ամուսնանում էին որդի ունենալու համար: Եվ այժմ, որովհետեւ Աստված յուրաքանչյուր մարդու մատակարարում է առավել արդարությամբ ու բանիմացությամբ, քան մեր իմացածն ու խորհածն է, ուստի Մեծ պահոց հինգշաբթի օրը հաղորդվելով երեկոյան արարողության ժամին Քրիստոսի սուրբ ու մեղսաքավիչ խորհրդին, բնական ոչինչ չճաշակեցի, բացի հացից, ջրից ու աղից՝ Համաձայն Նիկիայում երեք հարյուր տասնութի գումարած մեծ ու սուրբ ժողովի կանոնների, որոնք Սուրբ Հոգին էլ կնքելով հաստատեց: Երկար սաղմոսերգության կանոնը վերջացնելուց հետո, պաշտոնյաները նստելիս, բազում տքնությունների սաստկությունից, կիսամեռ եղածների նման խոր քուն մտան: Նրանք քառասնորդական օրերը խիստ պասով եւ գիշեր ու ցերեկ անհանգիստ աղոթելով էին կատարել, մանավանդ Ավագ հինգշաբթում շտապեցին իրենց չարչարանքներն առավել սաստկացնել, հուսալով ուրախալից վաստակով արժանանալ վարձերի հատուցմանը: Ճրագների եւ կանթեղների բորբոքուն լույսը տոչորում էր: Եվ կարդացողը կամովին երկարում էր ընթերցանությունը՝ մի քիչ շունչ առնելու եւ պաշտոնյաների համար սահմանված կանոնին հասնելու համար:

Ըստ սովորության սպասում էին ժողովրդական բազմության հավաքվելուն՝ գիշերվա արարողության համար, քանզի յուրաքանչյուր մարդ, տղամարդ թե կին, հորդորալից ու ինքնակամ փափագում էր արթնությամբ արժանանալ իր անձի փրկությանը: Եվ ես նստած էի Աստծո սեղանի մոտ, Վաղարշապատ քաղաքի սուրբ եկեղեցում:

«Եվ ահա հանկարծակի բացվեց երկինքը, որից առատ լույս

ծագեց եւ լցրեց ամբողջ երկիրը: Եվ երկրի վրա կանգնելով՝ ինձ երեւաց քառակուսի բեմ մի ամպեղեն, որի բարձրությունը հասնում էր մինչեւ երկինք եւ լայնությունը տարածվելով լցնում էր ամբողջ երկիրը: Եվ բեմի վրա երեւում էր ազնիվ ոսկուց խորանարդ հենարան՝ Աստծո սպասավորությանն արժանի, ծածկված հույժ բարակ, սպիտակափայլ կտավով: Եվ խորանարդաձեւ ծածկոցի վրա պարզ երեւում էր տերունական խաչի նշանը, որի երեւույթը նյութեղեն չէր, այլ լուսեղեն: Հանկարծ խաղաղասյուք օդը շարժվեց եւ բացվեց կտավե ծածկույթի մի փեղկը: Այն կողմը նայելով տեսա. բեմի վրա կար քառակողմ, ականակապ սեղան՝ բազմագույն ու պատվական ակներով ընդելուզված: Եվ սեղանի վրա կար մի սուրբ հաց եւ մի ողկույզ խաղող՝ երկնավոր փրկության պատվական խորհրդի համաձայն: Եվ սուրբ խորհրդին մոտիկ երեւում էր ձիթենի մի ծառ՝ սաղարթաշատ, հույժ պտղալից: Հայացքով չէի կարողանում ընդգրկել նրա բարձրությունն ու լայնությունը: Պտուղները շատ էին ու լիք-լեցուն, տեսքն ու գեղեցկությունը՝ անպատում եւ սքանչելի: Ձիթենու չորս ոստերը բաժանվելով, խոնարհված էին երկրի կողմը: Նրանցից երեք ոստերը հավասարաչափ ու հասարակ պտուղներով էին երեւում, իսկ չորրորդը՝ կիսաբաժին եւ նվազապտուղ էր: Եվ այս չորս ոստերի պտուղները բնավ էլ նման չէին ձիթենու մյուս պտուղներին. ո՛չ նրանց պես փարթամ էին, ո՛չ գեղեցիկ, այլ թվով առավել նվազ եւ ավելի վտիտ էին, ասես թորշոմած լինեին:

«Եվ բեմի ձախ կողմում տեսա քառակողմ ու բարձր մի աթոռ՝ ծավի ու սառնակերպ, ծածկված թխորակ թանձր կտավով: Ինչ-որ տեղից փչող անուշ օդից կտավը վերացավ, եւ ահա աթոռի վրա հայտնվեց արծաթե մի մեծ սկուտեղ: Սկուտեղի վրա ծալ-ծալ դրված էր բեհեզյա մի նափորտ եւ նրա մոտ՝ ոսկե մի գունդ ու քառակուսի կտրված մի մագաղաթ՝ սկզբից մի քիչ, որպես ճարտար գրչի ձեռքով գրված ոսկեգեղմ գրով սքանչելիորեն շողշողուն, իսկ մագաղաթի միջի, ոսկեգեղմ գրից հեռու, երեւում էին մի քանի տող եղծյալ գրեր՝ ջնջվածի պես, որոնց ո՛չ ձեւերն էրն երեւում,

ո՛չ գրատեսակը: Եվ միայն մագաղաթի վերջում, ջնջագիր տողերից հեռու դարձյալ տեսնում էի մեկ ու կես տող գրված ոսկենախշ տառերով, առավել սքանչելի, մագաղաթի առաջին տողերի գրերի նման: Եվ մինչեւ այն կիսատ տողի մեջտեղը դարձյալ ոսկեգույն էր, նրանից դենը՝ կարմրադեղով: Եվ սկուտեղի շուրթերի մոտ կային արու մանուկների բազմություններ: Բոլորն էլ պայծառ եւ լուսազգեստ էին: Բայց նրանց պատմուճանների փայլատակումների ճառագայթները, պատահում էր, կարմրագույն շողեր էին արձակում, եւ պատահում էր, որ գույն-գույն եւ տարբեր-տարբեր երանգներով էին երեւում; Եվ բոլորը դեմքերը դարձրել էին դեպի սուրբ սեղանը՝ բնավ իրենց հայացքները փրկության խորհրդի սեղանից չհեռացնելով:

«Հանկարծ աթոռն սկսեց շարժվել սաստիկ դղրդյունով: Եվ այն տղաները, որոնք երեւում էին մանկահասակ, հանկարծ արագորեն փոխվելով դարձան երիտասարդ, կատարյալ մարդիկ եւ թեւեր առնելով՝ թռան, տեղավորվեցին սուրբ սեղանի վրա, որ ընդելուզված էր բազմերանգ ակներով, եւ Սուրբ Աստված երգեցին: Ապա սուրբ սեղանը, նրանց իր հետ առած, համբառնալով՝ երկնքի բարձրությունից էլ վեր, ծածկվեց: Եվ այսպես աներեւութանալով՝ տեսիլքը փակվեց, եւ ես մեծ զարհուրանքի մեջ մնացի ապշած:

«Եվ ահա հանկարծակի երկնքից ինձ երեւաց մի մարդու լուսեղեն կերպարանք, որի դեմքի վառ լույսից մռայլվելով ծածկվեց լույսն արեգական: Եվ այն մարդը սլանալով հասավ այնտեղ, ուր ես էի կանգնած: Եվ ես, առավել եւս հիացած ու ապշած այն մարդու փայլակնացայտ երեւույթից, դողալով վաղվաղակի երեսնիվայր ընկա գետնին: Եվ նա բռնելով վեր կացրեց ինձ ու հաստատուն կանգնեցնելով ոտքի վրա, ասաց ինձ. «Քաջալերվի՛ր, զորացի՛ր եւ մի՛ երկնչիր, այլ սիրտդ ամրացրու հանուն այն Հզորի, որ ամեն ինչ ստեղծեց եւ քեզ էլ ցույց տվեց Իր արարչության կանխատես ու մեծ խորհուրդը»: Եվ ես ուշքի գալով՝ զորացա նրա խոսքից եւ կանգնած մնացի ոտքերիս վրա: Նա ինձ

ասաց. «Ինչի՞ ես տրտում եւ կամ ինչո՞ւ չար-չար ցնորքները պղտորում են քո միտքն ու մաքուր խորհուրդները: Որովհետեւ անօգուտ տրտմությամբ միտքդ զբաղեցնելով՝ անհանգստանում էիր արու զավակ չունենալու պատճառով, երբ քաջ ծանոթ էիր Ամենազորի կամքին, որ հասկանալով բաշխում է ամեն բարիք եւ երբեք չի արգելում որեւէ մեկին հասնելու արժանիին: Եվ արդ, գթալով քո վրա եւ քեզ սիրելով՝ Բարձրյալը կամեցավ հեռացնել քեզանից այդօրինակ ընդունայն մտածումները եւ քեզ մխիթարեց այդ տեսիլքով, որը քեզ ցույց տվեց մեծ հայտնություն ո՛չ միայն առաջիկայի, այլեւ ապագայի բոլո՞ր իրողությունների, որ լինելու են մինչեւ վախճանն աշխարհի, ծանոթացրեց քեզ եւ Նրա խոսքի բոլոր հավատացողներին, ինչպես քո արդար նախնի սուրբ Գրիգորին: Բայց քեզ ցույց տվեց այն ամենը, որ լինելու է մինչեւ կատարածն աշխարհի: Եվ արդ, լսի՛ր եւ կպատմեմ քեզ այդ մեծ հայտնության մեկնությունը, ինչպես ի՛նձ է հրամայված Վերին Զորությունի՛ց, որ քեզ բացատրեմ ամեն ինչ: Եվ դու խիստ զգուշությամբ ունկնդրելով՝ գրիր քո անմոռաց սրտի տախտակի վրա, որը մագաղաթի վրա դրոշմելով կթողնես հավատացյալ ժողովրդին՝ ի զգուշություն անսխալ մինչեւ աշխարհի վախճանը:

Սուրբ Սահակի տեսիլքի մեկնությունը Աստծո հրեշտակի կողմից, որ պարզորեն ցույց տվեց ըստ յուրաքանչյուր գլխի եւ առանձին տների՝ մարդկային կյանքի եւ աշխարհի վերջի մասին

«Երկնքի բացվելը, որ տեսար, եւ պայծառ լույսի տարածվելն ամբողջ աշխարհի վրա՝ Աստծո կենսարար Որդու գալստյանից ի վեր՝ Նրա ողորմության դռան բացվելն է այն բոլորի համար, որոնք սիրում են Նրան եւ պահում են Նրա հրամանի խոսքը, որի մեջ ծագելով՝ ճառագում է Նրա վարդապետության փառքի լույսը: Եվ կանգնած քառանկյունի բեմը՝ բարձր երկնքից մինչեւ եր-

կիր, որ քեզ երեւաց, ճշմարիտ հավատն է, որով արդարները վերանում են աշխարհիս կյանքի ծանրությունից՝ երկնքում հանգիստ բնակվելու համար: Բեմն էլ ամպեղեն գույնով երեւաց, որովհետեւ Նա, որ ամպով վերացավ, նորից գալու է արդարներին իր հետ բարձրացնելու այնտեղ, ուր Հոր արքայության տան բազում օթեւաններն են: Եվ դու էլ դրան տեղեկանալով, սովորեցիր Սուրբ Հոգուց, որ ընտիր այր Պողոսի բերանով ասաց. «Ամպով պետք է հափշտակվենք, Տիրոջն ընդառաջ՝ օդի միջով»: Եվ բեմի վրա դրված ոսկի հենարանը, որի վրա ձգված էր բարակ ու մաքուր կտավը, որով սուրբ սեղանն էր ծածկված, հետն էլ խորհուրդը,- իմացի՛ր ու ճանաչի՛ր, որ ծածուկ ու անհայտ է խորհուրդն աստվածային գիտության, ազնիվ ու մաքուր, ազնվությամբ մաքուր ոսկու եւ լուսափայլ մաքրությամբ կտավի: Նրա վրայի կենդանարար խաչի նշանը, որ երեւում էր, մեջքով ցած գլորված բոլոր մարդկանց կենդանացած վեր ելնելն է, որ առաջինն ինքն վերստին պիտի երեւա Քրիստոսի գալստյան ժամանակ, ապա՝ հայտնվի խորհուրդը դատաստանի եւ յուրաքանչյուրի հատուցումն ըստ իր գործերի:

«Իսկ քաղցրաշունչ օդը, որ կտավի մի մասը բացեց, հիշի՛ր, Սուրբ Հոգուց քեզ երեւացած քաղցր խաղն է, որ հայտնում է Իր սրբերի եւ Իր աստվածության ծածուկ խորհուրդը: Նրա տակը կար պատվական քարերով ընդելուզված ոսկի սեղան, որը ցույց է տալիս Սուրբ Երրորդության միասնականությունը, որ սրբերի վարքն ու ճգնությունը, որպես պատվական քարերի տարբերություններ իր վրա առնելով՝ ուրախացնում է: Եվ սրբերը, բազմած սուրբ սեղանի շուրջ, ճշմարիտ արժանավորությամբ ճաշակում են Փրկչի Մարմինն ու Արյունը: Քեզ երեւացած սեղանի վրայի հացն ու ողկույզը ցույց է տալիս Տիրոջ կենարար չարչարանքների Մարմնի եւ Արյան օրինակը:

«Իսկ քեզ երեւացած սքանչատեսիլ ձիթենին, որ կիպ գտնվում է Տերունական Խորհրդի մոտ, բարձր ու սաղարթախիտ, բազմաբերք ու պտղալից, քեզ ցույց տվեց մարդկանց ընծայաբերությունները, ողորմածությունը եւ սերը միմյանց նկատմամբ, քանզի ամեն տեսակ բարեգործություններից Աստծուն ավելի մոտ ու պատվական է աղքատասիրությունը, որով եւ առաջին սրբերը՝ Աբրահամը, Իսահակը եւ Հակոբը, ընտիր երեւացին: Առանց նրան եւ կույսերի կուսության, չարչարանքները արհամարհվելով հարսանիքից դուրս ձգվեցին: Սրանով է երեւում Քրիստոսի քարոզության կնիքը մարդկանց վրա: Նա ասաց, թե «Ամենքն էլ սրանով ձեզ կճանաչեն որպես Իմ աշակերտների, թե որ սիրեք միմյանց», եւ մանավանդ՝ ով առատ զվարթամտությամբ, կամովին կկատարի սիրո պատվիրանը ոչ միայն աղքատների, այլեւ ընկերների, եղբայրների եւ ամենքի նկատմամբ, որով հաստատվում է աշխարհի խաղաղությունը, եւ փառքերի Տերն է բնակվում նրանց մեջ՝ շնորհելով հանգիստ եւ երկրի առատաբերություն, ինչպես տեսար բարձր ձիթենին՝ լիապտուղ եւ թանձրասաղարթ:

«Եվ ձիթենու չորս ոստերը, որ խոնարհված էին կամ երեւում էին դեպի գետնի կողմը ձգվելիս, երեք ոստերը միատեսակ՝ չափով, ձեւով ու պտուղներով, իսկ չորրորդը, որ երեքի համեմատությամբ ավելի կարճ ու նրանից ավելի սակավաբերք տեսար, այդ չորսի պտուղներն էլ վտիտ էին, թառամած, բերքը պակաս ու ոչ նման ձիթենու մնացած փարթամ պտուղներին: Այժմ սեւեռի՛ր քո աչքն ու միտքը, լսի՛ր, եւ քեզ կասեմ, թե Բարձրյալն ի՛նչ սահմանեց: Այսուհետեւ, մինչեւ աշխարհի վախճանը, տարիների երեք տասներյակներ ու կես տասներյակ պիտի համառոտվի ամբողջ աշխարհի վրա, մինչեւ անապատի պիղծի երեւալը, որը Սուրբ Հոգին է հայտնել Դանիել մարգարեին, եւ որոնք պարզապես լինում են երեք հարյուր հիսուն տարի՝ երեք եւ կես ոստերի միահավասար պտուղների հաշվով: Եվ քանի որ տեսար ոստերի պտուղները թառամած, խեղճացած ու բոլորովին ո՛չ նման ձիթենու մնացած պտուղներին, ճշգրտորեն տե՛ս ու ճանաչի՛ր, որ սերն ու արդարությունը վերացել են բոլոր մարդկանցից, որոնք սրով ու խաբեությամբ իրենց ձեւացնում են գեղեցիկ ու պատվիրանապահ: Այդ պարզ գրված եւ կնքված պահվում է գրքում ամենա-

գետ Աստծո, Որը ներում է համբերատարությամբ եւ հատուցում անաչառությամբ:

«Իսկ բեմի ձախակողմը քեզ երեւացած ծովագույն ու սառնակերպ, քառակողմ աթոռը ցույց է տալիս քահանայության ու թագավորության գահի անկումը, որն իսկապես Բանն Աստված է հաստատում: Նրա վրա կար արծաթե սկուտեղ, քանի որ, իբրեւ ընտիր արծաթ եւ փորձ, լուսափայլ տարածվեց Աստծո խոսքը բոլոր հավատացյալ ազգերի մեջ, որ եւ սաղմոսերգուն է քարոզում Սուրբ Հոգու շնորհիվ ասելով. «Տիրոջ խոսքերն արծաթի պես ընտրված ու փորձված են երկրից»: Եվ պետք է հասկանալ, որ «երկրից» ասելով մարգարեն հայտնում է Աստծո Որդու մարմնով երեւալը Սուրբ Կույսից: Եվ որ քեզ երեւաց ծովագույն ու սառնակերպ աթոռ, այդ էլ նշանակում է Հայոց աշխարհի ալեկոծությունները : Իսկ թխագույն թանձր կտավով ծածկելը՝ թանձրամած սգի օրինակն է, որ ամբողջ աշխարհն է ունենալու, եւ տեսիլքն էլ վերջն է: Եվ բեհեզյա նափորտն էլ, որ ծալած եւ սկուտեղի վրա դրած տեսար, եւ ոսկե գունդը, որ կար նափորտի կողքին, մեկը քահանայությունն է նշանակում, մյուսը՝ թագավորությունը: Եվ քանի ոչ ոք իր վրա չէր առել նափորտը, եւ ոչ ոք ձեռքում չուներ գունդը, լսի՛ր եւ ճշմարտապես իմացի՛ր, որ շատ շուտով պետք է լռեն Արշակունյաց տոհմի թագավորությունը եւ քահանայնությունը արժա՛նավոր քահանայապետ Գրիգորի տոհմից:

«Եվ մագաղաթը հատվածաձեւ, որ քեզ երեւաց՝ սկզբում մի քանի տող գրած ոսկեղեն գրերով, նշանակում է Սուրբ Հոգու շնորհած արժանավոր այն մարդկանց ձեռնադրությունը, որոնք երանելի Գրիգորի տոհմից, արժանապես պիտի հաջորդեն քեզ քահանայապետության աթոռին: Նրանք ընտիր մարդիկ են, կյանքի գրքի մեջ գրանցված ոսկեշող գրով: Եվ քանի որ երեւացին մագաղաթի մեջտեղում, ոսկեգիր տողերից հեռու խանգարված մի քանի տող ջնջված գրերով, իմացիր, որ սուրբ Գրիգորի աթոռին ոմանք քահանայապետ են նստելու ոչ՛ ըստ հրամանի սուրբ առաքյալների եւ ոչ՛ ըստ երեքհարյուր տասնեւութի ժողովի կանոնի են ձեռնադրվելու այդ երկնային պատվի համար, այլ այս աշխարհական փառքի համար այդ պատվին են ձգտում հանդգնությամբ: Նրանք առավելապես արծաթասեր են, քան աստվածասեր: Եվ քանի որ այդ քահանայությունն անպետք է ու Բարձրյալին ոչ՛ հաճելի, ուստի նրանք ջնջված են երկնքի բարության մատյանից եւ տրված դատաստանի, իրենց անձանց եւ ժողովրդին՝ այրվելու գեհենում եւ մատնվելու կորստյան: Իսկ մյուս մեկ ու կես տողը, որ քեզ երեւաց սքանչելի ու ոսկեգիր մագաղաթի ստորին եզրին, հաստատ իմացի՛ր, որ անապատի պիղծի երեւալուն մոտ դարձյալ պետք է թագավոր ելնի Արշակունյաց տոհմից, եւ պիտի նորոգվի հայրապետության աթոռը սուրբ Գրիգորի շառավղի կողմից: Եվ քանի որ նրանք արհամարհված ու գետնին ընկած չէին կոխկրտվելու համար, այլ պարզ տեսքով էր գունդը, եւ ծալված պատվականությամբ՝ նափորտը, որ առավել եւս հաստատ երեւաց քեզ, եւ սքանչելատեսիլ ոսկեգիր տողով ու կիսատողով ծանոթացրեց վերին այն ազդեցությունը, որ արդարության գոռոզացած թշնամու ժամանակում արդար քահանայապետ է նստելու սուրբ Գրիգորի տոհմից, եւ քահանայացած առաջինը մեռնելու է կրելով բազում չարչարանքներ կորստյան իշխանի սուտ առաքյալներից եւ վախճանվելու է խաղաղությամբ, ոչ թե սրով: Եվ նրա մյուս զավակը, հաջորդելով քահանայապետության աթոռին եւ երկար ժամանակ դիմանալով տանջահարությունների ու հարվածների, սովի, հալածանքների ու դառն նեղության, անօրեն իշխանի դահիճների սրով է ընդունելու մարտիրոսական մահը: Այն, որ գրածի մի մասը քեզ երեւաց կարմրադեղով, ստույգ ճշգրտությամբ հաստատեց մարտիրոսական վախճանը, որ սրբերին է պատահելու:

«Եվ որ արծաթե սկուտեղի վրա շրջան կազմած տղաների բազմություն երեւաց, զվարճացի՛ր ցնծալից ուրախությամբ, որովհետեւ Արարչից քեզ տրված զավակիդ արգանդից պիտի ելնեն բազում շառավիղներ՝ զորությամբ ընտիր տղամարդիկ, որոնց հետ միաբանելով Հայոց նախարարական տոհմերի քաջ

մարդկանց ուրիշ բազմություններ՝ որոնք զորացած Աստծո սուրբ խոսքով եւ ոչինչ համարելով թագավորների զայրույթներն ու իշխանների սպառնալիքները, իրենց անձերը պիտի միացնեն երկնավոր կոչման բաղձալի հույսին, աչք չդնելով ո՛չ սնոտի մեծություններին, ո՛չ էլ ժամանակավոր փառքերին: Ընդ որում, ոմանք անեղծ Աստծո փառքերը փոխելով աշխարհիս կյանքի սնոտիի ու ապականացուի հետ, ուրացողներ դարձան. բայց արդեն դռան մոտ է հասել թուլակամների կորուստը եւ, զորացյալների փրկության օգնությունն է հասվեհաս: Ինչպես որ դու նայելով տեսար, աստվածային սեղանի շուրջ պարող տղաները բնավ չէին նայում սնոտի հեթանոսական պաշտաման խոտորումներին: Նրանցից ոմանք, կատարելության հասնելով, արժանանալու են մարտիրոսական պսակին: Իսկ ուրիշները տղամարդկանց բազմություններից, եւ ո՛չ միայն տղամարդկանցից, այլեւ կանանց մեջ կան այնպիսիները, որոնք թեպետեւ ո՛չ սրով, այլ Սուրբ Հոգու շնորհներով զորացած, բազում բարեգործություններով վախճանվեցին: Ինչպես որ քեզ երեւում էին այն մանուկներից արձակված լուսափայլ ճառագայթները, որոնց մի մասը կարմրագույն էր երփնավառ, գուշակում է նահատակությունը արյամբ վախճանվածների, իսկ ուրիշների բազմերանգ ճառագայթներով շողալը՝ առաքինի մարդկանց լուսավորության գույները բազմափայլ: Չէ՞ որ անթիվ-անհամար են սուրբ մարդկանց ճգնություններն ու վաստակները:

«Դու տեսա՞ր այն աթոռը, որ շարժվեց սաստիկ դղրդալով, եւ երբեմն մանուկներն էին երեւում հասունանալով ու կատարելության հասնելով եւ երկրից դեպի երկինք թռչելով համբարձվելիս: Դա էլ սրբերի երկրային կյանքն է բովանդակում եւ երկնքում նրանց հրեշտականման փոփոխությունը քեզ ցույց տվեց բարյաց պարգեւատուն: Քանզի աշխարհում մանկական անմեղությամբ ապրեցին արդարները, երբեք իրենց ուշքը չդարձնելով դատարկ զբաղմունքների վրա, այլ ուշադրությամբ սպասում էին միայն երկնային կոչման ուրախալից հրավերին: Քանի որ այսուհետեւ բազում եւ խիստ դղրդյուններ են լինելու աշխարհում, թագավորների հարձակումներ միմյանց վրա, սովեր ու սասանություններ, բազում նեղություններ, որոնք կորստյան որդու գալուստն են նշանակում, որը գալու եւ նստելու է, ըստ գրվածի՝ սուրբ տեղում՝ իրեն ձեւացնելով աստված, որը հալ ու մաշ է լինում վերին զորությունից: Եվ Տեր Հիսուսը նրան պետք է սատակեցնի Իր բերանի շնչով: Եվ այն ժամանակ արդարները կատարյալ վարքով ու առաքինությամբ թռչելու են դեպի Հավիտենության կացարանները եւ այնպես միշտ լինելու են Տիրոջ հետ: Այդ ժամանակ էլ կատարվում է Տիրոջ խոսքը՝ ուղղված նրանց, որ ասում է. «Ուր որ Ես եմ, այնտեղ էլ Իմ պաշտոնյան պիտի լինի»:

«Եվ դու գրի՛ առ այդ տեսիլքը, որ քեզ հայտնվեց բարձրերից, որովհետեւ դրանից ոչ մի խոսք չպետք է վրիպի, մինչեւ որ ամեն ինչ կատարվի»:

«Եվ ես որպես քնից արթնացած այն տեսիլքով, որ ինձ ցույց տվեց Բարձրյալը՝ որպես արթնությամբ հայտնապես եւ սաստիկ զարմանալով, փառք տվի մարդասեր Աստծուն, որ անարժանիս արժանացրեց այսպիսի ահավոր տեսիլքի: Եվ լռեցի ու ոչ ոքի չպատմեցի մինչեւ այսօր: Եվ արդ ձեզ պ՛ատմեցի ոչ թե սրտնեղությանս պատճառով, այլ թաքցնելու մեղքի գիտակցությամբ, որ չլինի~ թե երբեւէ իբրեւ ապերախտ պատժվեմ այս հայտնությունը ցույց տվողից, որ ինձ հրամայեց նույնիսկ գրով այս ավանդը թողնել աշխարհին»:

Հայոց ավագների, տանուտերների ու սեպուհների եւ առհասարակ ժողովրդի միահամուռ բազմությունները, սուրբ հայրապետ Սահակի այս խոսքերը լսելով, արտասվաթոր զարհուրեցին: Եվ այնուհետեւ ոչ ոք չհամարձակվեց այս բաների մասին որեւէ բառ ասել այն սրբին եւ կամ խոսել:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԸ*

Այս ամենից իմացա, թէ ով ես, մեծ իշխանդ Վասպուրականի, որ թեպետ եւ նախարարների թվում ես, սակայն թագավորական տնից ես եւ ազգով՝ քաջ ու հին, եւ արգասավոր սերունդ ու զարմ ես. ոչ միայն խոսքով ես ճոխացած, այլ նաեւ պատերազմական գործի մեջ ես առաջինների թվում: Քանզի ինչպես երկու մարդու լինելությամբ այս երկիրը հաստատվեց, այնպես էլ երկու տներիդ՝ Արծրունիների եւ Բագրատունիների միջոցով են մեր այս աշխարհի սերունդներն ապրում: Եվ ինչպես երկու աչքերն են ողջ մարմինը զարդարում այնպես էլ երկու կողմերդ՝ արեւելյան եւ հյուսիսային, լուսավորում եք մեր երկիրը, եւ ինչպես երկու ձեռք միանալով են գործին պիտանի դառնում, այնպես էլ մեր Հայոց երկիրը ձեզանից է գոյանում: Եվ ինչպես ողջ մարմինը երկու ոտքի վրա է հաստատվում, այնպես էլ երկու տների միջոցով Հայոց բոլոր ազգերը հնազանդվելով լինում են որպես մի կատարյալ մարդ ի Քրիստոս: Եվ դուք՝ երկու ցեղերդ, միմյանց միացած, անսասան եք:

Քեզ եմ դիմում, Արծրունյաց իշխան, Տերն ինձ ցույց տվեց, որ քո զավակներից երեք եղբայրներ Քրիստոսի համար մահվան են մատնված, երկուսը Քրիստոսի վկաներն են արյամբ, իսկ մեկը վրիպել է նրանցից, եւ այս վայել չէ: Նրանց համար Աստված Սենեքերիմ թագավորի թագը, քո որդիներին վերադարձնելով, երկարաձգում է երկրի վրա: Եվ Բագրատունուդ եմ դիմում. Տերն հիշում է իր խոսքը, թե քեզանից թագավորներ կծնվեն, եւ թագավորում եք Դվինում. եւ այլ ոչինչ չունեմ ձեզ ասելու, մինչեւ Տերը տեսնել կտա:

---

* **[14] էջ 5**:

ՍՈՒՐԲ ՄԵԹՈԴԻՈՍԻ ՊԱՏԱՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ՆԱՀԱՏԱԿԻ ԵՐԱԶԸ՝ ԱՆՑՅԱԼԻ, ՆԵՐԿԱՅԻ ԵՎ ԳԱԼԻՔԻ ՄԱՍԻՆ*

Վերջին դարում արմատախիլ կլինի պարսից թագավորությունը: Իսմայելի զորքը կելնի Եթրիբի անապատից եւ կտիրի Գաբավոնին: Այն ժամանակ կկատարվի Եզեկիել մարգարեի ասածը. «Կանչեց անապատի գազանները ու երկնքի թռչունները եւ ասաց նրանց. «Հավաքվեցե՛ք, եկե՛ք, որովհետեւ մեծ սպանդ է լինելու ձեզ համար: Կերե՛ք, կերե՛ք հզորների մարմինները եւ խմեցե՛ք հսկաների արյունը»: Իսմայելի որդիների կողմից հունական զորավարները կընկնեն Գաբեթի այս Գաբավոնում, ինչպես որ նրանք սպանեցին եբրայեցի ու պարսիկ զորավարներին: Քանի որ նրանց զայրույթով ու բարկությամբ կուղարկի երկիր մարդկանց, անասունների, անտառի գազանների, տնկիների եւ առհասարակ բոլոր պտղաբեր տեսակների վրա: Եվ նրանց գալուստն անողորմ պատիժ կլինի: Նրանց առաջից կընթանան չորս տեսակի աղետներ՝ կործանում, ասպատակություն, ապականություն ու ավերում:

Մովսեսն իսրայելացիներին ասաց. «Աստված ձեզ Ավետյաց երկիրը ժառանգելու է տանում ոչ թե նրա համար, որ ձեզ սիրում է, այլ նրա բնակիչների անօրինության պատճառով»: Այսպես էլ տեր Աստված Իսմայելի որդիներին ոչ թե սիրելուց է զորություն տալիս՝ ավերելու քրիստոնյաների երկրները, այլ եղող անօրինության պատճառով: Եվ նրանց ուրիշ այսպիսի վտանգ ոչ եղել է, ոչ էլ երբեւէ կլինի: Չէ՞ որ տղամարդիկ հագնում էին անառակների հագուստները եւ իրենց զարդարում պոռնիկ կանանց նման: Այսպես էլ կանայք կանգնում էին քաղաքների փողոցներում ու հրապարակներում դեմ -հանդիման եւ բնական պահանջները փոխարինում անբնականներով, ինչպես աստվածային առաքյալն է ասում: Մի կնոջ մոտ միաժամանակ մտնում էին հայր ու որդի եւ բոլոր եղբայրներն ու ազգականները առհասարակ: Այդ պատճառով էլ իմաստուն Պողոսը, նախքան այդ ժամանակները աղաղակ բարձրացնելով, ասել էր. «Դրա համար նրանց մատնեց անարգ ախտերի՝ գործելու անվայել բաներ, որովհետեւ նրանց էգերը փոխանակեցին բնական պահանջները: Նույնպես եւ արուները թողնելով իգականի բնական պետքերը, ցանկությամբ բորբոքվեցին միմյանց նկատմամբ. արուներն արուների հետ էին խառնակվում: Պետք էր, որ իրենց մոլորության հատուցումը իրենց վրա ընդունեին»:

Այսպիսով, սրա համար Աստված նրանց բարբարոսների ձեռքը մատնեց, որոնք պիտի ընկնեն մեղքերի ու գարշանքի մեջ, նրանց կանայք էլ պիտի պղծվեն պիղծերից: Եվ նրանց այդ վիճակի մեջ պիտի գցեն Իսմայելի որդիները: Պարսիկները պիտի ենթարկվեն բնաջնջման: Սրով պիտի ընկնի Կապադովկիան, պիտի քարուքանդ լինի ու հիմնովին գերեվարվի Սիցիլիան, պիտի անապատ դառնա, եւ նրա բնակիչները պիտի գերեվարվեն ու սպանվեն: Հուդան պիտի ավերվի ու գերվի: Բյուզանդացիները փախուստի պիտի դիմեն, կղզիները պիտի կործանվեն, իսկ բնակիչները՝ սրով ու գերությամբ կորչեն: Հայերը պիտի փախչեն ու գերության տարվեն: Եգիպտոսը, Արեւելքը եւ Ասորիքը լծի ու նեղության տակ պիտի ընկնեն, նրանց անխնայաբար պիտի ծառայեցնեն, նրանց անձերից հարկ պիտի պահանջեն կարողությունից ավելի, տանջանքների ու նեղության մեջ կգտնվեն՝ ավելի, քան գերության մեջ եղողները: Եվ Ավետյաց երկիրը երկնքի չորս հողմերի միջոցով պիտի լցվի մարդկանցով՝ մորեխի բազմության նման»: Ապականություն եւ սով պիտի լինի այնտեղ: Նրանց սատակիչների սրտերը պիտի ոգեւորվեն եւ նրանք ամբարտավանությամբ արժանավորներից պիտի վեր դասվեն մինչեւ իրենց համար սահմանված ժամանակը: Նրանք պիտի տիրեն մինչեւ հյուսիսի վեր-

* **[16] էջ 156-165**:

ջին սահմանները, մինչեւ արեւմուտք, նրանց լծի տակ պիտի լինեն բոլորը՝ մարդ, անասուն, թռչուն, ծովի ջրերը՝ հնազանդվելով նրանց: Բնակիչներից դատարկված անապատները գերության մեջ եղողներից առավել չափով պիտի գտնվեն նեղ վիճակում: Պիտի սեփականեն լեռները, ծովի ձկները, անտառի փայտը եւ երկրի հողը: Ե՛վ անպտուղ քարերը, ե՛ւ երկրագործների քրտնաթոր աշխատանքի վաստակը, ե՛ւ բոլոր շտեմարանները նրանցը պիտի լինեն: Նրանք բարկացած սրտով հարկ պիտի պահանջեն մեռածներից՝ կենդանիներին հավասար, որբերին ու այրիներին չպիտի ողորմեն, տնանկին եւ աղքատին պիտի անարգեն, բոլոր ծերերին խռովեցնեն եւ չպիտի խղճան տնանկներին: Անզգայորեն պիտի հայհոյեն ու ծաղրեն նրանց, որոնք փայլում են իմաստությամբ: Եվ ամենքը դա լռությամբ պիտի ընդունեն որպես չարաչար օրենք ու չպիտի կարողանան հանդիմանել կամ որեւէ բան ասել, այլ ահից պիտի զարհուրած լինեն: Ոչ ոք չի լինի, որ կարողանա այլափոխել կամ պարսավել նրանց ասածները: Ծովից մինչեւ ծով, արեւելքից մինչեւ արեւմուտք, հյուսիսից մինչեւ անապատը պիտի լինի նրանց ճանապարհը: Եվ այդ ճանապարհը պիտի կոչվի անձկություն: Նրանով պիտի ընթանան ծերերն ու պառավները, տնանկներն ու մեծամեծները, քաղցածներն ու ծարավիները եւ կապվածները՝ երանի տալով մեռածներին, քանի որ սա առաքյալի ասած ապստամբության պատիժն է: «Որովհետեւ,- ասում է նա,- եթե նախ չգա ապստամբությունը, եւ հայտնվի անօրեն մարդը՝ կորստյան որդին»: Այդպիսով ապստամբության է հորդորում: Եվ քանի որ Աստված վայրի էշ կոչեց Իսմայելին, այդ պատճառով էլ անապատի իշավայրիներն ու այծյամները եւ բոլոր տեսակի գազանները պիտի ձեռնասուն դառնան ու ընտանեցվեն: Մարդիկ պիտի սովեն, ապականվեն ու հալածվեն: Գազանները պիտի սատկեն: Անտառի բոլոր ծառերը պիտի կտրատվեն: Լեռների գեղեցկությունը պիտի խաթարվի: Քաղաքները պիտի ավերվեն, ու նրանց սահմանները անկոխ պիտի մնան, որովհետեւ մարդիկ պիտի պակասեն: Հողը պիտի պղծվի արյամբ ու

դադարեցնի իր պտղաբերությունը, որովհետեւ այն բռնությամբ գրավածները մարդիկ չեն, այլ՝ բարբարոս ու անապատականներ, որ պիտի գան անապատացնելու: Ապականվածները պիտի ուղարկվեն ապականելու, իրենց սրի ծայրով պիտի հարվածեն հղիներին, մայրերի գրկից պիտի խլեն մանուկներին ու գետնով տան, որոնք գազանների կերակուր պիտի դառնան: Քահանաներին էլ ներսում, սրբությունների մեջ պիտի սպանեն ու պիտի պառկեն նրանց կանանց հետ՝ սուրբ տան մեջ, որտեղ աստվածային պատարագ էր մատուցվում: Սուրբ սպասավորության պատմուճանը պիտի հագնեն նրանց կանայք, որդիներն ու դուստրերը եւ այն պիտի գցեն իրենց երիվարների վրա: Իրենց գրաստները պիտի կապեն սրբերի հանգստարաններում: Պիտի լինեն սպանողներ ու ապականիչներ՝ որպես քրիստոնյաների ցեղի փորձիչ հուր, որովհետեւ սրբազան առաքյալն ասում է. «Ո՛չ բոլորն են իսրայելացի, որոնք Իսրայելից են»: Ուրեմն եւ ոչ բոլորն են քրիստոնյաներ, ինչպես Գիրքն է ասում, իսրայելացիներից յոթ հազարը փրկվեցին, որոնք չխոնարհվեցին Բահաղին, եւ ամբողջ Իսրայելը փրկվեց նրանց ձեռքով: Այսպես եւ ապստամբության եւ Իսմայելի որդիների պատժի ժամանակ սակավ կգտնվեն իսկական քրիստոնյաներ, ինչպես որ հենց ինքը՝ մեր փրկիչն է ասել սուրբ ավետարանում. «Մարդու որդին գալով՝ արդյոք երկրում հավատք կգտնի՞»: Այն ժամանակ հոգին կպակասի, եւ շատերը կուրանան ճշմարտությունը, կենարար Խաչն ու Սուրբ Խորհուրդը եւ առանց բռնությունների ու չարչարանքների կուրանան Քրիստոսին եւ կգնան ապստամբների ետեւից: Չէ՞ որ ավելի վաղ աստվածային առաքյալը քարոզելով ասել է, թե՝ «Վերջին ժամանակներում մարդիկ պիտի ապստամբվեն հավատքի դեմ՝ հարելով մոլոր հոգի ունեցողներին, դիվական ուսմունքներին, ստախոսների կեղծավորությանը՝ խաբելու իրենց խղճմտանքը»: Դարձյալ նույն ինքն է ասել. «Վերջին օրերում պիտի գան չար ժամանակներ, որովհետեւ մարդիկ կդառնան եսասեր, փողամոլ, պարծենկոտ, ամբարտավան, հայհոյող, ծնողներին անհնազանդ, անշնորհք, անմաքուր,

անմիտ, անողորմ, մատնիչ, հանդուգն, ցոփ, գոռոզ, անբարեսեր, որոնք արտաքուստ աստվածապաշտի կերպարանք կընդունեն, բայց ըստ էության Աստծուն կուրանան»: Եվ հավատով բոլոր տկարները այն պատժի մեջ կհայտնվեն ու իրենք իրենց հոժարակամ կբաժանեն սուրբ եկեղեցիներից: Նույն ժամանակը նրանց մոլորության մղեց, որովհետեւ ցածրասիրտներն ու հնազանդները, իսկական քրիստոնյաներն ու Թորգոմյան սերնդի ազատները, իմաստուն ու ընտիր մարդիկ այն ժամանակ ճշմարտությունը չորոնեցին, այլ նրանց փոխարեն փնտրեցին եսասերները, փողամոլները, հայհոյողները, ամբարտավանները, հափշտակիչները, հարբեցողները, պոռնիկները, շնացողները, անողորմները, գողերը, ապստամբները, անխիղճները, բանսարկուները, ցոփերը, գոռոզները, մատնիչները, պարծենկոտները, ցանկասերները, ստրկամիտները, որոնք բարեպաշտի տեսք ունենալով, էապես հրաժարված են բարեպաշտությունից: Այսպիսիները պիտի լինեն այն օրերի սպասավորներ եւ ուրախությամբ պիտի կատարեն այն ամենը, ինչ որ հրամայվի իրենց: Եվ երկյուղած աստվածապաշտը նրանց մոտ ոչինչ պիտի համարվի:

Իսմայելի որդիների պատժի ժամանակ մարդիկ հոգեկան անհուսալի պահանջմունքների մեջ կընկնեն: Կվերանա քահանաների պատիվը, կպակասի Աստծու տան արարողությունը, կլռեն եկեղեցու բոլոր պատարագները, եւ քահանաները ժողովրդի նման կդառնան: Եվ երբ նրանց դաժան ժամանակը վրա հասնի, կբազմանա մարդու ու անասունի նեղությունը. մարդիկ կապականվեն ու կթափվեն գետին, եւ նրանց համար կավելանա մի ուրիշ հարված եւս՝ երեկոյան կքնի մարդը եւ առավոտյան վեր կենալով՝ իր դռանը կգտնի ոսկու եւ արծաթի հարկահանին: Կնվազի ոսկու ու արծաթի ամբողջ առեւտուրը: Մարդիկ կվաճառեն իրենց բոլոր պետքական բաները: Այդ ժամանակ նրանք կվաճառեն իրենց զավակներին: Արդ, ասում են, Աստված ի՞նչ պատճառով պիտի անտեսի հավատացյալների նեղությունը կրելը: Չէ՞ որ հավատացյալներն ու անհավատները պիտի երեւան, եւ որոմը

պիտի զատվի ցորենից, որովհետեւ այն ժամանակը փորձիչ հուր է, եւ Աստված ներողամտաբար թողնում է, որ ընտրյալները երեւան: Ըստ այդմ՝ ասում է. «Երանի է ձեզ, երբ ձեզ նախատեն, չարչարեն եւ ձեր մասին ասեն ամեն չար ու սուտ բաներ Իմ պատճառով, ցնծացե՛ք եւ ուրա՛խ եղեք, որովհետեւ ձեր վարձը շատ է երկնքում»:

Իսկ Իսմայելի որդիների բերած վերջին նեղության ժամանակ, երբ մարդիկ վտանգվեն ու նրանցից փրկվելու հույս չունենան, նրանց վրա հանկարծակի զայրույթով կհարձակվի Հունաց, այսինքն Բյուզանդիայի թագավորը, ինչպես քնից արթնացած մարդ, որին մարդիկ համարում էին մեռած ու ոչ պիտանի: Սա նրանց դեմ կելնի Եթովպական ծովից եւ սրածություն ու ավերածություն կգործի մինչեւ Եթրիբ՝ նրանց երկիրը: Կգերի նրանց կանանց ու մանուկներին: Թագավորի զինվորները սրով կմտնեն նրանց երկրի բնակիչների մեջ, կկոտորեն եւ նրանց վրա ահ ու սարսափ կտարածեն: Նրանց բոլոր բանակները կհանձնվեն Բյուզանդիայի թագավորի ձեռքը: Թագավորի լուծը կընկնի նրանց վրա յոթնապատիկ ավելի, քան իրենցն էր նրանց վրա: Նրանց կվիճակվեն նեղություն, քաղց, ծարավ, չարչարանք: Եվ իրենք ծառա կդառնան: Նրանց կանայք ու զավակները կծառայեն նրանց, որոնք իրենց ծառայեցրել էին: Նրանց ծառայելը կլինի հարյուրապատիկ ավելի դաժան եւ տանջալից, ու կխաղաղվի երկիրը՝ նրանց կողմից ավերված լինելով: Եվ յուրաքանչյուր ոք կգնա իր երկիրը, իր բնակատեղը՝ Հայաստան, Կիլիկիա, Սիրիա, Աֆրիկա, Գաղատիա, Սիցիլիա, իսկ մնացածները գերությունից իրենց աշխարհը չեն տարվի, այլ երկրի վրա կբազմանան մորեխի պես: Արաբիան կավերվի, իսկ առափնյա վայրերը կխաղաղվեն: Բյուզանդիայի թագավորի բարկությունն ու զայրույթը կբորբոքվի մեր Տեր Հիսուս Քրիստոսի ուրացողների նկատմամբ:

Եվ մեծ խաղաղություն պիտի լինի, որպիսին ոչ եղել է, ոչ էլ կլինի: Հետո վերջում ուրախություն պիտի լինի երկրում: Քաղաքներ կկառուցեն, քահանաներին վտանգից կազատեն, եւ այն ժա-

մանակ մարդիկ իրենց նեղություններից հանգիստ կառնեն: Սա այն իրողությունն է, որը ակնարկել է աստվածային առաքյալը, թե՝ «Երբ ասեն խաղաղություն, շենություն եւ ուրախություն, այն ժամանակ հանկարծակի վրա կհասնի նրանց ոչնչացումը»: Այլեւ Տերը Ավետարաններում ասում է. «Ինչպես որ Նոյի օրերում էին մարդիկ ուտում-խմում, կին առնում ու աղջիկ մարդու տալիս, այնպես էլ կլինի ետին օրը»: Եվ այդ խաղաղության ժամանակ մարդիկ ուրախությամբ կնստեն ուտել-խմելու, ցնծալու եւ զվարճանալու. շինություններ կկառուցեն, որ երկյուղ ու հոգ չունենան:

Այն ժամանակ, ըստ Եզեկիելի մարգարեության մեջ ասված այն խոսքերի, թե վերջին օրերին, այս աշխարհի վախճանի ժամանակ, Գոգը եւ Մագոգը պիտի մտնեն Իսրայել երկիրը, կբացվեն հյուսիսի դռները եւ դուրս կելնեն Ալեքսանդրի կողմից հյուսիսի կողմերում արգելափակված ժողովուրդների ուժերը՝ գոգ եւ մագոգ, անիգ եւ ագիգ, աքիազ, դիփոր, փորինացիներ, աղրենացիներ, հոներ, փարզիացիներ, դեկղիմացիներ, սարմատներ, թեթղեացիներ, զարմետացիներ, կաքոնացիներ, ամազարդներ, գարմադատցի մարդակերներ, թարփացիներ, ալաններ, փասկղինկացիներ, արգնեացիներ, սատարեացիներ: Սրանք քսաներկու թագավորություններ են, որոնք արգելափակված են Ալեքսանդրի կանգնեցրած դարպասների ետեւում: Մարդիկ կտեսնեն ու կզարհուրեն, կփախչեն ու կթաքնվեն լեռներում, քարանձավներում ու գերեզմանոցներում. շատերն էլ կմեռնեն, եւ ոչ ոք չի լինի, որ կարողանա նրանց թաղել: Չէ՞ որ հյուսիսի կողմից եկող այդ ժողովուրդները ուտում են գազանների մարմինները, խմում արյունը. այդպես ուտում են բոլոր պիղծ կարիճներն ու սողունները, մեռածների դիակները, կանանց վիժվածքները: Նրանք կմորթեն մանուկներին եւ ուտել կտան իրենց մայրերին:

Կապականեն երկիրը, եւ ոչ ոք չի լինի, որ կարողանա նրանց դեմն առնել: Յոթ ու կես տարուց հետո նրանք կհասնեն Հոպպե քաղաքը: Տերը կուղարկի Իր զորավարին ու նրանց կկոտորի մեկ վայրկյանում: Այնուհետեւ կգա հունաց թագավորը եւ կբնակվի

Երուսաղեմում յոթ ու սրա կես տարի, որը եւ լինում է տասն ու կես տարի: Տասն ու կես տարին լրանալիս երեւան կգա դժոխքի ծնունդը, որը կծնվի Քորազինում, կսնվի Բեթսաիդայում եւ կթագավորի Կափառնաումում: Եվ կուրախանա Քորազինը, քանի որ իր մեջ է ծնվել, կուրախանա Բեթսաիդան, որովհետեւ այնտեղ է սնվել, Կափառնաումն էլ, որովհետեւ այնտեղ է թագավորել: Այս պատճառով էլ Տերը Ավետարաններում եռակի վայ է տալիս՝ ասելով. «Վա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթասայիդա... եւ դու, Կափառնաում, որ մինչեւ երկինք բարձրացար, մինչեւ դժոխք պիտի իջնես»:

Եվ երբ երեւա կորստյան որդին, հունաց թագավորը կբարձրանա լեռան գագաթի այն տեղը, որտեղ կանգնեցվեց Խաչի կենարար փայտը, որի վրա մեխվեց մեր Տեր Աստվածը եւ մեզ համար ընդունեց կամավոր մահը: Թագավորը կվերցնի իր թագն ու կդնի խաչի վրա եւ ձեռքերը երկինք կտարածի: Իր թագավորությունը կհանձնի Աստծու եւ Հոր ձեռքը. խաչը թագով հանդերձ երկինք կբարձրանա, քանի որ առհասարակ բոլորի փրկության համար Տերը մեխվեց խաչի վրա, Նրա գալստյան ժամանակ նախ եւ առաջ այն պիտի երեւա՝ ի հանդիմանություն անհավատների: Եվ հունաց թագավորը իր հոգին կավանդի, ու այն ժամանակ կխափանվեն իշխանությունները եւ պետությունները, կկատարվի Դավթի այն մարգարեությունը, որ ասում է. «Լեռները թող ցնծան Տիրոջ առաջ, որովհետեւ Նա է գալիս եւ գալիս է դատելու երկիրը»:

Իսկ կորստյան որդին Դան ցեղից է. ըստ Հակոբ նահապետի մարգարեության դարանակալ օձ է՝ նստած ճանապարհի վրա, սպասում է խայթելու երիվարի գարշապարը եւ վայր գցելու հեծյալին՝ նրան թողնելով Տիրոջ փրկությանը: Այդպիսով, հեծյալը ճշմարտությունը եւ արդարների արքայությունն է, իսկ գարշապարը սրբերն են. ժամանակին հեծած ճշմարիտ հավատքի երիվարը, պիտի խայթվեն այն օձի՝ կորստյան որդու կողմից, վերջին օրը: Նա ցնորքներով սուտ, անզոր ու ամբարտավանական հրաշքներով պիտի գործի, որովհետեւ իբր թե կույրերը պիտի տեսնեն, կա-

ղերը՝ վազեն, խուլերը՝ լսեն, դիվահարները՝ բուժվեն, արեգակը պիտի խավարի փոխվի, լուսինը՝ արյան: Իր այս սուտ հրաշքներով ու ցնորքներով պիտի մոլորեցնի հավատացյալներին ու ընտրյալներին: Ինչպես որ Հակոբ հայրապետը մտքի աչքով տեսավ այս գալիք նեղությունը, որ լինելու էր երկրի վրա, եւ մարդկանց տանջանքը սպանիչ օձից՝ կորստյան որդուց, նկատի ունենալով օձի արածները՝ մարդկության անունից ասաց. «Կսպասենք Քո փրկությանը, Տե՜ր»: Իսկ Տերն էլ ավելի առաջ ասել էր, որ եթե որեւէ հնար լինի, նա կմոլորեցնի նաեւ ընտրյալներին, որովհետեւ պիտի մտնի Երուսաղեմ, նստի Աստծու տաճարում՝ Աստծուն հավասար մարդու տեսքով մարմնավորված տղամարդու սերմից, Դան ցեղի կնոջ արգանդում՝ Հուդա Իսկարիովտացին, որը եւ հենց մատնեց Տիրոջը: Նա հենց Դան ցեղից էր:

Իսկ երբ կորստյան որդու անօրինությունները շատանան, Աստված չի կարող անտեսել կորուստը մարդկային սերնդի, որին գնել էր Իր արյամբ, շտապ կուղարկի Իր մտերիմ ծառաներին՝ Ենովքին ու Եղիային՝ հակառակորդին հանդիմանելու համար, որոնք բոլոր ժողովուրդների առաջ կդատապարտեն նրա ստախոս ու խաբեբա լինելը եւ կասեն, որ նա եկել է շատերին մոլորեցնելու ու կորստյան մատնելու նպատակով: Ժողովուրդները նրան տեսնելով՝ կպախարակեն նրա մոլորությունը, կթողնեն ու կփախչեն նրանից եւ կհարեն այն սրբերին: Իսկ նա, իրեն տեսնելով խիստ խայտառակված ու բոլորից արհամարհված, բարկությամբ եւ ցասումով կբորբոքվի ու կսպանի Աստծու սրբերին: Այն ժամանակ կերեւա Աստծու Որդու երկնքից գալու հրաշքը, եւ Նա կգա երկնքի ամպերի վրայով, երկնային փառքով, Իր հրեշտակապետերով ու հրեշտակներով, կոչնչացնի չարին՝ Հոգով, Իր բերանով: Եվ այստեղ պատշաճում է առաքելական պարզ ու հասկանալի խոսքը, թե այն ժամանակ արդարները կփայլեն լուսատուների նման, իսկ ամբարիշտները դժոխք կգնան ու կորստյան կմատնվեն հավիտենապես:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԶԵՌՆԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ*

Հայոց 471 թվականին (1022) հունաց Վասիլ կայսեր թագավորության օրոք երկնքում ահավոր եւ սոսկալի նշան երեւաց, եւ բոլոր արարածների գլխին փորձանք եկավ: Հոկտեմբեր ամսի 3-ին, օրվա երկրորդ ժամին պատռվեց երկնակամարը՝ արեւելյան կողմից մինչեւ արեւմուտք. կապույտ երկինքը երկուսի բաժանվեց եւ հյուսիսային կողմից երկրի վրա պայծառ լույս թափվեց: Ուժեղ երկրաշարժից ողջ երկիրը սասանվեց: Նախքան լույսի նվազումը բոլոր արարածների վրա ահավոր գոչյուն եւ թնդյուն եղավ: Արեւը խավարեց եւ երեւացին աստղերը՝ ինչպես կեսգիշերին: Ամբողջ երկիրը սուգ հագավ, եւ բոլոր մարդիկ դառն արտասուքով Աստված էին կանչում: Երեք օր հետո բոլոր իշխաններն ու ազատները, հայոց թագավոր Հովհաննեսի հրամանով, հավաքվեցին եւ եկան սուրբ վարդապետ Հովհաննես Կոզեռնի մոտ, որ աստվածապաշտ եւ հրեշտակակրոն, առաքելական եւ մարգարեական գրքերի քաջագիտակ մարդ էր: Երբ հայոց իշխանները եկան հարցուփորձ անելու նրան, եւ իմանալու հրաշալի երեւույթի նշանակության մասին, տեսան, որ սուրբ Հովհաննես վարդապետը վշտահար, երեսի վրա ընկած, դառնագին լալիս էր: Նրանց հարցին նա դառն հոգոցով ու հառաչանքով պատասխանեց եւ ասաց. «Ո՜վ որդիներ, լսեք ինձ: Վա՜յ եւ ափսո՜ս բովանդակ մարդկության, քանզի այսօր լրացավ հազար տարին, ինչ մեր Տեր Հիսուս Քրիստոսը Իր Սուրբ Խաչով, մանավանդ Հորդանան գետում Իր Սուրբ Մկրտությամբ կապեց սատանային: Այժմ սատանան արձակվեց իր կապանքներից՝ համաձայն Հովհաննես ավետարանչի տեսիլքի վկայության, ինչպես նրան Աստծո հրեշտակն

* **[11] էջ 59-63**:

ասաց, թե հազար տարի սատանան կապված պիտի մնա եւ իր կապանքներից նորից պիտի արձակվի: Այսօր ահա սատանան արձակվել էր իր հազարամյա կապանքներից. հայոց տոմարի 478 թվականն է, դրա վրա գումարիր 522, լինում է 1000 տարի, դրանից հանիր Քրիստոսի նախքան մկրտվելու երեսուն տարին, կստուսցվի, որ մինչեւ օրս անցել է հազար տարի: Այդ պատճառով է ահա երկինքը պատռվել: Այսուհետեւ ոչ ոք չպիտի կարողանա հաստատուն մնալ Քրիստոսի դավանության եւ Աստծո պատվիրաններին, ո՛չ հայրապետ, ո՛չ վարդապետ, ո՛չ եպիսկոպոս, ո՛չ քահանա, ո՛չ աբեղա, ո՛չ վանական, ո՛չ իշխան եւ ո՛չ ժողովուրդ: Իշխանները միանալու են գողերին, ավազակներին եւ թալանողներին, դատավորները դառնալու են կաշառակեր եւ տեսնելու են անիրավ դատաստան, վանականները թողնելու են անապատներն ու մենաստանները եւ զբաղվելու աշխարհիկ գործերով, շրջելով փողոցներով եւ լինելով կանանց շրջապատում, նրանք պիտի ատեն աղոթքը, պիտի լքեն իրենց վանական կոչումը, պիտի սիրեն աշխարհիկ կյանքը, պիտի ցանկան գովեստը մարդկանց, որոճալով պիտի որոճան դիվական երգերը եւ, իրենց ընկերների դեմ ամբարտավանանալով, պիտի ասեն, թե ես կցորդ գիտեմ եւ մեղեդի, իսկ դու՝ ոչ, եւ այդպիսով պիտի աղավաղեն ժամակարգությունը: Պիտի հանդես գան ուսման բազմաթիվ ատեցողներ, ծույլ եւ դատարկախոսներ, վատաբաններ եւ ամբաստանողներ, եւ որտե՞ղ պիտի գտնես մարդկանց մեջ ճշմարտություն, երբ նրանք պնդագլուխ եւ եսասեր, ընկերատյաց, բամբասող, բանսարկու, ստախոս, մեծամիտ, փառասեր, ինքնահավան, գոռոզ, շատակեր, հարբեցող եւ հեշտասեր են լինելու: Իմ որդիներ, այսուհետեւ մարդիկ չեն փառաբանելու Աստծուն եւ մարդկանց մոտ չի լինելու ճշմարտություն: Իշխանները եւս պիղծ եւ մեծ ախտով վարակված պիտի ամբարտավանան եւ սխալ ճանապարհով պիտի ընթանան: Մի կողմ թողած տունը շեն պահելու, գործը հաջողությամբ ավարտելու հոգսերը, շարունակ ու անվերջ տարվելու են հարբեցողությամբ, որովհետեւ պիտի սիրեն եւ ցանկան այդ

վատ ու պիղծ ախտը: Հայրապետներն ու եպիսկոպոսները, քահանաներն ու վանականները պիտի լինեն ավելի դրամասեր, քան՝ աստվածասեր: Իմ որդիներ, ահա, այսուհետեւ անարժան պատարագողների ձեռքով, որ սրանից հետո են գալու, մարդիկ ավելի սատանայի կամքն են կատարելու, քան Աստծո: Պիտի զայրանա Աստված արարածներիս վրա, առավել եւս պատարագ մատուցողների վրա, քանզի Քրիստոսին պատարագելու են անարժանները, եւ Նրա մարմինը հաղորդվելու է անարժաններին: Մեր Տեր Հիսուս Քրիստոսին ավելի խոր վերք են հասցնելու անարժան քահանաները, քան հասցրել են Նրան չարչարող եւ խաչող հրեաները, որովհետեւ արձակվեց սատանան իր հազարամյա կապանքներից, որոնցով Քրիստոսը կապել էր նրան: Իմ որդիներ, ես լալագին ու ողբագին, հառաչող սրտով խրատում եմ ձեզ, որովհետեւ շատերը հեռանում են հավատքից եւ պարծենալով ուրանում Քրիստոսին: Այդ է պատճառը, որ խավարը պատեց բոլոր արարածներին»:

Բարկության նշանին ահա այսպիսի բացատրություն տվեց հայոց սուրբ վարդապետը: Նա այլ շատ բան էլ ասաց, որ գալու է հավատացյալների գլխին, ինչ ահա մեկ առ մեկ իրականացավ կատաղի եւ շնաբարո թուրքաց ազգի՝ Քամի անօրեն եւ պիղծ որդիների ձեռքով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՋԵՌՆԻ II ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ*

Հայոց 485 թվականին (12 մարտ 1036-11 մարտ 1067թ.) ահավոր եւ սոսկալի ձեւով խավարեց արեգակը, ինչպես Քրիստոսի խաչելության ժամանակ էր խավարել, նույն ձեւով թաքցրեց իր լույսը եւ պատեց խավարով: Երկնագույն լուսատուները խավարեցին եւ սեւացան, իսկ ամբողջ երկնակամարը ծածկվեց մթությամբ: Արեգակը խավարեց կեսօրին, իսկ բոլոր աստղերը պսպղում էին ինչպես կեսգիշերին: Խավարը եւ մութը գնալով սաստկացան. բոլոր արարածները աղաղակ բարձրացրին, բոլոր լեռներն ու բլուրները թնդացին, սասանվեցին լեռներն ու բոլոր ապառաժները: Երերում, ալեկոծվում էր համատարած մեծ Օվկիանոս ծովը, եւ բոլոր մարդիկ սուգ հագած ողբում էին կատարվածը տեսնելով, նրանք մահուսարսափ էին ապրում: Որդին ողբում էր հորը, հայրը՝ որդիներին: Երեխաներն ահաբեկված ընկնում էին ծնողների գիրկը: Մայրերը, հրկիզվողի նման ահաբեկված ողբում էին իրենց երեխաներին: Եվ այսպես ահաբեկ էին եղել, սարսափ էին ապրում բոլոր արարածները եւ վիճակից դուրս գալու ելք չէին գտնում. սոսկալի նշանից զարմացած եւ լեղապատառ, նրանք շվարել էին: Այն ժամանակ հայոց հայրապետ տեր Պետրոսը եւ Հովհաննես թագավորը պատվական մարդկանց ուղարկեցին հայոց սուրբ վարդապետ Հովհաննեսի մոտ, որին Կոզեռն էին մականվանում, իմանալու համար երեւույթի նշանակության մասին: Նա սուրբ մարդ էր, հիանալի ճգնավոր, Աստծո Հին եւ Նոր Կտակարանների մեկնիչ եւ վարդապետական շնորհքով օժտված: Հայոց վարդապետի մոտ ուղարկվողներն էին Գրիգոր Մագիստրոսը՝ Վասակի որդին, Հայկազուն մեծ Սարգիսը, հայոց երկրի մի քանի

* **[11] էջ 75-85**:

այլ ազատներ եւ քահանաներ. նրանք գնացին իմանալու ահավոր նշանի երկրորդ անգամ երեւալու պատճառը: Գնալով հայոց վարդապետի մոտ, նրան գտան վշտահար, նորից երեսն ի վար գետնին ընկած, արցունք թափելիս: Այնքան սաստիկ էր լաց լինում եւ դառնագին աղաչում նա, որ ոչ ոք չհամարձակվեց բան հարցնել: Նրան գտան խոր սգո մեջ ընկղմված, անչափ ցավաբեկ, նա անվերջ արտասուք էր թափում եւ կուրծքն էր ծեծում: Հայոց իշխանները նստեցին Հովհաննես վարդապետի մոտ եւ մինչեւ օրվա վեցերորդ ժամը չհամարձակվեցին խոսել ու ահավոր երեւույթի մասին հարց տալ: Բոլորը, ովքեր նրա մոտ էին եկել, լաց էին լինում: Հայոց վարդապետը, տեսնելով, որ բոլոր եկածները ողբում են, բացեց իր բերանը եւ սկսեց հառաչելով եւ լացակումած խոսել ու ողբալ հավատացյալ բոլոր ժողովուրդներին: Նա ողբում էր ե՛ւ քահանայական դասը, ե՛ւ սրբություն սրբոց խորհրդի եղծումը, ողբում էր ե՛ւ Աստծո եկեղեցին, ե՛ւ վերջինում պահվող պատվիրանների քակտումը: Նա այսպես սկսեց խոսել հայոց իշխաններին. «Ով իմ փառավոր որդիներ, լսեք այս խոսքերը խոցված եւ վշտահար Հովհաննեսից: Ահա այսօր լրացավ Քրիստոսի խաչելության չարչարանքների հազար տարին, եւ Բելիարն արձակվեց, որին կապել էր Փրկիչը Հորդանան գետում. այդ մասին մենք իմացանք տասնչորս տարի առաջ, առաջին հրաշքից, որի մասին ասել ենք: Այժմ նա կրկին անգամ վկայեց: Եթե այն ժամանակ երկինքը պատռվեց, եւ երկիրը սուզվեց մթության մեջ, ապա այս տարի խավարեցին լուսատուներն ու բոլոր արարածները: Այնուհետեւ Քրիստոսին հավատացող բոլոր ժողովուրդները դեգերելու են խավարի մեջ, բոլոր հավատացյալ ժողովուրդների մոտ մթագնելու է եկեղեցու կարգը, մարդիկ պիտի անուշադրության մատնեն պահքն ու աղոթքը, հանդերձյալ կյանքի հույսը վերանալու է, մարդիկ չեն վախենալու Աստծո դատաստանից, ճշմարիտ հավատքը վերանալու է բոլոր ժողովուրդներից, աստվածապաշտությունը տկարանալու է, մարդիկ ատելու են Աստծո պատվիրանները եւ հակառակվելու Քրիստոսի Սուրբ Ավետարա-

նի խոսքերին: Բոլորը պիտի հանդես գան Աստծո սուրբ պատվիրանների դեմ, պիտի արհամարհեն սուրբ վարդապետների խոսքերը, սուրբ հայրապետների կանոնական կարգադրությունները, եւ այդպիսով շատերը պիտի գլորվեն հավատքի բարձրությունից: Նրանք պիտի ատեն սուրբ եկեղեցու դռները, պաս չպահելով եւ չաղոթելով աստվածապաշտությունից պիտի հեռանան: Շատերը պիտի անիծյալ լինեն, որովհետեւ պիտի արհամարհեն հոգեւոր սուրբ առաջնորդների աստվածային խրատական խոսքերը: Որդիները իրենց անհնազանդության պատճառով պիտի անիծվեն ծնողներից, վերջիններս էլ պիտի չարչարվեն աշխարհ բերած իրենց երեխաների կողմից: Ցամաքելու է հայրերի եւ զավակների գթասրտությունը: Այնուհետեւ հայրապետների ծուլության պատճառով բազմաթիվ հերձվածներ են մուտք գործելու Աստծո եկեղեցին, քանզի՝ հայրապետները դառնալով թուլամորթ եւ տկար, չպիտի կարողանան հավատո քննություն անել եւ պիտի մնան հիմար վիճակում: Արծաթասիրության պատճառով պիտի հրաժարվեն հավատքից եւ եկեղեցում պիտի պակասեն օրհներգությունները: Աստծո անխուսափելի ահավոր դատաստանի վախն ու սարսափը վերանալու է բոլորի մտքից. մարդիկ պիտի մոռանան, որ արդարների եւ մեղավորների հատուցում կա, նրանք ընթանալով մոլոր ճանապարհով, պիտի մեղքը սիրեն եւ հեշտասեր դառնան: Նրանք սիրով պիտի գնան հանրատները: Թագավորները, իշխանները եւ հոգեւոր առաջնորդները ապականելու են երկիրը, հոգեւոր առաջնորդներն ու իշխանները պիտի դառնան կաշառակեր, ստախոս, սուտ երդվող եւ, կաշառք ստանալով, պիտի ոտնահարեն աղքատի իրավունքը: Այսպիսով, Աստված է՞լ ավելի պիտի զայրանա նրանց դեմ՝ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունը ոչ ըստ Աստծո կամքի, այլ կողմնակալությամբ վարելու համար: Թեմին տիրելով իշխանաբար, նրանք հովվելու են այն եւ ժողովրդին դաստիարակելու ոչ Աստծո երկյուղով, ինչպես այդ մասին պատվիրեց սուրբ առաքյալ Պողոսը: Իշխաններն ու դատավորները ավելի պոռնկասեր, քան աստվածասեր են լինելու,

նրանք պիտի ատեն ամուսնության սուրբ խորհուրդը: Վարակվելով պոռնկության ախտով, պիտի սիրեն իրենց նմանների կործանումը: Նրանք մատնիչներին եւ գողերին պիտի պատվեն, անիրավաբար պիտի հափշտակեն աշխատողի ունեցվածքը եւ նրանց նկատմամբ անողորմ դատաստան պիտի տեսնեն: Իմ որդիներ, այսուհետեւ հոգեւոր առաջնորդների հակառակության պատճառով պիտի փակվեն սուրբ եկեղեցիների դռները, եւ բոլոր ժողովուրդների միջից վերանան սուրբ հաստատությունները: Արծաթասիրության պատճառով ձեռնադրելու են բազում անարժաններ եւ ամեն մի պիղծ մարդու քահանաների շարքին են դասելու: Այն ժամանակ է, ահա, որ Քրիստոսին պատարագելու են անարժան քահանաները: Այդ անարժաններն են ժողովրդին հաղորդություն տալու՝ ոչ ի փրկություն, այլ որպես պատիժ եւ հոգու կորուստ: Բայց տեղ-տեղ կան Քրիստոսի Սուրբ Խորհրդի ճշմարիտ պատարագներ, որոնց սիրույն էլ ահա Աստված կողորմի մարդկության: Որդինե՞ր, վիրավորելու են անբիծ, առաքինի մարդկանց, հրաժարվելու են քահանա ձեռնադրել անարատին՝ դրամ չունենալու պատճառով: Տասնչորս տարի առաջ, նախորդ երկրային նշանի առթիվ մենք ասացինք, որ աստվածապաշտությունից շատերը պիտի հեռանան, որովհետեւ բազմաթիվ քահանաներ եւ վանականներ հավատքով տկար պիտի լինեն, որ նրանք հեշտասեր պիտի լինեն եւ որոճալով պիտի որոճան դիվական երգեր, որ վանականները պիտի փախչեն անապատից, պիտի ատեն ճգնավորների սուրբ խմբերը, պիտի ատեն եւ անարգեն առաջին վանականների կենցաղավարությունը, եկեղեցական կարգ ու կանոնը եւ հավատքը տակն ու վրա պիտի անեն, պիտի փախչեն Աստծո սաղմոսերգության ձայնից: Իմ որդինե՞ր, այս բոլորը լինելու են: Աշխարհիկ առաջնորդները պիտի հղփանան արծաթասիրությամբ, եւ Աստծո Որդու շնորհքից զրկված ու մերժված մարդկանց պիտի առաջ քաշեն եւ քահանա ձեռնադրեն: Նրանք բոլոր մերժվածներին Աստծո ժողովրդի ղեկավար եւ առաջնորդ պիտի նշանակեն: Նրանք իրենց արածը չպիտի իմա-

նան, քանզի անչափ դրամասիրությունը կուրացնելու է նրանց: Ավելացնում եմ եւ հետեւյալը. սրանից հետո է, որ Քրիստոսն անարժան քահանաներից խոր վերք է ստանալու, ավելի խոր, քան ստացել էր հրեաներից՝ իր չարչարվելու եւ խաչվելու ժամանակ, նրանց պակասը սրանք են լրացնելու: Եվ պիտի լսվի. «Բարեկամ, դու ինչո՞ւ մտար այս հարսանիքը»: Եվ նրա ձեռքն ու ոտքը կապած պիտի շպրտեն խավարն արտաքին: Եվ հավաքածը իր գլխին է թափվելու եւ կործանելու նրան: Իմ որդիներ, այս բոլորը կատարվելու է հետին ժամանակներում, քանզի արձակվեց սատանան իր հազարամյա կապանքներից, որին կապել էր Քրիստոսը Իր խաչով: Պիտի հանդես գան Քրիստոսին ճշմարիտ հավատացողներ եւ պատերազմի ելնեն նրա դեմ, քանզի նա պետք է պատերազմի տարբեր ժողովուրդների մեջ գոյություն ունեցող սրբակրոն մարդկանց դեմ, ովքեր պահպանում են Աստծո պատվիրանները եւ ճշմարտապես խոստովանում են մեր Քրիստոս-Աստծուն: Այսուհետեւ տեղի են ունենալու այլազգիների՝ Քամի անիծյալ որդիներ թուրքերի պիղծ զորքի հարձակումները քրիստոնյա ժողովուրդների վրա, եւ բոլոր երկրները սրի ճարակ պիտի դառնան. քրիստոնյա բոլոր ժողովրուրդները կործանվելու են սովի մագիլներում եւ գերության մեջ: Բազմաթիվ գավառներ անմարդաբնակ են դառնալու, երկրի երեսից պիտի վերանա սրբերի զորությունը, բազմաթիվ եկեղեցիներ պիտի հիմնահատակ կործանվեն. պիտի խափանվի Քրիստոսի խաչի խորհուրդը: Ամբարշտության բազմանալու հետ միասին, դադարելու են սրբոց տոնակատարությունները, որդիները պիտի հակառակվեն իրենց հայրերին, հայրերը պիտի ատեն իրենց որդիներին, եղբայրները պիտի իրար դեմ դուրս գան եւ սպանությամբ ու արյունահեղությամբ պիտի ջանան մեկը մյուսին կործանել՝ ուրանալով եղբայրական գութն ու սերը. նրանց եղբայրության արյունը պիտի ցամաքի, եւ նման գործերով պիտի հավասարվեն անհավատներին: Անհավատ ժողովուրդները պիտի ալեկոծեն աշխարհը, անդաստանների բույսերը արյան ցողով պիտի շաղախվեն, երկիրը վաթսուն

տարի պիտի ավերվի սրով ու գերությամբ: Այն ժամանակ, ահա, պիտի հանդես գա ֆրանկների արիական ժողովուրդ, մեծ զորքով գրավի Երուսաղեմ սուրբ քաղաքը եւ գերությունից ազատի աստվածընկալ սուրբ Գերեզմանը: Դրանից հետո, հիսուն տարի երկիրը պիտի տառապի պարսից զորքերի սրից ու գերեվարությունից: Հավատացյալները նախկինում կրած տառապանքների յոթնապատիկը պիտի կրեն, եւ քրիստոնյա բոլոր ժողովուրդները ահ ու սարսափ պիտի ապրեն: Բազում դժվարություններից պիտի հուսաբեկվեն հոռոմոց զորքերը եւ պարսիկներից ջարդի ու խողխողման ենթարկվեն, նրանց անվանի եւ քաջ զինվորականները սրի պիտի քաշվեն եւ գերի տարվեն: Հոռոմոց զինվորները կորցնելու են փրկության հույսը: Այդ հիսուն տարուց հետո հոռոմները աստիճանաբար պիտի հզորանան, իսկ տարբեր տեղերում նախկին գնդի մնացորդները, տարեցտարի հրապարակ գալով, պիտի հաստատվեն որպես նահանգների եւ գավառների կայազորներ: Այն ժամանակ հոռոմոց կայսրը, կարծես քնից զարթնելով, հսկայական բազմությամբ, որպես ծովեզրյա ավազ, արծվի պես պիտի հարձակվի պարսից զորքերի վրա: Նա պիտի ելնե որպես բորբոքված հուր, եւ նրա ահից բոլոր արարածները պիտի դողան, իսկ պարսիկները եւ այլազգիների բոլոր զինվորները պիտի փախուստի դիմեն Ջիհուն մեծ գետից այն կողմ: Եվ այն ժամանակ, ահա, հռոմայեցիների կայսրը երկար տարիներ պիտի տիրի բովանդակ աշխարհի վրա: Համայն երկիրը պիտի վերաշինվի եւ շենանա, պիտի նորանա, ինչպես ջրհեղեղից հետո: Պիտի բազմանան մարդկանց եւ անասունների ծնունդները, ցամաքած աղբյուրները պիտի հորդեն, անդաստանները նախկինից շատ բերք տան: Այնուհետեւ պարսից երկրում բազում տարիներ սով է լինելու, այնքան սաստիկ, որ իրար են հոշոտելու: Հռոմայեցիների կայսեր հզորությունից սարսափած, պարսից բազմաթիվ իշխաններ պիտի թողնեն իրենց քաղաքներն ու գավառները եւ առանց մարտի փախուստի դիմեն Ջիհուն գետից այն կողմ, իսկ բազում տարիների ընթացքում հողի կամ քարակույտերի նման դիզված ոսկին,

արծաթը, ողջ գանձը պարսից երկրից պիտի առնվի եւ հռոմայեցիների երկիրը պիտի տարվի: Պարսից բոլոր տղաներին, աղջիկներին եւ կանանց պիտի գերեվարեն հռոմայեացվոց երկիրը: Հռոմայեցիների զորքերը պարսից երկիրը պիտի ավերակ եւ անմարդաբնակ դարձնեն: Հռոմայեցվոց կայսեր գերիշխանության տակ է անցնելու ողջ աշխարհը»:

Ահա, այսպես ասաց Հովհաննես սուրբ վարդապետը եւ խաղաղությամբ ճամփա դրեց հայոց իշխաններին, որոնք գնացին իրենց տեղերը:

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ, ԸՍՏ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ*

Այս վարդապետը (Հովհաննես Երզնկացի) Սուրբ Հոգու ներշնչմամբ գնաց Անի՝ քարոզելու եւ խրատելու քաղաքացիներին, որ հրաժարվեն իրենց մոլորություններից ու չար գործերից: Մտավ ավագ եկեղեցին ու գիշերեց այնտեղ, եւ ոչ ոք հանձն չառավ գնալու նրա մոտ՝ նրան տեսնելու եւ ողջունելու:

Երբ գիշերային ժամերգությունը սկսվեց, գնաց եկեղեցի, նրան տվեցին վերջին տեղը, եւ նա խոնարհությամբ կանգնեց: Արձակումից հետո գնաց իր խուցը, եւ ոչ ոք բնավ չմոտեցավ նրան: Ցերեկը, ուտել-խմելուց հետո, եկան վարդապետի մոտ, եւ քանի որ երանելին կարճահասակ էր, բարձր գրակալ դրեցին, որպեսզի երբ ձգվեր դեպի այն, ծաղրեին նրան: Իսկ նա, Սուրբ Հոգու շնորհով անգիր իմանալով բոլոր ընթերցվածները, առանց կարդալու անսխալ ու ճիշտ ասում էր դրանք: Օրուգիշեր մեծ հոգատարությամբ խրատում էր, բայց նրանք բնավ չէին լսում եւ իրենց մեղքերից չէին հրաժարվում: Ուստի դաժան մահ տարածվեց քաղաքում, որովհետեւ աներեւույթ զորությունները մարմին առնելով երեւում էին եւ հայտնապես խոցոտում մանուկներին մայրերի գրկում կամ էլ անկողնում՝ոմանց՝ քնած ժամանակ, ոմանց էլ՝ արթուն: Երբ քաղաքացիները տեսան իրենց վրա եկած այս պատուհասը, բռնեցին սուրբ վարդապետին եւ դրեցին բանտում՝ մի նսեմ ու ժահահոտ տեղ՝ ասելով. «Պատարա՛գ արա եւ Աստծուն հաշտեցրո՛ւ մեզ հետ, ինչպես ասացիր: Այլապես կմեռնես մեր ձեռքով»: Նա պատասխանեց՝ ասելով. «Ահա կրկին բարկացրիք Աստծուն», եւ նրանք չանսացին: Ուստի նրանց վախից ճարը կտրած՝ հանձն առավ պատարագ մատուցել եւ վեր կացավ գնաց եկեղեցի: Երբ Սեղանից իջավ

* **[10] էջ 490-493**:

խնկարկելու, բուրվառից կրակ դուրս եկավ եւ այրեց 400 մարդու, ինչպես հնում՝ Նաբադին ու Աբիուդին: Քաղաքացիներն իսկույն զղջալով ընկան սուրբ վարդապետի ոտքերն ու նրանից թողություն հայցեցին՝ խոստանալով հրաժարվել իրենց մեղքերից: Բայց կարճ ժամանակ անց կրկին սկսեցին չարիքներ գործել եւ թավալվել պիղծ ախտերի մեջ: Այդ ժամանակ Տերը բարկանալով ուղարկեց չար ու անծանոթ տեսքով գազաններ, որոնք կեսգիշերին երամակներով գալիս մտնում էին տնից տուն եւ պատանիներին ու երեխաներին հափշտակում տանում: Եվ մարդիկ առավոտյան իրենց տնից դուրս գալով՝ նրանց հոշոտված էին տեսնում՝ ոմանց ձեռքերը, ոմանց՝ ոտքերը, ոմանց՝ գլուխները, ոմանք էլ կիսամեռ ընկած էին լինում՝ արյունաթաթախ ու դիաթավալ: Մի կին էլ, ում միամոր որդին հափշտակվել էր գազաններից, եկավ, լալով ընկավ վարդապետի ոտքերը եւ ասաց. «Օգնի՛ր տառապածիս, որովհետեւ իմ միակ զավակն է. ես կատարել էի քո բոլոր պատվերները եւ այժմ էլ մինչեւ մահ կատարելու եմ»: Վարդապետը, տեսնելով այդ կնոջ հավատը՝ նման քանանացի կնոջ հավատին, աղոթեց Տիրոջը, եւ այդ ժամանակ գազանները, որոնք երեխայի մարմնի անդամները հափշտակել էին, բացահայտ բերեցին դրեցին դրանք սուրբ վարդապետի առաջ: Վերջինս երեխայի անդամները դրեց համապատասխան տեղերում, դասավորեց ու պնդացրեց եւ սկսեց աղոթել առ Աստված այսպես. «Տե՛ր Հիսուս, ինչպես որ հարություն տվիր Նային քաղաքի այրու միամոր որդուն, նույն այդ զորությամբ ու ողորմությամբ հարություն տուր ու կենդանացրու նաեւ սրան, քանի որ անմեղ է: Բայց թող մոտակայքում եղած մարդիկ տեսնեն Քո զորությունն ու հրաժարվեն իրենց չար գործերից»: Այդ ժամանակ երեխայի կտրատված մարմինը եռաց, ոսկորը ոսկորին կցվեց ու կենդանացավ, երեխայի հոգին վերադարձավ, եւ նա հարություն առնելով ոտքի կանգնեց: Իսկ շուրջը եղած մարդիկ, երբ տեսան այս հրաշքը, զարհուրելով ընկան վարդապետի ոտքերը՝ «մեղա» գոչելով, արագ գնացին բերեցին իրենց երեխաների դիակները վարդապետի մոտ եւ աղաչեցին, որ հարություն տա նրանց: Եվ

սուրբ վարդապետ Հովհաննեսն աղոթեց եւ գոչելով ասաց. «Սրանցից ովքեր որ անմեղ են, թող բժշկվեն, ապա թե ոչ՝ թող Աստված ըստ Իր կամքի վրեժխնդիր լինի»: Այդ ժամանակ գայլերը հանկարծակի հարձակվեցին նրանց վրա եւ բացահայտորեն հոշոտեցին նրանցից շատերին: Այս ամենը տեսնելով՝ մարդիկ մեծ ահով ապուշ կտրեցին եւ սկսեցին մեծ զղջմամբ «մեղա» գոչել ու հրաժարվել չար գործերից:

Սակայն երեք տարի հետո մոռացան նախկին հարվածները եւ սկսեցին նորից թավալվել տղմի մեջ՝ասելով, թե նախկին հարվածները պատահական էին եւ ոչ թե իրենց մեղքերի պատճառով: Հովհաննես վարդապետը դարձյալ եկավ եւ սկսեց քարոզել: Երբ տեսան, որ նա կրկին հանդիմանում է իրենց, բարկացան եւ սկսեցին ասել իրար, թե նա իրենց խանգարիչն է: Ուստի չար խորհուրդ հղացան. նրան թմրադեղ խմեցրին, գլուխը շշմեցրին, ապա մերկացրին նրան, գցեցին սայլի վրա եւ այդպես մերկ ու խայտառակ պտտեցնում էին քաղաքում՝ մունետիկի միջոցով ծաղրելով նրան: Ապա բերեցին, զամբյուղով կախեցին ավագ եկեղեցու դռանը, որպեսզի մտնողներն ու ելնողները տեսնեն: Որոշ ժամանակ անց թմրածությունից սթափվելով եւ իրեն այդպիսի վիճակում տեսնելով՝վարդապետը սկսեց հառաչել ու դառնապես լաց լինել: Նրա ձայնը լսելով՝ իսկույն իջեցրին նրան եւ բրածեծ անելով արտաքսեցին՝ պատվիրելով եւ ահաբեկելով թե՝ «Այսուհետեւ չտեսնե՛նք քեզ այստեղ, այլապես դաժան մահ կընդունես մեր ձեռքից»: Այս ամենը տեսնելով՝Հովհաննես վարդապետը ելավ մի բարձր բլուր եւ անիծեց քաղաքը. ծնրադրեց ու ասաց. «Տե՛ր, այլեւս երաշխավոր չեմ լինելու: Այսուհետեւ ինչ կամենում ես՝ արա՛»: Հանկարծ Աստծո սաստիկ բարկությունն իջավ եւ քաղաքը սկսեց շարժվել ու պարիսպները՝ տապալվել: Սա տեսնելով՝ բոլորն արագ բռնեցին իրենց ընտանիքի անդամների ու զավակների ձեռքերն ու առանց նախապատրաստության փախան՝ փախստականի պես թողնելով իրենց քաղաքը, եկեղեցիները, ոսկեզօծ պալատներն ու ծաղկավետ դաշտերը:

ՆԵՌԻ ԾՆՆԴՅԱՆ ԳԱԼԻՔ ԴԱՌԸ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԵՎՆՐԱ ՍԱՏԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ*

Եվ արդ, ըստ մեր տկարության չափավոր ճառեցինք Աստուծո Որդու Գալստյան եւ Նրա անաչառ դատաստանի մասին, որը լինելու է Երուսաղեմում: Դարձյալ ե՛կ եւ բե՛ր քո միտքը, ո՛վ քրիստոսասեր իշխան, որպեսզի սկսենք եւ քննենք աստվածային Գրքերը. սուրբերն Աստուծո Հոգով ավելի վաղ տեսան ու պատմեցին Նեռի չարությունների ու դառը ժամանակի նեղությունների մասին: Քանզի նաեւ մեծ շահ ու պարգեւ է մեզ եւ շատ օգուտ՝ նրանց, ովքեր դեռ պիտի գան աշխարհ, երբ բազում անգամ քննենք Նեռի մասին ասվածը եւ կրկին ու կրկին պարզենք նրա չարությունը, որպեսզի նախքան նրա գալուստը այն հայտնի լինի Ադամի սերունդներին, որ մարդիկ տգիտաբար չկորչեն: Այս պատճառով էլ Աստուծո կամքով Հոգին հայտնեց ընտրյալ սուրբերին, եւ նրանք շատ բաներ խոսեցին ու գրեցին Նեռի պղծության մասին, որպեսզի ամէն ոք, ով ծնվելով աշխարհ է գալիս, լսի նրա ամբարշտության մասին, լի բերանով ցավագին նզովքներ ու դառնագին անեծքներ արձակի նրա ետեւից, նախատի նրա ծնունդն ու կորստյան որդի կոչի նրան, որովհետեւ չար է նրա հիշատակը մարդկանց հոգիներում: Եւ սատանան կմիանա նրա հոգուն. Աստվածաշունչ Գրքերը սատանայի որդի եւ մարմին են քարոզում նրան: Եւ արդ, նրա օրինակներն ու կարապետները բազում են աշխարհում ըստ առաքյալի խոսքի՝ «Նեռերը բազում են աշխարհում», որովհետեւ ամեն ոք, ով չի հավատա Հիսուս Քրիստոսին, ստուգապես Նեռ կկոչվի: Նաեւ ով մարդկանց չարաչար նեղություններ հասցնի, ճշմարտաբար Նեռ կկոչվի: Ինչպես այժմ քրիստոնյաներին տագնապով մեծ նեղություն են պատճառում Հագարի ու այլ ազգերի անօրեն որդիները, որոնք դիվախառն Մուհամեդի եւ նրա անիծված հոր՝ սատանայի աշակերտներն են:

Զրույցը պատմում է, թե Անտիոքոսն իր դժնյա ու չար բարքով նման էր Նեռին: Նաեւ պիղծ Հուլիանոսը հույժ նմանվեց նրան եւ վերցնելով՝ հաստատապես իրեն միացրեց նրա անունը, գործն ու հոգին:

Արդ, բազում սուրբեր շատ բան գրեցին Նեռի չար անօրենությունների մասին՝ հեռվից սկսելով եւ խոսքը դեպի նրան տանելով՝ ցույց տալու համար նրա դառնագույն պղծությունը:

Արդ, գրքերում գտանք սուրբերից մեկի ասածը. «Նեղության ժամանակ, երբ մոտ կլինի օրերի վախճանը, Կիլիկիայի Տավրոս լեռան մոտ Աստուծո հրամանով կնստի հայոց մի թագավոր՝ այրի կնոջ որդի: Նա կլինի իմաստուն այր, բայց ամենաաղքատ թագավորը, կհաղթի անօրեններին, եւ նրա համբավը ահարկու կլինի շրջակա բոլոր երկրների վրա, ուր էլ որ հասնի: Նա կունենա գազանի անուն՝ Լեւոն, այսինքն՝ առյուծ: Այդ ժամանակ քրիստոնյա ազգերը սաստիկ կնեղվեն անօրենների անբավ հարկերից ու անսահման զրկանքներից եւ, նրան ապավինելով, կփախչեն կգան նրա աշխարհը, կկուտակվեն այնտեղ եւ կբնակվեն նրա մոտ, որովհետեւ Աստված նրան տեղապահ կկարգի քրիստոնյաների վրա: Նրանք կվերականգնեն հին ժամանակների ավերակները եւ կկառուցվեն անառիկ պարիսպներով դղյակներ: Եւ Աստված ոչինչ չի պակասեցնի նրա աթոռից, մինչեւ հեթանոսների, այսինքն՝ անօրենների ժամանակի լրանալը: Եւ կբարձրանա արիական ազգը, եւ կվերցնեն հույների թագավորական քաղաք Բյուզանդիոնը, որը Կոստանդնուպոլիսն է, իսկ հետո՝ ժամանակը լրանալուն պես, կգրավեն նաեւ Երուսաղեմը»: Եւ այնպես մանրամասն եւ ճշգրիտ է պատմում մեր քրիստոսատեսակ թագավորների մասին, կարծես մեր ժամանակների մասին պատմի: Եւ՝ «Երբ արիական ցեղը գա, մեր երկրի զորքերը դուրս կգան ու կխառնվեն նրանց բանակին»: Ինձ թվում է՝ այս գերության մասին է ասում, թե Երուսաղեմը կազատեն ծառայությունից, եւ կգա բա-

* **[17] էջ 238-254**:

րի ժամանակը: Բայց միայն Աստծուն է հայտնի:

Եւ՝ «Անօրենները, ինչպես ծովի ավազ, կգան եւ կկուտակվեն ընդդեմ արիական ազգի, եւ կլինի շատ մեծ կոտորած, մինչեւ որ քրիստոնյա զորքերը հույսները կկտրեն, բայց հետո Աստված հաղթություն կտա, եւ կկոտորեն անօրեններին ու կճզմեն նրանց, ինչպես սատկած մորեխների բազմություն: Եւ ինչպես անօրենները նեղել ու գերել են քրիստոնյաներին պես-պես չարչարանքներով, յօթնապատիկ վրեժ կառնեն նրանցից՝ չարչարելով նրանց սովով, գերությամբ, հալածելով եւ ծառայեցնելով իրենց: Եւ Հայոց թագավոր կնստի Տրդատի ցեղից եւ կթագավորի երկար օրեր, կխաղաղանա երկիրն ու դրախտի պես ամենալից կլինի: Հավատքը կպայծառանա, եւ մարդիկ առանց չարչարանքի կգործեն արդարություն ու սրբություն: Եւ այն ժամանակ ճանապարհորդները գերեզմանների մոտով անցնելիս ձայն կտան ննջեցյալներին եւ կասեն. «Վա՜յ եւ շատ ավա՜ղ, որ չհասաք այս բարի ժամանակներին»: Բայց գրված է. «Հիսուն տարի չեն գա բարի օրեր»: Ասվում է նաեւ, թե առաջին տարին, երբ բարի թագավորը կկոտորի անօրեններին եւ կհալածի նրանց, Բյուզանդիոն գերի կտանի մի տարեկան Նեռին, որն էլ կդաստիարակվի այնտեղ, կսովորի կախարդություն եւ կմեծարվի թագավորներից՝ հաջողակ դարձած: Դարձյալ ասվում է, թե այս բարի թագավորը նրա մորը, որը լինում է Դանի ազգից, գերության է տարած լինում Հրեաստանից Բյուզանդիոն: Եւ մի ֆռանկ զինվոր, տեսնելով նրան, չար կրքոտ սիրով տռփում է նրա հետ եւ կնության է առնում նրան: Նա կույս է լինում, իսկ տղամարդը՝ կնատ, թույլ ու չեզոք եւ չի կարողանում ամուսնական գործով միավորվել կնոջ հետ: Սակայն երբ տղամարդը աղտեղանում է նրա հետ, կինը հղիանում է, բայց կույս է մնում, եւ ծնելու ժամանակ սրով պատռում են նրա որովայնը:

Խոսքիս վկա է սուրբ Գրիգորի թոռ սուրբ Ներսեսը, որն իր մարգարեության մեջ Նեռի մասին ասում է. «Նա կծնվի պիղծ կույսից ցերեկով, եւ նրա ծնվելուն պես կլինի սաստիկ երկրաշարժ, կդողան աշխարհի հիմքերը, կխավարեն արեւն ու լուսինը, աշխարհի

վրա եւ վերին եթերում կլսվեն վայի, ողբի եւ լացի ձայներ: Եւ նա ներսում որովայն չի ունենա, որով կերակուրը մտնի: Կլինի տղամարդ, եւ նրա կերակուրը կանանց կաթը կլինի, եւ բազում կանանցից կերակրվելով՝ կմեռցնի նրանց»: Ինձ թվում է՝ տեսնողն այս բանն այլաբանորեն է ասում Նեռի մասին եւ նմանեցնում է նրան անհագ տզրուկ սատանային, որը նրա հայրն է, որովհետեւ նա ծծում է մարդկային ցեղի բոլոր աղտեղի գործերն ու բնավ չի հագենում եւ չի ասում, թե՝ բավականացա: Կհասունանա եւ կմեծարվի թագավորների կողմից, եւ նրան զորավար կնշանակեն: Եւ կավարտվեն բարի ժամանակները, որովհետեւ լրացան կյանքի օրերը: Նաեւ լուսինը իր լրումին կհասնի եւ կավարտվի՝ ո՛չ կմաշվի եւ ո՛չ էլ կաճի ի պետս աշխարհի, որն Աստված սահմանել էր նրա համար: Եւ խաղաղությունն աշխարհից կսկսի վերանալ, ինչպես Դավիթ մարգարեն է գոչում Քրիստոսի գալստյան մասին. «Նրա օրոք արդարություն եւ խաղաղություն կտիրի, մինչեւ լուսնի վախճանը»: Եւ այն ժամանակ առավել եւս կպակասի մարդկանց հավատքը, կվերանա իմաստությունը, կցամաքի սերը, եւ աշխարհում համարձակորեն կգործվի մեղքը: Եւ բոլոր արարածները սասանելով՝ կվրդովվեն, ջրի ու կերակուրի նվազություն կլինի: Եւ մարդիկ ուրախությամբ ու ցնծությամբ կամաց-կամաց սկիզբ կդնեն կռապաշտության. այս է չար թզենու ոստերի բողբոջումը եւ նրա պիղծ տերեւների ցցվելը, որը Տերը, խաչի վրա չարչարվելով, ցամաքեցրեց: Եւ ըստ Հովհաննես ավետարանիչի տեսիլքի՝ «Աստուծո թույլտվությամբ, ինչպես անթիվ մորեխներ, անդունդներից դուրս կգան դեւերը» եւ ուժգին ու զորավոր մեղքերի պատերազմներով կխավարեցնեն մարդկանց որդիների հոգիներն ու մտքերը, որոնք անգամ Աստուծո անունը չեն կամենա լսել, որպեսզի համարձակ գործեն բոլոր մեղքերը, որովհետեւ սատանան կտեսնի, որ եկել հասել են իր կորստյան ժամանակները: Այն ժամանակ բացահայտ պատերազմի դուրս կգա մարդկանց որդիների հետ: Կհավաքի իր բոլոր չար իշխաններին, կկանչի շնական ու պիղծ ախտերի դեւերին եւ երբ հավաքի նրանց, հանդես կգումարի եւ նոր պատերազմ-

ներ կսովորեցնի նրանց: Ողբալով լաց կլինի նրանց առաջ, վայ կտա իր անձին, կքաջալերի իր պիղծ զորքերին ու խավարասեր իշխաններին եւ խոնարհված կաղաչի նրանց ու կասի. «Ահա՛, իմ որդիներ՛ ու ժառանգորդներ՛, շտապեցե՛ք դուրս գալ աշխարհ՝ մարդկանց մոտ, արիաբար ջանացե՛ք ծածուկ ու բացահայտ միջոցներով, խորտակեցե՛ք մարդկանց եւ հորդորեցե՛ք նրանց դեպի բոլոր մեղքերը եւ մեզ հետ միասին ժառանգակիցներ դարձրեք անշեջ հրի: Ա՛յս է վերջին մարտը, եւ ա՛յս է վերջին կռիվը, որովհետեւ ավարտվեց ժամանակը: Վա՛յ մեզ, որովհետեւ հարությունը կգա, եւ այլեւս չենք կարողանա կործանել մարդկանց, որովհետեւ կվերանա մարմնական կարիքն ու մեղքը: Արդ, Ադամի որդիներից շատերին կործանեցիք, բայց մեծ մասին չկարողացաք խափանել, որովհետեւ ծույլ էիք եւ արիաբար չպատերազմեցիք չար կռվի ժամանակ: Այժմ պաղատո՜ւմ եմ ձեզ, այդպես մի՛ ծուլացեք, այլ գործադրեցե՛ք բոլոր հնարները, մեքենայություններն ու ծածուկ սլաքները մարդկանց դեմ եւ կործանեցե՛ք մեղավորներին, որովհետեւ մեր ձեռքից գնաց աշխարհը, ու ամեն բան ավարտվեց: Մի՛ նեղեք մեր մտերիմներին եւ նրանց մեջ մի՛ հապաղեք, որովհետեւ անհավատները, հերձվածողներն ու անզեղջ մեղավորները, նաեւ նրանք, ովքեր կատարում են մարմնի ցանկությունները, սրանք բոլորը մերն են, հանգի՛ստ թողեք նրանց: Այլ գնացե՛ք սուրբերի ու արդարների մոտ եւ զայրացրե՛ք, հուսահատեցրե՛ք, շարժեցե՛ք ախտը, տաքացրե՛ք, գրգռե՛ք, դրդեցե՛ք սպանության եւ այլ անքանակ չարիքներ գործել տվե՛ք նրանց»: Արդ, այս ամենը եւ առավել, քան այս բաները, չար բանսարկուն՝ անհիշյալ վիշապը, կասի իր զորքերին ու զորապետներին: Իսկ ինքը կգնա կմիանա Նեռի հոգուն պիղծ ու աղտեղի կույսի արգանդում, որն էլ կդարձնի իր գործելավայրը, որպեսզի նրա միջոցով կործանի մարդկանց որդիներին:

Եւ արդ, մեր Տերը ծնվեց սուրբ Կույսից, կործանեց սատանային եւ վերացրեց նրա պիղծ թագավորությունը: Իսկ սատանան ամեն կերպ կջանա Նեռին նմանեցնել մեր Քրիստոս Աստծուն: Քանզի ինչպես ասացինք, Նեռը կծնվի պիղծ կույսից եւ երբ դառնա հասուն տղամարդ, բանսարկուի միջոցով, որը միացած է նրա հոգուն, կսկսի կեղծավորել մարդկանց աչքի առաջ, կլինի բարեսեր ու կարգասեր, արդարադատ, կհսկի որբերին ու այրիներին, կլինի ողորմած, խոնարհ, հեզ, համբերող, աստվածասեր եւ Աստուծո օրենքներին, աղոթքներին ու պահքերին նախանձախնդիր: Եւ այս ամենը սուտ կձեւանա մարդկանց աչքի առջեւ, կկեղծավորի, որովհետեւ նա ճշմարտապես գայլ է, որը ստությամբ ջանում է ծածկել իրեն գառան մորթով, որովհետեւ սուտ է նաեւ նրա հայր սատանան, որը միացած է նրա հետ, հույս է տալիս նրան եւ այնպես է ջանում ու կեղծավորում, որ նրա համբավի համար յուրաքանչյուրը կձգտի նրան, եւ կասեն. «Երանի՜ նրան աշխարհի թագավոր դարձնեին»:

Եւ ապա այս չար ժամանակներում Կոստանդնուպոլսում երեք տարի կնստի Ընծուկ անունով մի թագավոր, որը կլինի աղքատ: Երբ սա մեռնի, թագավորությունը հանկարծակի կբաժանվի տասը գավազանի՝ տասը թագավորների միջեւ. մեկը Նեռը կլինի, նա կսպանի նրանցից երեքին, իսկ մնացածին կհնազանդեցնի ու ինքը կթագավորի նրանց վրա, ինչպես Դանիելը տեսավ «փոքրիկ եղջույրը, որը բուսավ գազանի գլխին՝ տասը եղջյուրների մեջ, եւ արմատախիլ արեց նրանց», որովհետեւ վերացան թագավորությունները, եւ միայն հռոմեացիները մնացին: Եւ նա էլ վերացվելու է Նեռի կողմից՝ ըստ գազանների տեսիլքի, որը տեսավ Դանիելը, եւ ըստ առաքյալի՝ թեսաղոնիկեցիներին ուղղված թղթի. «Երբ մեջտեղից կվերացվի նա, ով այժմ նրան ետ է պահում, պիտի հայտնվի անօրենը, որին Տեր Հիսուսը պիտի կործանի Իր բերանի շնչով»:

Բայց Նեռի անունը մեզ տեսակ-տեսակ ներկայացրին նաեւ սուրբերը: Սուրբ Ներսեսն ասում է, թե նրա անունը Հռաիմ է, նրա հոր անունը՝ Հռոմելաս, իսկ մոր անունը՝ Մելետինե: Եւ որ՝ նա կծնվի Քորազինում եւ կդաստիարակվի Բեթսայիդայում, որոնց մեր Տերը «վա՜յ» ասաց: Եւ թագավոր կնստի Կափառնայումում, որի մասին Հիսուս Քրիստոսն ասաց. «Դու, Կափառնայո՛ւմ, մինչեւ դժոխք կիջնես»: Եւ դարձյալ՝ նրա անունը կկոչեն Իմեգ օձ, որը

թարգմանվում է խավարի վիշապ եւ կորստյան մարդ: Եւ դարձյալ այլ տեղում ասվում է. «Նրա անվան թիվն է վեց հարյուր վաթսունվեց»: Սրանք կատարյալ թվեր են, եւ այս թվերով նրա անունը թարգմանվում է Շատինոս կամ Անթաստ: Ինչպես որ կատարյալ է այս թիվը, նոյնպես սրա նեղությունն ու չարիքը դառնագույն են եւ մեծ, քան բոլոր նեղությունները, որոնք եղան մարդկանց վրա աշխարհի սկզբից ի վեր: Դարձյալ՝ «Նեռի անունը լատիներենում Լամպիտեստիան է ասվում, որը՝ Բենեդիկտոս, որն էլ թարգմանվում է՝ օրհնված եւ կամ թէ՝ օրհնված ես»:

Եւ, ինչպես վերը նշեցինք, չարը ջանում է նմանվել Քրիստոսին ու հափշտակել օրհնյալ Աստուծո ճշմարիտ անունը, որպեսզի դրանով կործանի մարդկանց: Քանզի նա հրեաներին կասի. «Ես եմ Քրիստոսը, Որը գալու էր»: Դրա համար էլ Գիրքը նրան Դերաքրիստոս է կոչում, այսինքն՝ սուտ Քրիստոս եւ ոչ թե ճշմարիտ: Եւ Կոնստանդնուպոլսից նա կճանապարհվի դեպի Երուսաղեմ: Եւ նրա ահեղ համբավը կտարածվի ողջ աշխարհով, իսկ հետո քիչքիչ կսկսի բացահայտվել չարիքը, որը ծածկված էր կեղծավորությամբ: Եւ նախ իր չարիքները կսկսի՝ այսպես ասելով. «Ես եմ Քրիստոսը, որ գալու էի աշխարհ»: Կնստի Աստուծո եկեղեցում եւ իրեն երկրպագել կտա իբրեւ Աստված: Կնստի տաճարում ու կհայհոյի Բարձրյալ Աստծուն: Այս ամենի մասին Դանիելն ասաց. «Տեսնում էի փոքրիկ եղջույրը, որը ելավ տասը եղջույրների մեջ եւ արմատախիլ արեց նրանց»:

Բաներ կխոսի Բարձրյալ Աստծու մասին: Հրեաները, որոնք ջհուդներն են, կլսեն նրա համբավը, ու նրանց ամբողջ ազգը կգա ու կհավաքվի նրա մոտ: Կերկրպագեն նրան, խայտալով կցնծան նրա առաջ ու կգոչեն՝ ասելով. «Հորթերի պես արձակվեցինք Մովսեսի օրենքների կապերից, որովհետեւ լրացավ ժամանակը, ու կատարվեց գիրը. բարձունքներից խոնարհվեց Քրիստոսն ու իջավ մեզ մոտ: Ավա՜ղ, շատ ուշացար ու վշտացրիր մեզ, վա՜յ առաջին հայրերին, որոնք չկարողացան քեզ տեսնել: Եւ ո՞վ կտար այս ավետիսը ննջեցյալներին, որոնք Աբրահամի զավակներն են ու Մովսեսի ժողովուրդը»: Արդ, նրանց մասին առաքյալը գրեց. «Մոլորվածները ակնկալում են մոլորվածին»:

Իսկ նա կսկսի նորոգել օրենքն ու տաճարը: Եւ մեղքերի ծնունդ Ղովտի որդիները՝ մովաբացիներն եւ ամովնացիները, որոնք Սեիր լեռան մոտ են եւ ամբողջ Եգիպտոսում, նախօրոք կգան ու կհավաքվեն նրա մոտ, ըստ Դանիելի խոսքի. «Կկուտակի Եգիպտոսում բազում հողաբլուրներ եւ կավերի նրանց»: Եւ անօրենները, որոնք սպասում են իրենց մոլորապետ Մուհամեդին, անթիվ հազարներով կգան եւ կհավաքվեն նրա մոտ, որովհետեւ կկարծեն, թե նա է իրենց առաջնորդը: Եւ այլ անթիվ իշխաններ ու աշխարհների թագավորներ կգան ու կհավաքվեն նրա մոտ, որովհետեւ ամբողջ աշխարհում սաստիկ կհնչի նրա համբավը:

Եւ միայն Խաչի պաշտոնյաները կճանաչեն նրա չարիքն ու հույժ կհեռանան, կթաքնվեն նրա երեսից՝ ըստ Հովհաննես ավետարանչի տեսիլքի, որն ասում է. «Տեսա, եւ ահա՛ սուրբ քաղաքը բաժանվեց երեք մասի»: Քանզի երեք բաժին կլինի աշխարհը, եւ երկուսը միանգամից կմիանան նրան ու կենթարկվեն նրա կամքին: Նրա համբավը կտարածվի, եւ կդողա ու կսասանվի աշխարհը: Եւ ծովի ավազի պես անթիվ հազարներ ու բյուր-բյուրեր կգան կհավաքվեն նրա մոտ: Կլինի երաշտ, սով, եւ կսկսեն ցամաքել աղբյուրները նրա թագավորության ժամանակ, կփոշիանան ծառերն ու բույսերը, որովհետեւ երկինքն ու երկիրը կդառնան ինչպես երկաթ ու պղինձ, եւ հացը կպակասի աշխարհից: Գրված է. «Կգա ամայության չար ժամանակը», այսինքն՝ տգիտության, որովհետեւ քչերը միայն կլինեն, որոնք ծանոթ կլինեն Աստուծո անվանը: Նույնն է ասում նաեւ մեր Տերը. «Մարդու Որդին գալով՝ կգտնի՞ արդյոք երկրի վրա հավատ»: Եւ բոլոր կողմերից կսկսվեն վիշտ ու տառապանք, այնպիսի նեղություններ, որ չեն եղել աշխարհի սկզբից մինչեւ նրա ավարտը: Այն ժամանակ բոլոր քրիստոնյա ազգերի առաջնորդներն ու գիտնականները կտեսնեն սա ու աստվածային Գրքերով կճանաչեն, որ ահա՛ եկել հասել է աշխարհի վախճանը, եւ որ իսկապես դա է կորստյան որդին: Ապա,

միմյանց ձայն տալով, կգան կհավաքվեն անթիվ հաշվով նրանք, ովքեր քաջ ծանոթ կլինեն Աստծուն եւ հմուտ կլինեն Նրա բոլոր պատվիրաններին, կընթերցեն Աստուծո գրքերը: Եւ յուրաքանչյուրը կքաջալերի իր ընկերոջը: Առաջ կգան եւ հապշտապ կհորդորեն միմյանց, կմռնչան ի խորոց, կտագնապեն անդամներով: Այն ժամանակ կգոչեն առյուծաբար, կհարձակվեն վարազաբար եւ կթռչեն արագավազ ինձերի պես: Մեկ առ մեկ առաջ կգան եւ կասեն. «Ահա՛, եղբայրնե՛ր, հասավ բարի ժամանակը, քաջությամբ ջանանք, որպեսզի ստանանք մարտիրոսական պսակը»: Եւ կգան Նեռի մոտ անհամար բազմության մեջ եւ կթքեն նրա վրայ, աստվածային սուրբ Գրքերով կնզովեն ու կհանդիմանեն նրան: Իսկ այն կորստյան պիղծ որդին զանազան չարչարանքներով կխայտառակի նրանց եւ հետո միայն սրով կսպանի: Այն ժամանակ աշխարհից կվերանան գիտնականները, եւ այն պիղծն ավելի կճոխանա իր չարության մեջ: Սակայն բարեգութ Աստված անտես չի անի մարդկային ազգին, այլ կառաքի Ենովքին ու Եղիային, որ գան եւ քարոզեն աշխարհում, շրջեն մարդկանց մեջ ու ասեն. «Մի՛ հավատացեք դրան, որովհետեւ դա սուտքրիստոսն է՝ կորստյան որդին եւ սատանայի ժառանգը: Համբերե՛ք մի քիչ եւ կհասնեք փրկությանը. բազում են նեղությունները, բայց դռան մոտ է Քրիստոսը, եւ անճառելի՝ Նրա հանգիստը»:

Այն ժամանակ ծովը կնեխի, որովհետեւ կմեռնեն նրա մեջ գտնվող կենդանիները: Եւ չար ու գարշելի հոտից կապականվեն մարդկանց դեմքերը, ու զորություն չի մնա նրանց մեջ: Եւ մարախի պես կույտ-կույտ կմեռնեն մարդիկ սովից ու ծարավից: Նեխվելով կհոտեն քաղաքների փողոցներն ու հրապարակները, եւ ոչ ոք չի լինի, որ թաղի նրանց: Եւ այս անվախճան նեղությունների ու տառապանքների հետ միասին վայրի անապատներից մարդկանց մեջ դուրս կգան չարատեսք գազաններ, դառնագույն այլակերպ ու մահաթույն գիշատիչ սողուններ, որոնք անտես էին մարդկանցից, կուտեն մեռելներին եւ սովորելով՝ կսկսեն կենդանի մնացածներին էլ ուտել եւ կպատառոտեն նրանց, եւ չի լինի

որեւէ մէկը, որ օգնի նրանց:

Այն ժամանակ սարսափելի արհավիրքներ կլինեն լեռներում ու շեներում: Ահ ու երկյուղ սոսկալի, անդունդներից ու ծովից որոտումներ ու զարհուրելի ձայներ, եւ ամեն կողմից՝ սոսկալի որոտումներ: Այնժամ վա՜յ Ադամի սերունդներին այդ տառապանքների պատճառով:

Կցամաքի ծովը, եւ կսարսափեն բոլոր արարածներն ու կհիանան՝ զարմանալով նրա խորության վրա, ինչպես նաեւ՝ մեծամեծ գազաններից, որոնք կերեւան, կգան կետերի հետ միասին:

Այն ժամանակ անթիվ զորքեր ու երիտասարդների բազում գնդեր կգան, կհավաքվեն միասին ու կտարուբերվեն երկրի վրա, ինչպես ծովի ալիքներ, ու սաստիկ սովի անչափ նեղությունից կուտեն միմյանց: Մայրը կուտի իր սիրելի որդուն, եղբայրը՝ իր ցանկալի եղբորը: Եւ չկա լեզու, որը կարողանա ճառել այդ ժամանակի ծանր վշտի մասին: Քանզի չքնաղ կույսերը, գեղեցկատես թագուհիներն ու փափկասուն տիկնայք համարձակորեն դուրս կգան հրապարակ, եւ չի լինի որեւէ մեկը, որը կցանկանա նրանց: Թագավորական պայծառ պատմուճանները, պիտանի արծաթն ու ցանկալի ոսկին, մեծարժեք ակներն ու դժվարագյուտ մարգարիտներն ընկած կլինեն հրապարակներում, ինչպես անպիտան աղբ, եւ չի լինի մեկը, որ նայի դրանց, որովհետեւ սովը կսաստկանա, եւ ծարավը կտանջի: «Վա՜յ եւ եղո՜ւկ» կլսվի ամեն տնից, իսկ փողոցներում կլինեն սասանում ու ցավի ողբ: Այն ժամանակ կհավաքվեն սիրուն իշխանները թագավորների մոտ, բարեմիտ աղախինները՝ թագուհիների, ցանկալի որդիները՝ իրենց ծնողների մոտ եւ, միմյանց գիրկ ընկնելով, կողբան դառն արտասուքով սենյակներում ու հրապարակներում, եւ շատ վայ ու ավաղ կասեն նրանց ցանկալի սիրելիները, ապա ընկնելով՝ կմահանան: Իսկ իմաստունները կփախչեն ու կթաքնվեն խոր ձորերում ու ժայռերի ծերպերում, գերեզմանների փորվածքներում ու խորագույն վիհերում եւ կասեն. «Լավ է մեռնել այստեղ ու լինել Աստծունը, քան թե տեսնել Նեռին ու խաբվել նրա պատրանքներից,

որովհետեւ հույժ չար են նրա մեքենայությունները»:

Քանզի մեր Տերն ասում է. «Բոլոր հնարներով կմոլորեցնի արդարներին»: Եւ զրույցը պատմում է. «Եփրատ գետի եզերքներին գտնվող մեծամեծ ու դժվարամատչելի ժայռերում կթաքնվեն մարդկանցից շատերը եւ կազատվեն նրա չարիքներից: Իսկ դեւերը սուտ մարգարեների հետ միասին կշրջեն աշխարհում, կգտնեն թաքնվածներին եւ վերցնելով՝ կբերեն Նեռի մոտ: Չկա լեզու, որը կարողանա պատմել չար խաբեությունները, որոնք կգործի: Քանզի հուր կիջեցնի երկնքից, կթռչի օդի մեջ, ծովի վրա լեռ ցույց կտա՝ թռցնելով այս ու այն կողմ: Կքայլի ծովի վրայով, նրա խորքերից բլուրներ կբարձրացնի ու հարություն կտա մեռելներին: Մարդկանց առաչոք հաց ու ջուր կտա, բայց դրանք մարդկանց որեւէ օգուտ չեն տա: Այս եւ նման այլ նշաններ կանի առաչոք եւ կկործանի մարդկանց որդիներին ստությամբ, դեւերի խաբեությամբ եւ կերպարանափոխությամբ, ինչպես այժմ էլ գալիս են նրա կարապետները, քաղաքների հրապարակներում խաղեր են առաչոք ցուցադրում եւ զարմացնում են դիտողներին:

Կգան նրանք, որոնք հավանեցին նրան, ու կաղաղակեն. «Մեռնում ենք սովից ու ծարավից»: Իսկ նա կտկարանա նրանց առաջ ու բացահայտորեն կասի. «Ոչինչ չունեմ»: Բայց դարձյալ սուտ հույսերով կխաբի եւ կմխիթարի նրանց: Իսկ ովքեր կճանաչեն նրա խաբեություններն ու չեն հավատա, նա, դառը չարչարանքներով նեղելով, կսպանի նրանց: Եւ ովքեր կամովին կհավանեն նրան ու կերկրպագեն նրա աթոռին ու պատկերին եւ դավանանքով կմիանան նրան, նա դրոշմով կկնքի նրանց, որպեսզի չկարողանան դուրս գալ իր գրքից եւ կամ ուրանան ու նզովեն իրեն: Եւ այս է նրա պղծության նշանն ու կործանման խորհրդի դրոշմը. աջ ձեռքով բուրվառով խնկարկել եւ երկրպագել կտա իր առաջ, առաչոք հրեղէն պսակ կդնի մարդկանց ճակատին ու դրանով կսպանի նրանց, ովքեր կդավանեն իրեն»:

Եւ դարձյալ ասվում է. «Նրա անվան գիրը վեց հարյուր վաթսունվեց է», իսկ սա թարգմանվում է՝ ուրանում եմ: Եւ նա այս չար

գրով կդրոշմի ու կկնքի իր սիրելիների ճակատն ու աջ ձեռքը, որովհետեւ նրան աստված կդավանեն եւ կուրանան ճշմարիտ Աստծուն, ինչպես կռապաշտներն էին անում եւ տանջում մարտիրոսներին՝ ասելով. «Ուրացե՛ք խաչված Աստծուն»: Այս ողջ խաբեություններն ու նեղությունները կտեսնեն Իսրայելի որդիները, հրեա ազգն ու Հակոբ նահապետի զավակները, ստույգ կճանաչեն ու կասեն. «Սա Դերաքրիստոսն է եւ ո՛չ թե ճշմարիտը, որին մենք ակնկալում էինք»: Եւ ապա կհավաքվեն նրանք, գոչելով վայ կասեն եւ շատ եղուկ ու ավաղ կտան իրենց անձերին, որ չճանաչեցին ճշմարիտ Քրիստոսին, Որին իրենց հայրերը խաչի մահվամբ դատապարտեցին:

Այն ժամանակ կվերցնեն մարգարեների Աստվածաշունչ գրքերն ու կգան նրան ընդառաջ, պարսավելով կնախատեն նրան, սուտ, կորստեան որդի եւ սատանայի բնակարան կկոչեն նրան եւ չարաչար կհանդիմանեն՝ գոչելով բարձր ձայնով: Ու կհավատան ճշմարիտ Քրիստոսին, որին խաչեցին իրենց իսկ անօրեն հայրերը: Նեռը, դառը կտտանքներով չարչարելով, կսպանի նրանց: Իսկ Աստված մարտիրոսական արյամբ կպսակի նրանց: Այս մասին է գրում Հովհաննես ավետարանիչը. «Տեսա, եւ ահա՛ Հակոբ նահապետի տասներկու ազգերի որդիներից, ամեն ազգից տասներկու հազար կնքված, կգան ու կվկայեն. «Քրիստոսն է ճշմարիտ Աստվածը, Որին խաչեցին մեր հայրերը»: Եւ վստահ հավատով կմեռնեն Նրա համար»: Եւ կավարտվեն այն դառն օրերը՝ նրա իշխանության երեքուկես տարին: Այն ժամանակ անօրենը բռնի կերպով կբերի Ենովքին ու Եղիային եւ, չարաչար կտտանքներով նեղելով, կսպանի նրանց, որովհետեւ շատ համարձակորեն կհանդիմանեն նրան: Իսկ այն ժամանակ առավել եւս կբորբոքվի նրա չարությունը, որովհետեւ կասեն. «Տեսե՛ք, ահա՛ հինավուրց կենդանի վկաները չկարողացան ճողոպրել նրա ձեռքերից, այլ բռնեց ու սպանեց նրանց»: Աստուածատես ու պատվական ծերունիներն անթաղ ընկած կլինեն երեք օր: Իսկ երեք օրից հետո կենդանության հոգին կմտնի նրանց մեջ, եւ նրանք, հարություն առնե-

լով, հրեղեն ամպերով կբարձրանան երկինք: Եւ հետո՝ ուրբաթ օրը, հանկարծակի կծագի Տերունական Խաչը՝ յոթնապատիկ ավելի պայծառ, քան արեգակը: Կգալարվի ջրամած կամարը մագաղաթի պես, եւ կերեւա լուսեղեն երկինքը հրեղեն եթերով հանդերձ:

Եւ այն ժամանակ կլսվեն անմարմին զորքերի ձայներ ահեղ ու սոսկալի բարբառով, եւ նրանց հնչումից կշարժվեն երկրի հիմքերը: Իսկ Խաչի լույսից կծածկվեն արեգակն ու լուսինը, եւ ամբողջովին կանհետանա նրանց լույսը: Եւ եկեղեցիների խաչի մասունքները հանկարծակի կցոլան ու կմիանան Խաչի լույսին, որը երկնակամարում է: Ոչ թե քարն ու փայտը եւ կամ այլ նյութերը կբարձրանան, այլ՝ օրհնությունն ու փառքը, լույսն ու զորությունը եւ անճառելի խորհուրդը: Եւ այն ժամանակ կկատարվի Տիրոջ կողմից ասվածը. «Բոլոր նեղություններից հետո երկնքում կերեւա Մարդու Որդու նշանը», որը լուսեղեն Խաչն է:

Եւ արդ, ամեն թագավորի գալուստ իր նշանն ունի: Նեռի թագավորության նշանը մեղքերի համարձակությունն է եւ չար ժամանակը: «Իսկ Իմ գալստյան կարապետն ու նշանը խաչն է: Եւ դուք որեւէ մեկով չխաբվե՛ք եւ չմոլորվե՛ք: Եւ այն ժամանակ մեղավորները եւ անհավատները կողբան խաչի երեւմամբ. այս ազդ կլինի երկրին», - հրամայում է Տերը:

Այն ժամանակ կդողան, կողբան եւ սարսափահար կապշեն Նեռն ու նրա պաշտոնյաները, ինչպես նաեւ՝ սատանան իր դեւերով:

Եւ Աստվածության անբավ զորությունն ու լույսը կմիանան Խաչի լույսին: Եւ Խաչի ճառագայթից բորբոքված՝ կայրվի աշխարհը յոթնապատիկ ավելի ուժգին, քան բորբոքված հնոցից: Կշարժվեն աշխարհի հիմքերը, կգոչեն անդունդներն ու սանդարամետները եւ բացելով իրենց երախը, կկլանեն սատանային, Նեռին ու նրա պաշտոնյաներին, որովհետեւ նրանք արժանի չեն տեսնելու Աստծուն՝ զարմանալի փառքով գալիս, եւ ոչ էլ Նրա արքայությունը, որպեսզի կատարվի Դավթի երգը. «Չեն գա կամ կանգնի ամբարիշտները դատաստանին եւ ոչ էլ մեղավորները՝ արդարների հավաքի մէջ»: Եւ այն ժամանակ կկատարվի առաքյալի գրվածքը. «Տեր Հիսուսը կսատկացնի նրանց Իր Բերանի Հոգով»:

Եւ խաչի լույսը կմնա երեք օր: Եւ նրանք, ովքեր լի են մեղքերով, «վա՜յ» կգոչեն ու կիսամահ կլինեն նրա ահից:

Իսկ արդարները կցնծան, որովհետեւ կճանաչեն, որ այն իրենց լույսն է, պսակն ու պարծանքը: Մինչեւ ծնվի վերջին մանուկը՝ դուրս եկած որովայնից, որպեսզի լրանա հաշիվն արքայությունում՝ ըստ Սուրբ Գրքի, որովհետեւ թիվ ու հաշիվ կա նրանց, որոնք ընտրյալներ են եւ ժառանգելու են արքայությունը: Այս մասին վկայում է նաեւ առաքյալը՝ ասելով. «Աշխարհի ստեղծումից առաջ մեզ ընտրեց»:

Եւ ապա վերջին մանկան ծնվելուն պես կիրակի օրը՝ առավօտյան ժամին, երբ Տերը հարություն առավ մեռելներից, հանկարծակի կհնչի փողը: Սա կլինի յոթերորդ դարի ավարտը եւ ութերորդ դարի սկիզբը, որը կոչվում է Մեծ Օր, որովհետեւ գիշերն այլեւս չի կարող փոխարինել նրան: Հանկարծակի Տերը կերեւա բարձունքներում լուսեղեն ամպով ու երկնային զորքերով: Հետո կհնչի փողը, իսկ այդ ժամանակ աշխարհում շատերը կենդանի կլինեն եւ փողի գոչելուն պես կմեռնեն ու ակնթարթորեն հարություն կառնեն, որը չեն կարող զգալ արագությունից: Եւ կլինի համընդհանուր հարություն, ինչպես նշեցինք Գալստյան ու Հարության ճառում: Ուստի, աղաչո՜ւմ եմ ձեզ, սիրելինե՛ր, այս ամենն իմանալով՝ քարոզեցե՛ք աշխարհում Նեռի պղծությունը: Եւ որքան կարողանաք, գրավո՛ր կերպով թողեք աշխարհում, որպեսզի լսեն հայրերն ու սովորեցնեն իրենց որդիներին: Եւ որքան հնարավոր է, մի՛ ձանձրացեք բարի գործերից, երբեք մի՛ հանեք ձեր մտքից Տիրոջ երեւալու Օրը եւ Նրա անճառ հանգիստը, որպեսզի սրբությամբ մնանք այստեղ, իսկ այնտեղ ժառանգենք երանական կյանքը բոլոր սուրբերի հետ նույն մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որն օրհնյալ ու փառավորյալ է Հոր եւ Ամենասուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամէն:

ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ ՏԵՍԻԼՔՈՎ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

1985 թվականին, հուլիս ամսին, երկու հավատացյալ եղբայրներ Երեւանից մեկնեցին Արցախ. նրանք ծագումով արցախցի էին, բայց ծնվել էին Երեւանում: ԵՎ յոթ օր ծոմ պահելուց հետո Գանձասարի վանքում աղոթք արեցին եւ խնդրեցին Աստծուն, թե Տեր, հայտնիր մեզ, ի՞նչ է սպասվում ապագայում մեր հայրենիքին, մանավանդ Արցախ աշխարհին: Եկեղեցիները փակված են, հավատացյալների բանակը սակավացած: Եվ այս աղոթքին ի պատասխան՝ Աստված տեսիլք տվեց նրանց: Եղբայրները նախ տեսան ողջ Արցախը մռայլ գույների մեջ: Ժողովուրդը մուգ զգեստներով էր ու տխուր: Եվ հանկարծ, շողշողացող լույսերի մեջ երկնքից իջավ Աստվածածինը եւ աջ ձեռքի ցուցամատով հերթով ցույց էր տալիս զանազան բնակավայրեր: Եվ ուր մատով ցույց էր տալիս, այնտեղ փոքր ի փոքրե արյուն էր թափվում: Եվ հետո տեսիլքի մեջ երեւաց Գանձասարը, որ պայծառանում էր եւ այնքան պայծառացավ, որ արեւի պես սկսեց լուսավորել ամբողջ Արցախ աշխարհը: Եվ ամեն մի բլուրի վրա մի ոսկե խաչ կար, որն իր հերթին լուսավորում էր իր մոտակա տարածքը: Իսկ տեսիլքի վերջում երեւաց, որ ամբողջ Արցախի ժողովուրդը զգեստափոխված է, ամենքն էլ սպիտակ զգեստներով էին եւ փառաբանում էին Աստծուն: Եվ շատ լուսավոր մի տեսարան էր իջել ամբողջ Արցախի տարածքի վրա, եւ ողջ Արցախի տարածքով երկնքում գրվեց ՀԱՅԱՍՏԱՆ-ՀԱՎԱՏՔ:

*** [13] 92 5-6:**

Եվ երբ եղբայրները վերադարձան Երեւան ու տեսիլքը պատմեցին Գուրգեն սարկավագին, որ այդ ժամանակ ծառայում էր Սբ. Էջմիածնում, նա մեծ ուրախությամբ ու ոգեւորությամբ մեկնեց, թե՝ նախ որոշ չափով արյուն պիտի թափվի Արցախում, որից հետո Գանձասարը պիտի բացվի, եւ պիտի Գանձասարից օրհնությունը տարածվի ամբողջ Արցախով մեկ: Հավատքը վերելք պիտի ապրի, եւ Արցախը պիտի միանա Հայաստանին կամ պիտի դառնա Հայաստանի մի մասը: Եվ տեսիլքը ուրախությամբ մեկնելուց հետո Գուրգեն սարկավագը իր կարծիքն հայտնեց, թե գուցե տասնյակ տարիներ հետո միայն այս ամենն իրականանա: Քանի որ այդ օրերին ո՞վ կմտածեր, թե երեք տարի անց շարժումը պիտի սկսվեր: Գուրգեն սարկավագի մեկնությունը լսելով, եղբայրներից փոքրը, որպես տեսիլքին շարունակություն, ժպտալով ասաց նրան՝ դու էլ Արցախի առաջնորդը պիտի լինես:

Երբ քսան-երեսուն տարի հետո եպիսկոպոս դառնամ, միգուցե եւ Արցախի առաջնորդը լինեմ: - Պատասխանեց սարկավագը: Սակայն Աստված նախօրոք է տնօրինում ամենայն բարին, եւ ահա տեսիլքից ընդամենը երեք ամիս անց՝ սարկավագին աբեղա ձեռնադրեցին: Իսկ երեք տարի անց էլ, երբ եպիսկոպոս ձեռնադրեցին՝ արդեն շարժումը սկսվել էր: Այդժամ Գուրգենը, որ վերանվանվել էր Պարգեւ եւ արդեն եպիսկոպոս էր, հասկացավ, որ տեսիլքում զգուշացվածը շատ արագ էլ պիտի կատարվի եւ ոչ թե տասնյակ տարիներ հետո: Եվ արյուն պիտի թափվի, եւ պատերազմ պիտի լինի, եւ պիտի պատերազմում Արցախը հաղթի եւ միանա Հայաստանին: Եվ իսկապես էլ, ամեն բան ըստ Աստվածածնի տեսիլքի, արագ ընթացավ: Եվ Պարգեւ եպիսկոպոսը առաջնորդ կարգվեց համայն Արցախ աշխարհին:

ՊԱԻՍ ԱԹՈՍԱՑՈՒ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՓԼՈՒԶՄԱՆ ՄԱՍԻՆ*

Մի խումբ կիպրոսցիներ այցելեցին ծեր մենակյաց Պաիս Աթոսացուն: Նրանք կամենում էին խոսել նրա հետ՝ ազգային հարցի մասին:

- Դուք որտեղի՞ց եք,- հարցրեց ծերունին:

- Կիպրոսից, հայր սուրբ:

- Դե, եւ ինչպե՞ս եք այնտեղ ապրում:

- Ինչպե՞ս ենք ապրում, հայր: Խժռեցին մեզ թուրքերը:

- Դե չեմ տեսնում, որ անձամբ ձեզ խժռել են,- ժպտալով ասաց նրանց ծերը, ապա հրավիրելով նստել, ավելացրեց,- մի վախեցեք թուրքերից, նրանք կցրվեն:

Այցելուները տարակուսեցին, իսկ նա շարունակեց.

- Այո, ասում եմ ձեզ, Թուրքիան կփլուզվի: Դուք այժմ սատկած ոջիլ եք հիշեցնում, բայց կգա ժամանակը, երբ թուրքերի համար շատ ծանր կլինի: Քրդերը եւ հայերը կստեղծեն իրենց սեփական պետությունները եւ անկախություն կստանան: Մնացյալ փոքր ժողովուրդները, քանի որ չեն պահպանի միջազգային նորմերը, քաղաքակիրթ ձեւով կկլանվեն մեծերի կողմից: Իսկ մեզ՝ հելլեններիս կվերադարձնեն Կոնստանդնուպոլիսը, ոչ թե, որ մեզ շատ են սիրելու, այլ որովհետեւ մենք կպահպանենք զսպվածությունը:

Այո, Պոլիսը մենք հետ կստանանք:

*[22] էջ 243:

Մաս II

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏԵՍԻԼՔԸ ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ*

Մարդիկ միասին աղաղակ բարձրացրին ու լաց եղան թագավորի հետ մեկտեղ, բոլորը ընկան եւ թավալվում էին նրա առջեւ՝ չկարողանալով մի քիչ հեռանալ նրանից, դիվական տանջանքների անտանելի հարվածների սաստկության պատճառով: Քանզի, երբ մի քիչ հեռանում էին նրանից, դեւերն իսկույն վրա հասնելով կատաղեցնում էին՝ ստիպելով ատամներով իրենց մարմիններն ուտել:

Արդ՝ սուրբ Գրիգորը, երբ լսեց այս բոլոր խոսքերը, որ նրա առջեւ խոսեցին, արտասուք թափելով ասաց նրանց. «Դուք գիտեք այն ամեն չարիքները, որ ինձ հասցրեցիք: Ինչպե՞ս կարող էր մարդը տոկալ այնչափ չարչարանքներին, կամ որեւէ հնար կա՞ր նույնիսկ մի ժամ դիմանալու. մարդ մեկ օձի լոկ տեսքից հեռու է փախչում, թող թե տասնհինգ տարի մնալ օձերի բազմության մեջ եւ ողջ փրկվել, տոկալ եւ շարունակ բնակվել նրանց մեջ»:

Նախ այս բանում տեսեք Արարչի զորությունը, որն ամեն ինչ ստեղծել է ըստ Իր կամքի եւ երբ կամենա՝ կարող է ամեն մեկի բնույթը փոխել եւ, նույնիսկ այն վնասակար թունավոր գազաններին, որոնք սարսափելի հորի մեջ էին, քաղցրացրեց անարժանիս՝ Իր ծառայի նկատմամբ: Թեպետեւ մենք անարժան էինք, սակայն ձեր օգտի համար պահեց մեզ եւ ցույց տվեց Իր հրաշքների զորությունը: Քանզի մեզ պահեց, որպեսզի ձեր մշակության գործին մոտենալով եւ ձեզ օգուտ բերելով՝ Աստծու մարդասիրությունը

* [1] էջ 98-99:

մեր միջոցով ձեր նկատմամբ կատարվի:

Կամ արդյոք հնարավո՞ր էր, որ մի մանկամարդ աղջիկ դիմադրեր հսկա տղամարդու, ինչպես տեսաք հենց ձեր աչքերով: Ինչպե՞ս կարող էր դա հնարավոր լինել, եթե Աստված տված չլիներ հաղթության իրավունքը Իր նահատակներին անարատությամբ պահպանելու ձեր անօրինությունից: Արդ՝ այդ երանելի սրբերի մահվան համար, որոնց արյունը թափվեց ձեր երկրում, եւ արժանի եղան աստվածային շնորհներին ու նահատակվեցին եւ որի համար ողորմաց ձեզ եւ մեր Հայաստան աշխարհին: Նրանց թափած արդար արյան համար ձեր ապաշխարությամբ ահա քավություն շնորհեց ամեն ինչ պարգեւող Աստված:

Իսկ իմ մասին եթե խոսենք, արդյոք Աստծու հրամանով չէի՞ քարոզում ձեզ, թե՞ իմ որոշումն էր դա: Եվ ինչպե՞ս կարող էր այդ լինել: Իսկ արդ՝ ես հնար ունե՞ի արդյոք համարձակվել որեւէ բան ձեզանից թաքցնելու, այն էլ Աստծուց հրաման առած լինելով»: Հենց Խոր վիրապում էլ ես ամեն օր բաց աչքերով տեսիլքի մեջ տեսնում էի Աստծու հրեշտակին, որը մշտապես քաջալերում էր ինձ եւ ասում. ինչպես եւ այժմ էլ նույն տեսիլքը տեսնում եմ, որ ասում է ինձ, թե «քաջալերվիր, պինդ կաց, քանզի Տեր Աստված պահեց քեզ, արժանի համարեց Իրեն ծառայելու եւ քեզ տվեց Իր մշակության գործը, որպեսզի դու եւս, այլ մշակների միանալով, Քրիստոսի անապական պարգեւներից քո վարձը առնես»: Դուք ինձ գցել էիք Խոր վիրապը, մահվան սարսափելի տեղը, եւ ես այնտեղից Աստծու կամքով ողջանդամ ելա: Այս բոլորն ասելով ոչ թե իմ անձով եմ պարծենում, այլ որովհետեւ հնարավոր չէ թաքցնել Աստծու հրաշքները: Քանզի չի էլ թաքցվի, այլ պետք է պատմվի, քանի որ ինձ փրկեց մահվանից, մինչդեռ ձեր աչքում մեռած էի համարվում, ինչպես որ դուք հենց ձեր կողմից վկայում եք: Իսկ դուք, որ մեռած էիք ձեր մեղքերի մեջ, ահավասիկ մեռյալներդ մեռյալիս ձեռքով կենդանանում եք: Վասնզի ինձ հանձնարարված է հաղորդել Աստծու հրամանները, ձեզ դարձի բերել դեպի ճշմարտության ճանապարհը, որ հրաժարվեք քարեղեն, փայտե-

ղեն, արծաթեղեն ու պղնձե կուռքերի ունայն պաշտամունքից, որոնք ոչինչ են եւ ոչ ոքի պիտանի, դարձ կատարեք դեպի կենդանի Աստվածը, որն ստեղծել է երկինքն ու երկիրը, ծովն ու ամեն ինչ, որ նրա մեջ կա եւ դեպի Նրա Խոսքը՝ Միածին Որդին ու կենդանի ու կենդանարար Հոգին, որը մաքրիչ ու քավիչ է Իր երկրպագուներին ու փառավորողներին:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՀՐԵՇՏԱԿԻՆ*

Սուրբ Գրիգորը իր որդուն՝ Արիստակեսին իրեն փոխանորդ նշանակելուց հետո, ինքը գնում է լեռները: Մի օր խնդրում է Աստծուն, որ հրեշտակներից մեկին ուղարկի իր մոտ, որպեսզի իմանա, թե մահանալուց հետո արդարների եւ մեղավորների հոգիները ո՞ւր են գնում եւ ի՞նչ ճանապարհ են անցնում, եւ ի՞նչ է պատահում նրանց այդ ճանապարհին: Հրեշտակների հետ մերթընդմերթ տեսնվելով իր իմացածը, պատմում էր Արիստակեսին, որ երբեմն իր մոտ էր գալիս:

Աստված Ս. Գրիգորի խնդրանքը ընդունում է եւ մի հրեշտակ է ուղարկում: Հրեշտակը գալով ասում է.

- Աստված ինձ ուղարկեց, որպեսզի քո բոլոր հարցերին պատասխանեմ. ինչ որ ուզում ես, հարցրու: ```

- Ով ս. հրեշտակ,- ասում է ս. Գրիգորը, - երբ մարդու հոգին մարմնից դուրս է գալիս, կարո՞ղ է ամեն բան որոշել եւ իմանալ:

Հրեշտակ.- Այո՛, կարող է ճանաչել եւ գիտե ինչ որ իրեն է վերաբերվում, ինչ որ պիտի լինի անմիջապես հասկանում է. եթե արդար է, փառքի պիտի արժանանա, իսկ եթե մեղավոր է, չարչարանքներ պիտի կրի:

Ս. Գրիգոր.- Ի՞նչ է հոգին:

Հրեշտակ.- Արդարի հոգին լույսի նման է, ու արեւի պես փայլում է, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Մեր արտաքին մարդը ապականվում է, բայց մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրէ» (Բ. Կորնթ. 4.16):

Սա մարմնի եւ հոգու մասին է: Իսկ մեղավորի հոգին խավարի պես մշուշ է ու մեղքով սեւացած:

*** [2] էջ 256-258**:

Ս. Գրիգոր.- Մեղավորի հոգին ինչպե՞ս եք առնում:

Հրեշտակ.- Մեղավորի հոգին առնելու համար շատ բարկությամբ ենք գալիս ու հրեղեն սրով ենք երեւում նրան: Մեզ տեսնելուն պես վախից լեզուն բռնվում է, աչքերը փակվում են, գլուխը թաքցնում է, երեսը դարձնում է, ուզում է փախչել, բայց չի կարող, որովհետեւ բոլոր կողմերից ենք տեսնվում: Այն ժամանակ հոգու աչքերը բացվելով, նա գնալիք մութ ճանապարհները եւ քաշելիք չարչարանքները բացահայտ է տեսնում: Իր շուրջը եղող ազգականներին, զավակներին եւ բարեկամներին է նայում. աղաչում է, գոռում, որ իրեն ազատեն, բայց նրանք չեն լսում, որովհետեւ լեզուն կապված է: Ինքը կարծում է, թե ձայնը դուրս է գալիս, բայց ոչ ձայնն է ելնում, ոչ էլ խոսքերն են հասկացվում:

Ս. Գրիգոր.- Հոգին հրեշտա՞կն է առնում, թե՞ ինքն իրեն է անջատվում:

Հրեշտակ.- Հոգին մարմնի ցավից անջատվում է եւ հրեշտակն առնում- տանում է:

Ս. Գրիգոր.- Մեղավորի հոգին ինչի՞ է նման:

Հրեշտակ.- Ինչպես ասացի, մեղքերի մեջ թաղված, կեղտոտ եւ խավար մի բան է, այնպիսի վատ հոտ ունի, որ հնարավոր չէ մոտենալ:

Ս. Գրիգոր.- Իսկ արդարի հոգին ինչպե՞ս եք առնում:

Հրեշտակ.- Երբ գալիս ենք արդարի հոգին առնելու, կարծես իրեն հարսանիքի ենք հրավիրում: Երբ մեզ տեսնում է, հոգովմարմնով ուրախանում է, որովհետեւ գիտի, որ այս անցավոր աշխարհի ցավ ու կսկիծներից դրախտի անհուն ուրախություն եւ հանգստություն պիտի տանենք: Մարդկանց միջից հրեշտակների մեջ պիտի գնամ ասելով՝ ուրախանում է, այն ժամանակ արդարի հոգին առնում ենք եւ մեծ պատվով տանում երկինք:

Երկնքում **առաջին աստիճանին** դեւեր են գալիս, բայց արդարների հոգիները արեւի պես փայլում են, որից դեւերի աչքերը շլանում են եւ չեն կարողանում նայել: Միայն տեսնում են, որ ար-

դարի բերանը շարունակ աստվածավայել խոսքեր է ասել, միշտ ողորմություն է արել, եկեղեցի գնալով՝ քահանային խոստովանել: Սուրբ Հաղորդությունը այդ հոգու վրա մատանու ադամանդի պես է երեւում, որից դեւերը մնում են ապշած ու չեն կարողանում մոտենալ նրան:

Երկրորդ աստիճանը շատ մութ է, բայց արդարի հոգին արեւի պես փայլում է եւ իր ճանապարհը լուսավորում: Իսկ մեղավորի համար ամեն ինչ խավար է:

Երրորդ աստիճանը շատ ցուրտ է, բայց արդարի հոգին Քրիստոսի սիրուց այնքան է ջերմացել, որ ցուրտ չի զգում:

Չորրորդ աստիճանը տաք է, բայց արդարի հոգին զով է:

Հինգերորդ աստիճանը նեղ ճանապարհներից է բաղկացած, որոնց նմանը չկա, բայց արդարի ճանապարհը լայն է:

Վեցերորդ աստիճանը արեւից ավելի պայծառ լուսեղեն կամարներ են, որոնցով արդարի հոգին զմայլվում է:

Յոթերորդ աստիճանը հրեշտակների կարգն է: Երբ արդարի հոգին տեսնում են, ուրախանում են: Իսկ երբ մեղավորի հոգին են տեսնում, տրտմում են:

Ութերորդ աստիճանը Տերություններն ու Զորություններն են, որ արդարին տեսնելով ու սաղմոսներ երգելով՝ նրան դիմավորում են փառաբանելով:

Վերջապես արդարի հոգին կանգնում եւ երկրպագում է Երկնավոր Թագավորին: Սուրբ Ձայնն ասում է. «Բարի՛ եկար, սիրելի՛ որդիս, աշխարհի մեջ չարչարվեցի~ր, հիմա հանգիստդ մտիր: Եվ հրեշտակները անտեսանելի լուսեղեն պատմուճաններ բերելով հագցնում են նրան եւ տանում մյուս արդարների մոտ:

Ս. Գրիգոր.- Մեղավորի հոգին ո՞ւր է գնում:

Հրեշտակ.- **Առաջին աստիճանում** իրեն անթիվ դեւեր են դիմավորում, ոմանք հարստության, ոմանք նախանձի, ոմանք բարկության եւ ուրիշներ՝ այլեւայլ փորձություններ տալու: Մեծ աղմուկ են հանում եւ ուզում են հրեշտակի ձեռքից հափշտակել այն: Խեղճ հոգին շատ է չարչարվում, լալիս է, կանչում, բայց օգնություն չկա: Դեւերը չեն կարող հոգուն տիրել, որովհետեւ մինչեւ դատաստանի օրն այդ արգելված է:

Երկրորդ աստիճանը խավարով է պատած: Շատ չարչարվելուց հետո ցուրտ աստիճանին է հասնում, հետո տաք աստիճանում բավականին այրվելուց եւ ողբալուց հետո նեղ ճանապարհներ է մտնում, լուսեղեն աստիճանին է հասնում, բայց իր համար դա խավար է: Հրեշտակների աստիճանն է ելնում, բայց հրեշտակները տրտմում են: Ութերորդ աստիճանում Տերություններն ու Զորությունները փակում են ճանապարհը եւ տանող հրեշտակին հրամայում են, որ ետ դառնա եւ մյուս մեղավորների մոտ տանի եւ մինչեւ Քրիստոսի դատաստանի օրը այնտեղ պիտի մնա: Դատաստանի օրը մարմինը հոգու հետ միանալով, դժոխքի անշեջ կրակը պիտի նետվի, ուր հավիտյանս հավիտենից՝ պիտի չարչարվի, ինչպես Քրիստոս է ասել. «Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք» (Մատթ. 26. 46):

Ս. Գրիգոր.- Ի՞նչ է Աստված:

Հրեշտակ.- Աստված Մեկ է եւ Սուրբ ու որեւէ բանի չի նմանվում: Նրան անկարելի է տեսնել, բայց արդարները եւ սուրբերը դատաստանի օրը Նրա Սուրբ Երեսը պիտի տեսնեն:

Ս. Գրիգոր.- Երկինքը քանի՞ աստիճանից է բաղկացած եւ հրեշտակները որ աստիճանում են գտնվում:

Հրեշտակ.- Երկինքը բաղկացած է տասը աստիճաններից:

Հրեշտակները **վերջին աստիճանում** են գտնվում, որ լուսեղեն երկինք է ասվում: Հրեշտակների տեղը ինը կարգ է. բոլորն էլ Սուրբ Երրորդությանն են փառաբանում:

Ս. Գրիգոր.- Աստծո փառքը եւ շնորհը աշխարհին եւ մարդկանց ինչպե՛ս է տրվում:

Հրեշտակ.- Աստծո շնորհը նախ հրեշտակներին է տրվում եւ հետո-մարդկանց:

Ս. Գրիգոր.- Ննջեցյալների հոգու համար որն է ավելի օգտակար, պա՞հքը, աղո՞թքը, թե ողորմությունը:

Հրեշտակ.- Աղոթքը եւ ողորմությունը ննջեցյալների համար է,

իսկ պահքը՝ պահողի համար: Եթե Սուրբ Պատարագ մատուցողն արդար է, այն օգտակար կլինի ննջեցյալների համար, իսկ մեղավորների համար որեւէ բան օգուտ չունի:

Ս. Գրիգոր.- Մի մեղավոր եթե մեռնելուց առաջ խոստովանի, «մեղա~» ասի եւ լացով սուրբ հաղորդություն ուզի, արժանի՞ է նրան տալ:

Հրեշտակ.- Այո, արժանի է, որովհետեւ Աստված շատ ողորմած է, ինչպես Հիսուսն ասաց. «Նա, ով Մարմնովս եւ Արյունովս հաղորդվի նա Ինձ հետ է եւ Ես նրա հետ պիտի լինեմ»: Բայց պետք է մեռնելուց առաջ հաղորդվել, որովհետեւ մարդ չգիտի, թե երբ պիտի մեռնի: Եթե մեղավորի լեզուն կապվի եւ «մեղա» չասի, անպայման դժոխք կգնա, ինչպես որ Հիսուս զգուշացրեց. «Արթուն եղեք, որովհետեւ չգիտեք, թե տանտերը երբ կգա»:

Ս. Գրիգոր.- Ո՞ր մեղքն է ավելի մեծ ինչը դատաստանի օրը ամոթահար է թողնում մարդուն:

Հրեշտակ.- Այն մեղքն է մեծ, որ մարդ փոքր համարելով չի խոստովանում:

Ս. Գրիգոր.- Խոստովանությունը, ապաշխարությունը, լացն ու կոծը ինչպե՞՛ս են քավում մեղքերը:

Հրեշտակ.- Ինչպես մոմը կրակից է հալչում, խավարը փախչում է լույսից, խոստովանությունն ու ապաշխարությունն էլ ոչնչացնում են մեղքը:

Ս. Գրիգոր.- Եթե մարդը խոստովանի եւ նորից մեղք գործի, հետո դարձյալ խոստովանի, վերստին թողություն կստանա՞:

Հրեշտակ - Այո՛, վերստին թողություն կստանա, ինչպես Հիսուս Պետրոս առաքյալին ասաց. «Եթե մեկը քո դեմ նույնիսկ 70 անգամ 7 մեղք գործի, եւ մեղա~ ասի, պետք է ներես»: Իսկ Աստված շատ ավելի ողորմած է եւ միշտ ներում է, եթե զղջումով խոստովանեն:

Ս. Գրիգոր.- Եթե մեկը լեռան վրա կամ անապատում գտնվի եւ մեռնելու ժամանակ մեղքերը հիշելով՝ առանց քահանայի եւ խոստովանության «մեղա~» ասի, թողություն կստանա՞:

Հրեշտակ.- Ամեն մարդ շաբաթը մեկ անգամ պետք է խոստովանի իր մեղքերը. կամ գոնե տարին հինգ վեց անգամ: Իսկ եթե քահանա չկա, կարող է որեւէ մեկին խոստովանել: Քրիստոս այն կընդունի, որովհետեւ բոլոր այն քրիստոնյաները, ովքեր մկրտության Սուրբ Ավազանից են ծնվել, մասնակցում են Սուրբ Հաղորդությանը, Սուրբ Երրորդությանը դավանում եւ երկրպագում Քրիստոսի Խաչին, նրանք Իր արյունով են գնված:

Ս. Գրիգոր – Ի՞նչ բան է պահքը:

Հրեշտակ.- Պահքը մարդկանց նմանեցնում է հրեշտակների, պայքարում է դեւերի դեմ եւ արգելք է լինում սատանային, որ մարդկանց մեջ մտնելով նրանց չմոլորեցնի:

Ս. Գրիգոր.- Ի՞նչ բան է աղոթքը:

Հրեշտակ.- Աղոթքը մարդու հոգին Աստծուն է կապում: Շարունակ աղոթող մարդը մեղք գործելու ժամանակ չի ունենա:

Ս. Գրիգոր.- Ինչո՞ւ է սաղմոսի մեջ գրված, թե մեղավորի մահը չար է:

Հրեշտակ - Եթե մի մարդ առանց խոստովանության մեռնի, հիրավի այդ մարդու մահը չար է: Քանի որ դատաստանի օրը պիտի լսի այն զարհուրելի ձայնը, թե՝ «Հեռացեք Ինձանից անիծյալներ դեպի հավիտենական կրակի մեջ, որովհետեւ միշտ սատանայի հետեւից գնացիք»: Աստված, որ այնքան ողորմած է, չզղջացող մեղավորներին չի ներում, այլ միշտ բարկությամբ է նայում նրանց:

Ս. Գրիգոր.- Կարելի՞ է արդյոք մահը սուրբ ասել:

Հրեշտակ.- Այո՛, որովհետեւ արդարը չխաբվեց աշխարհին, աշխարհի ցանկությունների համար իրեն մեռած համարեց եւ իր հույսը Քրիստոսի արքայության, վրա դրեց: Դրա համար արդարի մահը սուրբ է: Նա միշտ սպասում է մահվան ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Ցանկանում եմ ժամ առաջ այս մարմնից դուրս գալ եւ Քրիստոսի մոտ գնալ» (բ. կորնթ. 5.8), որովհետեւ արդարների համար այս աշխարհը բանտ է:

Ս. Գրիգոր.- Դատաստանի օրը մարդուն իր գործերին համե-

մատ ի՞նչ է տրվելու:

Հրեշտակ.- Արդարներին այնպիսի փառք է տրվելու, որ Պողոս առաքյալի ասածի պես ոչ աչքն է տեսել, ոչ էլ ականջը լսել եւ ոչ էլ մարդ կարող է երեւակայել: Մեղավորներին էլ նմանը չունեցող չարչարանքներ կտրվեն: Ինչպես Արքայության փառքը, այնպես էլ դժոխքի չարչարանքը վեր է մտքից:

Ս. Գրիգոր.- Ո՞ր գործն է ավելի օգտակար:

Հրեշտակ.- Ձղջումը, խոստովանությունը եւ ապաշխարությունը: Ով այս երեք գործերը կատարի, նրա համար, անտարակույս, արքայությունն իրական է:

Ս. Գրոգոր.- Ո՞ր գործն է ամենավատը:

Հրեշտակ.- Ամենավատը, եթե մարդ առանց զղջման ու խոստովանության մեռնի. այդպիսին, անտարակույս հավիտենական դժոխք կգնա:

Ս. Գրիգոր.- Եթե մեկը մեղքերը խոստովանի, բայց առանց ապաշխարելու մեռնի, ի՞նչ կլինի նրա հետ:

Հրեշտակ.- Եթե անմնացորդ զղջացել է, եկեղեցու աղոթքն ու պատարագը նրա մեղքերը կքավեն, որովհետեւ եթե առողջ լիներ, անպայման պիտի ապաշխարեր:

Ս. Գրիգոր.- Մարմնից դուրս եկած հոգիներր ի՞նչ են ցանկանում:

Հրեշտակ.- Արդարի հոգին ցանկանում է դատաստանի օրը արքայության անբավ փառքը վայելել, իսկ մեղավորի հոգին խորհում է, թե դատաստանի օրը իր վիճակը ի՞նչ պիտի լինի եւ դժոխքի չարչարանքները մտաբերելով՝ միշտ լալիս է:

Ս. Գրիգոր.- Գնացող հոգիները մնացողներին հիշո՞ւմ են, թե՞ բոլորովին մոռանում:

Հրեշտակ.- Անպայման հիշում են: Եվ եթե ապրողները նրանց անունով ողորմություն բաժանեն եւ Սուրբ Պատարագ մատուցեն, ապա ննջեցյալների հոգիներն էլ նրանց համար կաղոթեն, որպեսզի Աստված բարի օրեր պարգեւի ու փրկի զանազան փորձություններից. հակառակ պարագայում անհիշատակ կմնան:

Ս. Գրիգոր.- Հոգիները իրար տեսնել, ճանաչել եւ սիրել կարո՞ղ են:

Հրեշտակ.- Եթե չտեսնեին՝ կույրի պես կլինեին: Եթե չճանաչեին՝ անասունի պես կլինեին:

Ս. Գրիգոր.- Արքայության մեջ ինչպե՞ս են սիրում միմյանց:

Հրեշտակ.- Այնտեղ մարմնավոր սեր չկա, այլ հրեշտակների պես հոգեւոր սեր ունեն միմյանց հանդեպ:

Ու բոլորը հավիտենական փառքով զարդարված, անդադար ուրախությամբ փառաբանում են Աստծուն:

Այստեղ գլխավոր հարցերս վերջացան:

ԱՍՏԾՈՒ ՀՐԵՇՏԱԿԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ՏՐԴԱՏԻՆ*

Թագավորը ամենքի հետ խորհուրդ արեց, որպեսզի փութան, հասնեն բարի գործերին ժառանգորդ դառնալու: «Եկեք, ասում է, փութանք Աստծու կողմից մեզ տրված կյանքի առաջնորդին՝ Գրիգորին հովիվ դարձնել, որպեսզի մկրտությամբ լուսավորի եւ վերանորոգի մեր Արարիչ Աստծու ամենուսույց խորհրդով»:

Իսկ Գրիգորը հանձն չառավ ընդունել քահանայապետության մեծ պատիվը, ասաց, «Չեմ կարող համբերել, դիմանալ անչափ բարձրությանը, քանզի անպատում է քրիստոսատուր փառքի առաջնորդության պատիվը՝ միջնորդ դառնալու Աստծու եւ մարդկանց միջեւ, այլ թող արժանի մարդու որոնեն, գտնեն»:

Ապա Աստծուց սքանչելի տեսիլք երեւաց թագավորին: Տեսավ Աստծու հրեշտակին, որը խոսեց նրա հետ ու ասաց, թե «Պետք է որ դուք առանց հապաղելու Գրիգորին քահանայապետության պաշտոնը տաք, որպեսզի մկրտությամբ լուսավորի ձեզ»: Աստծու հրեշտակը տեսիլքի մեջ երեւաց նաեւ Գրիգորին, որպեսզի չլինի թե այդ մասին պնդի, համառի, «Քանզի, ասում է, Քրիստոսից է այդ հրամայված քեզ». Իսկ նա հավանելով անմիջապես գոչեց՝ ասելով, թե «Աստծու կամքը թող կատարվի»:

* [1] էջ 125:

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ*

Այնժամ նա ապավինեց Աստծու նկատմամբ ունեցած հավատքին, Աստծուն աղոթեց արտասվալից աչքերով, բոլորի Տեր Աստծուց գիշեր ու ցերեկ խնդրեց իրեն ցույց տալ փափագելի նշանագրերը: Եվ ահա ոչ այն է քնի մեջ՝ երազում, ոչ այն է արթնի, այլ սրտում՝ հոգու աչքերով երեւացող մի տեսիլք տեսավ, աջ ձեռքը վեմի վրա գրեր էր գրում՝ կարծես գծի հետքեր էր թողնում մագաղաթի վրա: Նա ոչ միայն դրանք տեսավ, այլեւ բոլոր մանրամասնությունները որպես ամբողջություն իր մտքում կուտակվեցին: Աղոթք անելուց հետո վեր կենալով՝ նա Եպիփանոսի աշակերտ, Սամոսում՝ միայնակեցություն անող Ռուփինոսի հետ ստեղծեց մեր նշանագրերը: Երանելի Մեսրովբ վարդապետի խորհրդի համաձայն գրերը ձեւ ստացան եւ հելլենացվոց սիղոբաների՝ կապերի նմանողությամբ հայերեն տառակապակցությունները կատարյալ դարձան:

Դրանից անմիջապես հետո նա ձեռնարկեց քսաներկու հայտնի գրքերը պարունակող Հին կտակարանը հայերեն թարգմանելուն՝ հատուկ դիտավորությամբ սկսելով Սողոմոն Իմաստունի Առակներից, իսկ նրա աշակերտներ Հովհանն ու Հովսեփը նրան օգնեցին նույն այդ գործում: Նա փոքրահասակ աշակերտներին գրչության արվեստն ուսուցանեց:

Այդ ժամանակ թագավորում էր Թեոդոսիոս Փոքրը: Երբ Հայոց երանելի վարդապետ Մեսրովբը Հայոց կաթողիկոս սուրբ Սահակի եւ Հայոց թագավոր Վռամշապուհի մոտ բերեց մեր լեզվի նշանագրերը, սրանք շատ ուրախացան. կարծես Աստծու ձեռքով գրված տախտակներն էին ընդունում: Նրանք իրենց գոհությունն ու փառքը մատուցեցին բոլորին ստեղծած Արարչին այն նոր պար-

*[7] էջ 72:

գեւների համար, որ նրանց էր տրվում ի վերուստ: Սուրբ հայրապետի ու թագավորի հրամանով ուշի, ընդունակ, փափկաձայն ու երկարաշունչ երեխաներ հավաքեցին, եւ բոլոր գավառներում ու գյուղերում դպրոցներ բացելով՝ նա ուսուցանեց Հայոց ողջ աշխարհի մարդկանց:

Աստծու երանելի այրը Վրաց աշխարհ գալով՝ ի վերուստ նրան տրված Աստծու շնորհով նրանց համար էլ նշանագրեր ստեղծեց եւ տարբեր քաղաքներում վարդապետներ թողեց, որ նրանց մանուկներին էլ ուսուցանեն: Այնուհետեւ ինքը Աղվանք գնալով, այդտեղ նույն ձեւով ստեղծեց նշանագրեր, եւ հիմք դրեց գիր ու գրականության նկատմամբ սիրո ավանդությանը: Այստեղ էլ վարդապետներ թողեց եւ, վերադառնալով Հայաստան, տեսավ, որ սուրբ Սահակ հայրապետը Քրիստոսի շնորհիվ զբաղված է Սուրբ Գիրքը հայերեն թարգմանելով:

ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՍԻԼՔԸ*

Երբ սուրբ Եպիփանը հեռացավ Ցոփաց գավառից, իր միայնանոցից, որ Մամբրե էր կոչվում, այնտեղ թողեց շատ եղբայրներ-միաբաններ, միահավան հավատացյալ քրիստոնյա կրոնավորներ, լեռնաբնակ միանձն ճգնավորներ եւ մի քահանայի նրանց վրա գլխավոր նշանակեց: Նրանց մեջ կային ոմանք, որ մանկությունից ի վեր բնավ ուրիշ կերակուր չէին կերել, բացի լոկ բանջարեղենից եւ ջրից. գինու համն էլ չէին առել, թե ինչպես է:

Նրանց մեջ կար մի խստակրոն եղբայր, որ մութ կյանք էր վարում եւ բոլորովին հրաժարվում էր ճաշակել հարության հույսի կենարար բաժակից, այսինքն՝ մեր տեր Հիսուս Քրիստոսի Արյունից: Որովհետեւ նա չէր կարող հավատալ, թե երբ այդ գինին սուրբ սեղան է բերվում եւ քահանայի ձեռքով բաշխվում, իսկապես Աստծու Որդու Արյունն է դառնում, այլ կարծում էր, թե լոկ գինի է մնում, այս պատճառով էլ հաճախ վիճում էր շատերի հետ: Օրերից մի օր, երբ գոհության պատարագի խորհուրդն էին կատարում այն վկայարանում, որ շինել էր սուրբ Եպիփանը, եւ սուրբ հացն ու գինին բերին, պատարագի սեղանի վրա դրին, որպեսզի արյուն դառնա, այդ անհավատ եղբայրն էլ այնտեղ էր գտնվում, վկայարանում. քահանան ելել- կանգնել էր սեղանի առաջ եւ նախքան պատարագ մատուցելը՝ ձեռքերը բարձրացնում է սեղանի վրա եւ ասում.

«Զորությունների Տեր Աստված, որ բոլոր արարածները ոչնչից ստեղծեցիր, մարդուն հողից ստեղծեցիր կենդանի եւ անապական. մարդիկ Քո պատվիրանը զանց արին եւ իրենց պատվիրանազանցության պատճառով մահվան դատապարտվեցին, եւ Դու արդար դատաստանով նրանց դուրս արիր փափուկ դրախտից

* **[21] էջ 262-265**:

այս աշխարհը, որտեղից ստեղծել էիր, եւ նրանք դատապարտվեցին մահով մեռնելու: Բայց Դու, բարերար Աստված, նրանց ձեռքից չթողիր, այլ Քո Միածնի խնամքով ու շնորհով Քո ստեղծածները երկրորդ ծնունդով նորոգեցիր եւ շատ կերպարանքներով այցելու եղար Քո արարածներին: Մարգարեներ ուղարկեցիր, տեսակ-տեսակ զորություններ ու հրաշքներ գործեցիր Քո սրբերի ձեռքով, որոնք Քեզ հաճելի եղան, օրենքներ տվիր օգնության համար, հրեշտակներ ուղարկեցիր վերակացության համար: Իսկ երբ ժամանակների վերջը հասավ, մեզ հետ խոսեցիր Քո Միածին Որդու միջոցով, որի հետ աշխարհն ստեղծեցիր, որ պատկեր է Քո փառքի, կերպարանք է Քո էության, որ կրում է ամեն ինչ զորավոր խոսքով, որ ոչինչ չհափշտակեց Հոր էական բնությունից Իր անձի պատվի համար, այլ հավիտենական Աստված երկրի վրա երեւաց, մարդկանց հետ շրջեց, Սուրբ Կույսից մարմնացավ, ծառայի կերպարանք առավ եւ մեր տկարության նմանվեց, որպեսզի մեզ նմանակից դարձնի իր փառքին: Դու մեզ փրկեցիր ամեն տեսակ գայթակղությունից եւ մոլորությունից, աշխարհից վերացրիր որեւէ անհույս թերահավատություն եւ Քո բոլոր արարածներին շնորհեցիր հարության հույս ու հավատ եւ նմանություն Քո պատկերին ու կերպարանքին, եւ բոլորին առհասարակ կյանք շնորհեցիր այն հավատով, որը զորացրիր մարդկանց մեջ: Այս բոլորն արիր ոչ թե մեր որեւէ արդարության համար, որովհետեւ մենք աշխարհիս վրա ոչ մի բարիք չենք գործել, այլ Քո ողորմության եւ գթության շնորհիվ, որ մեր վրա սփռեցիր, համարձակվում ենք խնդրել սրտագետիցդ, որ քննում ես մարդկանց սրտերն ու երիկամունքը, Դու, Տեր, որ բոլորի սրտերը գիտես, Դու ճանաչում ես այս մարդու ճշմարիտ ճգնությունները, որ խստակյաց կյանք է վարում իր ճգնողական կյանքում, սակայն սրա մեջ պակասում է հավատը. արդ՝ տուր սրան հավատ մի մանանեխի հատիկի չափ, որպեսզի չկորչի: Ո՜վ Քաջ Հովիվ, որ դուրս եկար կորած ոչխարը փնտրելու, որ Քո անձը դրիր Քո խաշների վրա, սրան եւս փրկի՛ր թերահավատությունից, որով բռնված է, որպեսզի թշնամին սրան չհափշտա-

կի եւ այս Քո ստեղծածը, որ Քո կերպարանքի նմանությունն է կրում, հավիտենական կորստի չմատնվի»:

Այս աղոթքն արեց քահանան պատարագը մատուցելուց առաջ, հետո սկսեց պատարագը եւ ամբողջ պատարագամատույցը վերջացրեց: Երբ նա ասաց,.«Հայր մեր, որ յերկինս ես», ծունկ չոքեց եւ երկար աղոթք արեց: Եվ մինչ նա ծունկ չոքած աղոթք էր անում, թերահավատ եղբայրը ոտքի կանգնած՝ ներքեւից՝ բեմից նայում էր դեպի սեղանը եւ բաց աչքերով մեծամեծ հրաշքներ սկսեց տեսնել: Նա տեսնում էր Քրիստոսին, որ իջել էր սեղանի վրա, բացել էր կողքի վերքը, որ գեղարդով խոցելուց էր գոյացել, եւ կողքի վերքից արյունը կաթկթելով հոսում էր պատարագի բաժակի մեջ, որ դրված էր սեղանի վրա: Թերահավատ կրոնավոր եղբայրը այս որ տեսավ, զարհուրեց ու դողաց. հուզված, շփոթված գետին կործանվեց, բերանը կարկամած, ուժասպառ, շնչասպառ ուշաթափ եղավ:

Իսկ քահանան վեր կենալով՝ սուրբ պատարագի խորհուրդը վերջացրեց եւ երբ սուրբ օրենքը բեմից իջեցնում էր, տեսավ այն եղբորը, որ ուշաթափ ընկած էր գետնին: Երբ սրբությունը տվեց ում որ պետք էր, ապա մնացորդը դարձյալ տարավ, սեղանի վրա դրեց եւ ներքեւ իջնելով բռնեց եղբորից, տեսավ, որ ուշագնաց ընկած է գետնի վրա: Ջուր բերեց, բերանին սրսկեց. երբ նա վերջապես շունչ քաշեց եւ ուշքի եկավ, վեր կացավ ու պատմեց իր տեսած հրաշքները: Ապա քահանան կամեցավ սուրբ օրենքով նրան ճաշակել տալ, բայց նա հանձն չառավ, չհամաձայնվեց, որովհետեւ իրեն անարժան էր համարում: Այլ նա իր համար մի հոր փորեց եւ մեջը մտնելով, յոթ տարի ապաշխարեց իր թերահավատության մեղքը, եւ յոթ տարուց հետո համարեց, որ իր ապաշխարությունն արժանացել է թողության, դուրս եկավ ուրիշների հետ միասին հաղորդվելու: Բայց էլի նույն հորն է իջնում բոլոր իր կյանքի օրերում եւ նույն հորումն էլ այդ եղբայրը վախճանվեց: Ապա քահանան էլ վախճանվեց, եւ երկուսը միասին այն վկայարանի ներսը դրվեցին, Եպիփանի եղբայրանոցում, որտեղ այս հրաշքը երեւաց:

ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆԻ ԲԵԿՈՐԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ*

Այն ժամանակները Մծբինի մեծ եպիսկոպոսը՝ մի սքանչելի ծերունի, ճշմարիտ գործերի մեջ վաստակավոր, որի անունն էր Հակոբ, Զգոն կոչված, աստվածընտիր մի մարդ, պարսիկ լինելով հանդերձ, վեր կացավ իր քաղաքից, որպեսզի գա հասնի Հայոց լեռները, Սարարագ լեռը, որ գտնվում էր Այրարատյան տերության սահմաններում, Կորդվաց գավառում: Նա լի էր Քրիստոսի շնորհներով, այնպես որ նրա ձեռքով հրաշքներ էին կատարվում: Նա եկավ մեծ փափագով ու ցանկությամբ եւ աղաչում էր Աստծուն, որ կարողանա տեսնել Նոյի փրկական տապանը, որ ջրհեղեղից հետո այս լեռան վրա հանգրվանեց. որովհետեւ ինչ որ նա Աստծուց խնդրում էր, ստանում էր: Արդ՝ երբ նա բարձրանում էր Սարարագյան լեռան անջրդի անապատ, քարքարոտ տեղերով, ինքը եւ իր հետ եղողները հոգնեցին ու ծարավեցին: Այդ ժամանակ Մեծ Հակոբը ծունկ չոքեց գետնի վրա եւ տիրոջը աղոթեց: Եվ այն տեղից, որտեղ դրել էր իր գլուխը, մի աղբյուր բխեց. եւ ինքն ու իր հետ եղողները խմեցին: Մինչեւ այսօր էլ այդ աղբյուրին ասում են Հակոբի աղբյուր: Եվ ինքը նույն չարչարալից գործը շարունակում էր, տիրոջն աղոթում էր, որպեսզի ցանկացածը անհապաղ տեսնի:

Արդ՝ երբ նա հոգնած էր, վերը, կատարի մոտ, դժվար տեղում, խիստ տանջված էր, քունը տարավ: Եվ Աստծու հրեշտակը եկավ ու նրան ասաց. «Հակո՛բ, Հակո՛բ»: Եվ նա ասաց. «Այստեղ եմ, տե՛ր»: Եվ հրեշտակն ասաց. «Տերը քո աղաչանքներն ընդունեց եւ խնդրանքդ կատարեց. այդ, ինչ որ գլխիդ տակ դրված է, տապանակի փայտերից է. ահա բերի քեզ համար, այնտեղից է այդ: Էլ կրկին չձգտես տեսնել, որովհետեւ Տերը այսպես կամեցավ»: Նա մեծ խնդությամբ ոտքի կանգնելով երկրպագեց տիրոջը մեծ գոհությամբ եւ տեսավ տախտակը, որ կարծես կացնով կտրած՝ ճեղքած հանած էր ինչ-որ մեծ փայտից: Առնելով շնորհատուր պարգեւը՝ ինքը եւ հետը եղողները այնտեղից ետ դարձան ու գնացին իրենց ճանապարհը: Եվ Մեծ Մովսեսը այնպես զվարթ չէր ցնծում Սինեական լեռնից իջնելիս, թեպետ չեմ ուզում ասել, որ նրա բերածը պակաս բան էր, իսկ սրանը՝ ավելի: Որովհետեւ այն աստվածատես մարդը աստծուց էր ստացել աստվածագիր հրամանները եւ ձեռքերին բռնած իջնում էր լեռնից: Որովհետեւ այն չարագործ ժողովուրդը տիրոջից երես դարձնելով, կործանվելով՝ տիրադրուժ գտնվեց եւ իր ծուլածին երկրպագում էր, որով Աստծու հրամանը բերողի սիրտը կոտրում, վիատեցնում էր, եւ հենց տախտակների խորտակելուց հայտնի երեւում էր բերողի թախիծը: Իսկ այս երանելուն, որի մասին այստեղ շարադրում ենք, այնպես չպատահեց, ինչպես այնտեղ եղավ. այլ ինքը եւ յուրայինները լցված էին հոգեւոր մխիթարությամբ՝ կարծելով, որ ընդունողները հոժարությամբ եւ հույսով սպասում են նրա վերադարձին հեռավոր աղետաբեր ճանապարհից: Որովհետեւ հայտնի ու անհայտ կերպով միայն մեկ ամենակարողից էին մատակարարվում շնորհներ բոլոր երկրածին ազգերին:

Եվ երբ Աստծու մարդը եկավ, բերեց Նոյան փրկարար տապանի փայտը, բոլոր բանավորների ու շնչավորների ցեղերին հասած պատուհասի հավիտենական նշանը, հայրենի գործերի նշանակը,- ապա ամբողջ քաղաքը եւ նրա շուրջն եղած գավառները անչափ, աննման ցնծությամբ եւ խնդությամբ նրան ընդառաջ ելան: Նրան համարում էին իբրեւ Քրիստոսի առաքյալ, իբրեւ երկնային հրեշտակ, նրան շրջապատում էին, իրենց քաջ հովվին իբրեւ աստվածախոս էին համարում, փաթաթվում էին նրան, համբուրում էին նրա վաստակավոր ու օգտաբեր ոտքերի հետքերը: Եվ նրա բերած պարգեւները իբրեւ իրենց համար շնորհներ ընդունում էին հոժարությամբ, որ մինչեւ այսօր էլ նրանց մոտ պահվում է այդ սքանչելի նշանը՝ հայրապետական Նոյան տապանի նշանավոր փայտը:

---

* **[21] էջ 81-82**:

ՏԵՍԻԼՔ ՈՐ ԵՐԵՎԱՑ ՇԱՂԻՏԱ ԵՎ ԵՊԻՓԱՆ ՍՈՒՐԲ ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐԻՆ*

Երկու կրոնավոր անապատականներ կային, որոնք նստում էին լեռներում, մեկի անունը Շաղիտա էր, որ ազգով ասորի էր եւ նստում էր Առյուծ լեռան վրա, մյուսի անունը Եպիփան էր, որ ազգով հույն էր եւ նստում էր Մեծ լեռան վրա, աստվածների մեհյանների տեղում, որ կոչվում է Անահիտի աթոռ: Սրանք երկուսն էլ աշակերտ էին եղել սուրբ Մեծ Դանիելին, որին վերը հիշեցինք: Արդ՝ երբ սրանք երկուսը նստած էին այն ժամին, երբ սուրբ Ներսեսը մեռավ, նրանցից յուրաքանչյուրն իր լեռից բաց աչքով ցերեկ ժամանակ տեսնում է, որ սուրբ Ներսեսը կարծես հափշտակվում է ամպերի մեջ. որովհետեւ հրեշտակները նրան վեր էին տանում եւ գունդ-գունդ գնում էին նրա առաջ: Անապատականները երբ այս տեսիլքը տեսան, զարմացան այս տեսիլքի վրա: Բայց Շաղիտան, որ Առյուծ լեռան վրա էր նստում, հմուտ մարդ լինելով՝ հասկացավ, թե սուրբ Ներսեսը վախճանվել է, եւ ինքը տեսնում է նրա հոգին: Իսկ Եպիփանը այնպես հասկացավ, թե սուրբ Ներսեսը հենց մարմնով հափշտակվել է երկինք: Ապա այս երկուսը իրենց լեռներից իջնելով, փութով ու արագ հասան մինչեւ Եկեղյաց գավառը, հարցուփորձ արին, իմացան, թե սուրբ Ներսես հայրապետը վախճանվել է, եւ եկան մինչեւ Թիլ գյուղը ու տեսան այն տեղը, ուր դրված էր նա: Այստեղ այս հավատարիմ մարդիկ իրար հանդիպելով՝ ժողովրդի ներկայությամբ պատմում էին իրենց տեսածները:

*** [21] էջ 259-260**:

ՄՈԳՊԵՏԻ ՏԵՍԻԼՔԸ*

Երբ մոգպետն այս բոլոր խոսքերը լսեց դահճապետից, հուզվեց. նրա միտքը պղտորվեց, եւ քունը նրա աչքերից փախավ շատ գիշերներ: Իսկ մի օր երեկոյան պահին վեր կացավ, գնաց նրանց մոտ միայնակ ու մնջիկ եւ սպասավորներից ոչ ոքի հետը չվերցրեց: Եվ երբ հասավ տան դռանը, մի անցքով ներս նայեց եւ տեսավ էլի առաջին տեսիլքի նման. բայց նրանք անդորր քնած էին: Մեղմորեն կանչեց եպիսկոպոսին անունով, որովհետեւ նա լավ գիտեր պարսկերեն: Նա դուրս եկավ եւ հարցրեց. «Ո՞վ ես դու»:- «Ես հենց ինքն եմ, ասաց, ուզում եմ ներս մտնել եւ ձեզ տեսնել»:

Եվ երբ մտավ սրբերի մեջ, նշանն այլեւս չերեւաց նրան, եւ պատմեց նրանց, թե ինչպես իրեն երկու անգամ հրաշք երեւաց: Ղեւոնդ երեցը պատասխան տվեց եւ ասաց. «Աստված, որ ասաց, թե խավարի մեջ թող լույս ծագի, որ եւ ծագեց եւ իմաստությամբ լուսավորեց աներեւույթ արարածներին, նույն զորությունն այսօր էլ ծագեց քո խավարած մտքի մեջ, եւ քո կուրացած հոգու աչքերը բացվեցին, եւ տեսար Աստծու շնորհքի անշեջ լույսը. շտապի՛ր, մի՛ ծուլանար, գուցե նորից կուրանալով՝ խավարի մեջ խարխափես»:

Եվ երբ այս ասաց, բոլորը ոտքի կանգնեցին, ասելով քառասուներկուերորդ սաղմոսից. «Ուղարկի՛ր, Տե՛ր, Քո լույսն ու Քո ճշմարտությունը, որ նրանք առաջնորդեն ու տանեն մեզ սուրբ լեռը եւ Քո հարկերը»: Իսկապես որ, Տե՛ր, ճշմարտությամբ առաջնորդեցիր այս մոլորվածին եւ բերիր դեպի Քո անանցանելի ուրախությունը եւ անմերժելի հանգիստը: Ահա՛ այս օրը նման է Քո սուրբ չարչարանքներին. ինչպես որ մահապարտ ավազակին փրկեցիր

* **[4] էջ 138-141**:

երկրորդ մահից եւ նրանով բաց արիր Ադենի կողպած դուռը, այնպես էլ գտար նաեւ այս կորուսյալին. սա, որ շատերի մահվան պատճառ էր, այժմ սրան դարձրիր կյանքի պատճառ մեզ եւ իր անձի համար: Շնորհակալ ենք Քեզանից, Աստվա՛ծ, շնորհակալ ենք եւ ձայնակցում ենք սուրբ մարգարեին- «Ո՛չ թե մեզ, Տե՛ր, ո՛չ թե մեզ, այլ Քո անվանը փառք տուր՝ Քո ողորմության եւ ճշմարտության համար. որպեսզի հեթանոսների մեջ երբեք չասեն, թե ո՞ւր է նրանց Աստվածը. ինչպես որ այսօր էլ հայտնի եղավ Քո մեծ զորությունը այս անսանձ խավարասեր ազգի մեջ»:

Իսկ նա, որ ձրի գտավ Աստծու տված շնորհները, նա էլ սկսեց ինքն իրեն ասել. «Տերն է իմ լույսն ու կյանքը, ես ումի՞ց պիտի վախենամ. Տերն է իմ կյանքի ապավենը, ես ումի՞ց պիտի դողամ: Որովհետեւ ստույգ գիտեմ, որ այսուհետեւ իմ թշնամիները բազմաթիվ են եւ ուզում են մոտենալ ու ուտել իմ մարմինը. բայց Դու բոլորի Տե՛ր, եկար բոլորին կյանք տալու համար, որպեսզի ետ դառնան եւ ապրեն Քո մարդասիրության առաջ: Ինձ մի՛ ջոկիր այս սուրբ գառներից, որոնց խառնվեցի, որպեսզի Քո փարախից դուրս գալիս չար գազանը նորից չպատառոտի ինձ: Տե՛ր, մի՛ նայիր իմ բազմամյա ամբարշտություններին, որպեսզի ճշմարիտ կյանքիցդ չմոլորվեմ եւ կրկին անգամ շատերին կորստյան ճանապարհը սովորեցնեմ, այլ որոնց մահվան պատճառը եղա, նրանց համար էլ կյանքի պատճառ դառնամ: Սատանան, որ ինձնով խրոխտացած պարծենում էր այս բազմաթիվ կորստյան մատնվածների մեջ, թող ինձնով գլխիկոր ամաչի իր աշակերտների մեջ»:

Այս ասելուց հետո հենց նրան էլ թույլ տվին աղոթքը ավարտել, եւ նրա հետ միասին հանգստացան մինչեւ երրորդ պահը, եւ այդպես խաղաղ քնի մեջ մնացին բոլորը մինչեւ առավոտյան ժամը:

Իսկ նա, ոտքերի վրա կանգնած՝ չքնեց, այլ ձեռները վերեւ բարձրացրած՝ աղոթում էր: Եվ մինչդեռ աչքերը երդիկին սեւեռած նայում էր երկինք, հանկարծ տունը լույսով լցվեց. եւ նրան մի լուսեղեն սանդուղք երեւաց, որ դրված էր երկրից մինչեւ երկինք. եւ

խումբ-խումբ զորքեր վեր էին բարձրանում. եւ բոլորի տեսքը նոր էր ու չքնաղ, ահավոր ու սքանչելի, ինչպես հրեշտակների տեսքը: Տեսած բոլոր խմբերի թիվն ու համարն էլ մտքում ուներ. կար, որ հազար էր, կար, որ երեսունեւերեք էր, կար, որ երկու հարյուր եւ տասներեք էր: Եվ այնքան շատ մոտեցավ, որ մինչեւ անգամ ճանաչեց նրանցից երեքին՝ Վարդանին, Արտակին եւ Խորենին: Նրանք իրենց ձեռներին ինն պսակ ունեին. միմյանց հետ խոսում էին եւ ասում. «Ահա եկավ-հասավ ժամանակը, որ սրանք էլ խառնվեն մեր խմբին, որովհետեւ մենք էլ հենց սրանց էինք սպասում եւ սրանց համար ենք բերել առհավատչյա նվերը. իսկ որին չէինք էլ սպասում, եկավ-երեւցավ եւ խառնվեց եւ դարձավ ինչպես Քրիստոսի զինվորներից մեկը»:

Այս չքնաղ տեսիլը երեք անգամ երեւաց երանելի մարդուն: Քնից զարթնեցրեց սրբերին եւ ամբողջ տեսիլը կարգով պատմեց նրանց:

Իսկ նրանք վեր կացան, աղոթքի կանգնեցին եւ ասում էին. «Տե՛ր, Տեր մեր, ի՞նչ սքանչելի է Քո անունը ամբողջ երկրի վրա. Քո մեծ վայելչությունը բարձրացավ երկնքից էլ վեր. ծծկեր մանուկների բերանից օրհնություն հաստատեցիր, որ ոչնչանա թշնամին ու հակառակորդը»: Որովհետեւ սրանից հետո այլեւս չպետք է ասել «Կտեսնեմ երկինքը, որ Քո մատների գործն է», այլ թե՝ Քեզ կտեսնեմ երկնքի ու երկրի Տեր. ինչպես որ այսօր իսկ երեւացիր Քո սուրբ զորականների միջոցով այս հեռավոր օտարին, որ իր կյանքի ակնկալությունից ձեռք էր քաշել:

«Ահա Դու, Տե՛ր, Քո ողորմությամբ պսակեցիր սիրելիներիդ, եւ քո գթասրտությամբ ելար այս կորածին փնտրելու, դարձրիր եւ խառնեցիր Քո սրբերի դասին: Սա ո՛չ միայն երկինքը տեսավ, որ Քո մատների գործն է, այլ տեսավ երկինքն ու նրա բնակիչներին, եւ մինչդեռ այս երկրի վրա է, խառնվեց Քո բյուրավոր հրեշտակների գնդերին: Տեսավ նաեւ նահատակված արդարների հոգիները, տեսավ նաեւ աներեւույթ պատրաստությունների փառքի նմանությունը, տեսավ նրանց ձեռքին նաեւ անկասկածելի գրա-

վականը, որ պատրաստված պահվում է ճարտարապետի ձեռքում: Երանի՜ սրան սուրբ տեսիլքի համար, եւ երանի է մեզ, որ սա մոտեցավ մեզ. որովհետեւ սրա միջոցով հաստատապես իմացանք, թե քանի որ սրան այսպիսի սքանչելիքներ են հայտնվում, Քո անսպառ բարություններից սա մեծ բաժին ընդունեց: Քո պարգեւներն անսպառ են, Տե՛ր, եւ առանց խնդրելու տալիս ես՝ ում կամենում ես՝ Քո հորդաբուխ եւ աննախանձ առատությամբ: Եվ քանի որ չխնդրողներին էլ չես մերժում այն, բա՛ց մեզ, Տե՛ր, Քո ողորմության դուռը, որ մեր մանկությունից Քո սրբերի բարեմասնության ցանկացող ենք եղել: Քո այս նորագյուտ ձեռակերտին բարեխոս ենք դարձնում մեր անձերի համար. մեր հավատի նավը թող չընկղմվի մեղքերի ալեկոծված ծովի մեջ»:

Եվ այսպես երկար աղոթք անելով՝ հորդ եւ առատ արտասուք էին թափում իրենց անձերի համար: Գթություն էին հայցում բարերարից, որ լսելի լինի նրանց պաղատանքների ձայնը եւ հաստատուն մնան իրենց վիշտ ու նեղությունների մեջ, որպեսզի չզրկվեն այն ցանկալի պսակներից, որ ունեին սրբերն իրենց ձեռքին, ինչպես եւ ազդարարվեց նրանց Սուրբ Հոգու կողմից, որովհետեւ մոտեցել էր նրանց կանչվելու ժամանակը, որ գնան եւ աներկյուղ հանգստանան այն կասկածելի ակնկալությունից, որին դիմանում էին մեծ տառապանքներով, որպեսզի փոքրիկ առհավատչյայով հասնեն երկնավոր մեծությանը, որին ցանկացող էին վաղուց ի վեր:

Եվ որովհետեւ հենց ինքը՝ մոգպետը այն աշխարհի իշխանն էր, եւ նրան էին հանձնված այն քաղաքի կալանավորները, ուստի եւ առավոտյան համարձակ կերպով հանեց-տարավ կալանավորներին իր ապարանքը: Լվաց ու սրբեց նրանց բանտի աղտեղություններից, վերցնում էր սրբերի լվացաջուրը եւ ածում իր մարմնի վրա: Իր տան մեջ ավազան սարքեց եւ նրանցից սուրբ մկրտություն ընդունեց, հաղորդվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի կենդանարար Մարմնին եւ քավիչ Արյանը:

ՎԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԳՆԴԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ*

Եվ եղավ, որ տասնութ տարի հետո դարձյալ գժտություն ծագեց Վահանի ու պարսիկների միջեւ: Այնժամ Խոսրովը հիսուն հազարանոց մի բանակ հանձնեց Վարդուհրին եւ ուղարկեց Հայաստան, որոնք մեծ բարկությամբ եկան հասան մինչեւ Տարոն: Ցանկանում էին անցնել Գլակա վանքը, որպեսզի հանեին այնտեղ թաղված իրենց նախկին թշնամիների ոսկորները (նշխարները). ուստի եկան իջան Մուշ քաղաքում: Իսկ Վահանը կանչեց իր որդի Տիրանին եւ ասաց.

- Որդյակ իմ, երբ մեծության, բարձր դիրքի հասար, չլինի թե դրա համար գոռոզանաս եւ մեղսագործ դառնաս: Եվ որովհետեւ դեռ մանկահասակ ես, չլինի թե կանանց գեղեցկությանը խաբվես, այլ միշտ հիշիր մեր նախնիներին՝ թե որպես սրբությամբ ծառայեցին Աստծուն: Երբեք մի մոռացիր սուրբ Կարապետի ու մյուս սրբերի ծառայությունը, քանզի նրանք էին, որ պատերազմների ժամանակ զորավիգ էին մեզ: Եվ եթե ցանկանում ես երկար ապրել, պղծագործության մի մատնիր քեզ, որպիսին էլ չես իսկ: Եթե ես ընկնեմ այս պատերազմում, ինձ մեր վանքը ասա թող տանեն. իսկ դու սրբությամբ ծառայիր Աստծուն ու Նրա կրոնավորներին, որպես եւ ես ծառայեցի, քանի որ ոչ կանացի գեղեցկությանը խաբվեցի ու անարգվեցի, ոչ զրկեցի կամ նեղեցի տառապյալներին ու աղքատներին: Քանզի ամենքը, որոնք իմ իշխանության ներքո էին՝ տղամարդ, կին, թե երեխա, Քրիստոսի բոլոր հավատացյալներին իբրեւ եղբոր ու հարազատի էի նայում, խնամքով հոգ էի տանում, ինչպես իմ հայրերն էին արել: Որդյակ, նույնն էլ դու պետք է անես եւ Տերը քեզ զորություն կտա: Այժմ՝ դեպի պատերազմի դաշտը:

---

* **[8] էջ 105-107**:

Այնժամ սուրհանդակ հղեցին Գլակա վանքի վանահայր Գրիգորի մոտ, որը քսանհինգերորդն էր եւ հայրապետական աթոռին նստեց ութ տարի եւ երեք հարյուր հիսունհինգ (ԳՆԾԵ) վեղարավոր կրոնավորների եւս տարան պատերազմի: Եվ երբ խմբվեցին-գումարվեցին պատերազմելու Արածանիի ափին՝ անտառի կողմում, որը Կաղամախյաց բլուր է կոչվում, կրոնավորները, որ մազեղեն քրձերով ու սեւազգեստ էին, յուրաքանչյուր հիսունի հետ մի ժամհար՝ կոչնական դրեցին, որոնցից ամեն մեկը իր ուսի վրա խաչանշան դրոշակ պահած ուներ: Ապա պատերազմի ճակատ կազմեցին միմյանց դեմ՝ գետի մյուս կողմը, հենց դաշտի մեջ: Այդ բանը տեսնելով թշնամիները խիստ զարմացան. Իսկ Վարդուհիրը, որ կռվի մեջ չէր մտել, նրանց տեսքին նայելով հարցրեց, թե այդ ի՞նչ են անում: Եվ երբ բորբոքվեց, թեժացավ պատերազմը, Վահանյանք թուլացան եւ կամենում էին դիմադարձ լինել, փախչել. այնժամ նրանք՝ կրոնավորները ծունր իջնելով սկսեցին արտասվախառն ձայնով եւ միաբերան աղաչել Աստծուն եւ ասում էին.

- Ով Տեր ամենազո՛ր, զորացրո՛ւ մեր պատերազմողներին եւ կարկամեցրու մեր թշնամիներին: Ով Կարապետ Քրիստոսի, զարթնիր քո ծառաների՝ քեզ պաշտողների ձայնից: Եվ այդպես խոսելով՝ միահամուռ ոտքի ելան եւ սուրբ խաչի նշանը դարձրին ընդդեմ թշնամիների: Իսկ կրոնավորները կոչնականների հետ միասին դիմեցին դեպի դաշտը: Երբ Վահանը նայեց վանականների գնդին, տեսավ այնտեղ՝ նրանց աջ թեւում մի երիտասարդ, ահարկու տեսքով, նրա գլխին ծիրանի թագ եւ խաչ կար, իսկ հանդերձանքից կարծես հուր էր ճառագայթում. տեսավ նաեւ երկու թեւավոր պատանիներ, որոնք նրա առջեւից թեւածում էին: Այս տեսնելով թշնամիները զարհուրեցին ու հենց այնտեղ գետը թափվեցին, իսկ նրանք, որոնք կարողացան գետի այն կողմն անցնել, Մեղտիի կողմը ուշ դարձրին:

Այնժամ Վահանը ձայն տվեց իր որդի Տիրանին ու բոլոր զինվորներին ասելով.

- Ահա բոլոր արարածների Տեր Քրիստոսն էր, որ հայտնվեց Իր

ծառաների մեջ, որովհետեւ Ինքն է նրանց, ինչպես եւ մեր ամենքի Միակ Թագավորը: Նա ունկնդիր եղավ Իր սպասավորների ձայնին եւ իջավ որպես փրկարար նրանց եւ մեզ. ուստի եւ քաջաբար հետապնդենք մեր թշնամիներին: Բայց անօրենները տեղ հասնելով՝ գտան տասներկու ծերունի կրոնավորներին եւ սրախողխող արին. եւ հենց այնտեղ էլ՝ եկեղեցու դռանը կան թաղված, ինչպես որ իրենք էին փափագել: Ապա Վահանը նժույգին զենքերով հանդերձ կապեց իր մեջքից եւ անցավ գետի մյուս կողմում գտնվող գյուղը, որ Պարսից կողմ են կոչում. այնտեղ հավաքվեցին Վահանի մնացյալ զորքերն ու կրոնավորները, որոնք նույն տեղում աղոթում էին, մինչեւ որ իրենց մոտ հասավ այն մարդը, որը բերում էր նրանց առաջնորդի՝ Վարդուհիրի գլուխը: Այստեղից Վահանը հարձակվեց եւ հետապնդեց պարսիկներին մինչեւ դաշտի ծայրը, որի վրա Մատրվանքն է եւ այնտեղ շրջապատելով, մարտի պատրաստվեցին բռնվեցին: Դեմդիմաց դուրս եկան Վարդուհրն ու Վահանի որդի Տիրանը. եւ Վարդուհիրը այսպես ասաց.- Կախարդաստեղծ եք դուք. կախարդությամբ եք պարծենում եւ դրանո՞վ եք ուզում հաղթել պարսից քաջերին:

Պատասխանեց Տիրանը եւ ասաց.- Եթե մենք կախարդ ենք, ապա այդ դու մի կասկածիր, քանզի հենց այժմ ես ձիուդ պոչը քո աչքերի դեմը կդարձնեմ: Եվ ական թոթափել վրա հասավ, հարվածեց-կտրեց ու վայր նետեց նրա՝ Վարդուհիրի աջ ոտքը՝ սռնապանոք հանդերձ. նա էլ մյուս կողմի վրա թեքվեց ու ցած գլորվեց: Այնժամ Տիրանն ասաց նրան.- Վարդուհիրի, ինձ մի մեղադրիր, այդ քո գլուխն էր, որ ծանրությունից դեպի ցած հակվեց եւ քեզ ներքեւ գլորեց. հիմա ես քո ձիու բեռը կուղղեմ, հետո նոր կվերցնեմ: Եվ կտրեց նրա գլուխն ու ծառաներից մեկին տալով ասաց.- Պահիր դրան, երբ իջնենք Մատրավանք, այնտեղ սբ. Կարապետի դիմացը գնդակ պիտի խաղանք, որովհետեւ դա էր, որ անարգում էր նրա սուրբ սպասավորներին: Ապա բոլոր կողմերից շրջապատեցին պարսիկներին, սկսեցին դես ու դեն ցրիվ տալ ու կոտորել:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԽԱՉԻ ՄԱՍՈՒՆՔԻ ԳՏՆՎԵԼԸ*

Վելի ուշ՝ մի քանի օր անցնելուց հետո, լուրը հասավ ողջ զորքերին, եւ նրանք հուսալքվելով բաժանվեցին միմյանցից, ու ամեն մեկը վերադարձավ իր տեղը: Գնացին նաեւ Գեղումի զորքերը, որ նրա հետ էին. փութով եկան հասան իրենց աշխարհի ամրոցները, նրանց հետ նախ այն հայ մարդիկ, որ ապստամբել էին Սպահանում ու նրանց հետ գնացել Վստամի մոտ: Երբ նրանք գնացին այն երկիրը, որ կոչվում է Կոմշ եւ գտնվում է Վրկանի թիկունքում՝այն լեռան մյուս կողմում, որը ձգվում է նրանց միջով, եւ հասան այն գյուղը, որ կոչվում է Խեկեւանդ, նրանց դեմ ելան Շահը, Վահրիճը եւ մարզպան Սմբատ Գուրկանը՝ «զորքերի» բազմությամբ: Իսկ գեղումների զորքերը երկու հազարից ավելի չէին: Եվ պատերազմ եղավ այդ երկրում: Հարվածեցին պարսիկների զորքին եւ փախստյան մատնելով հալածեցին, շատերին սպանելով եւ շատերին ձերբակալելով՝ վերադարձան կրկին ու բանակեցին մարտադաշտին մոտ, նրանց հետ նաեւ այն հայ մարդիկ: Հայերի զորքերից եւս, որ Սմբատ մարզպանի հետ էին, շատերը մեռան:

Արդ՝ այդ պատերազմը տեղի ունենալուց երեք ամիս առաջ Հովսեփ անունով մի մարդ երազ տեսավ: «Մի սքանչելատեսիլ մարդ, ասում է, եկել ինձ ասում էր՝ երեք ամիս անց պատերազմ պիտի լինի, եւ շատերը այդ պատերազմում պիտի ընկնեն, բայց դու կգնաս պատերազմի դաշտ, եւ քեզ այս նշանը կտրվի, որ տեսնես մի մարդ՝ երեսնիվայր գետնին ընկած, որի մարմինը բոլոր դիակների մեջ փայլում է, եւ դու մոտենալով՝ ինչ որ գտնես նրա մոտ, վերցրու քեզ: Եվ զգույշ եղիր, ասում է, չմոռանաս այդ շնորհը, որովհետեւ դա սքանչելիք է»: Եվ ելավ գնաց, ու երբ հասավ այնտեղ, գտավ այնպես, ինչպես ասվել էր երազում, որովհետեւ նրան ու բոլոր դիակներին մերկացրել էին, եւ իր վրա՝ անուքի տակ, կաշվե պայուսակ էր կրում: Նրա մարմինը դիակների մեջ էր. մոտենալով վերցրեց այդ պայուսակը եւ տեսավ, որ այնտեղ մի արծաթյա տուփ կար, իսկ նրա մեջ՝ մի խաչ, որի մեջ Տերունական Խաչից մեծ մասունք կար: Նրանով խաչակնքվեց եւ վերցնելով գնաց իր ընկերների հետեւից:

Եվ եղավ՝ երբ հաջորդ տարին եկավ, թշնամիների բոլոր գնդերը հավաքվեցին եւ գնացին բանակեցին Տապարաստան գավառում. Սմբատը եւս հավաքեց իր ողջ զորքերը եւ դիմադարձ կանգնեց նրանց պատերազմով: Եվ Տեր Աստվածը թշնամիների զորքը մատնեց Սմբատի ձեռքը, եւ սպանեց բոլորին սրով սուսերի, իսկ փրկվածները փախան գնացին իրենց տեղերը: Բայց նրանք, ովքեր նրանց հետ էին, պայման ու երդում խնդրեցին եւ եկան կանգնեցին Սմբատի առջեւ, նրանց հետ նաեւ՝ այն Հովսեփը: Ապա Հովսեփը նրա առջեւ դրեց իր գտածը եւ պատմեց երազն ու այն բազում սքանչելիքները, որ արել էր մասունքը բարբարոսների մեջ: Այնժամ Սմբատը ելավ ծունր իջավ նրա առաջ եւ վերցնելով խաչակնքվեց նրանով ու տվեց Միհրու անունով մի երանելի մարդու ձեռքը՝ Դիմաքսյան տոհմից, որին էլ կարգել էր որպես իր տան հավատարմատար, եւ հանձնեց եկեղեցուն, որին սպասարկում էին նրա դռան երեցները:

*** [15] էջ 115-119**:

ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԿԱԾ ՄԱՍԸ*

Հայոց Աշոտ թագավորի որդու՝ շահնշահ Գագիկի օրոք, նրա կառուցած Պիզու կոչվող վանքում է աստվածային ահավոր եւ զարմանալի հրաշք կատարվեց սուրբ խորհրդի վրա: Ահա, Պենտեկոստեի օրը, երբ Աստծո եկեղեցում սուրբ պատարագ էր մատուցվում, սուրբ խորհրդից մի փոքրիկ մասունք ժամարարը գցեց սուրբ սեղանի առջեւ: Երրորդ օրը երկու արժանավոր ճգնավորներ երազ տեսան եւ քահանաներից առաջ աղոթարան եկան: Մեկն ասաց մյուսին. «Գիշերը երազ տեսա, թե տաճարի գմբեթից կախված կանթեղն ընկավ Աստծո սուրբ սեղանի առջեւ, բայց նրա լույսը չհանգավ»: Իսկ մյուսն ասաց այսպես. «Ես էլ երազ տեսա, թե մի մեծ եւ զարմանալի աստղ երկնքից ընկավ Աստծո սուրբ սեղանի առջեւ եւ նրա լույսը առավել եւս լուսավառվեց»: Բոլորն ապշեցին այդ տեսիլքի վրա: Վանահայրը Սուրբ Հոգու ներշնչմամբ հասկացավ, թե բանն ինչ է, եւ ասաց. «Տեսե՛ք, սուրբ խորհրդի մաս կա ընկած»: Հենց այդ պահին նրանք մոմեր վառեցին եւ խնկարկությամբ եկան նշված վայրը: Այդ օրերի ընթացքում եկեղեցին չէին ավլել: Բարձրանալով բեմ, նրանք գտան սուրբ խորհրդի մասը անարատ, Աստծո սուրբ սեղանի առջեւ ընկած եւ, վերցնելով այն, գոհություն հայտնեցին մեր Տեր Աստված Հիսուս Քրիստոսին: Դա շատերին ամրապնդեց ուղղափառ հավատքի մեջ, եւ այդ օրից սկսյալ համոզվեցին, որ այդ խորհուրդը երկնային է եւ աստվածային, որ իսկապես սա է Աստծո Որդու Մարմինը:

* [11] էջ 199-201:

ՖՐԱՆԿ ԶՈՐԱԿԱՆԻ ՏԵՍԻԼՔԸ*

Այդ տարին՝ 1098թ. համայն Խորասանը՝ արեւելքից մինչեւ արեւմուտք՝ Եգիպտոս, մինչեւ Բաբելոն, հույների երկիրը, արեւելքը, Դամասկոսը եւ ողջ ծովեզրյա շրջանները, Երուսաղեմից մինչեւ անապատը, ութ հարյուր հազար հոգի եւ երեք հարյուր հազար հետեւակ, հոխորտալով շարժվեց առաջ եւ ողողեց դաշտերն ու բարձունքները: Անչափ պարծենկոտությամբ նա եկավ հասավ Անտիոքի դռները, ֆրանկ զորքերի դեմ: Բայց Աստված չուզեց կորստյան մատնել քրիստոնյաների փոքրաթիվ զորքը եւ հոգատարությամբ այն պահպանում էր, ինչպես Իսրայելի որդիների բանակը: Երբ դեռ այլազգիների զորքերը հեռու էին գտնվում, քաղաքի իշխանավորներից մեկը գիշերով մարդ ուղարկեց Պեմունդի եւ ֆրանկների այլ իշխանների մոտ եւ նրանց իր գավառը հրավիրեց: Նրանցից երդում ստանալով, նա ծածուկ, գիշերով Պեմունդին հանձնեց Անտիոք քաղաքը: Բացելով պարսպի անագապատ դուռը, նա ֆրանկների ողջ բանակը մտցրեց Անտիոք քաղաքը: Առավոտյան բոլոր զինվորները միասին հնչեցրին եղջերափողերը: Այլազգիները, լսելով այդ, մի տեղ հավաքվեցին. նրանք սարսափահար չգիտեին ինչպես փախչել: Ֆրանկ զինվորները, սրերը գործի դնելով, նրանց մեծ ջարդ տվեցին: Աղսիան ամիրան քաղաքից փախավ, բայց սպանվեց գյուղացիների ձեռքով. նրանք մանգաղով կտրեցին գլուխը: Ահա այսպես գրավվեց Անտիոք քաղաքը, եւ գրավվեց այն հայերի ձեռքից: Մնացած այլազգիները հավաքվեցին բերդում եւ մարտնչում էին ֆրանկ զորքերի դեմ: Երեք օր անց տեղ հասավ պարսից զորաբանակը, որ քանակապես յոթ անգամ գերազանցում էր ֆրանկ զորքին, ուժեղ պաշարելով ֆրանկներին, նեղ վիճակի մեջ գցեց նրանց: Ֆրանկ-

* [11] էջ 283-287:

ներն սկսեցին տառապել սովից, որովհետեւ քաղաքում հացն արդեն վերջացել էր: Ծայրաստիճան ճարահատյալ, Կերպողայից անձեռնմխելիության մասին երդում ստանալով, որոշեցին քաղաքը հանձնել նրան, իսկ իրենք գնան ֆրանկների երկիրը: Բայց Աստված տեսնելով նրանց տագնապալի վիճակը, գթաց: Գիշերը նրանց մի սարսափելի տեսիլք երեւաց, մի աստվածապաշտ ֆրանկ երազում սուրբ առաքյալ Պետրոսին տեսավ, որն ասաց նրան. «Եկեղեցու ձախ կողմում պահված է այն զենքը, որով անաստված հրեաները Քրիստոսի անարատ կողը խոցեցին, այն գտնվում է խորանի առջեւ: Հանե՛ք այն եւ, նրանով մարտի դուրս գալով, կհաղթեք ձեր թշնամիներին, ինչպես Քրիստոսը հաղթեց սատանային»: Նույն տեսիլքը երեւաց երկրորդ եւ երրորդ անգամ: Այդ մասին պատմեցին Կոնդոփրեին, Պեմունդին եւ բոլոր իշխաններին: Սկսեցին աղոթել եւ սուրբ Պետրոս կոչվող եկեղեցու նշված տեղում գտան Քրիստոսի զենքը:

Այդ պահին այլազգիների բանակից պատգամավոր եկավ՝ պատերազմ առաջարկելով: Ֆրանկ զինվորները շատ ուրախացան: Պեմունդը եւ մյուս իշխանները պատասխանեցին Կերպողային եւ ասացին, թե՝ «Վաղը առավոտյան ձեր դեմ մենք պատերազմի դուրս կգանք»: Ֆրանկ զորքը նվազել էր: Պեմունդը ճակատամարտի նախապատրաստեց տասնհինգ հազար հեծյալ եւ հարյուր հիսուն հազար հետեւակ, որոնցով նա գնաց պատերազմի՝ Քրիստոսի զենքն առջեւից բարձր պահած: Այլազգիների զորքերը ողողել էին լայնատարած դաշտը՝ տասնհինգական հոգուց բաղկացած շարքերով: Ձնճիլը Քրիստոսի զենքը բարձրացրեց Կերպողայի դրոշների դեմ: Կերպողան նրանց դեմ էր կանգնած լեռնացած անհամար զորքերով: Ձախ թեւը գլխավորում էր առյուծադեմ Տանգրին, աջ թեւը՝ Նորմանդիայի կոմս Ռոպերթը, իսկ Կոնդոփրեն եւ Պեմունդը կանգնել էին կենտրոնում՝ թուրք բանակի անհամար զինվորների դիմաց: Աստծուն իրենց օգնության կոչելով, նրանք մեկ մարդու պես երկնքում ցոլացող եւ լեռներն այրող կրակի պես թափվեցին, այլազգիների վրա եւ ողջ բանակը

գլխովին փախուստի մատնեցին: Մեծ կատաղությամբ սոսկալի ջարդ տալով, օրվա մեծ մասը հալածեցին այլազգիներին: Ֆրանկների սրերը հագեցան այլազգիների արյամբ: Բովանդակ դաշտը դիակներով լցվեց: Բայց ամենամեծ փորձանքը ֆրանկները թափեցին թշնամու հետեւակի գլխին, որովհետեւ շուրջ երեսուն հազար հոգու ողջակեզ արեցին. համայն երկիրը գարշահոտությամբ բռնվեց: Ֆրանկների զորքը անթիվ ավարով ու բազում գերիներով մեծ ուրախությամբ վերադարձավ Անտիոք քաղաքը: Այդ օրը քրիստոնյաների համար մեծ ուրախության օր էր:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՏԱՆ ԴՐԱԽՏԻ ԼԵՌԸ*

Ուրբ Ներսես Կլայեցու՝ Հայոց լուսավոր վարդապետի եւ կաթողիկոսի օրոք, վեց մենակյաց եղբայրներ, իրար հետ համաձայնության գալով, ճանապարհ ընկան դեպի արեւելք՝ վեց տարի քայլելով անընդմեջ եւ ամեն ժամ աղոթքների մեջ Տիրոջից խնդրելով հասցնել իրենց դրախտի անխռով վայրը՝ լեռան ստորոտին մերձ: Եվ նրանք հանդիպեցին մի ահավոր լեռան եւ վեց ամիս էլ գնալով՝ հասան նրա ստորոտին. ապա՝ անմահության հոտն առան ու զմայլվելով լիացան ու զորացան: Եվ նրանցից մեկն ասաց. «Ետ դառնամ ու պատմեմ այս՝ աշխարհի զվարճությունների հետ անբաղդատելի սքանչելիքի մասին: Նրան ասացին. «Դո՛ւ գիտես, բայց մենք այստեղ կմնանք»: Եվ եկավ մենակյացն այս՝ բազում չարչարանքներով, եւ քարոզում էր տեսած՝ ծաղկավետ եւ անմահաբույր վայրը, որ դրախտի ստորոտն էր: Եվ մարդիկ լսելով՝ անհավատալի էին համարում նրա ասածները: Երբ նա տեսավ՝ ոչ մի օգուտ չեն քաղում դրանից, ինչի համար ինքը զատվեց եղբայրներից եւ զրկվեց այն անուշահոտ վայրից, անմխիթար լալիս էր եւ ոչինչ չէր ասում այլեւս. եւ ոչ ոք չտեսավ նրան արտասվելուց դադար առնելիս, մինչեւ որ մաշվեցին նրա աչքերը՝ արտասուքներից խամրեց աչքերի լույսը:

Եվ եկան այս ամենը պատմեցին մեծ վարդապետ Ներսեսին: Եվ նա իր մոտ կանչեց այս մենակյացին եւ պահանջեց նրանից երդմամբ՝ ասել իր՝ անդադար արտասուքներ հեղելու պատճառը: Եվ սա ասաց. «Վեց եղբայրներով վեց տարի գնացինք արեւելքի կողմը եւ հանդիպեցինք մի լեռան, նրան մոտենալու համար քայլեցինք եւս վեց ամիս, ապա մի անպատմելի հոտ բուրեց, որից զմայլված արբեցինք եւ մոռացանք ամեն հոգս, եւ որ՝ մարմնի

* **[19] էջ 348-349**:

մեջ ենք: Եվ Տիրոջ հրեշտակը երեւալով ասաց. «Մնացե՛ք այդտեղ մինչեւ աշխարհի վերջը եւ դատաստանի օրը, եւ այսուհետեւ ձեզ չի նեղի մարմնի կարիքը՝ ո՛չ քաղցը, ո՛չ ծարավը, ո՛չ հիվանդությունը, ո՛չ մահը»: Իսկ ես ասացի. «Թող գնանք պատմենք երկրին՝ ինչ որ տեսանք եւ լսեցինք, որ օգուտ քաղեն մարդիկ», սակայն եղբայրներս չկամեցան, իսկ ես գալով պատմեցի, բայց մարդիկ առասպել համարեցին եւ քանի որ թողեցի ե՛ւ եղբայրներիս, ե՛ւ վաստակիս պտուղը, չե՛մ կարող անդադար չարտասվել»:

Եվ սուրբ Ներսեսը գրի առավ այս պատմությունը «Մեկնություն արարածոց» գրքում եւ քարոզում էր բոլորին:

ՏՈՒԵՑԻ ՏԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՍԻՆ*

Հայոց յոթ հարյուր տասներկու թվին վախճանվեց հայոց անվանի ճգնավոր, պատվավոր աստիճանների ու կոչումների արժանի, երկրի երեւելի ու անվանի մարդը՝ Տուեցի կոչված տեր Հովհաննեսը, որի կոչումը Աստծու շնորհիվ Գարդմանա տան եւ այլ բերդերի ու գավառների քահանայությունը, վարդապետությունն ու արքեպիսկոպոսությունն էին: Նա երեք հիսնօրյա պասը կատարում էր անհաց ու անջուր, նույնը կրկնում էր նաեւ ուրբաթ ու չորեքշաբթի օրերը, բոկոտն Երուսաղեմ էր գնում, մեծ պասի օրերին ոտքի վրա էր մնում, իսկ սուրբ Հարության ժամանակ՝ անհաց: Նա զարմացրեց ֆրանկների ազգին, որն այնտեղ էր գտնվում, որովհետեւ ապրում էր ոչ միայն հոտնկայս ու անկերակուր, այլեւ լուռ կերպով: Նա Աստծուց խնդրում էր հայտնի համբավավոր հավատը, որը գալիս էր դեպի ազգը, թե երբ լույսն իջել է, Հայոց կանթեղն է վառվել, ինչպես հենց ինքը պատմեց, թե ով պահում էր սուրբ գերեզմանի կամարակապ մատուռը՝ կուբան, սիրում ու փարվում էր մեզ, իսկ մենք նրանից խնդրեցինք դեպքերի հավաստիքը: Եվ նա ասաց. «Դու գնիր կանթեղներ եւ բեր, կախիր քո ձեռքով»: Ես այդպես էլ արեցի. գնեցի երեք կանթեղ եւ կախեցի սուրբ գերեզմանի վրա՝ աջ կողմում՝ ֆրանկների անունով, ձախ կողմում՝ հույների, իսկ միջին մասում՝ հայերի, ինչպես իրենք սովոր էին: Մենք նույնիսկ փակեցինք դուռն ու կնքեցինք, եւ պահապանն ինձ տվեց կնիքն ու բանալին ավագ ուրբաթ օրը: Ավագ շաբաթ օրը, ժամը իններին, քանի դեռ մենք աղոթում էինք, մեզ հետ աղոթում էին նաեւ ամբողջ քաղաքն ու հեռաստաններից եկած աղոթողներն առհասարակ, կամարակապ մատուռի պահապանն ինձ ասաց. «Տե՛ր, հրամայիր եւ բա՛ց արա, որովհետեւ

* [18], էջ 202-204

լույսն իջավ»: Ես գնացի, բացեցի դուռը՝ հեռացնելով կնիքը, եւ ճշմարիտ, առանց կասկածի ներսում կանթեղը վառվում էր բորբոքված կերպով, անասելի գեղեցկությամբ: Եվ այդ հրաշքի միջոցով փառավորվեց ու հռչակվեց այն մարդը՝ տեր Հովհաննեսը: Եվ նա ասաց այս խոսքը. «թե գնացի սուրբ Բեթղեհեմ, այնտեղ տեսա սուրբ առաքյալների նկարները՝ նկարված եկեղեցու պարսպի վրա, եւ տաճիկները անարգելու համար փորել էին աչքերը: Այդ դեպքից տրտմեցի ու աղոթեցի սուրբ առաքյալներին՝ աղաչելով հայտնել ինձ, թե հաճելի՞ է նրանց, որ ամենուրեք նկարեն իրենց: Եվ երբ վերադարձա Երուսաղեմ, այն գիշերը երազում տեսա երկու փառավոր մարդու, որոնք գալիս էին ինձ մոտ: Ես նրանց ընդառաջ գնացի եւ ասացի. «Ովքե՞ր եք դուք՝ Աստծու սրբերդ» : Նրանք պատասխանեցին. «Պետրոսն ու Հովհաննեսը, որոնց աղաչեցիր պարզաբանել քրիստոնյաների կողմից մեզ նկարելը, որը ամենեւին հաճելի չէ մեզ, եւ մենք ձանձրացել ենք ու տեղտեղ հայտնում ենք, բայց մեզ չեն լսում»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ՄԱՍԻՆ*

Սա մի առաքինի մարդ էր, վարքով՝ զարմանալի, Աստծու պատվիրանները կատարող, Քրիստոսի լուծը կրող, պատանեկությունից արժանացավ կուսակրոն քահանայական աստիճանի. անունը Հովհաննես էր, Գառնի քաղաքագյուղից, ուր գտնվում է Տրդատի հրաշալի սարավույթը, Այրիվանքի սուրբ միաբանությունից: Սա մանկության հասակից արհամարհեց կյանքի ամեն ինչքը, լքեց հարազատներին ու տունը, բնակվում էր ամայի տեղերում, սիրում էր առանձին լինել եւ անդադար խոսել Աստծու հետ՝ իրեն տալով տեսակ-տեսակ ճգնությունների, պասերի, գետնատարած ու պառկած աղոթքների եւ անդադար տեղից տեղ շրջելով ու պատահածներին լուսավորելով:

Նրան տրվեց նաեւ բժշկության շնորհք, որովհետեւ ձեռքը դնելով ու աղոթելով բազմաթիվ ախտաժետների բժշկում էր: Նրանից խնդրում էին նաեւ իրենց անձերի պահպանման համար թուղթ՝ թալիսման, իսկ նա անմիջապես տալիս էր բոլոր խնդրողներին: Եվ այս անում էին ոչ միայն հավատացյալները, այլեւ բազմաթիվ անհավատները: Նա գրում էր Սուրբ Երրորդության անունը եւ աղոթքի խորհրդավոր խոսքեր ու տալիս էր նրանց: Իսկ նրանք հավատով առնում եւ կապում էին իրենց վրա:

Սրա մասին շատերը շատ բաներ էին պատմում, բայց շատ ավելի պատմում էր մեր հարազատ ու սքանչելի Վարդան վարդապետը, որի խոսքերը արժանի են վստահության, արժանահավատ են, որովհետեւ նրանք սիրով կապված էին միմյանց հետ: Որովհետեւ մենք հեռավորության պատճառով նրան չտեսանք, նա իբրեւ մխիթարություն՝ մեզ նրա կյանքից որոշ բաներ պատմեց մասնավոր կերպով. ասաց, թե՝ «Ինքը Հովհաննեսն հենց մեզ պատմեց,

* **[6] էջ 250-255**:

թե ես գնացի սուրբ քաղաք Երուսաղեմ՝ երկրպագելու փրկչական վայրերին, այնտեղ որոշ օրեր մնացի՝ իջեւանելով սուրբ Հակոբում: Մի գիշեր կանխեցի ազդարարության ժամը հնչելը, որ բոլորին զարթեցնում էր աղոթքի, եւ մինչդեռ ես աղոթում էի սուրբ եկեղեցում, սուրբ Հակոբի առաջնորդ վարդապետը կանչեց ինձ եւ ասաց. «Եկ մի, զարմանալի բաներ լսիր, որ պատմում է իմ ամենակրտսեր քահանան»: Երբ գնացի նրա մոտ, կանչեց քահանային, որ զարմանալի երազ էր տեսել, եւ ասաց. «Այժմ ասա, ինչ որ ինձ նախօրոք պատմեցիր, որ սա եւս լսի»: Քահանան սկսեց պատմել, թե՝ «Նախքան ձեր մեր եկեղեցին գալը, ես սուրբ եկեղեցու վերնատանը աղոթում էի, հանկարծակի Գաբրիել հրեշտակապետի նկարված պատկերը, որ գտնվում է Ամենասրբուհի Աստվածածնի պատկերի հանդեպ, խոսեց ու ասաց. «Ուրախ եղիր, ով դու բերկրյալդ, Տերը քեզ հետ է»: «Օրհնված ես դու կանանց մեջ, եւ օրհնված է քո արգանդի պտուղը»: Բոլոր սրբերի նկարված պատկերները սկսեցին նույնը խոսել մինչեւ մեծ ժամը՝ «Ուրախ եղիր, ով դու բերկրյալդ, Տերը քեզ հետ է»:

Ես զարմացած փառք տվի Աստծուն եւ քննելով տոմարական հաշիվներով գտա, որ այդ օրը արեգ ամսի երեսունն էր եւ ապրիլ ամսի յոթը, Նիսանի տասնհինգը: Այս տեսիլքը եւ հրաշքի երեւալը հաստատում են հայոց տոնի ճշմարտացիությունը, որ ասում ենք Սուրբ Կույսի ավետյաց օրը արեգի երեսունին, ապրիլի յոթին, Նիսանի տասնհինգին է եւ ոչ թե, ինչպես հակառակվում են մյուս ազգերը, մանավանդ հույները՝ ասելով անխոհեմաբար, թե մարտի քսանհինգին է»:

Այս պատմեց ճշմարտախոհ այն մարդը ի հաստատումն մեր ուղղափառ հավատի:

Սրա նման մի ուրիշ բան էլ պատմեց այն սուրբ մարդ Հովհաննեսը: «Ես, ասում է, Հորդանան գետի կողմերն էի. աղոթում էի Տիրոջ եւ սուրբ Հովհաննես Կարապետի մկրտության տեղում: Ինձ մոտ կրոնով մահմեդական երեք մարդիկ եկան եւ խնդրեցին, որ իրենց մկրտեմ: Ես հապաղում, թողնում էի ուրիշ օրվա եւ կամ

մտածում էի՝ թող ուրիշներից մկրտություն ստանան, որովհետեւ տեսնում էի, որ նրանք վայրենաբարո մարդիկ են եւ կարծում էի ձեւանում են»:

Նրանցից տարեցը ինձ պատմեց եւ ասաց. «Մենք պարսից քաղաք Զանգիանից ենք, կրոնով մուղրի ենք: Շինեցինք մեծ ու գեղեցիկ մի աշտարակ եւ պատրաստեցինք բացման տոնահանդեսի համար ինչ անհրաժեշտ է: Ես ըստ արաբական կրոնի բարձրացա գմբեթի ծայրը անարժան ազանը տալու: Եվ ահա տեսա արեւելքի կողմից երկինքը պատռված եւ վայրը անչափ լույսով լիքը: Մի զարմանալի ու ահեղ Թագավոր նստած փառքի աթոռին, իսկ Նրա շուրջը լուսեղենների բազմություն էր, որոնք Նրան օրհնում էին անպատմելի ձայնով: Նրան երկրպագելու էին գալիս բոլոր քրիստոնյա ազգերը՝ յուրաքանչյուրը իր կրոնի առաջնորդներով, որոնք զարդարված էին երեւելի փառքով: Եվ երբ երկրպագում էին Նրան, Նա ընդունում էր նրանց ողջույնը: Ի վերջո եկավ մի այլ ազգ, որ փառքով շատ ավելի առավել էր, քան նախորդները, իսկ սրա առաջնորդները չափազանց զարմանալի էին: Երբ եկան, Թագավորին երկրպագեցին, Նա աթոռից վեր կացավ նրանց ընդառաջ ու համբուրեց նրանց իրենց առաջնորդներով եւ մյուս ազգերից ավելի մեծարեց:

Եվ մինչդեռ ես հիացած կանգնած էի զարմացումով ու ապշանքով, վերեւ, ինձ մոտ, եկավ իմ այս ավագ որդին եւ ասաց. «Ինչո՞ւ ուշացար, ամբողջ ժողովուրդը քեզ է սպասում: Սա նույնպես նայեց արեւելք ու նույն տեսիլքը տեսավ եւ հիմարացած կանգնեց: Ապա երբ չափազանց ուշացանք, ամբոխը մեր ուշանալու վրա նեղսրտեց: Բարձրացավ եկավ իմ այս կրտսեր որդին եւ մեզ մեղադրում էր մեր ուշանալու համար: Բայց որովհետեւ սրա գալու ժամանակ տեսիլքը չքացել էր, սրան պատմեցինք ուշանալու պատճառը եւ տեսիլքի հանգամանքները: Եվ իսկույն կամեցանք այն բարձունքից Քրիստոսին ճշմարիտ Աստված, իսկ մեզ քրիստոնյաներ հայտարարել: Սա մեզ արգելեց եւ ասաց. «Եթե այդպես է, խելքով գործ բռնենք. եթե հիմա մենք Քրիստոսին քա-

րոզենք, իսկույն տաճկաց այս ամբոխը մեզ կսպանի, եւ պատրվակ կբռնեն, թե ինչ-որ հանցանքի համար սպանեցինք, իսկ մեր մասին ո՞վ է իմանում: Այլ գնանք, մեր պատրաստած ճաշերը տանք նրանց, իսկ մենք գնանք Երուսաղեմ սուրբ քաղաքը եւ այնտեղ լինենք կատարյալ քրիստոնյաներ ավազանի մկրտության միջոցով, մանավանդ այն քրիստոնյաների ձեռքով, որոնց մասին դուք ասում եք, թե նրանց մեծ ցնծությամբ ընդունեց թագավորը, եւ ձեզ տեսիլքում նշան արվեց, թե այն հայոց ազգն էր, որ վիճակ ընկավ Թադեոսին, Բարդուղիմեոսին եւ սուրբ Գրիգորին»:

Մենք անսալով սրա խոսքերին, իջանք նրանց մոտ՝ ոչ մեկին ոչինչ չպատմելով: Թողեցինք մեր ամբողջ շարժական ու անշարժ գույքերը, եկանք Երուսաղեմ եւ Աստծուն աղաչեցինք, որպեսզի մենք հանդիպենք այն ազգին, որ տեսիլքում փառավոր էր: Եվ Աստված քե՛զ ցույց տվեց մեզ, եւ նույն նշանը տեսանք քեզ վրա: Այժմ աղաչում ենք քեզ, տուր մեզ Քրիստոսի մկրտությունը եւ մեզ դարձրու քո Աստծուն կատարյալ ծառաներ»:

Ես տեսա նրանց հոժարությունը, եւ թե մանավանդ Տիրոջից է իմ կոչումը, նրանց մկրտեցի Հորդանան սուրբ գետում հանուն Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու, եւ նրանց հաղորդեցի Աստվածորդու պատվական Մարմնով ու Արյունով: Մեզ ողջունեցին, քաղաքից դուրս եկան գնալու մեծ Հռոմ տեսնելու սուրբ առաքյալներ Պետրոսի ու Պողոսի գերեզմանները ի փառս Քրիստոսի»:

Նաեւ այս էր ասում նույն սքանչելի Հովհաննեսը, թե՝ «Ազգով հայ քառասուն տղամարդ, գնացին Սինա անապատը, այն լեռը, ուր Աստված երեւաց Մովսեսին եւ տվեց քարե տախտակները, որոնց վրա գրված էին տասը պատգամները, երկրպագելու Աստծուն եւ տեսնելու սուրբ վայրերը:

Լեռան ստորոտում մի վանք կար. ազգով հոռոմ, վարքով խստակրոն մարդիկ, այնտեղ օթեւանեցին: Եվ մինչ հայերը կամենում էին լեռը բարձրանալ, վանքի բնակիչները պատվիրեցին նրանց եւ ասացին. «Գիշերը այնտեղ մի՛ քնեք, որովհետեւ ովքեր այնտեղ գիշերում են, ահավոր արհավիրքներ են տեսնում, այլեւ

շատ մարդիկ կորստի են մատնվել»:

Իսկ նրանք համարձակորեն բարձրացան՝ առանց որեւէ ուտելիք իրենց հետ վերցնելու: Այնտեղ մի քանի օր ուշացան: Վանքի բնակիչները զարմացել էին, թե ինչ եղան, որովհետեւ իջնելու ուրիշ ճամփա չկար, համարում էին, թե արհավիրքից ոչնչացան:

Իսկ նրանք իրենց ուխտը կատարելուց հետո լեռնից իջան փառավորված ու հրաշալի կերպարանքով: Այժմ նրանք քառասուներկու հոգի էին: Վանքի բնակիչները զարմացած ջահերով ու լապտերներով ընդառաջ ելան նրանց ու մեծ հարգանքով տարան տեղավորեցին: Զարմանում էին, որովհետեւ երբ բարձրանում էին լեռը, քառասուն էին, իսկ երբ իջան, քառասուներկու են. միաժամանակ գիտեին, որ բացի նրանցից դեպի վեր ոչ ոք չի գնացել: Երբ սեղան գցեցին ճաշելու, երկու այն փառավոր տղամարդիկ, որոնք ավելացել էին քառասունի վրա, վեր կացան նրանց սպասավորելու սեղանի շուրջը եւ թույլ չէին տալիս վանքի մարդկանց՝ ծառայելու նրանց, այլ ասում էին. «Մենք սովորություն ունենք մեր եղբայրներին ինքներս սպասավորելու»:

Եվ երբ կերան ինչ որ անհրաժեշտ էր, նրանց ողջունեցին ու աներեւույթ եղան. դրանք էին Մովսեսն ու Եղիան: Վանքի բնակիչները մեծ ահով բռնվեցին. նրանց պատվում էին իբրեւ հրեշտակների, ու մեծ պատվով ճամփու դրին»:

Սրբասեր Հովհաննեսը իր համեստության պատճառով այս բանը պատմում էր ուրիշների անունից, որպեսզի չիմանան, թե ինքն էլ նրանց հետ էր:

Սրանից հետո նա շրջեց բազմաթիվ գավառներ ու քաղաքներ, հասավ Կողոնիա քաղաքը: Թուրքերից ու արաբներից շատերը գալիս էին նրա մոտ ու մկրտվում էին նրա սքանչելի վարքի ու բժշկության համար, որ նա անում էր:

Ապա պարսիկները նախանձեցին նրան, եւ Կողոնիա քաղաքի իշխանը բռնեց նրան ու մի քահանայի, չոր փայտ կուտակեց, նրանց դրեց մեջը, կրակ տվեց: Նրա հետ եղած քահանան լաց էր լինում, իսկ նա քաջալերում էր նրան ու ասում. «Մի՛ վախենա,

Աստված կարող է մեզ ազատել այս կրակից, ինչպես երեք մանուկներին»:

Եվ մինչդեռ բոցը բորբոքվում էր, իշխանի երեխան բերդի պարսպից ընկավ ու անվնաս վեր կացավ: Եվ երբ հարցրին, թե՝ ինչպե՞ս կենդանի մնացիր, նա պատասխանեց, թե՝ այն մարդը, որին գցեցիք կրակը, ինձ իր ձեռքերով պահեց եւ չթողեց, որ գետին ընկնեմ: Իշխանը անմիջապես մարդ ուղարկեց եւ հրամայեց կրակից նրանց հանել ու թույլ տալ ուր ուզում են, գնան:

Նա շրջեց բազմաթիվ գավառներ, գնաց Հռոմկլա հայոց մեծ կաթողիկոս տեր Կոստանդինի մոտ: Նա ուրախությամբ մեծ պատվով ընդունեց նրան եւ թույլ չտվեց որեւէ տեղ գնալու: Այնտեղ մնաց, մինչեւ փոխադրվեց Քրիստոսի մոտ եւ թաղվեց այնտեղ: Իր կյանքը ավարտեց ու հավատը պահեց, հասավ անթառամ պսակին ու անվախճան կյանքի: Նրա աղոթքը թող մեզ սատար լինի եւ մեղքերի թողություն տա, իսկ նրա հիշատակը բոլոր սրբերի հիշատակի հետ մեր Տեր Հիսուս Քրիստոսի համար լինի, Որին հավիտյան փառք:

ՊԱՐՍԻԿ ԶԻՆՎՈՐԻ ՏԵՍԻԼՔԸ ՑԱՂԱՑ ՔԱՐՈՒՄ*

Ուրբ Վարդանից հետո պարսկական զորքը վխտում էր ամեն տեղ. ոմանք արշավում էին փախստականների ետեւվից, ոմանք՝ բերդերի ու ամրոցների դեմ եւ ձգտում էին բնաջնջել, արմատախիլ անել հայ ժողովրդին: Ամեն մի հայ զինվորի դեմ սուր կար մերկացված. ուզում էին, որ բոլորը միաձայն ուրանան Քրիստոսին եւ ընդունեին արեգակի պաշտամունքը, հակառակ դեպքում մեռնեն անմիջապես: Այդ պատճառով էլ մեր Հայոց երկրի բոլոր քարքարուտները, խորաձորերը, հովիտներն ու բլուրները լցվեցին նահատակներով եւ կեսգիշերին փայլող աստղախմբերի նման թանձրախիտ էին երկրի երեսին: Այսպես էլ կարելի էր տեսնել մեր Սիսական աշխարհում, Վայոց ձոր գավառում, ուր հայոց զորքերից փախել-եկել էին եւ ուզում էին անցնել Արցախի ամուր աշխարհը: Նրանց հետապնդեց Աթաշխուդայի չարահնար պարսկական անհիծյալ զորքը: Հասնելով Վայոց ձոր գավառի մեջտեղը, Եղեգիս եւ Մոզան գետերի միջեւ գտնվող քարաժայռերով պատած բլրի մոտ, ուր դիմել էին փախստականները տեղի ամրության պատճառով, մեծ արյունահեղություն արեցին: Քրիստոսի անվան պատճառով կոտորեցին բազմաթիվ գեղեցիկ մարդկանց՝ հայոց ազնվական տոհմերից, որոնց վրա վերուստ զարմանալի հրաշքներ եղան: Իսկ մյուսներին հետապնդեցին եւ նրանց մի մասին հասնելով մի բերդաժայռի ստորոտում, նեղ ձորակի մեջ՝ այնտեղ կոտորեցին, սրանց գլխավորի անունը Մարտիրէ էր: Հենց այն տեղն էլ կոչվեց Անգեղաձոր: Եվ այնտեղից արշավելով վրա հասան երեք հարյուր մարդու Ոստինք եւ Արտաբույնք կոչված գյուղերի մոտի գետախառնման տեղում, որտեղ նրանց էլ խողխողեցին, որոնց վրա հետագայում տեղի բնակիչների կողմից եկեղեցի կառուցվեց: Եվ պարսիկներն այնտեղից մի փոքր անցան դեպի ձորաբերանը, որը ձախ կողմից դեպի վեր նայում է Ցաղաց քար կոչված սուրբ վանքին՝ կառուցված բարձրավանդակի վրա, երկու այն գյուղերի սահմանների միջեւ, որ վերը նշեցինք: Այնտեղ եւս կոտորեցին սեպուհ մարդկանց եւ ընտիր զորականների մեծ բազմություններ: Ապա եկան գյուղի հրապարակը, վրաններ խփեցին, կոտորածից հոգնած ու թուլացած՝ ուզեցին գիշերել:

Իսկ կեսգիշերին մի պարսիկ, որ զորքի դետքն էր, տեսավ երկինքը բացված եւ ուժեղ լույս սփռված սպանվածների վրա ու մի ոսկեղեն կառք խիստ բարձր՝ վրան նստած մի կին՝ թագավորական ծիրանի զգեստներով, հրեշտակների հսկայական զորախմբերով շրջապատված: Նա նայում էր կոտորածին, ողբագին լալիս ու գգվում ընկածներին մեկ առ մեկ: Եվ այն պարսիկը զարհուրելով կամեցավ իմաց տալ իրենց զորքին, բայց ոտքերն ու լեզուն կապվեցին: Ապա մեկը սրբերի զորախմբերից մոտեցավ նրան եւ նա հարցրեց՝ այդ ո՞վ է: Իսկ հրեշտակն ասաց. «Դա երկնային Թագավորի Մայրն է՝ որ իջել է նահատակների ու իր Որդու սիրելիների մոտ եւ ուզում է մեկ առ մեկ փառաբանել նրանց»: Այդ տեսարանը մնաց մինչեւ առավոտ ու աներեւութացավ:

Իսկ երբ լույսը բացվեց, զորքը կամեցավ այդտեղից հեռանալ, այն մարդուն գտան թուլացած, ընկած: Նրան հարցրին պատճառը, բայց նա ուրիշ բան չէր կարողանում պատասխանել, միայն մատով ցույց էր տալիս ու լեզվով ասում. «Մայր անդ այ, մայր անդ այ» (Մայր է այնտեղ, մայր է այնտեղ), որի համար էլ մինչեւ այժմ այն տեղի անունը Մարանդ է կոչվում: Եվ այն պարսիկը գնաց, սրբերի ոտքն ընկավ, բուժվելով ինքն էլ քրիստոնյա դարձավ ու իր կյանքի բոլոր օրերում ծառայում էր սրբերին: Հետո քրիստոնյաները գնալով նրան էլ ամփոփեցին սրբերի մեջ ու վրան մատուռ շինեցին:

*** [16] էջ 106-108**:



ՀԱՅՐ ԳՅՈՒՏԻ ՈՒ ՔՐԻՍՏՈՍԱՍԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՍԽԻ ԱՓԻ ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Պարսից թագավորը այնտեղից վերադառնում է իր երկիրը եւ որդու կարոտից սաստիկ հիվանդանում: Դարձյալ հանձնակատարներ է ուղարկում ու աղաչում պահանջել, ինչ որ պետք է: Եվ որդին պահանջում է շատ գանձեր ու արհեստավորներ, որ ավերված տեղերը նորոգի: Անմիջապես ուղարկվում են հազար մարդ՝ հինգ հարյուր քարագործ ու հինգ հարյուր փայտագործ: Տեղը փոխում են ժայռից վեր հարթում քարքարոտ տեղերը, շինում են երեք եկեղեցի՝ Սուրբ Երրորդության անունով: Եվ սրա համբավը տարածվում է ամբողջ աշխարհում: Գալիս են բազմաթիվ կրոնավորներ, լցվում Աստծու տունը: Երեկոյան դեմ սկսեցին ժամերգությունը. կեսգիշերին եկավ մի լուսավոր մարդ՝ խաչը ձեռքին, ու ասաց, «Հա՛յր, Երկնքի Թագավորը քեզ օծեց հայրապետ այս տանը, որ երկրորդ Երուսաղեմն է, քո բարձրավանդակ տեղն էլ՝ Գողգոթան. եւ նույն անցքերը, որ անցան Երուսաղեմի գլխով, պիտի անցնեն նաեւ այս տեղի վրայով. սրա բնակությունը շարունակ չարիքների մեջ է լինելու, եւ այստեղի կրոնավորները առավել շատ պիտի օրհնեն, քան ուրիշ աշխարհներինը: Դու վե՛ր կաց եւ օրհնի՛ր այդ եկեղեցին»: Այս ասաց ու ինքն աներեւութացավ: Իսկ առավոտյան սքողված հայ սուրբը բեմ ելավ ու օրհնեց սեղանը եւ տաճարը: Օծելիս հրեշտակների դասերը խորանի մեջ պատկառանքով գոչում էին օրհնության «ամեն»-ը, որից հավաքված մարդիկ զարհուրելով դուրս ելան: Եվ Աստված այսպես փառավորեց այն տեղը երանելի հայր Գյուտի եւ Քրիստոսասերի միջոցով: Այնտեղ հինգ հարյուր կրոնավորներ նշանակեցին, երկու

* **[16] էջ 116-117**:

հարյուրը վանքում, երեք հարյուրը՝ քարանձավներում եւ մենաստանավոր անտառներում, որոնք անտանելի ճգնությամբ ու անդադրում աղոթքներով հրեղեն սյան նման կանգնած էին երկրից երկինք: Իսկ նախանձոտ սատանան, չկարողանալով հանդուրժել այս ամենը, գրգռեց պարսից թագավորին չար նախանձով: Եվ սա վեր կացավ, հարյուր հիսուն հազար հեծյալներով եկավ-հասսյվ այդ սուրբ տեղը, սպանեց կրոնավորներից տասին, իսկ մյուսները փախան: Ինքը՝ հայր Գյուտը, բռնվեց, որին հանեցին ժայռի վրա ու վայր նետեցին, բայց Աստծու շնորհիվ չվնասվեց: Կամեցան նորից բռնել, բայց նրանցից ոմանք կուրացան, մյուսներն էլ մեռան: Եվ զորքն այս տեսնելով փախուստի դիմեց ու հեռացավ այնտեղից: Ապա մնացած սուրբ կրոնավորները հավաքվեցին եկեղեցում, ողբալով ու համբուրելով սպանվածներին՝ նրանց թաղեցին եկեղեցու արեւելյան կողմում, ուր գլխավոր դուռն է: Այն ժամանակ սուրբ Գյուտը կրոնավորներից ոմանց ուղարկեց Գողթն՝ եպիսկոպոս Անաստասի ու իր հարազատների մոտ՝ հրավիրելով տեսության: Նրանք, շատ ուրախանալով անսպասելի իրողությունից, եկան Գյուտի վանքը: Մայրը դեռ կենդանի էր, բայց կուրացած էր: Նա, որդու գրությունն ստանալով, դրեց աչքերի վրա, եւ աչքերը լուսավորվեցին, ու ինքը մեծապես շնորհակալ եղավ Աստծուց: Սուրբ հայրը կրոնավորների հետ եպիսկոպոսին դիմավորելով տարավ եկեղեցին եւ մեծ գոհությամբ նրա իրավասությանը հանձնեց այն:

IX Դ. ՄԱՀՏՈՑ ՍԵՎԱՆՅՈՒ ԿՈՂՄԻՑ

ՍԵՎԱՆԻ ԿՂԶՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Այդ ժամանակ Սեւանա կղզում հռչակված առաքինությամբ փայլում էր երանելի Մաշտոցը, որը Գրիգոր անունով եղիվարդեցի մի քահանայի որդին էր: Դեռ աշխարհիկ լինելով՝ Գրիգորը տեղափոխվել էր Սոթք գավառը եւ իբրեւ պանդուխտ ապրում էր այնտեղ: Նա Մաշտոցին աշակերտ էր տվել Մաքենոցաց վանքի սուրբ վանահայր Ստեփանոսի մոտ: Այնտեղ սա մտավորապես զարգանալով քահանա է ձեռնադրվում Տեր-Դավթի՝ Սյունյաց եպիսկոպոսի կողմից: Այնտեղից գնում է Արտավազդի Ապարանք անապատը, որտեղից էլ անցնում է Սեւանա կղզին: Բազում ճգնություններից հետո երազում հրաման է ստանում եկեղեցի կառուցել տասներկու առաքյալների անունով, ու միաբանություն հաստատել: Եվ դրա համար երազի մեջ, լճի վրայով նրա մոտ են գալիս տասներկու առաքյալները ու նշանակում եկեղեցու տեղը:

Ահա այդ երեւումից ու աստվածային ազդեցությունից մղված՝ մեծ տիկին Մարիամը՝ Վասակ Սյունու կինը, գալիս է սուրբ Մաշտոցի մոտ, բազում թախանձանքներով նրան համաձայնեցնում է, եւ ձեռնարկելով կառուցում են գեղեցկազարդ եկեղեցիները՝ մեկը սուրբ առաքյալների, մյուսը սուրբ Աստվածածնի անունով: Զարդարելով մեծամեծ սպասքներով՝ կանգնեցնում են Աստծու տունը եւ աստվածակիր մարդկանց բնակարանը հայոց երեք հարյուր քսաներեք թվականին, Մաշտոցը վանքի գործունեության սահմանները դրեց եւ այն պայծառացրեց երկնանման կարգ ու կանոնով: Դրա համբավից իշխանաց իշխան Աշոտը, միաբանվելով սուրբ ուխտին, գալիս է սուրբ վանահորը տեսության եւ. ընծայում

*[16] էջ 175-176:

է աստվածընկալ խաչի փրկական նշանը, սուրբ եկեղեցուն ժառանգություն է տալիս գյուղեր:

ՏԱԹԵՎԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻ ՄԵԾ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Հավաքված այդ բոլոր մարդիկ ձայն բարձրացնելով իրենց առաջնորդ էին պահանջում Հովհաննես փակակալին: Ամբողջ բազմությամբ հավանություն տալով՝ նրան մեծապատիվ փառքով ուղարկեցին հայոց Տեր-Գեւորգ կաթողիկոսի մոտ: Եվ նա ձեռնադրվելով, մեծաշուք պատվով վերադարձավ ու նստեց մեր Սիսական տան մետրոպոլիտության աթոռին: Այս երանելին տեսավ, որ եկեղեցին նեղ էր, անշուք ու երկար, ժամանակներից հնացած, երկրաշարժից էլ խարխլված: Եվ քանի որ անպատշաճ էր այնպիսի մեծ կենտրոնական աթոռանիստի սուրբ հայրապետանոցի աշխարհագումար ժողովարանի համար կաթողիկե եկեղեցուց զուրկ լինելը, այդ պատճառով ներքնապես շարունակ մտատանջվում էր եւ հնար չէր գտնում, որովհետեւ մի կողմից չէր համարձակվում քանդել առաջին սրբերի հիմնադրած տաճարը, իսկ մյուս կողմից՝ թվում էր, թե անմատչելի է անհրաժեշտ հսկայական ծախսի կատարումը: Ապա երազի մեջ հրեշտակից հրաման ստացավ՝ հինը մի կողմ թողնել եւ նոր եկեղեցու շինարարություն սկսել: Եվ այն տեսիլը կրկնվեց ու երրորդվեց, մինչեւ որ հրեշտակը լրիվ հավաստի դարձրեց իրողությունը, որ խաբուսիկ երեւույթ չկարծվեր. իր գավազանով էլ սահմանագծեց տեղը ու հրամայեց կառուցել գլխավոր առաքյալներ Վեմ-Պետրոսի եւ Պողոսի անունով: Գործի համար քաջալերեց՝ ասելով. «Դա մարդու կողմից չի կատարվում, այլ Տերն է ուզում Իր փառքի համար տուն կանգնեցնել»: Եպիսկոպոսը զարհուրեց եւ քնից արթնանալով երկար ժամանակ ապշած էր մնացել: Վեր կացավ, եկավ այն տեղը եւ միա-

*[16] էջ 205-210

բաններին ցույց տվեց հրեշտակի սահմանագծածը: Այս մասին տեղեկացրեց նաեւ Սյունյաց մեծ եւ գահերեց իշխան Աշոտին՝ Վասակի եղբորը, Փիլիպեի որդուն, Սմբատի, Սահակի ու Բաբկենի հորը, եւ նրա կին՝ երանելի խորահավատ Շուշանին, Գեղարքունիք գավառում բնակվող մյուս իշխանին՝ Գրիգոր Սուփանի որդի Գաբուռ Սահակին, եւ Բաղքի Ջագիկ կոչված մյուս իշխանին՝ Ջեվանշերի հորը: Նրանք ոգեւորվեցին ու աստվածային տնօրինությամբ շտապ կերպով այնտեղ բերվեցին եւ հիացած այն սքանչելի երազով՝ համաձայնությամբ ու համամտությամբ գործի անցան եւ ջանում էին արագ կերպով կատարել:

Եվ այսպես կառուցեց եկեղեցին՝ երկնակամարի նման գմբեթահարկ, որպես հրեշտակների զբոսարան եւ մարդկանց քավարան, տաշած վեմերով ու քերած քարերով, որմնադրական արհեստով հարմարեցված, տեսնողների աչքերը շլացնող: ...

Եվ երբ Տեր-Հովհաննես եպիսկոպոսն ավարտեց եկեղեցու մյուս կառույցների շինարարությունը, հետամուտ եղավ աշխարհախումբ հանդեսին՝ կատարելու մեծ եւ աստվածահաճո տաճարի նավակատիքը: Կանչեցին հայոց Սմբատ թագավորին՝ ուրիշ իշխանների հետ, եւ Տեր-Հովհաննես կաթողիկոսին, որը հաջորդեց Մաշտոց Սեւանցուն, հայոց մյուս եպիսկոպոսներով հանդերձ: Իր եպիսկոպոսներով, իշխաններով ու ազատներով հանդերձ եկավ եւ Վասպուրականի Գագիկը, որն էլ հետո թագավոր դարձավ: Եկավ նաեւ Աղվանքի կաթողիկոս Տեր-Սիմեոնը՝ իր աշխարհի եպիսկոպոսներով ու մեծամեծ իշխաններով: Ինչպես եւ հավաքվեցին Սյունյաց համազգի հայկազուն իշխանները, որոնց վերը հիշատակեցինք, այլեւ՝ մեր Սիսական աշխարհի ուրիշ վանականներ ու աշխարհականներ: Նրանց մեջ իսկությամբ կարելի էր տեսնել, ըստ Իր անսուտ հրամանի, Քրիստոսին՝ Հորով ու Ամենասուրբ Հոգով՝ երկնային բոլոր զորքերով հանդերձ, այլեւ առաքյալների ու մարգարեների գնդերով, հայրապետախումբ, մարգարեական եւ նահատակախումբ բազմություններով: Եվ գիշերային արարողության ժամանակ եպիսկոպոս Հովհաննեսը

նրանցից տեսիլքով տեսավ Պետրոսին՝ ձեռքին երկաթե բանալի, եւ Պողոսին՝ գրկում առաքելական գիրքը, որոնք մտնելով եկեղեցին՝ պատրաստում էին աթոռը երկնային Թագավորի համար եւ բանալին ու գիրքը տվեցին եպիսկոպոսին եւ ասացին. «Տերը հաճեցավ բնակվել սրա մեջ, եւ մենք Նրա համար հանգստյան տեղ ենք պատրաստում. հենց մեզ էլ հրամայվեց այստեղ մնալ մինչեւ մեր Թագավորի հաջորդ գալուստը. դա արքայության բանալին է, թող մնա այս եկեղեցու մեջ, որովհետեւ այստեղ է բացվելու դրախտի դուռը բոլոր այն մեղավորների համար, որոնք հավատով դիմելու են սրան, այս գիրքը եւս թող մնա սրա մեջ, որովհետեւ այստեղից բխելու են վարդապետական շնորհը եւ սուրբ հեղինակների ողջամիտ քարոզները, այստեղ կմնա մաքուր ու անխառն»:

Այս տեսնելով ու սթափվելով, մեծ գոհունակությամբ դեպի երկինք փառաբանություն առաքեց, բայց ոչ ոքի ոչինչ չհայտնեց: Ապա առավոտը բացվելիս հայրապետները եւ բոլոր եպիսկոպոսները զգեստավորվելով բեմ բարձրացան ու կատարելով հոգեւոր օրհնությունը՝ օծեցին աստվածաստեղծ յուղով: Եվ «Թող օրհնվի, թող օծվի» ասելիս ամբողջ բազմությունն այնքան բարձր էր արտասանում, որ լսողներին թվում էր, թե հրեղեն ամպերից ահարկու որոտ ու ճայթյուններ էին գալիս, երկիրը դղրդում էր, շրջակայքը՝ ցնցվում: Եվ ես այնպես եմ կարծում, թե լոկ մարդկային ձայները չէին, այլեւ դրանց խառնվում էին ոչ մարմնական ձայներ, որ այդպես ահարկու էին թվում: Եվ այսպես կատարելով օրհնությունը՝ ութ օր նավակատիք արեցին ի փառս Աստծու: Այնուհետեւ յուրաքանչյուրը վերադարձավ իր տեղը: Բայց թագավորը եւ Սյունյաց իշխանները, տեսնելով այդպիսի հանդեսը եւ այնքան չքնաղագույն շինվածքը, առավելապես սիրեցին ու պատվի արժանացրին տեղը, մեծ նվիրատվություններով փարթամացրին եւ շատ ընդարձակեցին նրա սահմանները:

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՅՈՒ ՄԱՍԻՆ*

Իսկ երանելի Ստեփանոսը եպիսկոպոսության պաշտոնում մնաց մեկ տարի, որը ոմանք ութ տարի են ասում: Նա ամառը շրջում էր իր իշխանության ընդարձակ վիճակի տասներկու գավառներում եւ քարոզում ճշմարիտ գաղափարները: Հոգեւոր ծառայության անհրաժեշտությամբ եղավ նաեւ Եղեգյաց ձորի բարեբեր գավառում, Մոզ ավանում, որտեղ բնակվում էր մի անբարոյական կին՝ համակված հիմար ախտով: Եպիսկոպոսը նրան մինչ այդ երեք անգամ զգուշացրել էր ըստ տիրոջ հրամանի, բայց նա չէր զղջացել: Այդ պատճառով այս անգամ սուրբը սաստիկ զայրանում է եւ մեծ պատժի վճիռ կայացնում: Սաստիկ շոգի պատճառով ինքը դուրս է գալիս գյուղից ու գնում Ավագ ակն կոչված քաղցրահամ աղբյուրի ակունքում զովանալու: Կարգադրում է իր վրանը խփել, ինքն էլ հանգստանալու մահիճը դնում է մի ուռենու վրա: Եվ առանձին ելնելով ու երկար ժամանակ աղոթելով՝ ննջում է այնտեղ: Իսկ անպատկառ կինը, ցանկության կատաղի բոցից դրդված, հետը վերցնում է իր սիրեկանին, գալիս է սպանելու սրբին, որ իրենք համարձակ գործեն: Մոտենալով ծառին՝ սիրեկանին բարձրացնում է վեր, սուրը տալիս ձեռքը, որ սրբին սպանի: Մարդը բարձրանալով տեսնում է, որ սուրբը քնած է, եւ շունչը բոցի նման վեր է ցոլանում ու ճախր առնելով կրկին իջնում է, մի հրեշտակ էլ, կանգնած նրա գլխավերեւում, թեւերով հով էր անում: Այդ տեսնելով՝ մարդը կարկամում է, թուլանում, նրա մարմնի ամբողջ կազմվածքը ցնցվում է. նա մեծ սոսկումով դողում է: Եվ այնքան է ուշքի գալիս, որ մի կերպ իջնում է ծառից ու պատմում կնոջը: Կինը նրան կրկին հորդորում է, պոռնկական քաղցր-մեղցր խոսքերով դրդում եւ քաջալերում է ու նորից ուղարկում: Եվ նա առաջինից ավելի հրաշափառ տեսարան է տեսնում ու դարձյալ սաստկապես թուլանում, անզգա մարմնով մեռելի նման ընկնում է ծառից: Ապա կինը, մարդուն տեսնելով խիստ պատուհասի մեջ ընկած, զղջալու փոխարեն առավել եւս չարանում է եւ, սրված սատանայից, վերցնում մերկացած սուրը ու բարձրանում ծառը, սուրը խփելով սրբի փորին՝ անբիծ արյունը թափում է փայտե մահճի վրա, ինչպես իր Տիրոջ արյունը մահվան փայտեղեն սարքի վրա՝ աստվածային օրենքների նկատմամբ տածված սաստիկ նախանձի պատճառով: Սա հիշեցնում է Հեղիասին ու Հովհաննեսին, որոնցից մեկը քառասուն օր փախստական եղավ Աքաաբի Հեզաբել կնոջից, իսկ մյուսը գլխատվեց Հերովդիադի դստեր կողմից: Ապա առավոտյան սպասավորներն իմանալով՝ շատ լաց ու կոծով վերցնում են սրբի մարմինը, տանում Սիոն կոչված լեռան վրայի մենաստանը, որն այն ժամանակ ճգնավոր մարդկանցով ծաղկում էր Եգիպտոսի Սինայից ու Սկյութայից ավելի: Արկազան գյուղի բնակիչները, դեպքի մասին իմանալով, իրենց տանուտերի հետ ընդառաջ են գալիս եւ սպասավորներին համոզում հանգուցյալին ամփոփել այն սենյակում, որը կառուցվել էր քաջ զորավար սուրբ Քրիստափորի անունով: Եվ տանում ու դնում են այն սենյակում: Իսկ Աստծու երանյալ Նու ճգնավորը, որը շատ տարիներ բնակվում էր Սիոն սուրբ լեռան վրա եւ ամբողջ վարքով հրեշտակացել էր, երազում տեսնում է, որ այն առավոտյան երկինքը բացվել էր ու հրեշտակների բազմությունը խմբերով դուրս էր գալիս սուրբ Ստեփանոսի առաջ եւ փարվելով նրա մաքուր ու արյունաներկ ոգուն՝ բարձրաձայն գոչում էին. «Բարի եւ հավատարիմ ծառա, ե՛կ, մտի՛ր քո Տիրոջ ուրախության մեջ»: Եվ այսպես մեծամեծ գովեստներով տարան, հասցրին Աստծու ահեղ աթոռին, որի վրա մարմնական տեսքով նստում էր Քրիստոսը՝ Աստծու Որդին:

Ապա սուրբը երկրպագելով մոտեցավ Աստծուն ու Նրան ցույց տվեց սպիտակ նափորտով փաթաթված արյամբ լի իր գոգը եւ ասաց. «Քոնն են վրեժխնդրությունը եւ արդարադատությունը»:

---

*[16] էջ 153-156

Եվ առաքյալներն ու հայրապետները նրան այնպես համբուրելով տարան եւ դրեցին իրենց կայանը՝ մինչեւ հատուցման օրը: Սուրբ Նուն այդ երազը տեսնելով ու հասկանալով, որ վնաս է լինելու, հավաքեց մենակյացների բազմությունը եւ լեռնից դիմեց սրբի մոտ ու մեծ ողբով եւ լաց ու կոծի աղաղակներով պատմեց երազի եւ գավառի նկատմամբ Աստծու բարկության գալու մասին: Նա խնդրեց զգույշ լինել եւ աղոթքներով հնարավոր դարձնել Աստծու հաշտությունը: Այնուհետեւ հանկարծակի վրա հասավ Տիրոջ պատուհասը: Թանձր խավարը քառասուն օր պատեց ամբողջ գավառը, սաստիկ երկրաշարժ ու դղրդյուն եղավ: Ահեղ տատանումներով ցնցվում էր գետինը՝ խորքերից մինչեւ մակերեսը, ու այստեղ ծովի ալիքների նման փլչում էր: Լեռները տապալվում էին, քարաժայռերը՝ հիմքից խախտվում, տներն ու ապարանքները դառնում էին բնակիչների գերեզմանները: Աղբյուրները խափանվում էին, գետերը՝ կորչում: Բոլոր տեղերը սասանմամբ երերում էին: Անդունդներից եւ օդի միջից լսվում էին մարդկային լեզվի ձայներ. «Վա՜յ ձոր, վա՜յ ձոր»: Տասը հազար մարդ ողջ-ողջ թաղվեցին գետնի տակ: Մարդիկ այդ թվի մեջ հաշվել էին՝ ում ճանաչում էին, իսկ անծանոթների հաշիվը ոչ ոք չգիտեր: Կատարվածի պատճառով գավառն էլ կոչվեց Վայոց ձոր:

Իսկ պատուհասի քառասուն օրից հետո վերեւից դադարեց Աստծու բարկությունը, եւ գավառի մնացած բնակիչները հավաքվելով՝ հրավիրեցին կաթողիկոսին ու վանականների ժողով գումարեցին. շատ օրեր եկեղեցական գիշերային արարողություն կատարեցին եւ սուրբ Ստեփանոսի աճյունը փոխադրեցին միաբանաբնակ Թանահատից վանքը, որի միաբաններն անդադար սպասավորություն էին կատարում՝ փափուկ կերակուրներից զերծ, այդ պատճառով էլ կոչվեցին թանահատներ: Գերեզմանի վրա մի փոքրիկ մատուռ շինեցին, որտեղ հետագայում՝ յոթ հարյուր քսանութ թվականին տեղի բնակիչները կառուցեցին գմբեթահարկ եկեղեցի՝ գեղեցիկ կառուցվածքով, եւ սրբի տապանը դրեցին նրա հիմքի մեջ:

Սուրբ Ստեփանոսի վախճանը հայոց թվականության հարյուր ութսունչորսի հրոտից ամսի տասնհինգին, այսինքն՝ հուլիսի 21-ին էր, սրբուհի Մարգարիտի եւ դիվահար Սիմեոնի հիշատակի օրը: Իսկ տիրասպան կինը ավելի ուշ սգավոր դարձավ, մերկանում եւ քարեր վերցրած ծեծում էր կուրծքը: Այնքան խփեց, որ արյան առվակ էր հոսում: Մեծ ողբով, դառն աղաղակով ճչում էր ու դատապարտում իր չարագործությունները: Եվ գալով վանքի դիմաց, դեպի արեւմուտք՝ ձորակի այն կողմում հողը փորելով, մինչեւ ստինքները թաղվեց. ամառ ու ձմեռ տոթակեզ եւ ցրտահար լինելով՝ վայում ու ողբում էր գիշեր-ցերեկ, խոստովանում էր մեղքերը: Այդպիսով շարժում է հայրապետի գութը, որը Տիրոջից ներում է խնդրում նրա համար: Մի օր էլ պատարագի ժամին սրբի տապանից լսվում է ահեղ գոչյուն. «Թող ներվեն քո մեղքերը, ո՛վ կին»: Եվ դա լսելով, բոլորը մեծ մարդասիրության ու անհիշաչար բարերարության համար փառք էին տալիս եւ գոհունակություն հայտնում Աստծուն: Իսկ կինը թեեւ ներում ստացավ, բայց տեղից դուրս չեկավ, այլ, մնալով այնտեղ, վախճանվեց եւ թաղվեց իր ապաշխարության փոսի մեջ. ու վանքի դիմաց այդպես էլ մնում է: Ուստի եւ այնպիսի մեծ մարդասիրության համար բոլոր էակներից անհատնում ու անվերջ փա՜ռք եւ գոհունակություն Աստծուն՝ այժմ եւ հավիտենապես. ամե՛ն:

ԹԱՄՈՒՐԻ ՁՈՐՔԻ ՁԱՐԴԸ ԱՍՏԾՈՒ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻՑ*

Թուրքմանի զորքերը Յուսուփ բռնավորի հրամանով կողոպտեցին մեր բոլոր քրիստոնյաներին եւ ունեցվածքից ինչ-որ մնաց եւ ամբողջ բազմությունը իբրեւ երաշխիք պատանդ հանձնեցին Խութի ամիրա Շարափ շեյխին: Եվ նա վերցրեց բռնությամբ անցկացրեց Եփրատ գետը եւ բերեց Հասգեղ գյուղը: Քրիստոնյաներն ապստամբելով՝ չէին կամենում ելնել Խութի ու Սասնո լեռը, այլ ուզում էին խույս տալով գնալ իրենց աշխարհը: Իսկ նա բռնությամբ եւ ծեծելով՝ Աստծու ողորմության խնամքից հանեց մեզ Խութի լեռն ի վեր: Եվ նույն օրը չաղաթայի զորքերը հարձակվեցին մեզ վրա: Իսկ ողորմածն Աստված, որ կատարում է իր երկյուղածների կամքը եւ լսում նրանց աղոթքներին, սուրբ Կարապետի եւ բոլոր սրբերի բարեխոսությամբ մեզ օգնության հասավ: Որովհետեւ Փիր Հասան անունով թուրքմանը բաժանվելով Ղարա Մահմատից, այն որ ժամանակ անց սպանեց նրան եւ Բայրամ անունով որդուն, իջնում էին սարից, իսկ մենք սարն էինք բարձրանում:

Նույն ժամանակ հանկարծակի դառն գույժ ու մահաբեր բոթ հասավ մեզ, թե Թամուրի զորքը առել է Հիզանքուրանի վերջապահ գունդը: Այստեղ տեսնել էր պետք քրիստոնյաների ամբողջ գնդի տարակուսանաց աղետը, որովհետեւ հայրը որդուն ուրացավ, եւ որդին հորը, մայրը՝ դստերը, եւ դուստրը մորը, եւ եղբայրը եղբորը, եւ սիրելին սիրելվույն: Եվ նրանց աղաղակի ձայնը երկինք էր բարձրանում: Ես եւս այնտեղ էի: Եվ սկսեցին լալով եւ ողբալով աղաչել Աստծուն՝ բարեխոսության կանչելով սուրբ Կարապետ Հովհաննեսին եւ սուրբ Ղազարի հրեշտակաբնակ ուխտի

* [5] էջ 10-11

առաքյալներին եւ Հակոբ Տյառնեղբոր Վանդրի սուրբ նշանին: Եվ նրանց մաղթանքը հասավ Աստծուն, որովհետեւ թուրքման Փիր Հասանը ցանկանում էր ելնել Ծովասար եւ գնալ Մարաթու բարձր լեռը: Նույն ժամանակ գալով հանդիպեցին իրար: Եվ նրանք Աստծուն ապավինած՝ Ղազարու սուրբ ուխտում մի եզ բերելով մեջտեղ՝ զոհեցին հանուն սուրբ առաքյալների, որ այնտեղ կար սուրբ Ավետարանիչ Ղուկաս եւ Անդրե առաքյալի մասունքներից: Նաեւ Պետրոս եւ Պողոս առաքյալների երկու աջը, որոնք Սեղբեստրոս հայրապետն ու Կոստանդիանոս թագավորը տվին Լուսավորչին,- այնտեղ են ամփոփված: Եվ սա մեզ հասած ավանդության համաձայն եղել է Ղազարու վանքնում:

Տեսնել էր պետք մենամարտիկ այրերի քաջությունը, որովհետեւ քաջասիրտները գոչում էին, թուլասիրտները՝ փախչում, անարիները՝ տկարանում, սաղավարտները փայլում էին, սուսերները՝ շողում, նիզակները՝ ջարդվում, քաջերը քաջերի դեմ մարտի բռնվեցին, եւ աղաղակի գոչյունը սրտաբեկ էր անում պատերազմը տեսնողներին: Այստեղ պետք էր տեսնել Աստծու ողորմությունը եւ հավատացյալների աղոթքի ու անհավատների հույսի պտուղը: Քանի որ Աստված հրեշտակների գնդերը նրանց օգնության ուղարկեց եւ երեք սպիկափայլ այր՝ սպիտակ ձի հեծած, գալիս էին օդից եւ իջնելով խառնվեցին թուրքմանի զորքին, որ մեզ պատմեց մեր հոգեւոր եղբայր Կարապետ կրոնավորը, որ հանդիպել էր տեսնողներին: Այն ժամանակ կոտրվելով խորտակվեց չաղաթայի զորությունը, որովհեւտեւ թուրքմանից Մարուֆ անունով մի մարդ՝ հարյուր հոգի սպանեց: Եվ մենք որդիներով ու դուստրերով պրծնելով նրանցից, սկսեցինք ուրախությամբ ու ցնծությամբ մեծաձայն օրհնել ու օրհնել Աստծուն՝ թագավորների Թագավորին, քրիստոնյաներին ողորմած Հիսուս Քրիստոսին, որ ազատեց արեւելյան գազաններից եւ մատուցեցինք գոհության ու օրհնության պատարագ Աստծուն ի բարձունս:

ԱՆԱՐԳՈՂԻ ԴԱՐՁԸ*

Նույն ժամանակները խաղաղություն եղավ Աստծու խնամածությամբ Վրաց եւ Աղվանից ամբողջ աշխարհին, եւ մեր ամբողջ աշխարհում շինարարություն եղավ, այնպես որ Արճիշից մինչեւ Այրարատյան գավառը ավերակներում մարդ չէր բնակվում, այլ՝ շեներում, ու թեեւ հարկապահանջությունը շատ էր, բայց խաղաղությունն անխռով էր: Եվ մարդիկ, որ չաղաթայի օրերին հավատն ուրացել էին, դարձի եկան. Որոտնա Բուրթելը, Եղեգյաց Տարսայիճը, Մակուի Սորշաթմիշը, Աղցի Աղիդանը: Եվ Արճեշում վանքը, որ առել էին տաճիկները, ետ տրվեց եկեղեցուն, եւ հույժ ուրախացան հավատացյալները:

Իսկ պիղծ Բելիարը, չկարողացավ հանդուրժել եկեղեցու հոգեւոր ուրախությունը, այլ պատերազմ հրահրեց: Որովհետեւ Թավրեզ քաղաքից Յուսուֆ անունով մի պարսիկ տղա՝ խիստ հայհոյիչ ու ատող Քրիստոսի անվան, վերցնում է շների պիղծ ոսկորները եւ գնալով քրիստոնյա երեխաների հետեւից, պիղծ ոսկորները գցում է քրիստոնյաների կարասը: Եվ Ստեփանոս անունով մի վարդապետ կար, մեծ Գրիգորի աշակերտներից, նա եւ բոլոր քրիստոնյաներն այնտեղից էին ջուր ըմպում: Եվ այդ գիշեր բացվում է երկնակամարը. Քրիստոս իջնում է երկնքից՝ նստած հրեղեն աթոռին, եւ տասներկու աշակերտները՝ Նրա հետ:

Եվ իջնում է այն տեղը, ուր ննջել էր Յուսուֆը, եւ Տերն ասում է. «Բռնեցեք այդ երիտասարդին եւ տարեք ցույց տվեք դրանց ու բոլոր իրենց հետեւորդների պիղծ առաջնորդի չարչարանաց տեղը, ապա սպանեցեք դրան, որպեսզի գնա դրանց տանջանքների նույն տեղը»: Եվ հրեշտակները վերցնելով նրան, տարան դժոխք, գեհենի բոցավառ հրի մեջ, որ այրում էր դրանց ազգի առաջնորդին ու նրա բոլոր հետեւողներին: Եվ նա շան կերպարանք ուներ, եւ կաղկանձյուն էր լսվում հնոցի հրի միջից, եւ պարանոցին շղթաներ կային: Եվ հրեշտակն ասում է. «Ահա՛ առաջնորդը քո, եւ ահա՛ քո ժողովուրդը»: Այնտեղից նրան հանեցին տարան, ցույց տվեցին երկնի արքայությունը եւ նրա վայելուչ գեղեցկությունը եւ բոլոր անդրանիկ հոգիների ուրախությունները եւ քրիստոնյաների բոլոր առաջնորդներին: Եվ հրեշտակն ասում է. «Տեսնո՞ւմ ես, ո՜վ մոլորյալ, Քրիստոսի՝ մեր Աստծու հավատացյալներին եւ կույս Մարիամ Աստվածածնին, տեսնո՞ւմ ես Հայոց Լուսավորչին՝ պսակված աստվածային փառքով. դու ինչո՞ւ ես Հայոց ազգին անարգում հայհոյելով: Հավատա խաչ բարձրացած Քրիստոսին ու գնա, մկրտվիր հանուն Ամենասուրբ Երրորդության, որ չգնաս տանջանքների այն տեղը, որ տեսար, այլ փառավորության այս տեղը, որի մեջ ես այժմ, որ եւ Քրիստոս Ինքը Իր առաքյալներով երկնքից իջել ու եկել է քեզ մոտ»:

Եվ այնտեղից դառնալով բերին Քրիստոսի սոսկալի ու հրեղեն աթոռի մոտ, եւ տեսնելով Քրիստոսին՝ ահով գոչում էր ինչպես Թովման. «Տեր իմ եւ Աստված իմ, մեղա Քեզ, խոստովանում եւ հավատում եմ Քեզ՝ Ստեղծող եւ Արարիչ, Քո Ամենակարող Հորը եւ փառակից Ճշմարիտ Աստված Հոգուն, միայն ազատիր ինձ իմ մեղքերից, որ չգնամ մեր չար առաջնորդի տանջանքների վայրը»:

Եվ հանկարծակի երազը խափանվեց, եւ գոչման ահագին ձայնից նրա ընտանիքը՝ մայրն ու եղբայրները, լսում էին դավանության բանաձեւը, որ ելնում էր նրա բերանից: Եվ զարհուրած ապուշ կտրեցին: Եվ երեք օր ու երեք գիշեր չէին կարողանում նրան արթնացնել: Եվ հանկարծակի աթոռը երկինք բարձրացավ, եւ նա արթնանալով գիշերային երազի քնից, լցված Սուրբ Հոգու շնորհքով, սկսեց պարսից լեզվով դավանել Քրիստոսին Աստված եւ Տեր ամենայնի: Քիչ օրեր անց գնալով Լալուկ մականունով Ստեփանոս վարդապետի մոտ, պատմեց նրան ահագին տեսիլը եւ մկրտվելով նրանից՝ դարձավ քրիստոնյա:

*** [5] էջ 35-36**

ՀԱՅՈՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԷՋՄԻԱԾՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Մեր 890 (1441) թվականին սուրբ Հոգու ազդմամբ եւ բարերար Աստծու հրաշագործությամբ բոլոր հայերի միաբանությամբ սուրբ էջմիածնում կաթողիկոս կարգեցին Աստծու սքանչելի եւ փառավոր այր Տեր Կիրակոսին: Պատրիարք եւ հայրապետ ամենայն Հայոց:

Բոլորը միաբանությամբ եւ Սուրբ Հոգու ընտրությամբ գիշերային տեսիլքով եւ երազի անուրջներով, բովանդակ հայկական գավառների հավանությամբ, բոլոր սրբերի աղոթքով ու բարեխոսությամբ, Թադեոսի ու Բարդուղիմեոսի եւ մեր Լուսավորիչ սուրբ Գրիգորի առաքելական աթոռին հայրապետ ու կաթողիկոս դրեցինք տեր-Կիրակոս Վիրապեցուն, որ սուրբ եւ ընտրյալ այր է, որովհետեւ 846 (1397) թվականից, երբ քահանա ձեռնադրվեց սուրբ Թադեոս Առաքյալի տեր-Պետրոս եպիսկոպոսից ու Քաջբերունյաց Խառաբաստի տեր-Զաքար եպիսկոպոսից, մինչեւ 800 (1441) թվականը ոչ միս էր ճաշակել, ոչ գինի էր ըմպել եւ ոչ էլ անասունների կիթ կերել, գովելի եւ առաքինի, սրբաբերան, հեզ ու խոնարհ, ոչ նզովք, ոչ անեծք բերանից չէր ելել, լինելով Քաջբերունյաց գավառից, Խառաբաստ գյուղից, Սարգիս եւ Վարդան մեծ վարժապետների աշակերտներից, եւ վերջին ժամանակներս ադամորդիների մեջ չկար նրանց նման սուրբ եւ առաքելական կանոնների քարոզող ու հետեւող: Երեսուներկու տարի առաջ ելնելով իր գավառից, եկավ բնակվեց Վիրապում, որ սուրբ ուխտ էր եւ Լուսավորչի կենդանաթաղ գերեզմանը, այնտեղից հեռանալով առանձնացել էր Վանստանի անապատում, իսկ այժմ ընտրությամբ ու Հոգի Աստծու կոչմամբ դրեցինք հայրապետական աստիճանին, համաձայն Սողոմոն Իմաստունի խոսքի, թե՝ «Փառքն ու պատիվները իմաստուններն են ժառանգում»:

*[5] էջ 62-74

Այժմ ասենք, թե ի՞նչ պատճառով կաթողիկոս հաստատվեց Վաղարշապատ քաղաքում, սուրբ էջմիածնում, որ կոչվում է Վարդգես եւ Նոր Քաղաք:

Առաջին պատճառն է, որ կիլիկեցոց առաջնորդներից ապականվեցին մեր սուրբ հայրերի կարգերն ու կանոնները. մնաց նրանց կաթողիկոսությունը 147 տարի, սահմանվելով կիլիկեցոց առաջին թագավորներից: Մանավանդ որ մնացել էր Կոստանդին եւ Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսների աղթարմության խմորը: Լինելով քաղկեդոնական, նրանք գարշ եւ վավաշոտ բղջախոհությամբ կարգից ընկած կաթողիկոսների ու եպիսկոպոսների էին կոչում առաքելական աստիճանի:

Երկրորդ պատճառ, որ կենաց առաջնորդին առանց խղճմտանքի սպանում էին. 841 (1392) թվականից մինչեւ այժմ վեց կաթողիկոս դրեցին եւ վեցին եւս մահաթույն խմեցրին ու այս կյանքից հանեցին, կեղծ լուրեր տարածելով նրանց մասին. ավելի լավ է իմ բերանը նրանց գործերից չխոսի:

Երրորդ, որովհետեւ նրանց նվիրակ եւ խորհրդատու եպիսկոպոսները շատերին գայթակղությամբ Քրիստոսի հավատքից հանեցին ու անհավատ դարձրին: Ինչպես պարզ տեսանելի է Նիկիտա քաղաքում, ուր Հակոբ անունով մի տանուտերի իր ընտանիքով մեղադրում են, թե՝ «Քսան ֆլորի է կորել, եւ դու ես այն վերցրել»: Եվ երբ երդվեցին, բայց նրանց չհավատացին: Եվ գնալով իրենց կաթողիկոսի մոտ, անիծեցին, եւ նա բարկանալով գնաց անօրենների մոտ եւ հավատն ուրացավ: Իսկ մահվան ժամին աղաղակում էր ու ասում. «Տեր Հիսուս, իմ հավատը տեր-Կոստանդին կաթողիկոսից եւ կատաղած պիղծ Ղազար նվիրակից պահանջիր»:

Չորրորդ. անառակությամբ, հարբեցողությամբ ու արատավոր փառքով էին ապրում, եւ իրենք Հայոց կապող ու արձակող էին նստում:

Հինգերորդ. աստվածային մեռոնի փոխարեն հասարակ ձիթապտղի յուղով Աստված Հոգին Հայոց ազգի միջից վերացրին:

Վեցերորդ. ամբողջ Հայոց ազգը սիմոնական եւ բոլոր ազգերի նախատինք դարձրին, որովհետեւ Սուրբ Հոգու շնորհները արծաթով էին բաշխում, եւ դա օրենք էին համարում: Որի մասին առաքյալների Տերը սովորեցրեց՝ «Ձրի առեք եւ ձրի տվեք», իսկ Պետրոս առաքյալը սաստեց կախարդ Սիմոնին՝ «Քո արծաթը քեզ կորուստ կբերի, ինչքանո՞վ ես ստանում Սուրբ Հոգու շնորհները»: Եվ սա տեսնելով ու լսելով ամեն ազգի քրիստոնյաները մեզ խիստ նախատում էին: Հակոբիկների ուղղադավան ազգը եւ մեր կաթողիկոսից էր ստանում ձեռնադրություն, եւ գայթակղվեցին, մեզնից հեռանալով Եգիպտոս, կաթողիկոսական իշխանություն ընդունեցին խպտի ազգից:

Յոթերորդ. մեկ վիճակի վրա երեք-չորս եպիսկոպոս էին ձեռնադրում: Իսկ նրանք հարձակվելով միմյանց վրա, անօրեններին ու անհավատներին եւ սուտ քրիստոնյաներին բարեկամ դարձած գայթակղությամբ մեր աշխարհը կործանեցին, ինչպես հայտնի է իմաստուններին:

Ութերորդ. անխրատներին ու անկարգներին էին ձեռնադրում՝ հարստության տեր լինելով, եւ աղքատներին քամահրում էին: Մեկ եպիսկոպոսից 1500 ֆլորի վերցրեցին եւ նոր միայն այդ կարգը տվեցին նրան: Իսկ նրանք, որ չէին կարող դրամ տալ եպիսկոպոսական կարգը գրավով էին ստանում:

Իններորդ. նզովքներով ու բանադրության կապանքներով մեր աշխարհը լցրին՝ կաթողիկոսը եպիսկոպոսներին, եպիսկոպոսը քահանաներին, քահանան ժողովրդին, որ օրհնության աղբյուր Քրիստոս Աստված խաչի վրա չարչարվելով ու մահանալով ազատեց Ադամի անեծքներից եւ Մովսեսի օրենքների անեծքից, նրանք արծաթասիրության պատճառով վերստին նորոգեցին Նախաստեղծի անեծքը եւ նոր դժոխք պատրաստեցին ամբողջ հայկազյան ազգի համար: Որի մասին մեր Լուսավորիչը եւ քաջ սպառազեն Աթանասիոսն ասում են կանոնի գրքում. «Ով մարդու անիծի կամ նզովի՝ քահանայական կարգից դուրս է եւ ինքն իրեն դարձնում է Քրիստոսից նզովված ու բաժան»:

Տասներորդ. ինչպես հին Իսրայելը տաճարին ապավինելով հրաժարվեց Մովսեսի աստվածադիր օրենքից, տաճարը քանդվեց եւ հիմքից տապալվեց, նույնպես եւ կիլիկեցոց տունը նրանց նման եղավ. թողին Քրիստոսի օրենքը եւ Լուսավորչի սահմանած կանոնը: Եվ Լուսավորչի աջով էին երդվում, երբ չէին ճանաչում եւ չգիտեին Լուսավորչի աջը:

Որովհետեւ ամբողջ Հայոց երկիրը ապականվեց նրանց գործերից: Որովհետեւ նրանցից շատերը բանադրանքով ու բռնությամբ, առանց ապաշխարելու գերեզման մտան եւ անեծքները իրավ թե անիրավ, մնացին նրանց վրա: Եվ սա էր եղծված ու ջնջված գիրը, որ սուրբ Սահակը տեսավ գիշերային տեսիլքով:

Տասնմեկերորդ. հասունացավ թորգոմյան ազգի փրկության ժամանակը: Որովհետեւ ինչպես ասաց սուրբ Ներսեսը՝ հոգեւոր եւ մարմնավոր փարթամության բոլոր շնորհները Հայոց ազգի մեջ պակասել են, եւ բարեպաշտության շատ քիչ նշույլներ կան Վարագի ստորոտում, հարավակողմը: Եվ այնտեղից ելնելով, ոմանք գնում են դեպի հյուսիս, եւ մի փոքր կնորոգվի ուղղափառությամբ արամյան տառապյալ ազգը՝ մինչեւ անապատի պիղծի գալը: Եվ օրենքներն ու կանոնները, որ քանդված ու խախտված կլինեն անխորհուրդ առաջնորդներից, նրանց միաբանությամբ վերստին հաստատություն ու նորոգում կլինի:

Տասներկուերորդ, կատարվեց Աստծու այր Սահակ Պարթեւի մարգարեությունն ու տեսիլը, որ տեսավ Վաղարշապատ քաղաքում. ամպանման մի չորեքկուսի բեմ էր հաստատված, եւ նրա բարձրությունը երկինքն էր հասնում, եւ բեմի վրա՝ մի ոսկի սկուտեղ, եւ սկոսոեղի մեջ թզաչափ մագաղաթ կար, որ ծածկված էր բարակ կտավով, եւ նրա մեջ շատ բարձր ոսկի սեղան, եւ սեղանի վրա՝ մի հաց եւ մի ողկույզ խաղող, եւ յոթ տակ բեհեզով էր ծածկած, եւ բեմի վրա՝ լուսեղեն կամար, եւ կամարի վրա լուսեղեն խաչ էր կանգնեցրած, եւ բեմի վրա, սեղանին մոտիկ՝ կանաչտե-

րեւ ու պտղալից ձիթենի, եւ երեք ճյուղ՝ կիսով վայր խոնարհված՝ միատեսակ հավասարաչափ պտղով ու տերեւով, վտիտ եւ թառամած, եւ նման չէին մյուսներին: Եվ սեղանի ձախ կողմը ծովագույն սառցանման աթոռ կար, եւ աթոռի վրա արծաթյա սկուտեղ կար, մեջը՝ բեհեզյա ծալած մի նափորտ, եւ նափորտի վրա՝ մի գունդ ոսկի՝ մուգ կտավով ծածկած: Եվ սեղանի շուրջը՝ մաքուր մանուկներ եւ սակավ՝ կանանցից, բոլորը դեմքով սեղանին էին նայում, եւ փոխվեցին, դարձան երիտասարդի նման: Եվ սեղանը շարժվեց, եւ բեմը՝ ամեն ինչով հանդերձ, եւ ելավ երկինք, եւ ես զարմացած էի ու հիացած տեսիլից: Եվ երկնքից լուսապայծառ մի այր առաքվեց եւ գոտեպնդեց ինձ եւ ասում է. «Մի երկնչիր, այլ արիացիր եւ հիշիր ինչ որ ասում եմ քեզ. «Ամպեղեն չորեքկուսի բեմը չորսծագյան տիեզերքի ճշմարիտ հավատն է, որովհետեւ Քրիստոս ամպով բարձրացավ երկինք եւ ամպով է գալու դատաստանի: Եվ ոսկի սեղանը՝ ընդելուզված թանկագին ակներով սուրբ Երրորդությունն է, եւ ակունքը՝ բոլոր սրբերը, համախմբված Քրիստոսի շուրջը: Հացն ու ողկույզը Քրիստոսի Մարմինն ու Արյունն են, բեհեզյա յոթ ծածկույթը՝ սուրբ Հոգու յոթնարփյան շնորհքը, եւ հանդարտ հողմը, որ կտավներից մի ծալք բացեց, Աստծու գաղտնի գիտության հայտնի դառնալն է: Ոսկին Աստծու պատվականությունն է, իսկ թզաչափ տետրը (վերեւում՝ մագաղաթ), յոթ տող ոսկին Գրիգոր Լուսավորիչն է՝ մինչեւ սուրբ Սահակ, իսկ եղծված ու ջնջված գիրը, որի հետքը չէր երեւում, կաթողիկոսներն էին, որ Սահակից հետո նստեցին Լուսավորչի աթոռին՝ եղծված ու ջնջված եւ կյանքի մատյանից, որովհետեւ անեծքով ու բանադրանքով լցրին աշխարհս: Քանի որ ով անեծք է սերմանում անտեղի՝ Քրիստոսից լսելու է անեծք, թե՝ «Գնացեք Ինձնից, նզովյալներ, անշեջ հրի մեջ»:

Եվ որ Հայոց ազգը ամբողջովին ջնջված ու եղծված գրի մեջ մնավ այն օրից, երբ կաթողիկոսությունն էջմիածնից ելավ, իսկ այժմ Արարիչն Աստված ողորմեց եւ վերստին հաստատեց Գրիգոր Պարթեւի աթոռը եւ սքանչելի հրաշքով ի հայտ բերեց խաչակրոն եւ խարազանազգեստ ճգնավոր տեր-Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսին: Եվ սա էր տողուկես ոսկին, որ հեռու էր եղծված ու ջնջված գրից, եւ գրված մի տող ոսկին եւ կես կարմիրը, որ էջմիածնում կաթողիկոս նստեց, մտանք ոսկեգրի մեջ եւ ելանք եղծված գրից ու ջնջված տառից: Եվ ամբողջ անեծքն ու նզովքը, որ կար ազգիս վրա անխոհեմ առաջնորդներից ու տգետ կարգավորներից՝ փոխվեց օրհնության:

Բայց բոլորս աղաչենք մարդասեր Աստծուն, որ պահի սուրբ աթոռս եւ սրա մանուկներին անփորձ ու անսասան կյանքով՝ Բելիարի հանկարծահաս որոգայթներից, որովհետեւ մանուկները սկիզբ դրին ագահության ու գողության, իսկ հոգեւոր տերը՝ կամապաշտության:

Եվ մի ամբողջ տարի սուրբ էջմիածնիս դռանը դեգերեցի՝ աշակերտներով ու վարդապետներով եւ իմ ասած պատճառներով թողի փախա:

Այս եւս պետք է գիտենալ, թե ինչու նպատակադրվեցինք վերականգնել էջմիածինը եւ հայկազյան սեռի կաթողիկոսությունը. քանի որ չկար մեզ թագավորության հրաման եւ ոչ իշխաններ, այլ նվազել էինք բոլոր ադամորդիներից ավելի:

865 (1416) թվականին Թավրիզի բռնակալը գազանաբար գնաց վրաց Ախլցխա քաղաքի վրա. գրավեց քաղաքը եւ մեծամեծներին կոտորեց, կանանց ու որդիներին գերեց՝ ավելի քան 6000 հոգի: Եվ աշխարհը լցվեց լացուկոծով: Եվ բոլոր ազգերը հուսահատության մատնվեցին, թե Աստված ինչո՞ւ է իր հավատացյալներին հանձնում անհավատների ձեռքը:

Եվ եկեղեցու մի կողպեք՝ խաչը վրան, առանք նրանցից եւ ես ասում եմ. «Սա էջմիածնին է պատշաճ եւ ոչ այլ եկեղեցիների, եւ Աստված ինձ մահ չտա՝ մինչեւ բացված տեսնեմ էջմիածնի դուռը»:

Ես այն օրերին տեսա, որ մի բահ եկավ կանգնեց իմ առջեւ, սուր ծայրը գետնին, իսկ փայտը դեպի վեր բարձրացած: Եվ սկսեց գնալ դեպի Այրարատյան գավառը, եւ հասավ մի եկեղեցու

դուռը եւ կանգնեց: Ես վերացրի եղբայրների բազմությունը, օդով գնացինք բահի հետեւից, մտնելով ժամատուն՝ կանգնեցինք բահի վրա: Եվ չգիտեինք տեսիլի պատճառը՝ մինչեւ էջմիածնի օրհնության եւ կաթողիկոս ձեռնադրելու օրը: Որովհետեւ նույն օրը մի բահ վերցնելով ձեռքս, առաջին շենքի կառուցման հիմքը ես դրեցի իմ եղբայրների հետ: Եվ եղբայրներից մեկն ասաց. «Ահա կատարվեց քո երազը»: Եվ ես գոհացա Աստծուց, փառք տվի Նրան ի բարձունս: Սա առաջին պատճառն է:

Եվ երկրորդ պատճառը. Սսո Տեր-Կոստանդին կաթողիկոսը գնաց առ Աստված եւ Գրիգոր անունով մի եպիսկոպոսի դնում են կաթողիկոս: Եվ նա նույն օրերին հինգ նոր եպիսկոպոս է ձեռնադրում: Եվ կանչում են մի հարբեցող քահանայի, որը պատարագում է Քրիստոսին: Նորընծա կաթողիկոսը չի կարողանում, որովհետեւ անմիտ անուղղելիների էր դրել իր վրա: Եվ ներքին կողմերից չորս եպիսկոպոս մեզ եւ բոլոր արեւելյան վարդապետներին ու եպիսկոպոսներին ուղղված ողջույնի նամակ եւ մեղադրություն են ուղարկում ինձ, թե խոտան ու անպիտան եղանք բոլոր ազգերի մեջ: Եվ ես սկսեցի ողջույնի նամակներ ուղարկել մեր ամբողջ ազգին, որպեսզի բոլորը գան միաբանությամբ օրհնելու էջմիածինը եւ ձեռնադրելու անմենայն հայկազյան սեռի կաթողիկոս: Ու մինչդեռ նամակը մոտս էր, մի կրոնավոր եկավ ինձ մոտ, եւ հարցնում եմ. «Որտեղի՞ց ես գալիս»,- եւ նա ասում է. «էջմիածնից»: Եվ գոհանալով փառք տվի Աստծուն, քանի որ վաղուց չէի տեսել էջմիածնից ինձ մոտ եկած որեւէ մեկի: Եվ նրան տվի ողջույնի նամակը՝ տարածելու բոլորի մեջ:

Նույն օրերին երկու հոգի եկան ինձ մոտ ու երկու տեսիլ պատմեցին: Մեկն ասում է. «Աղեղի նման ծիածանը ելավ արեւելքից հյուսիս-արեւմուտք, եւ հյուսիսից՝ հարավ: Եվ լուսավորելով՝ պայծառացավ ամբողջ աշխարհը, եւ ձայն հնչեց, թե սկիզբ եղավ ազգիս նորոգության»:

Իսկ մյուսն ասում է. «էջմիածնի բեմին նստած էիր, եւ գոգդ վարդով էր լցված, եւ ամբողջ հայ ազգը եկավ: Նրանք վարդերից

վերցրին, եւ վարդը չպակասեց»:

Եվ ես ասում եմ. «Ճշմարի՞տ, մեռոնն է այն, որ տարածվել է ամբողջ ազգիս մեջ»: Այս էր հաստատությունը նորոգելու երկրորդ պատճառը:

Եվ երրորդ պատճառը. մի տարի հետո Արարատյան կողմից եկավ պատասխան՝ ողջույնի նամակ Հերմոնի վանքի մեծ վարդապետ Հովհաննեսից՝ շտապ եւ առանց դանդաղելու եպիսկոպոսով ու վարդապետներով գալ բարի եւ օգտակար խորհրդի, որպեսզի հապաղելիս սատանան բարի գործը չխափանի: Նաեւ Այրարատյան Յաղուբ բեկ կոչված բռնապետից եկավ ավետյաց նամակ՝ «Շտապ, առանց ահ ու երկյուղի եկեք իրագործելու ձեր խնդիրը»: Եվ այս բռնակալը եղավ մի Կյուրոս պարսիկ, որ հրեաների Սալմանասար իշխանի միջոցով նորոգեց Երուսաղեմը, իսկ հետո Արտաշես Զորաբաբելի միջոցով, որ շինվեց 46 թվականին, իսկ սա բազում տարիների ավերածը ցանկացավ նորոգել Հոգի Աստծու ազդումով եւ թող բազում բարիքներ շնորհի Տեր Աստված նրան այս մարմնավոր աշխարհում:

Եվ այս նամակի գալով՝ նույն գիշերը չորս փունջ ծաղիկ՝ երկուսը վարդ եւ երկուսը մանուշակ, բերին դրեցին մեր ձեռքերը, երկուսն իմ ձեռքը եւ երկուսը՝ իմ հարազատ Կարապետ վարդապետի: Եվ զարթնելով ասում ենք. «Արի նշանը տեսնենք, թե ինչ բարի բան է լինելու»: Եվ երբ առավոտը բացվեց, մեզ մոտ եկավ մի այր՝ առավոտյան ավետիս տալու, թե Կիրակոս վարդապետը եւ Գաբրիել եպիսկոպոսը եւ Զաքարե կրոնավորը եկան Աստվածածնի սուրբ ուխտ: Եվ մարդ ուղարկելով կանչեցինք նրանց Արճեշ քաղաք եւ մեծ գոհությամբ ու աննկարագրելի ուրախությամբ օրհնեցինք Քրիստոսին, որովհետեւ վաղուց ի վեր կարոտ էինք ցանկալի եղբայրներին:

Չորրորդ պատճառը եւ հայտնության հրաշքը. քանի որ այս օրերին, որ սպասվում էր մեզ, ոմն Ստեփանոս ճգնավոր եւ մենակյաց Աղթամարի կողմից գալիս էր ինձ մոտ տրտնջալով, թե ինչու Աղթամար չեն գալիս հնազանդվելու նրանց առաջնորդ

տեր-Զաքարիա կաթողիկոսին: Եվ գնալով ննջում է սուրբ Ստեփանոս Նախավկայի եկեղեցու դռանը. Աղի գյուղում: Գիշերով գալիս են սպիտակազգեստներ, եւ Լուսավորիչ Գրիգորը իր աջը դնում է նրա գլխին ու ասում. «Տրտնջո՞ւմ ես վարդապետներից, որ գալիս են, նորոգելու սուրբ էջմիածինը՝ Աստծո Միածին Որդու անվան փառքի տաճարը»: Եվ նա ինձ մոտ գալով՝ մեղա՜ ասաց Աստծուն եւ նրան վերցնելով՝ բերկրալից ուրախությամբ գնացինք սուրբ էջմիածին:

Հինգերորդ պատճառը եւս սքանչելի հայտնություն էր այդ օրը, երբ մենք ելնելու էինք Մեծոփա վանքի սուրբ ուխտից՝ վարդապետներով, եպիսկոպոսներով ու քահանաներով, եկավ մի բարեպաշտ ու երկյուղած մարդ եւ ասում է. «Այս գիշեր տեսա շատ զորքերի անթիվ ու անհամար բազմություն՝ բոլորը սպառազինված կարմրով, կանաչով եւ սպիտակով»: Ես ասում եմ. «Ի՞նչ զորք են սրանք»: Նրանք պատասխանում են. «էջմիածնի զորքն ենք, եկել ենք վարդապետների խնդրով»: Եվ հանկարծակի առնելով վարդապետներին ու քահանաներին վերեւ թռանք օդով, իսկույն հասանք էջմիածին՝ Վաղարշապատ քաղաքը»:

Եվ վերցնելով սուրբ Ավետարանը՝ վիճակ գցեցինք եղբայրների ամբողջ բազմությամբ: Ավետարանն ասում է. «Հիսուս դարձավ Իր գավառը»: Նորից վիճակ գցեցինք, Ավետարանն ասում է. «Այս աշխարհում նեղություն կտեսնենք, բայց քաջալերվեցեք, որովհետեւ Ես հաղթեցի աշխարհին»: Եվ դարձյալ երրորդ անգամ վերցրինք Ավետարանը, որ ասում է. «Հիսուս դարձավ Իր գավառը»: Եվ վերստին վերցրինք նիկիական եփուտը, ասում է. «Այդ ճանապարհը բարի է, եւ Տեր Աստված Հիսուս Քրիստոս կկատարի ձեր խնդրանքը»:

Ապա մեծ ուրախությամբ ու աներկբա հույսով գնացինք ամենալից եւ օրհնյալ Դարոնք գավառը եւ Մասյացոտն՝ Ակոռի: Եվ այնտեղից մտանք Լուսավորչի կենդանաթաղ գերեզմանը՝ սուրբ Վիրապ, իսկ այնտեղից՝ սուրբ Գեղարդին ու Քրիստոսի մարդեղության սկզբնատիպ պատկերին երկրպագելու: Այնուհետեւ հանդիպեցինք մեր մեծ վարդապետին եւ նրան վերցնելով եկանք Երեւան գյուղաքաղաքը:

Այստեղ տեսնել էր պետք մեր ամբողջ ազգի ուրախությունն ու ցնծությունը. զանգակների փողն էր հնչում, երիտասարդները գոչում էին, ծերերն աղաղակում էին եւ ցնծությամբ օրհնում Աստծուն, մանուկները խայտում էին, կանայք երկրպագությամբ ու լալով բոլորին զարհուրանք էին պատճառում, իսկ անօրենները նայելով զարմանում էին: Եվ ինչպես Փրկչի՝ Երուսաղեմ սուրբ քաղաքը գալու օրը մեծ ուրախությամբ ընդառաջ եկան, նույնպես այսօր եղավ հայերիս համար, որովհետեւ վաղուց անտերունչ էինք մնացել եւ չէինք տեսել հավաքված վարդապետների ու եպիսկոպոսների այսպիսի միաբանություն: Եվ մեծամեծներն ու փոքրերը, հոգեւորականներն ու աշխարհականները մեզ ու մեր ժողովը սիրով ընդունեցին եւ մեր բոլոր եղբայրներին ողջունեցին որպես առաքյալների ու Աստծու հրեշտակների:

Իսկ մյուս օրը Աղուպ բեկ կոչված բռնապետից հրաման եկավ, եւ գնացինք նրա մոտ, եւ նա որպես քրիստոնյաների թագավոր սիրով ու պատվով ընդունեց մեզ: Մյուս օրը վերցրեց իր զորքը եւ մեզ բոլորիս, փող ու թմբուկով եւ զուռնայով, բարձր գոչյունով մտանք սուրբ Վաղարշապատ քաղաքը: Եվ Քրիստոսի հավատացյալներն ու հավատարիմ ժողովուրդը, եւ անհավատները, ընդառաջ ելնելով՝ զարմանում էին, որովհետեւ անցյալ տարի Շամշուլտե քաղաքը կործանեցին եւ գոչումն ու զանգահարությունը խափանեցին ու կարմիր նշան դրեցին, իսկ այսօր նոր նշան եւ հրաշագործություններ արեց Միածին Որդին: Ինչպես Տրդատը խոզացած դեմքով եւ զորքը՝ դեւերից լլկված, ընդառաջ ելան Լուսավորչին, Աստծու ողորմությամբ այդպես եղավ վերջին նորոգման ժամանակ: Եվ մենք բոլորս միասին ցնծալից ձայներով օրհնեցինք Աստծուն «Փա՜ռք Քեզ, Աստված, ամեն ինչի համար»:

Եվ բռնապետը հրամայեց կաթողիկոս օրհնել առանց հակառակության: Եվ եղբայրներից շատերս առաջ կանչվեցինք գալու Թորգոմյան գահի առաջնորդության, եւ չէինք ցանկանում մտնել

բարձրագույն աստիճանի դառն ծանրության տակ: Ապա դրանից հետո ապավինեցինք Աստծուն եւ սկսեցինք միաբան աղոթքով ու պաղատանքով խնդրել Նրան՝ Իր կամքի համաձայն մեզ առաջնորդ տալ:

Եվ եղբայրներից մեկը տեսնում է գիշերվա երազով, որ արեգակը ծագում է արեւելքից՝ խավարազգեստ եւ առանց լույսի, ու գալիս կանգնում է սուրբ եկեղեցուն մոտիկ, ապա ընթանում դեպի արեւմուտք եւ հետո է դառնում արեւմուտքից ու գալիս հյուսիսային մուտքով, դառնում լույսին, խոնարհվելով իջնում երկիր՝ սուրբ էջմիածնի հյուսիսային դռան մոտ: Եվ տեսնում է եղբայրների բազմությունը Կաթողիկեի գլխին: Եվ արեգակի վրա գրված էր. «Հինն անցավ, եւ ահա ամեն ինչ նոր եղավ»: Եվ մի լուսափայլ այր ասում է. «Հինը մեղքն է՝ խափանվում է, արդարությունն այսօր նոր է սկսվում»: Եվ մյուս օրը վերստին տեսնում է սպիտակ ձի՝ մի լուսավոր այր վրան նստած, եւ գալիս է օդով եւ խոնարհվելով իջնում եկեղեցու մեջ, եւ նստում է բեմի աջ կողմը, եւ եղբայրները հարցնում են. «Որտեղի՞ց ես գալիս», եւ նա ասում է. «Արեւմուտքից, Ֆրանկների թագավորի մոտից»: Սա է բոլոր թագավորների թագավորը. ինձ ձեզ մոտ ուղարկեց եւ ասում է. «Էջմիածնում, Վաղարշապատ քաղաքում երեք կամուրջ կա. մեջտեղից վերացրեք, որ թագավորը գա մտնի ձեզ մոտ»:

Մյուս օրր եղբայրներից մեկը տեսնում է, որ բացվեց բարձրագույն եկեղեցու դուռը, եւ եղբայրների բազմությունը եկեղեցու բեմ հանելով՝ մի դուռ բացվեց սեղանի հետեւում, եւ մտանք մի ուրիշ հին եկեղեցի ու դարձյալ նույն ձեւով բարձրացանք բեմը, եւ մի դուռ բացվեց, եւ երեք եկեղեցի մտանք ու ելանք: Ապա մտանք մի զարդարուն ու պտղավետ պարտեզ: Եվ մի այր կանգնած ոռոգում էր պարտեզը: Եվ եղբայրներն ասում են. «Անպատշաճ ու անհարմար է այս պարտեզը»: Եվ ծերունին ասում է. «Համբերեցեք, որդիներս, եւ ես ձեզ զարմանալի պտուղ կտամ այս պարտեզից»: Եվ ահա եկավ մի կրոնավոր ու ասում է. «Եկեք, տեսեք պարտեզի տիրոջը»: Եվ մենք ասում ենք. «Չկա ողորմություն, որովհետեւ

ողորմությունը պակասեց»: Եվ ասաց. «Ես ուրախ եղա, որ ինձ ասում էին», եւ ասացինք՝ «Հայր մեր յերկինս» ու նստեցինք: Եվ այրն ասում է. «Սուքիասյանները քանի տարի մնացին Սուկավետ լեռան վրա», եւ ասում ենք՝ «Քառասունչորս տարի»: Եվ այրը հարցնում է. «Քանի հոգի էին նրանք, եւ ասում ենք՝ երեք հարյուր հոգի էին»: Եվ դարձյալ ասում է. «Ելեք մանգաղ առեք եւ այս սպիտակած արտերը, որ ձեր առջեւ են, հնձեցեք»: Եվ անսպասելիորեն մանգաղ տվեց բոլորիս ձեռքերը, եւ սկսեցինք հնձել սպիտակած անդաստանը»: Եվ եղբայրը զարթնեց ու ասում է. «Ելեք Աստծու հրեշտակներ, հոգեւոր այս գործին օգնության եկածներդ, ելեք աղոթեցեք եւ կատարեցեք հրեշտակների տոնը»: Եվ եղբայրներն սկսեցին տոն կատարել մինչեւ առավոտյան ժամը: Այս տեսիլը կաթողիկոսին օրհնելիս եղավ, որ խնդրում էինք մեզ առաջնորդ տալ:

Իսկ եղբայրներից մեկը նվերներ ու մատաղ է վերցնում, եւ գնում են երկրորդ Լուսավորիչ սուրբ վարդապետ Մեսրոպի գերեզմանը եւ պաղատանքով ձեռնարկումին հաջողություն են հայցում: Եվ տեսնում է՝ գավազանը, որ իր ձեռքին էր, աղբյուրացավ, եւ երեք մեծամեծ անոթ լցվեց: Եվ վերստին եկան էջմիածին եւ այնտեղ սկսեցին աղոթել, խնդրելով Տիրոջից գործի հաջողություն: Եվ տեսնում են, որ մի ծառ տնկվեց եկեղեցու մեջ՝ խնձորենի, եւ բարձրանալով ծառը՝ վերցրեց եւ բաժանում էր, եւ պտուղը չէր պակասում ծառից: Մյուս օրը մի այլազգի կին սեղանով եկավ քահանաների մոտ եւ ասում է. «Կանթեղով լցվեց եկեղեցին այս»: Եվ մի ծեր մարդ, լապտերը ձեռքն առնելով, ելավ եկեղեցու վերին կամարը, վառեց եկեղեցու մեծ կանթեղը եւ դուռ դրեց հյուսիսային պայծառ ու գեղեցիկ մուտքին, եւ զարդարեց զարմանալի վարագույրներով, եւ բոլորս միասին փառք տվինք Աստուծուն:

Եվ եկավ մի Աստվածապաշտ այր ու ասում է. «Ահա մի կանթեղ կախվեց երկնքից, եւ լուսավորվելով՝ պայծառացավ արար աշխարհը»: Եվ հարցնում եմ՝ «Ո՞ւմն է այս կանթեղը», եւ մի այր ասում է. «Այս կանթեղն էջմիածնինն է, որ բազում ժամանակնե-

րից ի վեր խավարել էր, եւ այժմ Աստված ողորմեց եւ կամենում է լուսավորել»: Եվ մենք ուրախանալով օրհնեցինք Աստծուն:

Եվ դարձյալ նույն օրը սուրբ Ավետարանով ձեռնադրության օրհնության վիճակ գցեցին, եւ վիճակվեց Կիրակոս հայրապետին: Եվ առանց հակառակելու եկավ կանգնեց ահեղ ատյանի մեջ: Եվ մենք հիացած զարմացանք Աստծու այրի հնազանդությանը եւ իր կամքից հրաժարվելուն, որովհետեւ խիստ անհնազանդ էր վարքով եւ ատում էր երկրային փառքը: Եվ հիշեցինք Աստծուն եւ բոլորս սկսեցինք օրհնել Աստծուն եւ սկսեցինք ձեռնադրությունը: Եվ ահա այդ ժամին եկավ մի արծիվ սավառնաթեւ, սաստիկ գոչյունով նստեց էջմիածնի գլխին, եւ շատերը թողին հոգեւոր ուրախությունը, նրան տեսան ու եկան պատմեցին:

Եվ մենք ձեռքերս վեր կարկառած օրհնություն ու փառք տվինք բոլոր արարածներից օրհնված ամենասուրբ Երրորդությանը, հավիտյանս հավիտենից. ամեն: «Փա՜ռք - Քեզ, Ամենասուրբ Երրորդություն, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, որ կատարեցիր հայկազյան սեռի խնդրանքը»: Եվ բոլորին հայտնի եղավ Ավետարանի քարոզած ճշմարտությունը, որ ասում է. «Ով խնդրի՝ կստանա, եւ ով հայցի՝ կգտնի, ով բախի՝ կբացվի նրան»: Եվ հետո. «Ամեն ինչ, որ Հորից խնդրեցիք հավատով՝կտրվի ձեզ ձրի»: Եվ թե «Երկինքն ու երկիրը կանցնեն, Իմ խոսքերը չեն անցնի»: Եվ մենք ինչ որ խնդրեցինք՝ ստացանք Հայր Աստծուց:

Եվ հասանք սուրբ Պենտեկոստե՝ Սուրբ Հոգու գալստյան եւ առաքյալների մեջ իջման օրը: Եվ մեծահանդես ժողով անելով՝ օրհնեցինք աստվածաստեղծ մեռոնը եւ բաժանեցինք ամբողջ թորգոմյան ազգին, եւ կանոն սահմանեցինք ձրի տալու եւ ձրի առնելու առաքելական գնդի նմանությամբ, որ Քրիստոսից ստացան հրաման: Եվ վերացրինք սիմոնական աղանդը: Եվ ով որ հանդգնի՝ նա պատասխան կտա Քրիստոսի առաջ, իսկ մենք անմեղ ենք: Եվ մեր Աստված Քրիստոսին փառք եւ պատիվ հավիտյանս. ամեն:

Բայց բոլոր վարդապետների ու եպիսկոպոսների եւ քահանաների դասով աղաչում ենք՝ ճշմարիտ ընթերցողներ եւ աստվածային գիտության ու իմաստնության հետեւորդներ, որ հանդիպեք փոքրիկ պատմությանս, տեսնեք իմ համեստ աշխատությունը՝ իմ տկար եւ բազմազբաղ մտքից՝ թողություն հայցեցեք մեզ եւ մեր վարդապետներին, եւ մեր ծնողներին, եւ մեր հարազատներին ու մեր բոլոր արյան մերձավորներին, եւ մեր թշնամիներին ու ատելիներին: Եվ Քրիստոս Աստված ձեր մեղքերը կթողնի: Իսկ հետագայի մասին դուք գրեցեք եւ անփույթ չլինեք մեր նկատմամբ, աղաչում եմ: 892 (1443) թվական:

ՀԱՎԵԼՎԱԾ 1*

Եվ այս ամենը մեզ պատահեց մեր մեղքերի ու չար գործերի պատճառով, մանավանդ՝ քահանաների ծուլության եւ կրոնավորների խաբեության, անհավատ եւ սուտասան հավատացյալների, զրկող ու անիրավ տանուտերերի, պիղծ ու զազրելի առաջնորդների, որ չենք կարող գրի առնել մեր եւ նրանց աղտեղությունները, քանի որ ամեն ինչ հայտնի է ծածկագետին:

Եվ արդեն յոթ տարի է, որ դառն պատուհասի մեջ ենք, որովհետեւ սուրը կորստի մատնեց, սովը սպանեց, գերին պակասեց, գազանները կերան մարդկանց, թռչունները կերան բերքը, գորտերն ու մկները ապականեցին անդաստանները: Առավել պատուհասներ, քան բաբելացիներինը՝ Աբրահամի օրերին, եւ ավելի դառն, քան եբրայեցոց ու եգիպտացոց պատիժը, երբ Հակոբի որդիները ծովում թաղվեցին, իսկ հայոց որդիները՝ Հրե քաղաքի անհավատության ծովում: Նրանք ծովում մեռան, եւ ոչ թե ծննդյամբ բազմացան, մեր որդիներն ու եղբայրները, որ անհավատությամբ մեռան ու կորան, նրանց որդիներն աճում են անհավատությամբ եւ ամբողջ աշխարհը լցնում: Եվ մինչեւ վերջին դատաստանի օրը Հայոց ազգից այնքան մարդիկ աճեն, որքան այժմ բոլոր յոթանասուներկու ազգերն են. որովհետեւ եթե Աստծու արդար եւ պարկեշտ այր Նոյի ութ մարդուց ամբողջ երկիրը լցվեց, ապա հազար եւ բյուրավոր գերիներից որքա՞ն ավելի պիտի աճեն ու բազմանան:

Այս բոլոր պատուհասները որ եղան՝ կարգավոր թե աշխարհական, մեծահարուստ թե աղքատ՝ իրենց լեզուները չսանձեցին հիշոցներից ու հայհոյանքներից եւ չասացին «Մեղայ Աստծու», եւ չհրաժարվեցին ժանտալից, դառնապտուղ եւ դառնաբերան

*[5] էջ 46-48

անեծքներից ու նզովքներից, գարշաբերան աղտեղություններից, որ հանապազ ժայթքում են մոխրաթավալ նորընծա ուխտի երիտասարդները Հայաստանյայց եկեղեցու, մշտապես աղտեղի բաներ խոսելով՝ ուսումնականների բերաններն են լցնում: Վա՜յ եւ եղուկ մեզ եւ նրանց, որովհետեւ ես իմ անձն եմ դատապարտում, որովհետեւ ես եւս նույն հանցանքների մեջ եմ, բայց տանջվում եմ խղճմտանքիցս, որովհետեւ Աստվածաշունչ գրքի իմացությամբ ծանոթացա, ուզում եմ վերացնել, եւ չեն ուզում լսել: Ես նույնպես հանապազ դառնության մեջ եմ, քանի որ հնացած սովորությունը ձեռքբերովի բնություն է: Եվ չեմ կարող այդ արատները վերացնել եկեղեցու մանկանց միջից, որովհետեւ ապստամբ վիշապ են եղել եւ հոգեւոր այրերի ու եկեղեցու վարդապետների խրատներից խույս տալով գնում են իրենց կամքի հետեւից:

Բայց դուք պիտի գիտենաք, ո՜վ եկեղեցիներ Հայաստանյայց եւ մենաստանների կուսակրոն վանքեր, որ Տերն ասում է. «Կերակուրը չի պղծում մարդուն, այլ ինչ որ ելնում է բերանից՝ այն է պղծում մարդու»: Դու բերանով ճաշակում ես Աստծու արյունը եւ ասում. «Գնա՛, կեր շան եւ մարդու միս»: Պղծում ես բերանդ, որով ճաշակել ես Աստծու գառը եւ պղծում ես այն անմեղի բերանը, որ ճաշակել է անմեղ գառ Քրիստոսին: Եվ կյանքդ մշտապես ապրում ես առանց խղճմտանքի եւ խոստովանություն չես անում: Եվ ո՞վ պիտի քավե քո բերանից ժայթքած ժանտալից, ժահահոտ մեղքերը. դա կմնա քեզ վրա անքավելի ու աններելի եւ՝ չար հիշատակ մինչեւ վերջը աշխարհի: Եվ ով որ քեզնից սովորել է՝ օրըստօրե մեղքեր կավելացնի քո մեղքերի վրա ըստ Դավթի՝ «Մեղք դիր մեղքի վրա»: Դարձյալ անեծք ու նզովք ասելով անիծում ես Աստծու պատկերը եւ չգիտես, որ անիծում ես սկզբնատիպ Աստծուն: Եվ ով անիծում է Աստծուն՝ նրա մեղքը մահու չափ է եւ աններելի: Քո այդ մեղքերին ո՞վ կտա թողություն, քանի որ միայն Աստված է կարող այդ կապը արձակել, իսկ դու Աստծուն ես հայհոյում. դա մնաց անքավելի: Եվ դարձյալ Աստված աշխարհ եկավ, որպեսզի վերացնի Ադամի անեծքը, իսկ դու լրբաբար

վերստին նորոգում ես: Կարո՞ղ ես Աստծուն պատասխանել՝ չգիտեի: Ահա Ավետարանը քեզ սովորեցնում է՝ որ չգիտեիր: Անիծում են նաեւ վարդապետ ու եպիսկոպոս. ահա Քրիստոս, եւ մեր Գրիգոր Լուսավորիչը ուսուցանում է իր կանոնագրքի մեջ. «Քահանան, որ անիծում է Աստծու պատկերը, ինքնիրեն խորթացնում է Քրիստոսից»: Նաեւ եկեղեցու քաջ հովիվ մեծն Աթանասիոս ասում է՝ «Քահանան, որ վայրապար անիծում է մարդու՝ պիտի զրկվի քահանայական կարգից»: Դրա համար երեսս գետին դրած՝ աղաղակում եմ եղբայրներիդ, ձեր ոտքի հողը լիզելով, ձեզ մի՛ օտարեք Քրիստոսից եւ մի՛ զրկվեք քահանայական կարգից: Որովհետեւ, ասում է Տերը՝ «Այդ բերանից են ելնում պղծությունները»: Ավետարանիչը նույնպես սովորեցնում է. «Ամեն պիղծ ու չարակամ չի մտնի արքայություն», եւ քեզ զրկում է երանությունից: Նույն Ավետարանիչն ասում է՝ «Երանելի են՝ ովքեր լվանում են իրենց անձը գառան անարատ արյունով»: Եվ դուք, քահանանե՛րդ, լվացեք ձեր հոգին ու ձեր մարմինը Քրիստոս Գառան Արյունով:

Ավա՜ղ մեզ, եթե աստվածային այդպիսի շնորհներից զրկում է կարգավորներին, որովհետեւ եթե բոլոր արարածները բերանները ողբ առած կոծեն այդպիսիներին՝ ոչնչով հատուցել չեն կարող: Իսկ եթե ետ կանգնես այդպիսի լեզվագարությունից՝ Աստված քեզ կողորմի այստեղ եւ հանդերձյալ աշխարհում՝ բոլոր սրբերի աղոթքով ու բարեխոսությամբ, եւ ձեր զղջմամբ ու աղոթքներով Աստված կնորոգի կորած ու ջնջված ազգս: Որովհետեւ իմ կարծիքով այսպիսի հայհոյանքների պատճառով Սուրբ Հոգին Աստված հեռացավ Հայոց ազգից ու եկեղեցուց:

ՀԱՎԵԼՎԱԾ 2*

Տեր Կիրակոս կաթողիկոսի վտարման մասին

Այս եւս պետք է գիտենան եկեղեցու բոլոր սրբազան իմաստուն մանուկները, որ այս երջանիկ ու երանելի սուրբ հայրապետ տեր-Կիրակոսը երկու տարի նստեց պատրիարքական աթոռին Վաղարշապատ քաղաքի սուրբ էջմիածնի Կաթողիկեում, մեր հայրենի քրիստոսադիր գահին: Եվ Այրարատի ու Վասպուրականի կողմի հայ աստվածապաշտ ժողովուրդը մարմնական պիտույքներով, անասունով ու չորքոտանիներով լցրեց սուրբ աթոռը: Բայց կաթողիկոսն ու նրա վերակացուները՝ ոմն Գաբրիել եպիսկոպոս՝ Հովհաննավանքի սուրբ ուխտից եւ մի վարդապետ Ռշտունյաց կողմերից, Կիրակոս անունով, մեծ անգիտություն արեցին. անասուններից մեկը նրան չնվիրաբերեցին սիրո եւ աղերսանքի համար: Եվ նա խիստ դառնացած էր հոգով եւ չգիտեր, թե ինչ նենգություն եւ որոգայթ էր դնում սուրբ ու նորահաստատ աթոռին: Եվ դարձյալ չարակնում էր, ասելով՝ գրված է գրքերում, թե «Վարագի կողմից են նորոգվելու Հայոց երկիրը եւ Վաղարշապատի սուրբ Կաթողիկեն»: Մարդիկ դա սրանից-նրանից լսում էին, եւ դարձյալ ատելություն էր տիրում վասպուրականցիների դեմ: Տեսավ, որ ամեն տեսակ բարությամբ ու շնորհքով զարդարվեց Հայոց ազգը, այնպես որ բոլոր հավատացյալներն ու շրջակա այլազգիները երանի էին տալիս, որ միայն Քիստոսի հավատն է հավատ եւ օրենք, իսկ մնացածը սուտ է: Որովհետեւ տեսնում էին, որ Աստծու երանելի այրը գիշեր ու ցերեկ մշտական սրբապահությամբ ճգնավորի կյանք էր վարում:

Բայց ի սկզբանե մարդասպան եւ նախանձաչար Բելիարը,

*[5] էջ 75-81

ինչպես որ միաբանեցրեց իր հետ հրեղենների դասը եւ ասում էր՝ «Կամենում եմ աստվածանալ եւ ձեզ ուզում եմ պատվով մեծարել», եւ իր հետ հրեշտակների դասին մատնեց կորստյան, կամ ինչպես նախանձեց մեր հայր Ադամի պատվին եւ մայր Եվայի միջոցով նրան հանեց փափկության դրախտից, այսպես ոմն վարդապետ եւ եպիսկոպոս, Մարկոս անունով, Հովհան վարդապետի աշակերտներից, որ գնացել էր Վրաց կողմը եւ սուրբ հայրապետի ձեռնադրությանը ներկա չէր, հետո գալով սուրբ Կաթողիկեն տեսավ զարդարված, որովհետեւ բոլորը երանի էին տալիս Վանա ծովի կողմերի վարդապետներին ու քահանաներին: Եվ նա մաղձի մեծ դառնությամբ խավարեցրեց բանական մասի իմացումը եւ չգիտեր՝ ինչ անել: Որի համար մի կրոնավոր է գտնում, իր նման նախանձոտ ու չարախոս՝ Աստվածատուր անունով, ինքնահավան ու կեղծավոր, որ Սաղմոսավանքի սուրբ ուխտից էր: Եվ ցանկանում էին սուրբ ճգնավորի մասին թյուր լուրեր տարածել եւ ասում էին. «Առաքինությամբ Լուսավորչին է նման եւ հավասար, բայց նրա մեջ երկու պակասություն կա. մեկը, որ Աղթամարի կողմից է. նրանք բազում ժամանակներից ի վեր բանադրված են, եւ մյուսը՝ պետք էր կաթողիկոսներից եպիսկոպոս լինել եւ ապա եպիսկոպոսներից կաթողիկոս ձեռնադրել»: Ողոմելի գոռոզացածները անտեղյակ լինելով սուրբ առաքյալների կանոնագրքերին, Կղեմինտի եւ Նիկիայի սուրբ ժողովին եւ Գրիգոր Աստվածաբանին եւ մյուս բոլորին, որ սովորեցնում են մեզ, թե ամբողջ ազգի հավանությամբ երեք եպիսկոպոսը եպիսկոպոս են ձեռնադրում եւ տասներկու եպիսկոպոսը կաթողիկոս են օծում ըստ Հայոց օենքի, իսկ ըստ Հույների՝ երեք արքեպիսկոպոսը պատրիարք են ձեռնադրում: Եվ սրանք այս բանը չգիտակցելով՝ երկուսով չար սատանայի անոթ եղան, մահաբեր նամակ գրեցին Հավուց թառի սուրբ ուխտի Զաքարիա անունով ինչ-որ եպիսկոպոսի՝ իրենց նման նախանձոտ եւ եղբայրներին ատեցող, թե՝ «Կաթողիկոսը, որ դուք եք դրել, Վասպուրականի Քաջբերունյաց կողմից է եւ Աղթամարի անեծքի ու բանադրանքի տակ է: Եվ մեզ ու մեր գավառը անեծքի եք դատապարտել: Այժմ, արի մենք եւ դու միասին ողջույնի նամակ գրենք Հովհաննես վարդապետին կամ գնանք նրա մոտ եւ նրա միաբանությամբ Տաթեւի Շնավոն անունով վարդապետին կանչենք, հանենք նրան աթոռից եւ նրա տեղը դնենք Մակուի Թադեոս առաքյալի վանքի եպիսկոպոսին»: Իսկ ձեռնադրության նույն օրը այն վարդապետն ու Զաքարիան չուզեցին կաթողիկոս լինել ատելության պատճառով, որ ունեին նրա նկատմամբ:

Եվ այն Զաքարիան տեսնելով չար նախանձի նամակը՝ սատանայական բերկրությամբ ուրախացավ եւ չարի ընդունակ եղավ. դժնիկ փշի նման չարի ատելությամբ ինքնիրեն եւ իր հետ շատերին այրեց: Ելավ գնաց Հովհաննես վարդապետի մոտ եւ ինչպես Բաղակը Բաղաամ մոգին կաշառեց, նույն կերպ սրանք կաշառեցին Կոլոտիկ մականվանյալ Հովհաննես վարդապետին, որ այդ ժամանակ վարժապետ էր, խլացած ականջներով: Նա անմիջապես հավաքեց բազում անխոհեմ եպիսկոպոսների ու քահանաների, ավելի քան երեսուն-քառասուն հոգի, բարկությամբ ու սրտմտությամբ լցված՝ եկան մտան սուրբ Միածնի տաճարը, իրենց մեջ ունենալով դառնության ամբողջ թույնը: Ոչ ողջունեցին, ոչ խաղաղություն մաղթեցին, որ ինքն էր ձեռնադրել կաթողիկոս, եւ Մակուի եպիսկոպոս տեր Գրիգորը, եւ վարդապետության գավազան՝ իրենց ձեռքով եւ բոլոր վարդապետներով ու եպիսկոպոսներով սուրբ էջմիածնում վարդապետ են դարձրել, իսկ այսօր ուրանում է եւ հրեաբար հարձակվում սուրբ հոր վրա: Իսկ նա փախուստ տալով, գաղտագողի մտնում է մի քրիստոնյայի տուն եւ դողում է քահանաների ահից, ինչպես մեր Տերը՝ հրեաներից: Իսկ նրանք այս ու այնտեղ որոնելով՝ գտան նրան եւ վերցրին տարան Աղուպբեկ բռնավորի մոտ, ինչպես հրեաները Քրիստոսին տարան Պիղատոսի ու Հերովդեսի մոտ:

Եվ Հովհաննես վարդապետը ասում է բռնավորին. «Պարո՛ն Աղուպ-բեկ, այս կաթողիկոսը սուտ է, որովհետեւ մկրտված չէ: Եվ նա, որ մկրտված չէ՝ քրիստոնյա չէ, եւ կախարդ ու հերձվածող է

սա, որովհետեւ հիվանդների օծումը Կոստանդնուպոլսից է բերել: Եթե դու ուզում ես, որ դա այդ աթոռին նստի՝ մեր բոլորի կամքն այս է, որ մկրտենք եւ ապա եպիսկոպոս ու կաթողիկոս ձեռնադրենք, նոր միայն նստի մեր հոգեւոր հայր Գրիգորի գահին»:

Եվ բռնավորն ասում է. «Վարդապետ-բաբա, ես գիտեմ, որ դու ձեռնադրեցիր նրան կաթողիկոս»: Եվ նա բռնավորի առաջ ուրանում է ճշմարտությունը եւ ասում. «Քա՛վ լիցի, ես չեմ ձեռնադրել նրան, այլ այն Թովման ու նա ընկերները»: Նա, որ գաղտնիքների գիտակն է ու իրավագետը բարձունքներին, տեղյակ է, որ մի փոխ գիր տվին ինձ կարդալու օտարի պես: Եվ երկու հոգի՝ մեկը մեր աշակերտներից մի կրոնավոր, Կարապետ անունով եւ մեր ազգականներից մի տղա՝ Ծերուն անունով, խիստ ընդդիմախոսում են եւ բարձր ձայնով ասում. «Սրանք բոլորը լինելով ստախոս եւ անհավատ քրիստոնյա՝ ճշմարտախոս չեն, այլ խաբեբա»: Եվ Ստեփանոս անունով մի վարդապետ խփեց մանկան բերանին, որ արյունով լցվեց: Իսկ բռնավորը բարկացած՝ հրամայեց բոլորին դուրս ելնել: Եվ Զաքարիե կոչված եպիսկոպոսը միայն մնաց նրա մոտ եւ ասում է. «Անթիվ եւ անհամար արծաթ կտամ. քեզ համար ի՞նչ փույթ է նրան հանելն ու չհանելը»: Եվ նա արծաթով կաշառվում եւ հրաման է տալիս ձեռնադրելու Թադեոս առաքյալի վանքի եպիսկոպոսին:

Իսկ Աստծու երանելի այրը իմացավ այս ամենը եւ սրանից ավելի շատ անպատմելի ու անասելի հայհոյանք ու չարախոսություն, որ նրանք ասում էին բռնավորի առջեւ ու նա Քրիստոսի նմանությամբ լուռ ու անմռունչ էր եւ ելավ գնաց մի քրիստոնյայի տուն:

Իսկ անիրավ ամբոխը մտավ սուրբ էջմիածին, եւ սկսեցին պատարագել Քրիստոսին՝ ուրախությամբ, քամահրոտ նենգությամբ Հայոց կաթողիկոս կոչեցին տեր Գրիգորին: Եվ այն անմիտ Գրիգոր եպիսկոպոսը մտածեց, թե մեծ քաջություն գործեց: Դա քաջություն չէր, այլ հակառակություն Դադանի, Աբիրոնի եւ Կորխի նմանությամբ, որ հակառակվեցին Աստծու հրամանին եւ Աստծու

ծառա Մովսեսին: Եվ Քրիստոսին պատարագեցին ոչ թե հաշտության, այլ բարկության համար եւ չհիշեցին Տիրոջ խոսքը, որ ասում է. «Գնա հաշտվիր եղբորդ հետ եւ ապա արի մատուցիր պատարագ»:

Այստեղ տեսնել էր պետք ցավալի տարակուսանքները եւ ահագին վնասը մեր մեղանչական ազգի՝ վարդապետների, եպիսկոպոսների եւ մյուս հոգեւորականների՝ մեր ազգին պատճառած դառնությունների: Որովհետեւ Երուսաղեմում Քրիստոս խաչվեց անհավատ հրեաների ձեռքով, սա՝ էջմիածնում՝ հավատացյալ կարգավորներից: Եվ կատարեցին իրենց չար մտադրությունը, ապա սկսեցին էջմիածնի սպասավոր վարդապետնեին՝ Ռշտունյաց Կիրակոս վարդապետին ու մեր ռաբունապետ Սարգսին (Սալնապատի սուրբ ուխտից) մատնել անօրենների ձեռքը: Մեկից վերցրին տասներեք հազար դահեկան, իսկ մյուսից՝ վեց հազար դահեկան, երկու եպիսկոպոսի՝ Զաքարեի ու Անտոնի մատնությամբ: Եվ եկիրը նրանք լցրին գայթակղությամբ ու հայհոյանքով, որ տարածվեցին մինչեւ աշխարհի ծագերը:

Ավա՜ղ ազգիս անմտությանը, ավա՜ղ թշվառությանս, ավա՜ղ կուրությանս, ավա՜ղ տխմարությանս, ավա՜ղ հեգությանս, ավա՜ղ չարությանս, թե որքա՜ն լուսավորներ խավարեցրեց հայոց ազգս, որչա՜փ աստվածաբան բերան խցանեցին, եկեղեցու քանի՜ սյուն տապալեցին, քանի՜ քահանայապետ մահվամբ հողն իջեցրին: Արիստակեսին սրախողխող արեցին, Վրթանեսին հեռուները հալածեցին, Հուսիկին ողորմածեծ անելով զրկեցին կյանքից, Մեծ Ներսեսին հանեցին աթոռից եւ Արշակի պալատական երեց Չունակ կոչվածին նրա տեղը ձեռնադրեցին Գառնի քաղաքում, իսկ հետո թունավորելով մահացրին, սուրբ Սահակին արտաքսեցին եւ դրին Սուրմակին, Շմուելին ու Բարդիշուին, իսկ բարեպաշտ ու բարեսեր Տրդատ արքային, իրենց մեծ բարերարին, նենգորեն դավելով կորստյան մատնեցին, սուրբ Գրիգոր Լուսավորչին այնքան ծանձրացրին, մինչեւ վտարեցին անմարդաբնակ վայրեր: Վիրաբի թունավոր սողուններից ավելի դառն ու դժնդակ բարք

էին ցուցաբերում սուրբ Լուսավորչին, որի պատճառով երկար չմնաց նրանց մեջ, գուցե նրան ձեռք տային, եւ լուսափայլ մանուկ Գրիգորիսին՝ Հուսիկի եղբորը, որ նրանից տարեց էր ու հասակով բարձր, տասնհինգ տարեկանում դրեցին հայրապետական աթոռին, որ չարերին հանդիմանում էր ու պայծառացնելով լուսավորում եկեղեցիները, որ հավատացել էին Եղիշե եւ Ստաթեոս առաքյալների ձեռքով,- կապելով ձիու պոչից՝ նրան եւս այս դառն աշխարհիս կյանքից հեռացրին եւ երկրորդ Լուսավորիչ մեծ Մեսրոպ վարդապետին, Աստծու ընտրյալին, որ երկնքից գիր իջեցրեց նման մարգարեին, եւ նրան աշակերտած հոգեւոր որդիներին, Աստվածաշունչ Գրքի թարգմանիչներին, Դավիթ եւ Մովսես արի վարդապետներին վտարեցին մեր աշխարհից, լինելով ապերախտ ու անընդունակ: Եվ այսպիսի լուսավորիչներին ու եկեղեցու պայծառ ջահերին, երբ ամբողջ հայոց ազգն ուզում էր որոշ ժամանակ ցնծալ նրանց լույսով, այս կերպ աշխարհից կորցրին նրանց գիտությունն ու կյանքը: Եվ եթե մեր օրոք նույն կերպ վարվեցին Կիրակոս սուրբ հայրապետի նկատմամբ, ի՞նչ զարմանալու բան էր:

Բայց այժմ դառնանք դեպի ձեզ, ո՛վ մեծ վարժապետ Հովհաննես. Աղվանից աթոռը երկու մասի բաժանեցիր եւ նախանձից ու դառն ատելությամբ հայրապետական աթոռից աքսորեցիր սուրբ Հոգուց ընտրվածին, որ քառասունհինգ տարի գինի, միս, յուղ եւ անասունների կիթ չէր ճաշակել: Եվ տասներկու եպիսկոպոսներով ու տասներկու վարդապետներով քահանայապետական աստիճանին դրվեց, եւ մյուս օրը բոլոր վարդապետներով նրա ձեռքը վարդապետական գավազան դրեցիր, այժմ նրա ձեռքից գավազանը հափշտակեցիր, մատանին նրա մատից հանեցիր, դատապարտյալ ծառայի նման անօրենների առջեւ անարգեցիր: Ո՞րն էր նրա տված վնասը, այն, որ անտերունչ ու անօգնակա՞ն էր: Գիտեմ, Աստված էր նրա օգնականը: Դու չերկնչեցիր Աստծուց եւ ոչ ամաչեցիր անօրեններից ու օինավորներից, տղամարդկանցից ու կանանցից: Այսպիսի՞ վարդապետություն սովորեցիր

Քրիստոսից, ա՞յդ սովորեցրին Քրիստոսի առաքյալները : Դու ականջովդ խլացած, սպիտակ մորուքով, որ վերածվել է դեղինի, գերեզմանին մոտեցած, հայոց ուղղափառ վարդապետության դասատները խափանեցիր: Աղթարմայության արատն ու բիծը կիլիկեցիներից մտավ Լուսավորչի քահանայապետություն, Աստված ազատեց, եւ Աղթամարա կղզու բանադրությունն ու նզովքը փոխեց օրհնության: Դու բոլորի բերանը բացիր: Կիլիկեցիները քո անգիտության ու անհամության համբավը լսեցին եւ գտնելով մի աշխարհի երեց՝ Կարապետ անունով, որ իրենք էին ձեռնադրել, վերստին հակառակությամբ կաթողիկոս դրին. անեծքով ու անվայել վարմունքով դարձյալ ուզում էին մեզ կործանել. ի՞նչ պատասխան ես տալու Քրիստոսին՝ դատաստանի օրը:

Ո՛վ երջանիկ վարդապետների դասեր եւ սրբազան եպիսկոպոսների գնդեր, դուք Գրիգոր Լուսավորչի առաքելական աթոռին աստիճան եք տալիս եւ դարձյալ դուք եք հանում Գրիգորի աթոռից եւ հրեաբար դատապարտելով հայհոյում եք: Ավա՜ղ ու վա՜յ մեզ: Երկինք ու երկիր, ծառեր անտառի ու ծաղկունք դաշտի, լեռներ ու բարձունքներ եւ ամեն տեսակ բույսեր, ողբացե՛ք մեր ազգի անմտությունը, վայրենի ու կոպիտ, բիրտ ու անհնազանդ քահանայական կարգիս ու հայկազյան սեռի կրոնավորների անզգամությունը: Դարձյալ վա՜յ ու եղո՜ւկ մեր ազգի անմտությանը: Փարավոնը, որ անաստված էր, սովի ժամանակ քուրմերի իրավունքներն անխախտ էր պահում, պատիվ տալով նրանց իբրեւ քահանաների: Եվ երբ Սավուղը բարկացավ քահանաների վրա՝ Դավթին կերակրելու համար, հրեաներին հրամայեց սպանել քահանաներին. եւ նրանք չհամարձակվեցին ձեռք տալ Տիրոջ օծյալին, մինչեւ որ նրանց պատահեց ասորի Դովեկը եւ Սավուղի հրամանով սպանեց քահանաներին: Եվ երբ Պողոսը ծեփած պատ էր կոչում Անանիա քահանայապետին, սպասավորներին ասաց. «Աստծու քահանայապետին հայհոյո՞ւմ ես»: Եվ նա պատասխանում էր. «Չգիտեի, եղբայրներ, որ քահանայապետ է», թեպետ գիտեր, հայտարարեց, թե հարկ է պատկառել օծության շնորհից ու

աստիճանից: Այլեւ մեր Տերն ու Աստվածը, երբ անաստված հրեաների ատյանը տարան, լիրբ եւ ապաշնորհ, երախտամոռ ծառային, որ ապտակում էր Նրան, ասաց. «Այդպե՞ս ես պատասխանում քահանայապետիդ»:

Եվ այսպես, ամենուրեք պատկառում էին քահանայական պատվից: Միայն սրանք եղան լիրբ ու հանդուգն, չունենալով Աստծու երկյուղը եւ չպատկառելով քահանայական շնորհից, այլ անմտորեն կատարում էին սատանայական ցանկությունը՝ դառնալով պատճառ իրենց կորստյան: «Որովհետեւ նա սկզբից իսկ մարդասպան էր»՝ մեր Փրկչի հրամանի համաձայն:

Եվ այս երկու տարի է, որ նրանցից մեկն իսկ չզղջաց, եւ ոչ մեղա եկավ նրանց բերանը, այլ՝ հայհոյություն ու նախատինք: Եվ ոչ միայն ինչ-որ տգետ կամ անմիտ, այլեւ իմաստուն ու կատարյալ Շմավոն եւ Գրիգոր վարդապետները Սյունիքից եւ Ստեփանոս անունով վարդապետը Եղեգիսից եւ ուրիշներ, որ գրվեց: Որի համար, Տեր Հիսուս, մաղթում եւ խնդրում ենք ամբողջ սրտով՝ դատաստան չանել նրանց Հայր Աստծու ահեղ ատյանի ժամանակ, այլ այստեղ նրանց մեղքերին թողություն տալ՝ Նրա մեծ ողորմության համաձայն: Երկինք ու երկիր թող ասեն՝ Եղիցի՜, թող լինի: Եվ Քրիստոսին փառք՝ հավիտյանս. ամեն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

1. Ագաթանգեղոս «Պատմություն Հայոց» Երեւան 1977թ.
2. Գրիգոր Խլաթեցի «Յայսմավուրք» ի տպարանի Գրիգոր Մարսվանեցու 1723թ.
3. Գրիգոր Տաթեւացի «Ամառան հատոր» Երուսաղեմ 1998թ.
4. Եղիշե «Վարդանի եւ հայոց պատերազմի մասին» Երեւան 1971թ.
5. Թովմա Մեծոփեցի «Պատմագրական երկեր» Երեւան 2003թ.
6. Կիրակոս Գանձակեցի «Հայոց պատմություն» Երեւան 1982թ.
7. Կորյուն «Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի» Երեւան 1994թ.
8. Հովհան Մամիկոնյան «Տարոնի պատմություն» Երեւան 1989թ.
9. Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն» Երեւան 1982թ.
10. Ղեւոնդ Ալիշան «Յուշիկք հայրենեաց հայոց» հտ.Բ. Ս. Ղազար, Վենետիկ 1870
11. Մատթեոս Ուռհայեցի «Ժամանակագրություն» Երեւան 1991թ.
12. Մեսրոպ Երեց «Պատմություն սրբոյն Ներսեսի Պարթեւի հայոց հայրապետի» (Սոփերք հայկականք Զ.) Վենետիկ 1853թ.
13. Մաքսիմ Ոսկանյան «Արցախյան վկայություններ» Երեւան 2005
14. Մովսես Խորենացի «Աստվածաբանական երկեր» Երեւան 2001թ.
15. Սեբեոս «Պատմություն» Երեւան 2005թ.
16. Ստեփանոս Օրբելյան «Սյունիքի պատմություն» Երեւան 1986
17. Վարդան Այգեկցի «Խրատներ» Ս. Էջմիածին 2008թ.
18. Վարդան Արեւելցի «Տիեզերական պատմություն» Երեւան 2001թ.
19. «Վարք Սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին» հտ. 1 Վենետիկ 1855թ.
20. Վեմ-խաչ դպիր «Ս. Թադեոս առաքեալ եւ Սանդուխտ կոյս» Կ. Պոլիս 1920թ.
21. Փավստոս Բուզանդ «Պատմություն հայոց» Երեւեան 1968թ.
22. C ø ŁŒ ˜Ł ŁæŁØ Łæ ° ª Æ ° æ Ł æ æ - Ø æŒ 2001

ՑԱՆԿ

Նախաբանի փոխարեն

Սուրբ Գրիգոր Տաթեւացու քարոզը տեսիլքների
եւ երազների մասին 6

Թարգմ.՝ Նանա Գրիգորյան

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Տիրոջ խոստումը Սբ. Թադեոս առաքյալին.....15
Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքը 18
Սուրբ Հուսիկի տեսիլքը 28
Սուրբ Դանիելի մարգարեությունը 30
Սուրբ Ներսես Մեծի երազը եւ հանդիմանությունը
Արշակ 2-րդ թագավորին 35
Սուրբ Ներսես Մեծի մարգարեությունը 37

Թարգմ.՝ Նանա Գրիգորյան

Սուրբ Սահակ Պարթեւի տեսիլքը 46
Սուրբ Մովսես Խորենացու մարգարեական խոսքերը 59
Սուրբ Մեթոդիոսի՝ Պատարի եպիսկոպոսի եւ
նահատակի երազը՝ անցյալի, ներկայի եւ գալիքի մասին 60
Հովհաննես Կոզեռնի առաջին մարգարեությունը 69
Հովհաննես Կոզեռնի երկրորդ մարգարեությունը.....72
Ավանդություն Անիի կործանման մասին,
ըստ Ղազար Ջահկեցի կաթողիկոսի 79

Թարգմ.՝ Սեդա Ստամբոլցյան

Նեռի ծննդյան, գալիք դառը ժամանակների
եւ նրա սատակման մասին.....82
Աստվածածինը տեսիլքով հայտնում է Արցախ աշխարհի
ազատագրման, Հայաստանի հետ միանալու մասին 96
Պաիս Աթոսացու մարգարեությունը
Թուրքիայի փլուզման մասին 98

Թարգմ.՝ Աշոտ Հունանյան

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքը Խոր վիրապում 99
Սուրբ Գրիգոր Լուսավորչի հարցումները հրեշտակին 102

Թարգմ.՝ Հակոբ Քյոսեյան

Աստծու հրեշտակի հայտնությունը սբ. Տրդատին 110
Հայոց գրերի գյուտը 111
Սուրբ Հաղորդության մասին տեսիլքը.....114
Նոյան տապանի բեկորի հայտնությունը.....118
Տեսիլք, որ երեւաց Շաղիտա
եւ Եպիփան սուրբ անապատականներին 121
Մոգպետի տեսիլքը 123
Վանականների գնդի առաջնորդը 127
Տերունական Խաչի մասունքի գտնվելը 130
Սուրբ Խորհրդի ընկած մասը 132
Ֆրանկ զորականի տեսիլքը 133
Թե ինչպես գտան դրախտի լեռը 137

Թարգմ.՝ Նանա Գրիգորյան

Տուեցի տեր Հովհաննեսի մասին 139
Հովհաննես գառնեցու մասին 141
Պարսիկ զինվորի տեսիլքը Ցաղաց քարում 148
Հայր Գյուտի եւ Քրիստոսասերի կողմից
Երասխի ափին վանքի կառուցման մասին 151
IX դ. Մաշտոց Սեւանցու կողմից Սեւանի
կղզում եկեղեցիների կառուցման մասին 154
Տաթեւի եպիսկոպոսարանի մեծ
Կաթողիկե եկեղեցու շինության մասին 157
Սուրբ Ստեփանոս Սյունեցու մասին 160
Թամուրի զորքի ջարդը Աստծու հրեշտակներից 164
Անարգողի դարձը 166
Հայոց միաբանության, էջմիածնի
օրհնության եւ կաթողիկոսի ձեռնադրության մասին 168
Հավելված 1 182
Հավելված 2 185

ՏԵՍԻԼՔՆԵՐ ԵՎ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

«ԳԹՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, 2009

Կազմեց եւ խմբագրեց
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆԸ
Համակարգչային ձեւավորումը՝
ԱՐՄԵՆ ԲԱՐԻՇՅԱՆԻ
Շապիկը՝
ՎԱՐԴԱՆ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ
Մուտքագրումը՝
ԱՆԺԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ԱՐՏՅՈՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ
Թարգմանությունները՝
ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆԻ
ՆԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ՍԵԴԱ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ
Սրբագրումը՝
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Նկարները՝
ԽԱՉԻԿ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻ

Շապիկի վրա՝
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐԻ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ
«ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏԵՍԻԼՔԸ»
գործ՝ բեյրութահայ նկարիչ ՄԱՐՏԻՐՈՍ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ

Ծավալը՝ 12.25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 1000 օրինակ: